Նիկոլայ Հովհաննիսյան
Աշոտ Ղուկասյան
Հարություն Ալեքսանյան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան 2013

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Նորագույն պատմություն» հասկացությունը

1918 թվականին՝ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, նոր փուլ է սկսվում համաշխարհային պատմության մեջ: Այն ընդունված է անվանել «Նորագույն շրջան»:

Արմատական տեղաշարժեր կատարվեցին քաղաքական ուժերի հաշվեկշռում: Աշխարհի քաղաքական քարտեզից վերացան Ռուսական, Ավստրո-հունգարական և Օսմանյան կայսրությունները, դադարեց գոյություն ունենալ կայզերական Գերմանիան: 1920-30-ական թվականներին մեծացավ Անգլիայի և Ֆրանսիայի դերը, իսկ Իտալիայում և Գերմանիայում ֆաշիստներն անցան իշխանության գլուխ: Բարձրացավ նաև ԱՄՆ-ի քաղաքական կշիռը: Ռուսական կայսրության փլատակների վրա կազմավորվեց Խորհրդային Միությունը: Պատմության մեջ առաջին անգամ նորագույն շրջանում ձևավորվեց սոցիալիզմի միջազգային համակարգը:

Համաշխարհային պատմության այս շրջանը նաև գաղութային համակարգի վերացման դարաշրջան է: Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի գաղութներն ու կախյալ երկրները նվաճեցին քաղաքական անկախություն, վերածվեցին ազգային ինքնիշխան պետությունների և դարձան միջազգային հանրության գործունյա անդամներ:

Այն գիտատեխնիկական աննախադեպ հեղափոխության, մշակույթի հետագա վերելքի և համընդհանուր առաջընթացի դարաշրջան է: Այս փուլում մարդն առաջին անգամ դուրս եկավ տիեզերք և առաջին անգամ ոտք դրեց Լուսնի վրա:

Նորագույն շրջանը միաժամանակ մարդկության պատմության ամենաողբերգական ժամանակաշրջաններից մեկն է: Հենց այս փուլում տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը վիթխարի աղետ էր համայն մարդկության համար: Նորագույն շրջանում ստեղծվեց և 1945թ. առաջին անգամ ԱՄՆ-ը Ճապոնիայի դեմ կիրառեց միջուկային զենք:

Նորագույն շրջանում պետությունները բաժանվեցին երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների, և նրանց միջև ծավալվեց, այսպես կոչված, «սառը պատերազմ», որը մշտապես ուղեկցվում էր բազմաթիվ տարածաշրջանային, «տաք» պատերազմներով:

XX դարում տեղի ունեցան դարաշրջանի թերևս ամենակարևոր քաղաքական, համաշխարհային պատմական նշանակություն ունեցող իրադարձություններից՝ Խորհրդային Միության փլուզումը և սոցիալիզմի միջազգային համակարգի վերացումը: Նախկին Խորհրդային Միության փոխարեն աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեցին 15 նորանկախ

պետություններ՝ դրանց թվում՝ Հայաստանի Հանրապետությունը:

Արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլը

Նորագույն պատմությունը միաժամանակ դիտարկվում է որպես «Արդ-յունաբերական հասարակության երրորդ շրջափուլ»: Երրորդ շրջափուլը **որակական նոր երևույթ** է: Այս շրջափուլում հասարակության վերափոխումը և զարգացումն իրականացվում են նոր, մինչ այդ անհայտ բարձր տեխնոլոգիա-ների լայնորեն կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների թվայնացման, տարբեր ոլորտներում ռոբոտների օգտագործման և դրանց կիրառման դաշտի ընդլայնման հիմքի վրա: Երրորդ շրջափուլում շատ խիստ է դրվում էներգիայի ոչ ավանդական աղբյուրների, էներգակիրների նոր տեսակների հայտ-նաբերման հիմնախնդիրը: Քայլեր են կատարվում արեգակնային, քամու և այլ-ընտրանքային այլ էներգիաների օգտագործման ուղղությամբ: Մեծ թափ են առել էլեկտրոնիկայի՝ որպես նոր ուղղության զարգացումը և կիրառումը, հա-մակարգիչները և համացանցը ուղղակի հեղաշրջում են առաջացրել տարբեր բնագավառներում, անգամ առօրյա կյանքում: Մարդկությունն արդեն տպավորիչ քայլեր է կատարել տիեզերքի գաղտնիքների մեջ ներթափանցելու գործում, ինչպես դիտողական բարդ գործիքների միջոցով, այնպես էլ գիտական նոր սարքեր և անգամ մարդ տիեզերք ուղարկելու ուղիով: Նոր, ավելի բարձր մակարդակի հասավ տիեզերագիտությունը:

Հետարդյունաբերական հասարակությունը

Վերոնշյալ փոփոխությունները և դրանց զարգացման միտումները չէին կարող դրական ազդեցություն չունենալ հասարակական-քաղա-քական իրողությունների վրա, ինչը հանգեցրեց նորագույն շրջանի հետարդյունաբերական հասարակության (տեղեկատվական) ձևավորմանը: XX դարի 80-ական թթ. միջազգային մեծ հնչեղություն ձեռք բերեց մարդու իրավունքների հարցը, որը դարձավ այս կամ այն երկրի և հասարակութ-յան ժողովրդավարության ամենակարևոր ցուցիչներից մեկը: Այդ գործում լայն աշխատանք են կատարում ԱՄՆ-ը, Եվրամիության անդամ երկրները, տարաբնույթ հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունները և կոմիտեները: Շնորհիվ նրանց գործունեության, մարդու իրավունքների խնդիրը դարձավ միջազգային կարևոր հարց և արձանագրվեցին որոշակի տեղաշարժեր ոչ միայն եվրոպական և հյուսիսամերիկյան, այլև ասիական, աֆրիկյան, անգամ իսլամական երկրներում: Դրա հետ կապված առաջընթաց նկատվեց կնոջ իրավունքների պաշտպանության հարցում: Կանայք այժմ ավելի լայն իրավունքներից են օգտվում, մասնակցում բազմաթիվ երկրների օրենսդիր և գործադիր մարմինների աշխատանքներում: Մեր օրերում կանանց՝ պետության ղեկավարի, վարչապետի կամ նախարարի պաշտոն զբաղեցնելը այլևս չի զարմացնում որևէ մեկին և ընդունվում է բնականորեն:

Ֆաշիստական, նացիստական ռասայական և ամբողջատիրական համակարգերի կործանումը Գերմանիայում, Իտալիայում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում, Խորհրդային Միությունում և մի շարք այլ երկրներում բեկում առաջացրեց մարդկանց մտածելակերպում և հոգեբանության մեջ, նպաստեց ժողովրդավարության զարգացմանը և մարդկության ակտիվ մասնակցությանը քաղաքականության ոլորտում: Դրանում իր դրական դերն ունեցավ նաև սերնդափոխությունը, երբ կյանք մտավ մի նոր սերունդ, որը ծանոթ չէր նացիստական-ռասայական գաղափարախոսությանն ու իրողություններին, ամբողջատիրության սարսափներին ու դաժանություններին: Նա ավելի ազատամիտ էր իր դատողություններում, ավելի լայնախոհ և անկաշկանդ: Այդ բոլորի շնորհիվ դրական տեղաշարժեր եղան միջազգային քաղաքական մթնոլորտում: Դրա հետ զուգահեռաբար դռները բացվեցին նոր գաղափարների և արժեքների տարածման առջև. մարդիկ ավելի ազատ են տեղաշարժվում, չեն վախենում միմյանց հետ շփվելուց, անկաշկանդորեն բանավիճում, տեսակետներ ու կարծիքներ են փոխանակում: Այս փոփոխությունները կյանքի կոչեցին մի կարևոր երևույթ, որն ստացավ «Գլոբալիզացիա» անվանումը:

ՀԱՐՑԵՐ և ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ է XX դարը կոչվում բեկումնային դարաշրջան: Որո՞նք են այդ դարաշրջանում կատարված նշանակալի փոփոխությունները:
2. Ի՞նչ ժամանակագրական շրջանակներ է ընդգրկում նորագույն պատմությունը: Ձեր կարծիքով ի՞նչ ընդհանուր գծեր ունեն համաշխարհային պատմության նոր և նորագույն շրջանները: Որո՞նք են նրանց տարբերիչ գծերը: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
3. Ի՞նչ դեպքեր ու երևույթներ են կազմում արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլի հիմնական բովանդակությունը: Բնութագրեք այդ շրջափուլը:
4. Կազմե՛ք «Հետարդյունաբերական հասարակությունը» ենթահարցի պատասխանի ծավալման պլանը:
5. Լրացրե՛ք «Համաշխարհային պատմության նորագույն շրջանը» աղյուսակը:

Բնագավառները	Առանձնահատկությունները
Քաղաքական	
Տնտեսական	
Սոցիալական	
Մշակութային	

ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԲՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼՈՒՄ

I

ԲԱԺԻՆ

§1. ՓԱՐԻԶԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ

Փարիզի հաշտության վեհաժողովը



Ժորժ Կլեմանսո

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց Անտանտի երկրների հաղթանակով, 1918թ. նոյեմբերի 11-ին Կոմպյենում ստորագրված զինադադարով: Անտանտի կորիզը կազմում էին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը: Հետագայում նրան միացան այլ երկրներ, իսկ 1917թ. ապրիլին՝ ԱՄՆ-ը: Ընդհանուր առմամբ պատերազմի մեջ ներգրավված էր 38 երկիր: 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանը դուրս եկավ նրա կազմից: Քառյակ դաշինքի մեջ մտնող երկրները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարական կայսրությունը, Օսմանյան կայսրությունը և Բուլղարիան, 1918 թվականի աշնանը մեկը մյուսի հետևից անձնատուր եղան:

Հաղթողներին անհրաժեշտ էր պարտություն կրած երկրների հետ կնքել հաշտության պայմանագիր: Այդ նպատակով 1919թ. հունվարի 18-ին Փարիզում բացվեց հաշտության խորհրդաժողով, որն ավարտվեց 1920 թվականի հունվարի 21-ին:

Խորհրդաժողովում կարևոր դեր էր խաղում «Հինգի խորհուրդը» կամ «Մեծ հնգյակը»: Դրա մեջ մտնում էին Անգլիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոն, ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետները:

Ֆրանսիան ամեն կերպ ձգտում էր պարտված երկրների և հատկապես Գերմանիայի հետ այնպիսի պայմանագիր կնքել, որն ապահովեր իր գերիշխանությունը (հեգեմոնիան) Եվրոպայում: Իսկ

Անգլիայի և ԱՄՆ-ի համար դա անընդունելի էր: Նրանք ձգտում էին Գերմանիան օգտագործել մի կողմից ֆրանսիական ազդեցության հետագա ուժեղացման, իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ: Ի վերջո, Ֆրանսիան շատ հարցերում հարկադրված էր գիջել:

Վերսալ-վաշինգտոնյան համակարգը որպես նոր աշխարհակարգ

1919թ. հունիսի 28-ին ֆրանսիական թագավորների Վերսալյան պալատում ստորագրվեց հաշտության պայմանագիր Անտանտի երկրների և Գերմանիայի միջև:

Փարիզի վեհաժողովի նիստ

Վերսալի պայմանագրով Գերմանիային պարտադրվում էր լրիվ զինաթափում, նրա բանակը չէր կարող ունենալ 100 հազարից ավելի զինվոր: Գերմանական գլխավոր շտաբը ցրվում էր, պարտադիր զինվորական ծառայությունը՝ չեղյալ հայտարարվում և արգելվում զենք ներմուծելը: Գերմանիայի վրա դրվեց նաև խոշոր ռազմատուգանք: Գերմանիան ունեցավ տարածքային կորուստներ հօգուտ Ֆրանսիայի, Լեհաստանի, Չեխիայի և Բելգիայի:

1919թ. սեպտեմբերին Փարիզի մերձակայքում՝ Սեն-Ժերմեն ան Լեում, հաշտության պայմանագիր ստորագրվեց Անտանտի և Ավստրիայի միջև: Պայմանագիրն արձանագրեց Ավստրո-Հունգարական կայսրության կործանումը և ճանաչեց Ավստրիան որպես անկախ հանրապետություն: Ավստրիան իր հերթին ճանաչեց Ավստրո-Հունգարական կայսրության փլատակների վրա գոյացած Չեխոսլովակիայի և Հարավսլավիայի անկախությունը: Խիստ կրճատվեցին Ավստրիայի ռազմական ուժերը, իսկ ամբողջ նավատորմն անցավ Անտանտի տրամադրության տակ:

1919թ. նոյեմբերին Փարիզի մեկ այլ արվարձանում Նեյ Սյուր-Սենում՝ հաշտության պայմանագիր ստորագրվեց Անտանտի և Բուլղարիայի միջև: Բուլղարիան ունեցավ զգալի տարածքային կորուստներ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԸՍՏ ՍԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱԳՐԻ

Սևրի հաշտության պայմանագիրը ստորագրվել է 1920 թ-ի օգոստոսի 10-ին Թուրքիայի սուլթանական կառավարության և Առաջին համաշխարհային պատերազմում (1914-18 թթ.) հաղթանակած դաշնակից պետությունների միջև: Որպես գլխավոր դաշնակից տերություններ՝ հանդես եկան Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրեց Ավետիս Ահարոնյանը, որը նախագահում էր հայկական պատվիրակությունը:

Պայմանագրի երրորդ մասի վեցերորդ բաժինը վերաբերում է Հայաստանին և ընդգրկում 88-93-րդ հոդվածները: Թուրքիան պաշտոնապես հայտարարում է, որ Հայաստանը ճանաչում է որպես ազատ և անկախ պետություն, ինչպես այդ արել էին արդեն Դաշնակից տերությունները: Թուրքիան պարտավորվում է որոշման օրից սկսած՝ հրաժարվել Հայաստանին հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից:

Ըստ պայմանագրի՝ Հայաստանը ստանում էր Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը (համապատասխանաբար՝ 39.300 կմ²-ից՝ 20.000 կմ² և 27.100 կմ²-ից՝ 15.000կմ²), Էրզրումի նահանգի գրեթե ողջ տարածքը (49.700 կմ²-ից՝ 40.000կմ²), Տրապիզոնի նահանգի մոտ կեսը՝ ներառյալ Տրապիզոն նավահանգիստը (32.700կմ²-ից՝ 15.000 կմ²), ընդհանուր առմամբ՝ մոտ 100.000 կմ² տարածություն: Միանալով Անդրկովկասում Հայաստանի Հանրապետության տարածքին, միավորված անկախ Հայկական պետությունն ստանում էր ավելի քան 161000 կմ² տարածություն՝ ելք ունենալով դեպի Սև ծով:

ՍԱՄԵՏԱԲ 1:2 000 000




ՔՈՒԹԱՅԻՍ
ԹԻՖԼԻՍ
ՍԱՍՈՒՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ (ԳՅՈՒՄՐԻ)
ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼ (ԳԱՆՁԱԿ)
ԵՐԵՎԱՆ
ՆԱԽԻՋԵՎԱՆ
ՎԱՆ
ԲԱՏՈՒՄ
ՄՈՍՈՒԼ
ՔԻՐԲՈՒԿ (ԿԵՐԿՈՒԿ)
ՍԱՄՍՈՆ
ՏՐԱՊԶՈՆ
ԲԱՔՈՒ
ՍԱՄԱՐԱ
ՍԱՐԱՏՈՎ
ՍՏԱՎՐՈՊՈԼ
ՄՈՍԿՎԱ
ՍՈՉԻ
ՄԱՅԿՈՓ
ՄԱՐԴԻՆ
ՄԱՐԱՂԱ
ՄԱՆԱՍԿԵՐՏ
ՍԱՐԻԿԱՄԻՇ
ՍԱՐԻԿԱՄԻՇ
ՍԱՐԻԿԱՄԻՇ

Բուլղարիայի ռազմական ուժերը պետք է ստեղծվեին կամավորության սկզբունքով: Նրա ռազմական նավերը նույնպես անցան Անտանտի երկրներին:

1920թ. հունիսին Վերսալի Տրիանոնի Մեծ պալատում Անտանտը հաշտության պայմանագիր ստորագրեց նորանկախ Հունգարիայի հետ: Հաշտության պայմանագրով Հունգարիայի վրա նույնպես դրվեցին մի շարք սահմանափակումներ (պարտադիր զինծառայության արգելք և այլն): Նա, ինչպես և պարտված բոլոր երկրները, պարտավորվում էր վճարել ռազմատուգանք:

Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական ռազմաքաղաքական խմբավորման պարտության հետևանքով, ինչպես նաև վերոնշյալ պայմանագրերի արդյունքում, Եվրոպայի քաղաքական քարտեզում հայտնվեցին մի շարք նորանկախ պետություններ՝ Լեհաստանը, Ֆինլանդիան, Ավստրիան, Հունգարիան, Չեխոսլովակիան, սերբերի, խորվաթների և սլովենների թագավորությունը, որը 1929թ. վերանվանվեց Հարավսլավիայի թագավորություն, Լատվիան, Լիտվան, Էստոնիան:

1920թ. օգոստոսի 10-ին Փարիզից ոչ հեռու գտնվող Սևր քաղաքում ստորագրվեց հինգերորդ հաշտության պայմանագիրը, այս անգամ Անտանտի և սուլթանական Թուրքիայի միջև: Սևրի պայմանագիրն իրավաբանորեն ձևակերպեց Օսմանյան կայսրության վերացումը և նշեց Թուրքիայի նոր սահմանները:

Սևրի պայմանագիրն ուներ առանձին՝ «Հայաստան» բաժին, որը բաղկացած էր վեց հոդվածներից (88-93): Թուրքիան Հայաստանը ճանաչում էր «ազատ և անկախ պետություն»:

Սևրի պայմանագրով՝ թուրքական բանակը առավելագույնը կարող էր ունենալ 50 հազար զինվոր և սպա: Թուրքիան նաև լրիվ կորցնում էր իր արաբական տիրույթները Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, որոշ տարածքներ նաև Եվրոպայում ու Փոքր Ասիայում:

Լուրջ հիմնախնդիրներ էին կուտակվել նաև հեռավոր Արևելքում՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ճապոնիայի միջև: Ամերիկյան դիվանագիտության նախաձեռնությամբ 1921-1922թթ. Վաշինգտոնում գումարվեց խորհրդաժողով՝ նվիրված հեռավորարևելյան և խաղաղօվկիանոսյան խնդիրներին: Խորհրդաժողովին մասնակցում էին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Չինաստանի և այլ երկրների պատվիրակությունները: Ստորագրվեց երեք կարևոր պայմանագիր: Առաջին՝ 1921թ. դեկտեմբերին ԱՄՆ-ը, Անգլիան, Ճապոնիան և Ֆրանսիան ստորագրեցին այսպես կոչված՝ չորսի պայմանա-

գիրը խաղաղօվկիանոսյան տիրույթների և տարածքների համատեղ պաշտպանության իրավունքի մասին: Երկրորդ՝ խորհրդաժողովում ստորագրվեց պայմանագիր Չինաստանի ինքնիշխանության, տարածքային և վարչական անձեռնմխելիության հարգման վերաբերյալ: Պայմանագիրը հաստատեց «հավասար հնարավորությունների» սկզբունքը, որը բարենպաստ պայմաններ էր ստեղծում ԱՄՆ-ի համար՝ ներթափանցելու Չինաստան: Եվ, վերջապես, երրորդ խորհրդաժողովում ԱՄՆ-ը, Անգլիան, Ճապոնիան, Ֆրանսիան և Իտալիան 1922թ. փետրվարին համաձայնության եկան իրենց ռազմանավերի չափաբաժինների և համամասնության հարցի շուրջ: Անգլիան ԱՄՆ-ի ճնշման ներքո հարկադրված էր գիջել նրան և համաձայնել, որ ԱՄՆ-ը կարող է ունենալ այնքան գծանավ և հածանավ, որքան ինքը

Վաշինգտոնի կոնֆերանսի նիստ

Վաշինգտոնյան համաժողովը ամերիկյան դիվանագիտության մեծ հաղթանակն էր:

Իրավաբանորեն հաստատելով նոր քաղաքական իրողություններ աշխարհում՝ այդ պայմանագրերը միասին կազմում են Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը:

Ազգերի լիգան

Միջազգային համապարփակ կազմակերպության ստեղծման գաղափարը ծագել էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնն այն մտցրեց 1918թ. հունվարի 8-ին հռչակած իր «Տասնչորս կետերի» մեջ: Այդպիսի կազմակերպություն հանդիսացավ Ազգերի լիգան, որի կանոնադրությունը հաստատեց Փարիզի խորհրդաժողովը 1919թ. հունիսի 28-ին:

Ազգերի լիգան կոչված էր լինել խաղաղություն պահպանող, ագրեսիաները կանխող և միջազգային համագործակցությունն ապահովող կազմակերպություն: Դրան էին նպատակամղված նրա կանոնադրության գլխավոր հոդվածները՝ կապված Ազգերի լիգայի անդամ պետությունների տարածքային ամբողջականության փոխադարձ



Ազգերի լիգայի շենքը Ժնևում

երաշխավորման և ագրեսոր պետության նկատմամբ պատժամիջոցների կիրառման հետ: Ընդ որում, կանոնադրությամբ թույլատրվում էր Ազգերի լիգայի միջամտությունը նաև ոչ անդամ պետությունների վեճերին:

Ազգերի լիգայի գլխավոր մարմիններն էին Ասամբլեան կամ Ընդհանուր ժողովը, Խորհուրդը, Մշտական քարտուղարությունը: Այդ մարմինների մշտական նստավայրը Ժնևն էր:

Ազգերի լիգայի պաշտոնական աշխատանքային լեզուներն էին անգլերենը և ֆրանսերենը:

Ազգերի լիգան նորամուծություն կատարեց իմպերիալիզմի գաղութային համակարգում: Նա, պահպանելով գաղութատիրության դասական ձևերը, գործողության մեջ մտցրեց գաղութատիրության այսպես կոչված սքողված տեսակը՝ մանդատային համակարգը: Ազգերի լիգան իրավունք ստացավ նախկին որոշ գաղութների կառավարման մանդատը տալ արևմտյան զարգացած այս կամ այն երկրին: 1919 թ. հունվարի 30-ին որոշեց Օսմանյան կայսրությունից վերջնականապես անջատել և ենթամանդատային տերիտորիաներ հայտարարել Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Լիբանանը, Միջագետքը, Արաբիան և Քրդստանը: Միջագետքի կամ Իրաքի և Պաղեստինի կառավարման մանդատը Ազգերի լիգան տվեց Մեծ Բիրտանիային, իսկ Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատը՝ Ֆրանսիային: Հայաստանի մանդատը հանձնվեց ԱՄՆ-ին:

Ազգերի լիգայի նիստ

Վիլսոնը Հայաստանի մանդատի հարցը ներկայացրեց ԱՄՆ-ի Սենատի քննարկմանը, վերջինս 1920թ. հունիսի 1-ին մերժեց նրա խնդրանքը:

Ազգերի լիգայի ուշադրությունը 1920-ական թվականներին հիմնականում կենտրո-

նացած էր Եվրոպայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում պետությունների միջև սահմանային և տարածքային վեճերի լուծման, ագրեսիայի կանխման և այլ սուր հարցերի վրա: Այն կարևոր դեր խաղաց Շվեդիայի և Ֆինլանդիայի միջև ծագած վեճը կարգավորելու խնդրում Ալբանիայի, Հարավսլավիայի և Հունաստանի միջև սահմանների հստակեցման գործում: 1923թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Իտալիան և Հունաստանը հայտնվեցին պատերազմական վիճակում: Իտալիան գրավեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Կորֆու կղզին: Հունաստանը դիմեց Ազգերի լիգայի խորհրդին, և վերջինիս ճնշման ներքո Իտալիան ստիպված էր իր զորքերը դուրս բերել կղզուց:



Վուդրո Վիլսոն (1856–1924 թթ.)

1930-ական թվականներին Ազգերի լիգան բախվեց ավելի լուրջ խնդիրների: 1931թ. Ճապոնիան ներխուժեց Չինաստան և գրավեց զգալի տարածքներ: Ազգերի լիգան կոչ արեց ագրեսորին իր զորքերը դուրս բերել Չինաստանից: Համաձայն չլինելով անգամ նման մեղմ որոշման հետ՝ Ճապոնիան 1933թ. մարտին դուրս եկավ Ազգերի լիգայի կազմից: Հետևելով Ճապոնիայի օրինակին՝ Գերմանիան, որն Ազգերի լիգա էր ընդունվել 1926 թ., 1933թ. հոկտեմբերին նույնպես լքեց այն: Ազգերի լիգան 1934թ. սեպտեմբերին, Ֆրանսիայի նախաձեռնությամբ, Խորհրդային Միությանն ընդունեց իր շարքերը, որի կազմում նա երկար չմնաց: 1939թ. դեկտեմբերին Ազգերի լիգան Խորհրդային Միությանը որպես ագրեսորի վտարեց իր շարքերից՝ Ֆինլանդիայի դեմ 1939թ. նոյեմբերի 30-ին պատերազմական գործողություններ սկսելու մեղադրանքով:



Գերմանիայի դառնալը Ազգերի լիգայի անդամ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է գումարվել Փարիզի վեհաժողովը: Ի՞նչ նպատակով է գումարվել այն:
2. Ո՞րն էր Վերսալ-վաշինգտոնյան համակարգի հիմնական թերությունը:
3. Ինչպե՞ս փոփոխվեց քաղաքական քարտեզը Վերսալ-վաշինգտոնյան պայմանագրերի կնքումից հետո: Ի՞նչ եք կարծում կարո՞ղ էր այն ապահովել կայուն խաղաղություն աշխարհում: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
4. Ո՞վ էր Ազգերի լիգայի ստեղծման գաղափարի հեղինակը: Ե՞րբ հիմնադրվեց լիգան:
5. Ո՞ւմ տրվեց «Հայաստանի» մանդատը»: Ձեր կարծիքով ի՞նչու այն մերժվեց ԱՄՆ-ի Սենատի կողմից:
6. Ազգերի լիգան, ձեր կարծիքով, արդյո՞ք կատարեց իր վրա դրված միջազգային անվտանգության և խաղաղության պահպանման պարտականությունը: Փաստերով հիմնավորեք պատասխանը:
7. Լրացրեք «Վերսալյան համակարգը» աղյուսակը:

Պայմանագրեր	Տարեթվեր	Երկրներ, փոփոխություններ				
		Գերմանիա	Ավստրիա	Բուլղարիա	Հունգարիա	Թուրքիա
Վերսալյան պալատ						
Սեն Ժերմեն ան Լե						
Նեյ Սյուր-Սեն						
Վերսալի Տրիանոնի Մեծ պալատը						
Սևր						

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Նանսենյան անձնագիր»

«Նանսենյան անձնագիր» արտահայտությունը, թերևս, բոլորն էլ լսել են, բայց գուցե չգիտեն, որ դրան հասնելու համար բազում ջանքեր են պահանջվել մեծ մարդասերից: Պատճառն այն էր, որ Ազգերի լիգան դժվարությամբ ընդունեց նրա առաջարկը: Իսկ երբ 1920-ին լիգայում քննարկվում էր Մեծ եղեռնի հարցը, Նանսենն ասում էր. «Մինչ այսպես կվիճեն սահմանների հարցի շուրջ, պետք է հայ ժողովրդին փրկել ոչնչացումից, որպեսզի մարդ մնա այդ երկրում բնակվելու համար: Ամեն օրն անգամ իսպառ կարևոր նշանակություն ունի, կարող է պատահել այնպես, որ մինչ մենք այստեղ վիճում

ենք, այնտեղ կոտորվի մի ողջ ժողովուրդ»: Ի վերջո, Ազգերի լիգայի խորհուրդը ստիպված եղավ 1924-ին հաստատել հայ գաղթականներին ինքնության վկայական տալու նանսենյան նախաձեռնությունը: 320 հազար հայ գաղթական ստացավ նանսենյան անձնագիր, ինչը բարելավեց նրանց սոցիալ-իրավական վիճակը 52 երկրներում:

ՍԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Բաժին 6-րդ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են դաշնակից տերությունները՝ որպես ազատ և անկախ պետություն:

Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:

Հոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս հիշյալ վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մի մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաև այդ տերիտորիայի նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող՝ Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը և դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փոխարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը հանձնվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում, կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույթյան կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

§2. ԱՐԵՎՄՏՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Տնտեսական իրավիճակը

Պատերազմը շատ ծանր հետևանքներ ունեցավ եվրոպական երկրների, առաջին հերթին Ֆրանսիայի և Գերմանիայի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի, Բելգիայի և Հոլանդիայի տնտեսության վրա: Ավերվել էին շատ քաղաքներ և գյուղական բնակավայրեր: Ամենուր նկատելի էր արդյունաբերության և գյուղատնտեսության անկում: Խիստ վատթարացավ բնակչության տնտեսական դրությունը: Աճեցին գործազրկությունը, կենսական նշանակություն ունեցող պարենի և արդյունաբերական ապրանքների գները: Շատ երկրներում սառեցվեցին աշխատավարձերը: Չէին բավականացնում առաջին անհրաժեշտության ապրանքները: Բոլոր երկրներում վիթխարի չափերի հասան ներքին և արտաքին պարտքերը, մեծացավ բյուջեի պակասորդը: Բարձիթողի վիճակում էր առողջապահությունը, տարածված էին բազմաթիվ հիվանդություններ: Պատերազմին հաջորդած առաջին շրջանում ոչ միայն պարտություն կրած, այլև հաղթած երկրների իշխանություններն ի վիճակի չէին արագորեն լուծել իրենց երկրների առջև ծառացած տնտեսական խնդիրները և բավարարել ժողովրդի պահանջները: Այդ հողի վրա կուտակվել էր խոր դժգոհություն: Չորսամյա պատերազմից հոգնած մարդիկ պահանջում էին տնտեսական անհետաձգելի խնդիրների արագ լուծում, նրանց համբերությունն արդեն հատել էր: Եվ նրանք դիմում էին իրենց փորձված միջոցին՝ գործադուլների և ցույցերի: Կառավարությունների հրաժարականները և փոփոխությունները դարձել էին սովորական երևույթներ:

Դա մտահոգում էր Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին: Ամերիկյան ղեկավարությունը հասկացավ, որ անհրաժեշտ է կանխել եվրոպական երկրների տնտեսական հետագա անկումը և պայմաններ ստեղծել նրանց տնտեսական զարգացման համար: ԱՄՆ-ի այդ քաղաքականության դրսևորումը եղավ այսպես կոչված՝ Դաուեսի պլանը, որը ամերիկյան կառավարությունը ներկայացրեց 1924թ. օգոստոսին, Լոնդոնի խորհրդաժողովում: Խորհրդաժողովի մասնակիցները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Բելգիան, Հոլան-

դիան և եվրոպական այլ երկրներ, ընդունեցին ամերիկյան բանկիր Դաուեսի պլանը՝ գերմանական ռազմատուգանքների վճարումները կարգավորելու համար: Դա կանոնավորեց վճարումները, կայունացրեց գերմանական մարկը և նպաստեց կապիտալի հոսքին Գերմանիայի տնտեսության մեջ:


Չ. Դաուես

Քաղաքական զարգացման միտումները

Մեծ Բրիտանիա: Մեծ Բրիտանիան Առաջին համաշխարհային պատերազմում հիմնականում կարողացավ հասնել իր առջև դրված ռազմաքաղաքական խնդիրների լուծմանը: Նրան հաջողվեց ծնկի բերել Եվրոպայում իր գլխավոր մրցակից Գերմանիային, իսկ պատերազմում արյունաքամ եղած Ֆրանսիայի դիրքերը թուլացան:

Մեծ Բրիտանիային հաջողվեց ոչ միայն պահպանել իր աշխարհածավալ գաղութային կայսրությունը, այլև ընդարձակել այն: Գերմանիան վերսալյան պայմանագրով կորցրեց իր գաղութներն Աֆրիկայում: Նրանց մեծ մասը, ինչպես Տոգոն, Կամերունը և այլն, անցան Մեծ Բրիտանիայի տիրապետության տակ: Իսկ Օսմանյան կայսրության փլուզումից հետո Մեծ Բրիտանիան, Ազգերի լիգայի մանդատի ներքո, իր տիրապետությունը հաստատեց Իրաքում, Պաղեստինում և Անդրհորդանանում: Մեծ Բրիտանիայի կառավարողներն իրավամբ կարող էին ասել. «Արևը երբեք մայր չի մտնում Բրիտանական կայսրությունում»:

Պատերազմի ավարտից հետո աշխուժացավ երկրի հասարակական-քաղաքական կյանքը: 1918թ. վերջերին տեղի ունեցան պառլամենտական ընտրություններ, որի ընթացքում հաղթեց պահպանողական և լիբերալ կուսակցությունների դաշինքը: Լիբերալների ղեկավար Լլոյդ Ջորջը 1919թ. հունվարին կազմեց կոալիցիոն կառավարություն:

Լլոյդ Ջորջ (1863-1945 թթ.)

Տեղաշարժեր կատարվեցին երկրի քաղաքական կյանքում: 1920-ական թվականների սկզբներից լիբերալների դիրքերն աստիճանաբար թուլացան, և ամրապնդվեց լեյբորիստական (աշխատավորական) կուսակցությունը: Նրա ղեկավարը՝ Ռամզեյ Մակդոնալդը, 1924թ. կազմեց լեյբորիստական առաջին կա-



Անգլո-իռլանդական պայմանագրի ստորագրումը, 1921 թ.

ռավարությունը:

Մեծ Բրիտանիայի ներքաղաքական կյանքի ամենասուր հարցերից մեկը իռլանդական հարցն էր: Նրա բնակչությունը տարիներ շարունակ պայքարում էր իր երկրի անկախության համար: 1916 թվականին իռլանդացիներն ապստամբական դրոշ էին պարզել՝ պահանջելով բրիտանական կառավարությունից ճանաչել Իռլանդիայի անկախությունը: Բրիտանական իշխանությունները, համոզվելով, որ հնարավոր չէ ճնշել իռլանդացիների ազգային-ազատագրական պայքարը, 1921թ. ստորագրեցին անգլո-իռլանդական պայմանագիր, որով Իռլանդիային տրվում էր դոմինիոնի կարգավիճակ: Սակայն դա չէր տարածվում Հյուսիսային Իռլանդիայի Օլսթերի վրա, որը ցայսօր մնում է Մեծ Բրիտանիայի կազմում: 1937թ. Իռլանդիան իրեն հայտարարեց անկախ պետություն:

Ֆրանսիա: Պատերազմի տարիներին կրած մարդկային և նյութական մեծ կորուստներն իրենց կնիքը դրեցին Ֆրանսիայի հետպատերազմյան քաղաքական և տնտեսական կյանքի վրա:

1919թ. տեղի ունեցան հետպատերազմյան առաջին պառլամենտական ընտրությունները: Հաղթանակ տարան, այսպես կոչված, Ազգային դաշինքը և նրա մեջ միավորված աջակողմյան կուսակցությունները: Դաշինքը ղեկավարում էր Ժ. Կլեմանսոն իր համախոհների հետ միասին:

Արիստիդ Բրիան (1862–1932 թթ.)

Եվրոպայում Ֆրանսիայի՝ տիրապետող դիրքեր հաստատելու ճանապարհին կատարվեցին մի շարք կարևոր քայլեր: Վերսալի պայմանագրով Ֆրանսիան հետ ստացավ Էլզասը և Լոթարինգիան, որոնք Գերմանիան խլել էր նրանից 1870թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ: Նա իրավունք ստացավ 15 տարի ժամանակով օգտագործել Սաարի մարզի ածխահանքերը: Նրան հատկացվեց Գերմանիայից գանձվող ռազմատուգանքի 50 տոկոսը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ 1918-1923 ԹԹ.
ՆՈՐՎԵԳԻԱ
ՍՏՈԿՀՈԼՄ
ՇՎԵԴԻԱ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ԴԱՆԻԱ
ԿՈՊԵՆՀԱԳԵՆ
ՖԻՆԼԱՆԴԻԱ
ՀԵԼՍԻՆԿԻ
Պետրոգրադ
ՏԱԼԼԻՆ
ԷՍՏՈՆԻԱ
ՌԻԳԱ
ԼԱՏՎԻԱ
ԼԻՏՎԱ
ԿԱՈՒՆԱՍ
Կլայպեդա
Վիլնյուս
Դվինսկ
Գդանսկ
Համբուրգ
ԱՄՍՏԵՐԴԱՄ
ՆԻՄԵԳԵՆ
ԲԵԼԳԻԱ
Դյուսելդորֆ
Քյոլն
Լայպցիգ
ԲԵՌԼԻՆ
ՊՐՈՒՍԻԱ
ՊՈԶՆԱՆ
ՍԻԼԵԶԻԱ
ՎԱՐՇԱՎԱ
Բրեսլավ
ԼԵՀԱՍՏԱՆ
ՄԻՆՍԿ
ԲԵԼՈՌՈՒՍ
ՄՈՍԿՎԱ
ԿԻԵՎ
ՈՒԿՐԱԻՆԱ
ՊՐԱՀԱ
Կրակով
Լվով
ԳԱԼԻՑԻԱ
Բոնն
ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ
Ստրասբուրգ
Մյունխեն
ՎԻԵՆԱ
ԲԵՌՆ
Լոզան
ՇՎԵՅՑԱՐԻԱ
ԱՎՍՏՐԻԱ
ԲՈՒԴԱՊԵՇՏ
ՀՈՒՆԳԱՐԻԱ
ՌՈՒՄԻՆԻԱ
Քիշնև
Օդեսա
ՖՐԱՆՍԻԱ
Միլան
Տրիեստ
Զագրեբ
ՍԱՌԱՅԵԿԱ (ՖԻՈՒՄԵ)
ՀԱՐԱՎՄԼԱՎԻԱ
ԲՈՒԽԱՐԵՍՏ
Ֆլորենցիա
Սարաևո
ՍՈՖԻԱ
ԻՏԱԼԻԱ
ՀՌՈՄ
ԲՈՒԼԳԱՐԻԱ
Ստամբուլ (Կ. Պոլիս)
Նեապոլ
ՏԻՐԱՆԱ
ԱԼԲԱՆԻԱ
Սարդինիա
Կրզի (Իտալիա)
ԹՈՒՐՔԻԱ
Պետությունների սահմանները 1914 թ.
Պետությունների սահմանները 1923 թ.
Սաարի ավազանը՝ 15 տարով տրված Ազգերի լիգայի կառավարմանը
Սաարի ավազանը՝ 15 տարով տրված Ազգերի լիգայի կառավարմանը
Գերմանիայի ապառազմականացված գոտին
Անտանտի գրաված (15 տարով) Գերմանիայի տարածքները:
Ռումինիայի բռնազավթած Բեսարաբիան, 1918 թ.
Լեհաստանի բռնազավթած Լիտվայի տարածքները, 1920 թ.
Թվերով քարտեզի վրա նշված են՝
1. Մեմելի շրջան (1920-23 թթ. Անտանտի հսկողության տակ, 1923 թ.՝ Լիտվայի կազմում)
2. Էյպեն-Մալմեդի շրջան
3. Լյուքսեմբուրգ
4. Լիխտենշտեյն
5. Իստրիա

1919թ. ապրիլին ֆրանսիական պառլամենտը սահմանեց 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձը բարձրացվեց, կազմավորվեցին բազմաթիվ արհմիություններ և այլն: 1924թ. տեղի ունեցան նոր պառլամենտական ընտրություններ, որն ավարտվեց ձախ ուժերի դաշինքի հաղթանակով: Այդ դաշինքի ճանաչված ղեկավարներից Է. Էրրիոն կազմեց նոր կառավարություն, որը ներում շնորհեց քաղաքական բանտարկյալներին, իրենց գործատեղերում վերականգնեց աշխատանքից հեռացված գործադուլավորներին և այլն: Ֆրանսիական նոր կառավարությունը լուծեց «Ռուրի ճգնաժամը»՝ դուրս բերելով ֆրանսիական զորքերը Ռուրի մարզից, իսկ 1924թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Խորհրդային Միության հետ:

Շարունակելով Եվրոպայում իր դիրքերի ամրապնդման քաղաքականությունը՝ Ֆրանսիան 1922թ. ձևավորեց Փոքր Անտանտը: Նրա մեջ էին մտնում Հարավսլավիան, Չեխոսլովակիան և Ռումինիան: Իսկ դրանից մեկ տարի առաջ Ֆրանսիան ռազմական դաշինք էր կնքել Լեհաստանի հետ: Ֆրանսիայի միջազգային դիրքերի ամրապնդվում էին:

Սակայն Անգլիան և ԱՄՆ-ը հաշտ աչքով չէին նայում Եվրոպայում գերիշխանության հասնելու՝ Ֆրանսիայի նկրտումներին: Նրանց ձեռնտու չէր ոչ Գերմանիայի չափից ավելի թուլացումը և ոչ էլ Ֆրանսիայի հզորացումը: Գերմանիան բարդություններ էր ստեղծում ռազմատուգանքների վճարման հարցում և դիմադրում Ռուրի մարզի քարածուխն օգտագործելու՝ ֆրանսիացիների ցանկությանը: Ի պատասխան, ֆրանսիական զորքերը, բելգիական զորքերի հետ միասին, 1923թ. օկուպացրին Ռուրը: Դա առաջ բերեց քաղաքական ճգնաժամ Եվրոպայում: 1924թ. ֆրանս-բելգիական ռազմական ուժերը հարկադրված էին հետ քաշվել Ռուրի մարզից: Եվրոպայում Ֆրանսիայի շահերին լուրջ հարված հասցրեց նաև 1925թ. հոկտեմբերին Լոկարնոյում (Շվեյցարիա) ստորագրված համաձայնագիրը: Գերմանիան, Ֆրանսիան և Բելգիան պարտավորվեցին պահպանել Գերմանիայի և Ֆրանսիայի, Գերմանիայի և Բելգիայի միջև տարածքային ստատուս-քվոն:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի Սենատը, դժգոհ մնալով Վիլսոնի քաղաքականության անհաջողություններից և Փարիզի խորհրդաժողովի արդյունքներից, 1920թ. մարտին չվավերացրեց Վերսալյան պայմանագիրը և Ազգերի լիգայի կանոնադրությունը: 1920թ. նախագահական ընտրություններում Վիլսոնի դեմոկրատական կուսակցությունը պարտություն կրեց: Հաղթեցին հանրապետականները, որոնք անընդմեջ իշխանության

գլուխ մնացին տասներկու տարի:

Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի առջև ծառացել էին սոցիալ-տնտեսական բազմաթիվ բարդ խնդիրներ: Ուռճացած ռազմական արդյունաբերությունն այլևս պահանջարկ չուներ: Դա հանգեցրեց ռազմական արդյունաբերության խիստ կրճատմանը և այն խաղաղ ռելսերի վրա տեղափոխելու անհրաժեշտությանը: Իսկ 1920-1921թթ. հանգեցրեց աշխատատեղերի կրճատմանը և գործազրկության աճին: Գործազուրկների թիվը հասավ 5,5 միլիոնի: Բնականաբար, իջավ նաև ժողովրդի կենսամակարդակը: Դա առաջ բերեց գործադուլային շարժման հզոր ալիք:

ԱՄՆ-ի կառավարությունը ձեռնարկեց մի շարք քայլեր՝ տնտեսական վիճակը կայունացնելու և գործադուլային շարժումը կանխելու համար: Վերացվեց տնտեսության պետական կարգավորումը, որը մտցրել էր Վիլսոնի կառավարությունը, խրախուսվեցին բանկային գործունեությունը, արդյունաբերական տարբեր ճյուղերի մեջ կապիտալ ներդրումները և այլն: Այդ քայլերի շնորհիվ 1920-ական թվականների կեսերից երկրի տնտեսությունը կայունացավ, ապա սկսվեց բարգավաճման շրջանը:

«Փոքր ժողովրդավարական հասարակությունները»

Ինչպես արդեն նշվել է, Առաջին համաշխարհային պատերազմից հետո քաղաքական ասպարեզում հայտնվեցին մի շարք նոր պետություններ, որոնք հորջորջվեցին «Փոքր ժողովրդավարական հասարակություններ»: Դրանք տեղակայված էին Եվրոպայում: Սովորաբար դրանց շարքում դասվում են Լեհաստանը, Բելգիան, Նիդերլանդները, Ֆինլանդիան, Չեխոսլովակիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, որոնք նշված ժամանակաշրջանում առաջին քայլերն էին կատարում իրենց՝ որպես պետություն կայացման ուղղությամբ, քաղաքական և ժողովրդավարության բնագավառներում: Դրանք թույլ զարգացած պետություններ էին, որոնց պակասում էին կառավարման հմտությունը և դիվանագիտական արվեստին տիրապետելու վարպետությունը, փորձառությունը՝ հատկապես ժողովրդավարության բնագավառում: Այդ պատճառով էլ մշտապես իրենց հայացքն ուղղում էին դեպի այս կամ այն մեծ պետությունը, ինչպես Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը: Պատահական չէ, որ նրանք տնտեսական և քաղաքական կախման մեջ էին գտնվում այդ երկրներից և հակված էին դաշինքի մեջ մտնել

որևէ մեծ տերության հետ: Օգտվելով դրանից, Ֆրանսիան 1922թ. ձևավորեց այսպես կոչված՝ Փոքր Անտանտը, որի մեջ մտան Հարավսլավիան, Չեխոսլովակիան և Ռումինիան: Հետագայում ի հայտ եկան նաև այլ խմբավորումներ: Նրանց համար մեծ դպրոց եղավ անդամակցությունը Ազգերի լիգային և միջազգային այլ կազմակերպությունների: Եվ նրանք 1920-ականների վերջերին արդեն բավականին առաջընթաց քայլեր էին կատարել տնտեսության վերակառուցման, հետամնացության հաղթահարման ուղղությամբ, ձգտելով դառնալ միջազգային հանրության լիարժեք անդամներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին տնտեսական ճգնաժամի պատճառները Եվրոպայում:
2. Փաստերով հիմնավորե՛ք, որ աշխարհում Մեծ Բրիտանիայի դիրքերն Առաջին աշխարհամարտից հետո ամրապնդվեցին: Փորձե՛ք մեկնաբանել «Արևը երբեք մայր չի մտնում Բրիտանական կայսրությունում» արտահայտությունը:
3. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Ֆրանսիայի և ԱՄՆ-ի քաղաքական կյանքում:
4. Որո՞նք էին փոքր «ժողովրդավարական երկրները»:
5. Լրացրե՛ք «Արևմտյան ժողովրդավարական երկրները (հասարակությունները) 1920-ական թթ.» աղյուսակը:

Երկրներ (ժողովրդավարական հասարակություններ)	**Զարգացման միտումներ**
Մեծ Բրիտանիա	
Ֆրանսիա	
ԱՄՆ	
Փոքր երկրներ	

§3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ

Ճգնաժամի պատճառները

Հերբերտ Հուվեր (1874–1964 թթ.)

1928թ. ԱՄՆ-ում կայացան նախագահական հերթական ընտրություններ, և նախագահ ընտրվեց Հանրապետական կուսակցության թեկնածու Հ. Հուվերը: Նրա կառավարման շրջանը ժամանակի առումով համընկավ 1929թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ, որն առանձնահատուկ ուժով հարվածեց կապիտալիզմի միջնաբերդ ԱՄՆ-ին: Այն ընդգրկեց ԱՄՆ-ի տնտեսությունն ամբողջությամբ՝ արդյունաբերությունը, շինարարությունը, գյուղատնտեսությունը, ներքին և արտաքին առևտուրը, ֆինանսաբանկային համակարգը:

Ճգնաժամի գլխավոր պատճառը գերարտադրությունն էր, համամասնության խախտումը արդյունաբերական մեծ ծավալների և սպառման անհամեմատ սահմանափակ հնարավորությունների միջև:

1932 թվականին ԱՄՆ-ի արդյունաբերությունը 1929 թվականի համեմատությամբ կրճատվեց մոտ 60 տոկոսով, գործազուրկների թիվը հասավ 13 միլիոնի: Զանգվածային բնույթ կրեցին ֆերմերային տնտեսությունների քայքայումը, արդյունաբերական ձեռնարկությունների և բանկերի սնանկացումը: Ճգնաժամի տարիներին սնանկացավ ավելի քան 5 հազար բանկ: Սովորական երևույթ էր դարձել սնանկացած ձեռնարկատերերի, բանկիրների և առևտրականների ինքնասպանությունը:

Գործազուրկների հերթը ԱՄՆ-ում

Խիստ կրճատվեցին աշխատավարձերը, աղքատացումը համընդհանուր բնույթ կրեց: Հուսահատված, գործազուրկ և քաղցած բանվորները, ֆերմերները և մանր առևտրականները կազմա-

կերպում էին սովյալների երթ դեպի Վաշինգտոն: Այն հատկապես մեծ ծավալներ ընդունեց 1930–1932 թթ.: Նրանք կառավարությունից պահանջում էին կտրուկ միջոցներ ձեռնարկել տնտեսական ճգնաժամը հաղթահարելու և իրենց շահերը պաշտպանելու համար: Կառավարությունն իրականացրեց որոշ, այսպես կոչված՝ «կայունացնող գործողություններ»: Սակայն դրանք բավարար չէին ճգնաժամը հաղթահարելու համար: Հուվերի կառավարությունը չուներ երկիրը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու հստակ ծրագիր:

Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի «Նոր կուրսը»

1932թ. նոյեմբերին, ճգնաժամի սուր պայմաններում, կայացան նախագահական նոր ընտրություններ: ԱՄՆ-ի նոր նախագահ ընտրվեց Դեմոկրատական կուսակցության թեկնածու Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը: Նա XX դարի ԱՄՆ-ի ամենաականավոր պետական գործիչն է, միակը ԱՄՆ-ի պատմության մեջ, որ չորս անգամ անընդմեջ ընտրվել է երկրի նախագահ:

Ռուզվելտը մշակեց ճգնաժամից դուրս գալու իրատեսական ծրագիր, որն ստացավ «Նոր կուրս» անվանումը: Այն ընդգրկում էր արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, սոցիալական ոլորտը և բանկային համակարգը: 1933թ. հունիսին ընդունվեց օրենք արդյունաբերության վերականգնման մասին: Դրանով բարձրանում էր պետության կարգավորիչ դերը տնտեսության կազմակերպման մեջ: Որոշվեց նաև ապրանքների արտադրության և վաճառքի քանակը: Աշխատավորներն ստացան արհմիությունների մեջ միավորվելու և ձեռնարկատերերի հետ կոլեկտիվ պայմանագրեր կնքելու իրավունք: «Նոր կուրսով» կտրուկ միջոցներ ձեռնարկվեցին գործազրկությունը կրճատելու ուղղությամբ: Մեծ ծավալների հասավ ճանապարհների, կամուրջների, օդանավակայանների և հասարակական այլ շինությունների կառուցումը, որը ֆինանսավորվում էր պետական բյուջեից: Դրա շնորհիվ երկու տարվա ընթացքում ստեղծվեց մոտ 3 միլիոն նոր աշխատատեղ:



Ֆրանկլին Ռուզվելտ (1882–1945 թթ.)

Ընդունվեցին ֆերմերների վիճակը բարելավող օրենքներ: Կառավարությունն սկսեց ցանքատարածությունները կրճատել՝ գյուղատնտեսական ապրանքների գները բարձրացնելու նպատակով: Դրա դիմաց պետությունը դրամական փոխհա-

տուցում էր տալիս ֆերմերներին: Ընդունվեցին օրենքներ նաև ֆինանսական համակարգի վերաբերյալ: Փոխառության իրավունք տրվեց միայն խոշոր ու կենսունակ բանկերին: Շատ կարևոր էին բարեփոխումները սոցիալական ոլորտում: 1935թ. ընդունվեց օրենք՝ սոցիալական ապահովության և պետության սոցիալական պատասխանատվության մասին:

Նախագահ Ռուզվելտի հանդիպումը ֆերմերների հետ

Նպաստներ սահմանվեցին գործազուրկների, ծերերի և այլ կարիքավոր խավերի համար:

Նոր կուրսի շնորհիվ ԱՄՆ-ն աստիճանաբար դուրս եկավ տնտեսության քառասային վիճակից: Արդեն 1936թ. նկատվեց տնտեսության որոշ աշխուժացում: ԱՄՆ-ի տնտեսությունն աստիճանաբար մոտենում էր նախաճգնաժամային մակարդակին: Այդ կուրսը մեծ պաշտպանություն գտավ երկրի ներսում, և Ֆրանկլին Ռուզվելտը 1936թ. կրկին ընտրվեց ԱՄՆ-ի նախագահ:

Իրատեսական մոտեցումները բնորոշ էին նաև Ռուզվելտի արտաքին քաղաքականությանը: ԱՄՆ-ի նախագահի առաջարկությամբ 1933թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև: Ռուզվելտը հրաժարվեց Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ կիրառվող կոշտ քաղաքականությունից և հռչակեց «բարի դրացու» քաղաքականություն, ինքնավարություն շնորհեց իր գաղութ Ֆիլիպիններին: Կոնգրեսը 1935թ. օգոստոսին ընդունեց օրենք չեզոքության մասին, որն արգելում էր զենք մատակարարել պատերազմող կողմերին:

Ճգնաժամը Մեծ Բրիտանիայում

Բրիտանական կառավարությունը դեռևս 1920-ականների կեսերին սկսել էր արդյունաբերության վերակառուցումը և արդիականացումը: 1929-1933 թթ. ճգնաժամի հետևանքով այդ գործընթացը դանդաղեց, աճեց գործազրկությունը, փակվեցին մի շարք ձեռնարկություններ, դժվարությունների մեջ հայտնվեց Սիթին՝ Լոնդոնի

Ցուցարարների երթը Անգլիայում

գործարար կենտրոնը, մանավանդ ֆինանսաբանկային ոլորտը: Այդուհանդերձ Մեծ Բրիտանիան ճգնաժամից ավելի քիչ տուժեց, քան աշխարհի մյուս երկրները, թեև բրիտանական վերնախավը երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրները փորձում էր լուծել ի հաշիվ աշխատավորների: Բացի այդ՝ Մեծ Բրիտանիան ուներ մի այնպիսի վիթխարի պահուստային գործոն, որպիսին նրա գաղութներն էին: Մեծ Բրիտանիան առավելագույնս քամեց գաղութների տնտեսական հնարավորությունները, նրանց հարուստ հումքային պաշարները, անգլիական բանկերում գտնվող նրանց նշանակալի ավանդները, ներմուծվող էժան ապրանքները և այլն: Մեծ Բրիտանիայի տնտեսությունն աստիճանաբար սկսեց ոտքի կանգնել և 1930-ականների երկրորդ կեսերից թևակոխեց զարգացման փուլը:

Ճգնաժամը Ֆրանսիայում

Ֆրանսիան հետպատերազմյան տարիներին զգալի հաջողության հասավ տնտեսության վերականգնման, վերակառուցման և զարգացման ուղղությամբ: Դրան նպաստեցին գերմանական ռազմատուգանքները և օտարերկրյա վարկերը: Ֆրանսիայի տնտեսական զարգացումն ընդհատվեց 1929-1933 թթ. համաշխարհային ճգնաժամի պատճառով: Փակվեցին բազմաթիվ գործարաններ, արտադրական միավորումներ, ֆիրմաներ, աճեց գործազուրկների թիվը, մոտ 1,5 միլիոն մարդ աշխատանք չուներ: Ճգնաժամը տարածվեց նաև գյուղատնտեսության ոլորտի վրա, անգամ որոշ շրջաններում սով սկսվեց: Չա-

Նախագահ Դումերի ապանությունը

փազանց բարձր էին պարենային ապրանքների գները: Դրությունն ավելի սրվեց, երբ Գերմանիան դադարեցրեց Ֆրանսիային և մյուս երկրներին ռազմատուգանքների վճարումը:

Լեոն Բլյում (1872–1950 թթ.)

Ճգնաժամը սրեց հակասությունները հասարակության ներսում: Մի կողմից աշխուժացավ բանվորական, դեմոկրատական և առաջադիմական, իսկ մյուս կողմից՝ հետադիմական, մասնավորապես՝ ֆաշիստական ուժերի և կազմակերպությունների գործունեությունը: Ֆաշիստական ուժերը և նրանց կազմակերպությունները, ինչպես, օրինակ, «Մարտական խաչերը» կանգնած էին պառլամենտական կարգերը բռնի ուժով վերացնելու և ամբողջատիրական վարչակարգ հաստատելու տեսակետի վրա: Ֆաշիստական ուժերի ձեռքով սպանվեց Ֆրանսիայի նախագահ Դումերը: Ալեկոծվեց ողջ Ֆրանսիան: Սկիզբ դրվեց ձախակողմյան ուժերի միասնական գործողությունների շարժմանը, որը լայն թափ ստացավ 1932–1934 թթ.: 1934թ. հուլիսին Ֆրանսիայում ձևավորվեց Ժողովրդական ճակատը, որը հաղթեց 1936թ. գարնանը տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում: Սոցիալիստների առաջնորդ Լեոն Բլյումը սոցիալիստներից և ռադիկալներից կազմեց Ժողովրդական ճակատի առաջին կառավարությունը:

Նոր կառավարությունը կիրառեց մի շարք առաջադիմական միջոցառումներ: Սահմանվեց 40-ժամյա աշխատանքային շաբաթ, աշխատավարձը բարձրացվեց: Աշխատավորներն ստացան կոլեկտիվ պայմանագրեր կնքելու, վճարովի արձակուրդների իրավունք և այլն: Կառավարության 1936թ. հունիսի դեկրետով լուծարվեցին ֆաշիստական կազմակերպությունները: Իսկ նույն թվականի հուլիսին ընդունվեց մեկ այլ կարևոր դեկրետ՝ ռազմական արդյունաբերության մասնակի ազգայնացման վերաբերյալ:

Ժողովրդական ճակատի կառավարությունը գործում էր բոլոր աջ ուժերի կողմից կիրառվող ճնշման պայմաններում: Լեոն Բլյումն սկսեց զիջումների քաղաքականությունը, իսկ 1937թ. փետրվարին հրաժարական տվեց: Նրան փոխարինած ռադիկալներ Կ. Շոթանի և Է. Դալադիեի կառավարություններն ավելի ու ավելի հեռացան Ժողովրդական ճակատի ծրագրից: Իսկ երբ Դալադիեն ստորագրեց Մյունխենյան համաձայնագիրը, դա հանգեցրեց Ժողովրդական ճակատի վերջնական քայքայմանը:

Ֆրանսիան 1935թ. ԽՍՀՄ-ի հետ կնքեց փոխադարձ օգնության պայմանագիր:

«Փոքր ժողովրդավարական հասարակությունները» և ճգնաժամը:

Ճգնաժամից չխուսափեցին և չէին կարող խուսափել նաև այսպես կոչված՝ փոքր ժողովրդավարական հասարակությունները, որոնք իրենց տնտեսական մակարդակով և ներուժով զիջում էին ավելի զարգացած երկրներին, ինչպես Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Խոսքը Բելգիայի, Հոլանդիայի Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ֆինլանդիայի, Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի մասին է, որոնք տնտեսապես թույլ զարգացած երկրներ էին և չունեին ճգնաժամի հարվածներին դիմագրավելու կարողություն: Նրանք տնտեսական ճգնաժամից ունեցան նույն կորուստները, ինչ որ զարգացած երկրները՝ արտադրության շեշտակի անկում, արդյունաբերական ձեռնարկությունների փակում, գործազրկության մեծ աճ, գյուղատնտեսության քայքայում, ցանքատարածությունների կրճատում, պարենային ապրանքների գների թռիչքային բարձրացում, բանկային համակարգի փլուզում և այլն: Ահա թե ինչու նրանք, ընդհուպ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը, չկարողացան հաղթահարել ճգնաժամը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին 1929–1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառները:
2. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Ֆ. Ռուզվելտի ծրագիրն ստացավ «Նոր կուրս» անվանումը: Ի՞նչ միջոցառումներ իրականացվեցին երկրում համաշխարհային տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար:
3. Ինչպիսի՞ն էր Ֆ. Ռուզվելտի արտաքին քաղաքականությունը:
4. Ինչու՞ Մեծ Բրիտանիան կարողացավ առավել թեթև տանել համաշխարհային տնտեսական ճգնաժամը:
5. Բնութագրե՛ք Ֆրանսիայի վիճակը 1929–1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի նախօրեին և դրա ընթացքում:
6. Ինչո՞ւ Ֆրանսիայում հաջողություն չունեցան ֆաշիստական ուժերը: Ո՞ր կուսակցություններից կազմվեց ժողովրդական ճակատը:
7. Ձեր կարծիքով որո՞նք էին տնտեսական ճգնաժամը հաղթահարելու գործում փոքր հասարակությունների դժվարությունները և առանձնահատկությունները: Բերե՛ք փաստեր ձեր տեսակետի օգտին:

8. Լրացրեք «Ժողովրդավարական հասարակությունները և համաշխարհային տնտեսական ճգնաժամը» աղյուսակը:

Երկրներ (ժողովրդավարական հասարակություններ)	**Ճգնաժամը հաղթահարելու միջոցառումներ**		
	Տնտեսական	Ֆինանսապան-կային	Սոցիալական
ԱՄՆ			
Մեծ Բրիտանիա			
Ֆրանսիա			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ֆրանսիական ժողովրդական ճակատի ծրագիրը (քաղվածք)

I Ազատության պաշտպանություն

1. Համընդհանուր ներում:

2. Ֆաշիստական լիգաների դեմ.

ա. Կիսառազմական կազմավորումների արդյունավետ զինաթափում և ցրում՝ օրենքին համապատասխան:

բ. Պրովոկացիայի, ապանության կամ պետության անվտանգության դեմ ոտնձգության դեպքում օրենքով նախատեսված պատժի կիրառում:

5. Արհմիությունների ազատություններ.

ա. Միությունների իրավունքների կիրառում և պահպանում:

բ. Կանանց աշխատանքի իրավունքի պահպանում:

II Խաղաղության պաշտպանություն:

1. Կոչ ամբողջ ժողովրդին և հատկապես աշխատավոր զանգվածներին՝ համագործակցելու խաղաղության պահպանման և կազմակերպման գործում:

2. Միջազգային համագործակցություն Ազգերի լիգայի շրջանակներում՝ նպատակ ունենալով ագրեսորին որոշելու միջոցով ապահովել կոլեկտիվ անվտանգությունը և ագրեսիայի դեպքում սանկցիաների ավտոմատորեն և միահամուռ կիրառումը:

4. Ռազմական արդյունաբերության ազգայնացում և զենքի մասնավոր առևտրի վերացում:

7. Ֆրանս-խորհրդային պայմանագրի սկզբունքների համաձայն՝ բոլորի համար բաց պայմանագրերի սիստեմի տարածում, հատկապես Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում:

§4. ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Ֆաշիզմի խորհրդանիշը

XX դարի **20–30**-ականներին եվրոպական երկրներում գաղափարախոսության և քաղաքականության մեջ իրենց ծայրահեղությամբ աչքի էին ընկնում ամբողջատիրության, ֆաշիզմի, նացիզմի և ռասիզմի գաղափարախոսությունները, որոնք բարձրացվեցին պաշտոնական պետական քաղաքականության մակարդակի:

Ամբողջատիրության (տոտալիտարիզմ) բովանդակությունը

«Տոտալիտար» բառն ունի լատինական ծագում և բառացիորեն նշանակում է «ամբողջ», «բոլոր», «լրիվ»: Պետության և իրավունքի բնագավառում այն օգտագործվում է տվյալ վարչակարգի, նրա բնույթի և տեսակի առումով: Տոտալիտար պետությունը ավտորիտար՝ ինքնակալ, դիկտատորական պետության տարատեսակներից մեկն է: Ամբողջատիրության ամենաբնորոշ գծերն են՝ պետական մեքենայի ամբողջական՝ տոտալ վերահսկողություն հասարակության քաղաքական, տնտեսական, գաղափարական և մշակութային, անգամ անհատի անձնական կյանքի վրա, ժողովրդավարության և ազատությունների խիստ սահմանափակում, այլախոհության հետապնդում, իշխանությունների անսահմանափակ և անվերահսկելի լիազորություններ: Ամբողջատիրական պետություններում թեև կան սահմանադրություններ, բայց դրանք ձևական բնույթ են կրում, իրավունքի փոխարեն գործում է կամայականությունը: Չկան կարծիքների ազատություն և բազմազանություն, բոլորը պաշտում են միևնույն կուռքը, որպիսին հանդիսանում է տվյալ երկրի կամ ազգի առաջնորդը, որի խոսքը, կարծիքը և տեսակետը բարձր են ամեն ինչից:

Ամբողջատիրական վարչակարգեր հաստատվեցին Եվրոպայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի և Աֆրիկայի մի շարք երկրներում: Տիպաբանորեն նրանք բաժանվում են սոցիալիստական, ֆաշիստական, նացիստական և զիվորական-դիկտատորական կամ խունտայական ամբողջատիրության:

Ամբողջատիրական պետություններ էին քեմալական Թուրքիան, Իրանը Փահլավիների դինաստայի կառավարման շրջանում, Սաուդյան Արաբիան և այլ երկրներ:

Ֆաշիզմի առաջացումը

Իտալական ֆաշիստների «երթը դեպի Հռոմ»

Առաջին համաշխարհային պատերազմի պատճառած վիթխարի մարդկային զոհերը, ավերածությունները, տնտեսական ծանր վիճակը մի շարք երկրներում, մասնավորապես Գերմանիայում, Իտալիայում և այլուր, առաջացրել էին հասարակության տարբեր խավերի խոր հուսահատությունը:

Երիտասարդությունն իրեն համարում էր ապագայից և հեռանկարից զուրկ, կորուսյալ սերունդ: Հարյուրամյակներ շարունակ գոյություն ունեցած ճշմարտությունները արժեզրկվել էին: Բարոյալքված և հուսահատ մարդիկ հրաշքի էին սպասում, սպասում էին փրկչի՝ պատրաստ հետևելու և ենթարկվելու նրան: Հենց այս հիմքի վրա բարձրացավ ֆաշիզմը, որի ալիքը XXդ. 20–30-ական թվականներին անցավ Եվրոպայով մեկ:

Ֆաշիզմը քաղաքական հոսանք է, որին բնորոշ են բռնությունը, անսանձ շովինիզմը, ռասիզմը, ամբողջատիրությունը (տոտալիտարիզմ), դաժանությունը առաջնորդի պաշտամունքը:

Դա ամենածայրահեղ հետադիմական շարժումն էր, որ երբևիցե տեսել էր մարդկությունը:

Ֆաշիզմն Իտալիայում



Բենիտո Մուսոլինի (1883–1945 թթ.)

Ֆաշիստական շարժումը Իտալիայում ձևավորվել է 1919թ. Բենիտո Մուսոլինիի կողմից: Իտալիան աշխարհում առաջին երկիրն էր, որտեղ ֆաշիստներն անցան իշխանության գլուխ: 1922թ. իտալական սևշապիկավոր ֆաշիստները Մուսոլինիի գլխավորությամբ կազմակերպեցին «երթ դեպի Հռոմ», որին մասնակցեց մոտ 125 հազար մարդ: Սարսափած Վիկտոր Էմմանուիլ III թագավորը Մուսոլինիին նշանակեց վարչապետ: Նա մինչև 1945 թվականը Իտալիայի անսահմանափակ դիկտատորն էր՝ դուչեն: Դուչեն մեծ խոս-

տումների գնով կարողացավ իր կողմը գրավել իտալական հասարակության ամենալայն զանգվածներին, որին մեծապես նպաստեց նոր աշխատատեղերի ստեղծումը, գործազրկության կրճատումը, 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանումը և ժողովրդի սոցիալական դրության բարելավումը՝ աշխատավարձի բարձրացումը, բնակարանային շինարարությունը և զանազան արտոնությունների տրամադրումը: Իտալիայում վերացվեցին պառլամենտական ազատությունները և հաստատվեց ֆաշիստական ամբողջատիրություն: Արգելվեցին քաղաքական կուսակցությունները: Երկրում գործում էր միայն մեկ կուսակցություն՝ Մուսոլինիի հիմնած ֆաշիստական կուսակցությունը: Պետական, դատական, զինվորական, քաղաքական պաշտոնները գրավում էին միայն ֆաշիստները: Նա համագործակցում էր ֆաշիստական Գերմանիայի և նրա ֆյուրերի՝ Հիտլերի հետ: 1936թ. նրանք ստորագրեցին ռազմական համագործակցության վերաբերյալ պայմանագիր, որով դրվեց «Բեռլին-Հռոմ» առանցքի հիմքը: Դուչեն նախապատերազմյան տարիներին գրավեց Եթովպիան, իսկ ապա նաև Ալբանիան:

Երբ Իտալիան պարտություն կրեց Երկրորդ համաշխարհային պատերազմում, 1945թ. նրա իշխանությունը տապալվեց, և ապստամբ իտալացիները գնդակահարեցին դուչեին:

Նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում

Ֆաշիզմը Գերմանիայում դրսևորվեց նացիզմի տեսքով: Նացիզմը Գերմանիայի Նացիոնալ-սոցիալիստական բանվորական կուսակցության կրճատ անվանումն է, որն առաջացել է «նացիոնալ» բառի համառոտագրումից (նացիոնալ-նացի):

Ֆաշիստների կողմից պետական հեղաշրջման փորձը Մյունխենում, 1923 թ.

Գերմանիայի Նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը հիմնվել է 1919թ., Մյունխենում: 1921թ. նրա առաջնորդ դարձավ Ադոլֆ Հիտլերը, որը 1923թ. Մյունխենում պետական

հեղաշրջման անհաջող փորձ կատարեց, ձերբակալվեց և բանտ նետվեց: Այստեղ նա գրեց իր «Մայն կամպֆը» («Իմ պայքարը») գիրքը, որը գերմանական ֆաշիզմի կաթեխիզիսն է, որում շարադրված են նացիզմի և ֆաշիզմի հիմնադրույթները: Նացիզմի առանցքային դրույթներից մեկը ծայրահեղ նացիոնալիզմն է, նրան բնորոշ են սոցիալական ամբոխավարությունը, ռասիզմը: Գերմանա-ֆաշիստական ռասիզմը խարսխված էր ազգերը «բարձրերի» և «ցածրերի» բաժանելու հիմնադրույթի վրա, ըստ որի՝ բարձր ռասային պատկանող ազգերը պետք է իշխեն ցածր ռասայի ազգերի վրա: Ըստ այդմ, ֆաշիզմը հրեաներին, սլավոններին, Աֆրիկայի բոլոր ժողովուրդներին համարում էր ցածր ռասայի ազգեր, որոնց վրա պետք է իշխեն բարձր, արիական և «Նորդիստական-Հյուսիսային» ազգերը, առաջին հերթին գերմանացիները: Հիտլերյան ֆաշիստների խոստումները՝ ապահովել գերմանացիներին բարեկեցիկ կյանքով, ազատվել Գերմանիայի համար նվաստացուցիչ վերսալյան համակարգի կապանքներից, իր ազդեցությունն ունեցավ լայն զանգվածների վրա: 1932թ. կայացած պառլամենտական ընտրությունների արդյունքում ֆաշիստներն ստացան ամենաշատ ձայները՝ մոտ 40%: Գերմանիայի զառամյալ պրեզիդենտ Պաուլ ֆոն Հինդենբուրգը 1933թ. հունվարին գերմանական ֆաշիզմի պարագլուխ Ադոլֆ Հիտլերին նշանակեց վարչապետ և հանձնարարեց կազմել նոր կառավարություն: Հիտլերը գերմանացիներին խոստացավ տալ աշխատանք ու հաց, վերականգնել Գերմանիայի երբեմնի փառքը և դարձնել հզոր, զարգացած և բարեկեցիկ երկիր:



Ադոլֆ Հիտլեր (1889–1945 թթ.)

Նա, որ այդուհետև կրում էր «Ֆյուրեր» (Առաջնորդ) տիտղոսը, անմիջապես ձեռնամուխ եղավ իր քաղաքական հակառակորդների ու մրցակիցների վերացմանը, ապա նաև հրեաների հարցի

Հինդենբուրգը վարչապետ է նշանակում Հիտլերին

Հայնրիխ Հիմլեր

լուծմանը, որը նա իրականացրեց հոլոքոստի ճանապարհով: Հիտլերյան ֆաշիստների տիրապետության շրջանում Գերմանիան վերածվեց ոստիկանական պետության: Ստեղծվեց քաղաքական գաղտնի ոստիկանություն՝ գեստապոն, որից սարսափում էին բոլորը, անգամ նացիստական ղեկավարները:

Ինչ վերաբերում է տնտեսական զարգացմանը, ապա ֆաշիստական Գերմանիան 1930-ականներին վերածվեց զարգացած հզոր պետության, որն ուներ արդիական արդյունաբերություն, հզոր բանակ, որը ահ ու սարսափ էր տարածում հարևանների վրա:

Արտաքին քաղաքականության բնագավառում գլխավոր խնդիրը համարվեց Գերմանիայի համար կենսատարածքի ապահովումը, որը հնարավոր էր միայն նոր նվաճումների արդյունքում: Ագրեսիվությունը դարձավ հիտլերյան Գերմանիայի արտաքին քաղաքականության ամենագլխավոր գծերից մեկը: Խախտելով Վերսալյան համակարգի պայմանները, գերմանական զորքերը մտան Հռենոսի մարզ և այն վերամիավորեցին Գերմանիայի հետ, դրան հաջորդեց Ավստրիայի անշլյուսը («միավորումը») 1938թ. և Չեխոսլովակիայի գրավումը, որն իրականացվեց 1938-1939 թթ.:

Ֆաշիզմը հաղթանակի հասավ նաև մի շարք այլ երկրներում: Ֆաշիստական դիկտատուրա հաստատվեց Հունգարիայում, որի առաջնորդն էր Հորթին, Ռումինիայում՝ Անտոնեսկուի գլխավորությամբ, Պորտուգալիայում՝ Սալազարի առաջնորդությամբ: Իսկ 1939թ., իսպանական հեղափոխության պարտությունից հետո, Իսպանիայում հաստատվեց գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական վարչակարգը:

Գերմանիայում հրեաների ձերբակալությունը

1939թ. օգոստոսի 23-ին Մոսկվայում ստորագրվեց գերմանա-խորհրդային չհարձակման պայմանագիրը:

Այսպիսով՝ Գերմանիային հաջողվեց 1939թ. դրությամբ վերականգնել իր տնտեսական և ռազմական ներուժը, աջակից ունենալով ֆաշիստական Իտալիային և ռազմամոլ Ճապոնիային:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ է ֆաշիզմը: Եվրոպական ո՞ր երկրներում հաստատվեցին ֆաշիստական վարչակարգեր:
2. Ձեր կարծիքով ի՞նչ հանգամանքներ նպաստեցին ֆաշիստական վարչակարգի հաստատմանը Իտալիայում և Գերմանիայում: Բնորոշե՛ք ֆաշիստական վարչակարգերը:
3. Ինչ գաղափարներ դրվեցին ֆաշիստական վարչակարգերի քաղաքականության հիմքում:
4. Ե՞րբ հաստատվեց ֆաշիզմը Իտալիայում, որո՞նք էին Մուսոլինիի ներքին և արտաքին քաղաքականության նպատակները:
5. Ե՞րբ և ինչպե՞ս իշխանության գլուխ անցան ֆաշիստները Գերմանիայում: Ո՞վ էր նրանց առաջնորդը:
6. Ինչ առանձնահատկություններ ուներ գերմանական նացիզմը և ինչո՞վ էր տարբերվում իտալական ֆաշիզմից: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը այդ քաղաքական հոսանքների նկատմամբ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
7. Լրացրե՛ք «Ամբողջատիրական վարչակարգեր» աղյուսակը:

Երկրներ	Առաջնորդներ	Բնորոշ վարչաձևեր

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Հիտլերի 1939 թ. օգոստոսի 22-ի ելույթից

Հիտլերը հայտարարել է. «... Եվ այսպես, առայժմ միայն Արևելքում եմ ես տեղադրել մահվան ջոկատները՝ հրամայելով դաժանորեն ու առանց խղճահարության սպանել լեհական ծագում ունեցող ու լեհերեն խոսող տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այսպես մենք կկարողանանք ձեռք բերել մեզ անհրաժեշտ հողային կենսապարածությունը: Ի վերջո՝ ո՞վ է այսօր հիշում հայերի ցեղասպանությունը: Լեհասպանը պետք է ամայանա և ապա բնակեցվի գերմանացիներով... Ռուսասպանի ճակատագիրը պետք է լինի ճիշտ այնպիսին, ինչ ես հիմա իրագործում եմ Լեհասպանի վերաբերյալ: Ստալինի մահից հետո, իսկ նա շատ

հիվանդ մարդ է, մենք կխորտակենք Խորհրդային Միությունը: Այդ ժամանակ աշխարհի վրա կբացվի Գերմանիայի իշխանության արշալույսը... ...Լեհաստանի վրա հարձակումն ու նրա ավերումը սկսվելու է շաբաթ առավոտյան: Լեհական համազգեստ հագած մի քանի վաշտ կոտրակեմ Վերին Սիլեզիա կամ պրոտեկտորատ՝ հարձակման համար: Բոլորովին կարևոր չէ, թե աշխարհը կհավատա դրան: Մարդիկ միայն հաջողությանն են հավատում»:

§5. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 1922–1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԽՍՀՄ կազմավորումը

1917թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) Ռուսաստանում հաղթանակեց սոցիալիստական հեղափոխություն: Իշխանությունը զավթեց բոլշևիկյան (կոմունիստական) կուսակցությունը Վ. Լենինի գլխավորությամբ: Ռուսական կայսրությունը փլուզվեց, երկրում հաստատվեց «պրոլետարիատի դիկտատուրա»: Ռուսաստանում և նրա ազգային ծարամասերում հաստատվեց խորհրդային իշխանություն: 1922 թ. դեկտեմբերի 30-ին Խորհուրդների առաջին համագումարը հռչակեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության՝ ԽՍՀՄ-ի ստեղծումը, որի կազմի մեջ մտան Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, և Անդրֆեդերացիան, որի կազմում էին Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը՝ ընդամենը վեց հանրապետություն: Այնուհետև նրան անդամակցեցին նաև միջինասիական բոլոր հանրապետությունները: Հետագայում, երբ ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտան Մոլդովան, Լիտվան, Լատվիան, Էստոնիան, ԽՍՀՄ հանրապետությունների թիվը դարձավ 15: Մոսկվան հայտարարվեց ԽՍՀՄ-ի մայրաքաղաք: 1924թ. ընդունվեց ԽՍՀՄ-ի առաջին Սահմանադրությունը, որը ԽՍՀՄ-ը հռչակեց որպես ինքնուրույն խորհրդային հանրապետությունների ֆեդերացիա՝ դաշնություն:

Վլադիմիր Լենին (1870–1924 թթ.)



Տեսարան Հոկտեմբերյան հեղափոխությունից

ԽՍՀՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ (1922-1940 ԹԹ.)

Տնտեսության վերականգնումը. նէպ-ի տարիները

Գյուղացիներից բռնագրաված ցորենը

Ռուսաստանի տնտեսությունը Առաջին աշխարհամարտի և քաղաքացիական պատերազմի հետևանքով հայտնվել էր ծանր դրության մեջ: Երկրում մոլեգնում էին սովը և համաճարակները, վիթխարի չափերի էր հասել զոհերի թիվը: Քաղաքներն ու գյուղերն ամայացել էին, արդյունաբերական ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը փակվել էր, կանոնավոր կերպով չէին տարվում գյուղատնտեսական աշխատանքները: Բոլշևիկները որպես փրկության միջոց մշակեցին այսպես կոչված՝ «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որն սկսեց կիրառվել 1918 թվականից: Այդ քաղաքականությամբ գյուղացիներից բռնագրավում էին պարենի ավելցուկները և բաժանում զինվորներին ու ծառայողներին: Վերացվեցին առևտուրը, ապրանքադրամային հարաբերությունները և շուկան, ամենուր մտցվեցին պարտադիր աշխատանք և աշխատավարձի փոխարեն բնամթերային վճարումներ:

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը բռնապետական-վարչարարական քաղաքականություն էր, որից բնակչությունը խիստ դժգոհ էր: Այն գործեց մինչև 1921թ. և փոխարինվեց նոր տնտեսական քաղաքականությամբ (նէպ-ով): Դրանով վերացվեց պարենամատուցումը, և սահմանվեց պարենային հարկ, որը վճարելուց հետո գյուղացին ավելցուկը կարող էր վաճառել շուկայում, իսկ բանվորների աշխատավարձը սկսեցին վճարել դրամով: Նոր տնտեսական քաղաքականությունը խրախուսում էր մանր սեփականատերերի գործունեությունը, թույլատրում առևտուրը: Դա հնարավորություն տվեց բարձրացնել արտադրողների անձնական շահագրգռվածությունը և սեղմ ժամկետում երկիրը դուրս բերել ծանր վիճակից: Փլատակներից

Նէպ-ի շրջանի կոոպերատիվ

վեր բարձրացան արդյունաբերական ձեռնարկություններ, հանքահորեր, հանքեր, կառուցվեցին նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, հիդրոկայաններ ու ջրանցքներ և այլն: Նէպի կենսագործմամբ 1920-ական թվականների վերջերին տնտեսությունը հիմնականում վերականգնվեց՝ հասնելով նախապատերազմյան մակարդակին:

Ինդուստրացումը և կոլեկտիվացումը



Իոսիֆ Ստալին (1879-1953 թթ.)

Վերականգնվող տնտեսությունը հիմք ծառայեցին անցնելու սոցիալիզմի կառուցման լենինյան պլանի՝ ինդուստրացման, կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության իրականացմանը: Այդ ժամանակ առաջնահերթ լուծում էր պահանջում հատկապես ինդուստրացման հարցը, քանի որ ԽՍՀՄ-ն իր տնտեսական մակարդակով խիստ զիջում էր Արևմուտքի կապիտալիստական երկրներին: Մասնագետները գտնում էին, որ առանց ինդուստրացման անհնար էր կառուցել արդիական զարգացած հասարակություն, տնտեսապես հզոր և կայուն երկիր: Բացի այդ, Խորհրդային Միությունը՝ լինելով աշխարհում միակ սոցիալիստական երկիրը, գտնվում էր կապիտալիստական շրջապատման մեջ, ինչը մեծ սպառնալիք էր նրա գոյությանը: Խորհրդային ղեկավարությունը համոզված էր, որ առանց ինդուստրացման իրենք չեն կարող ապահովել երկրի անվտանգությունը և պաշտպանունակությունը: Այդ խնդիրների լուծմանը ձեռնամուխ եղավ Իոսիֆ Ստալինը, որը Վ. Լենինի մահվանից հետո երկրի ղեկավարությունը վերցրել էր իր ձեռքը:

Արդեն 1925թ. դեկտեմբերին կոմունիստական կուսակցության XIV համագումարը հռչակեց ԽՍՀՄ-ի ինդուստրացման քաղաքականությունը: Ինդուստրացման կարիքները հոգալու համար անհրաժեշտ էին հսկայական միջոցներ: ԽՍՀՄ-ը չէր կարող հույսը դնել կապիտալիստական երկրների օգնության վրա, մնում էր ապավինել միայն սեփական ուժերին: Ստալինյան ղեկավա-



Դնեպրոհէկի շինարարությունը, 1934 թ.

ությունը կարողացավ այդ միջոցները հայթայթել առաջին հերթին տնտեսության մյուս ճյուղերից: Դրա հետ մեկտեղ ճնշում գործադրվեց ունևորների վրա, բռնագրավվեցին նրանց միջոցները: Հատուկ որոշումներով բարձր հարկեր դրվեցին գյուղական ունևոր խավի (կուլակների) վրա, արգելվեց հողի առևտուրը, բանկերի և փոխառությունների միջոցով վերցվեցին ժողովրդից խնայողությունները, թալանվեցին բնակչության և հոգևոր հաստատությունների թանկարժեք իրերը և ունեցվածքը:

Ֆինանսական միջոցների հայթայթումը և ինդուստրացումը ընթանում էին քաղաքական ասպարեզում անընդհատ խորացող պայքարի պայմաններում, երբ անհաջողությունները բարդվում էին ընդդիմադիր ուժերի վրա, և դաժան հաշվեհարդար էին տեսնում նրանց հետ: Չնայած այդ հանգամանքին՝ երկրի տարբեր մասերում լայն թափ ստացավ արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը: Սկսած 1928 թ. արդյունաբերության ինդուստրացումը տեղի էր ունենում ըստ հնգամյա պլանների: Մարդկային ու նյութական վիթխարի զոհողությունների միջոցով ինդուստրացման բնագավառում որոշակի հաջողություններ ձեռք բերվեցին: Զգալիորեն կրճատվեց արտասահմանյան հաստոցների ներմուծումը: ԽՍՀՄ ծայրամասերի հետամնաց գյուղատնտեսական շրջաններում կառուցվեցին արդյունաբերական ձեռնարկություններ: Ինդուստրացման ընթացքում գերակա ուղղություն համարվեցին ծանր արդյունաբերությունը և դրա առաջատար ոլորտը՝ մեքենաշինությունը:

Վերացավ գործազրկությունը, սկսվեց քաղաքների և ավանների կառուցումը, ամրապնդվեց կենտրոնացված վարչահրամայական համակարգը:

1929թ. սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը: Իշխանությունները գյուղացիական անհատական տնտեսությունները բռնությամբ, հակառակ գյուղացիների կամքի, ընդհանուր գույքով, ունեցվածքով, աշխատուժով միավորում էին կոլեկտիվ տնտեսությունների մեջ և վարձատրում ըստ աշխատանքի: 1929 թվականը հայտարարվեց մեծ բեկման տարի. գյուղացիներին ստիպում էին

Բերքահավաքը կոլտնտեսությունում

Պայքար ԽՍՀՄ-ում անգրագիտության վերացման համար

«կամավոր» մասնակցել կոլեկտիվացմանը: Խախտվեց կոլեկտիվացման կամավորության սկզբունքը: 1930թ. կուսակցությունն անցավ համատարած կոլեկտիվացման և կուլակության որպես դասակարգի վերացման քաղաքականությանը: Գյուղական բնակչության գործունյա մասը՝ կուլակներն ու ունևորները, համարվելով այդ գործընթացին խանգարողներ, դիտվում էին որպես դասակարգային թշնամիներ և կարճ ժամանակամիջոցում վերացվում: Բոլոր միջոցներով արագացվեց համատարած կոլեկտիվացումը: Կուլակների ունեցվածքը բռնագրավում էին, իսկ նրանց, որպես թշնամիներ, աքսորում:

Հարկադրական կոլեկտիվացումն ընդգրկեց ԽՍՀՄ-ի բոլոր հանրապետությունները, մարզերն ու շրջանները: Այն առաջացրեց գյուղացիական տնտեսությունների քայքայում և բնակչության զգալի մասի արտահոսք դեպի քաղաք: Շատ գյուղեր ամայացան: 1931թ. նոր թափով շարունակվեց կոլեկտիվացումը, և ամենափոքր դժգոհություն արտահայտողները ոչնչացվում կամ աքսորվում էին համակենտրոնացման ճամբարներ: 1932-1933 թթ. գյուղատնտեսության անկման հետևանքով ամբողջ երկրում սով բռնկվեց, որը միլիոնավոր զոհեր տարավ: Հարկադրանքի, բռնությունների և սովի պայմաններում 1930-ական թվականների կեսերից ԽՍՀՄ-ում հաստատվեցին կոլտնտեսային կարգեր:

1920-1930-ական թթ. տեղի ունեցավ երկրի սոցիալիստական վերափոխման կարևոր մասը կազմող կուլտուրական հեղափոխությունը, որը կոչված էր վերացնել անգրագիտությունը, զարգացնել «սոցիալիստական» գիտությունը և մշակույթը:

Քաղաքական համակարգը (ամբողջատիրություն)

Հեղափոխության և քաղաքացիական պատերազմի տարիներին ամրապնդված պրոլետարիատի դիկտատուրան աստիճանաբար վերաճեց կառավարող կոմունիստական կուսակցության դիկտատուրայի: ԽՍՀՄ-ը դարձավ ամբողջատիրության սոցիալիստական դիկտատուրայի դասական երկիր: 1920-ական թվականների վերջերին

ԽՍՀՄ-ում սկսում է ձևավորվել ամբողջատիրական, վարչա-հրամայական համակարգ: Խորհրդային ամբողջատիրության յուրահատկությունն այն էր, որ ԽՍՀՄ-ում արտաքուստ առկա էին դեմոկրատական հասարակության բնորոշ հատկանիշները՝ Սահմանադրություն, իշխանության բաժանում երեք թևերի, բարձրագույն և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովիություն և այլն: Սակայն այդ ամենը ձևական բնույթ էր կրում: ԽՍՀՄ-ում հաստատվել էր ամբողջատիրական վարչակարգ՝ բոլշևիկյան (կոմունիստական) կուսակցության մենատիրության ձևով: Պետական և կուսակցական մարմինների գործունեությունը խիստ կենտրոնացված էր և վերահսկվում էր կուսակցության քաղբյուրոյի ու նրա գլխավոր քարտուղար Ի. Ստալինի կողմից: Կոմունիստական կուսակցության վերնախավում դաժան մրցակցություն և պայքար էր ընթանում իշխանության համար: Ի. Ստալինը և նրա շրջապատը հաղթող դուրս եկան ներկուսակցական պայքարում, հալածանքներ սկսեցին և անողոք հաշվեհարդար տեսան մրցակիցների հետ: Աստիճանաբար ձևավորվեց և ամրապնդվեց «ժողովուրդների հայր» Ստալինի անձի պաշտամունքը: Նա իր ձեռքում կենտրոնացրեց նաև ԽՍՀՄ կառավարության նախագահի պաշտոնը՝ դառնալով միահեծան և անվերահսկելի: 30-ական թվականներին ԽՍՀՄ-ում հաստատվեց Ստալինի դիկտատուրան:

Բռնադատվածների աքսորը

Իր հենարանը դարձնելով ներքին գործերի և անվտանգության մարմինները՝ Ստալինը երկրում զանգվածային տեռոր սանձազերծեց: 1930-ական թվականներին կեղծ մեղադրանքների, մատնությունների հիման վրա միլիոնավոր անմեղ մարդիկ, այդ թվում՝ աչքի ընկնող մտավորականներ, զինվորականներ, արվեստագետներ, հոգևորականներ, աքսորվեցին Սիբիր, նետվեցին համակենտրոնացված ճամբարներ, խոշտանգվեցին բանտերում և գնդակահարվեցին որպես «ժողովրդի թշնամի»:

Ձերբակալվածներից շատերի ճակատագիրը քմահաճորեն տնօրինում էին հատուկ հանձնաժողովները՝ եռյակները՝ «տրոյկաները»,

որոնք մի քանի րոպեի ընթացքում դատավճիռ էին կայացնում և անմիջապես իրագործում: 1930-ական թվականներին մահվան դատապարտվեց 1917-1934 թթ. Կոմունիստական կուսակցության Քաղբյուրոյի անդամների 75%-ը: Ստալինը զանգվածային ձերբակալությունների միջոցով երկրի խոշոր կառույցներն ապահովում էր ձրի բանվորական ուժով: Չնայած այս հանգամանքին՝ «ժողովուրդների հայր» Ստալինը ամենուր փառաբանվում էր, նրա պաշտամունքը քարոզվում էր բոլոր միջոցներով՝ հիմնված վախի և կույր հավատի վրա:

Սոցիալիզմի խորհրդային մոդելը

1920թ. վերջերին հրաժարվելով համոզման և խաղաղ մրցակցության մեթոդից՝ կոմունիստական կուսակցությունը որդեգրեց հարկադրանքի կոշտ քաղաքականություն: Տարբեր պատրվակներով իր հաշիվները մաքրելով ընդդիմության հիմնական ուժերի հետ՝ ստալինյան վերնախավն անցավ «սոցիալիզմի լայնածավալ կառուցման» քաղաքականությանը: Սոցիալիզմի ստալինյան մոդելը, որը ենթադրում էր տնտեսության լիովին պետականացում, վարչաբյուրոկրատական համակարգի ուժեղացում և կոմկուսի համապարփակ տիրապետության հաստատում, իրականացվում էր միջոցների ու ուղիների մեջ խտրություն չդնելով:

Ժողովուրդը գիտակցաբար կամ հարկադրանքի միջոցով հերոսաբար կատարում էր սոցիալիստական շինարարության առաջադրանքները: Միլիոնների կյանքի գնով կառուցվում էին խորհրդային սոցիալիզմի հիմքերը: Համատարած և անսահմանափակ իշխանություն հաստատելու ճանապարհին կոմկուսի ստալինյան վերնախավը չէր հանդուրժում տեղական առանձնահատկությունների հիշատակումն անգամ: 1930-ական թվականներին ԽՍՀՄ-ում կառուցված սոցիալիզմը, ըստ էության, միակուսակցական դիկտատուրայի տիրապետություն էր, որը հենվում էր հարկադրանքի և բռնությունների վրա: Ամբողջատիրական համակարգը ոտնահարում էր անհատի իրավունքները և վաղ թե ուշ դատապարտված էր կործանման:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ կազմավորվեց ԽՍՀՄ-ը: Ո՞ր հանրապետությունները մտան նրա կազմի մեջ:
2. Բնորոշե՛ք նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ): Ի՞նչ եք կարծում, նէպ-ին անցնելը հարկադրական որոշում էր, թե՞ տնտե-

սության զարգացման բնական ընթացք: Ռազմական կոմունիզմի քաղաքականության համեմատությամբ ոչն էր նորը նէպ-ի մեջ:

3. Ինչ եք հասկանում ԽՍՀՄ ինդուստրացում ասելով: Երբ է այն սկսվել և ինչ արդյունքներ է ունեցել:
4. Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումն ինչ հետևանքներ ունեցավ:
5. 1920–1930-ական թվականներին ԽՄՀՄ-ում ինչ քաղաքական համակարգ ստեղծվեց: Ինչպիսին է ձեր վերաբերմունքը այդ համակարգի նկատմամբ: Փորձեք գնահատել այն: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
6. Բնորոշեք Ստալինի անձի պաշտամունքը: Ինչ հետևանքներ ունեցավ այն: Ինչ եք կարծում, անձի պաշտամունքը օրինաչափություն է, թե պատահական երևույթ: Հիմնավորեք ձեր տեսակետը:
7. Ինչ էր իրենից ներկայացնում սոցիալիզմի ԽՍՀՄ մոդելը, տվեք դրա բացատրությունը:
8. Լրացրեք «ԽՍՀՄ-ի տնտեսական քաղաքականությունը 1920–1930-ական թթ.» աղյուսակը:

Միջոցառումներ	Տարիներ	Բնորոշ գծերը և առանձնահատկություններ	Արդյունքներ
Նէպ			
Ինդուստրացում			
Կոլեկտիվացում			

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Աշխարհի բոլոր ժողովուրդներին և կառավարություններին» ՍՍՀ Միության Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության 1923 թվականի հուլիսի 13-ի դիմումից

Սովետական հանրապետությունների ժողովուրդները վերջերս կայացած՝ իրենց Սովետների համագումարներում որոշեցին կազմել միասնական միութենական պետություն՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն: Իրավահավասար ժողովուրդների այդ միավորումը կամավոր է, այն բացառում է որևէ ժողովրդի ազգային ճնշումը և հարկադրումը՝ մնալու այդ պետության սահմաններում, յուրաքանչյուր հանրապետության Միությունից դուրս գալու ազատ իրավունք է վերապահվում, և, միևնույն ժամանակ, սովետական սոցիալիստական բոլոր հանրա-

պետություններին, ինչպես նաև հետագայում ստեղծվողներին նրա կազմի մեջ մտնելու հնարավորություն է տրվում...

Այսպիսով, միջազգային պետությունն ստեղծվել է սովետական հանրապետությունների ժողովուրդների եղբայրական կամավոր էակցության հիման վրա և նպատակ է դնում պահպանել խաղաղությունը բոլոր ժողովուրդների հետ: Իրավահավասար ազգությունները կուռ համագործակցությամբ և միասնական աշխատանքով ձեռք ձեռքի տված կզարգացնեն իրենց կուլտուրան և բարեկեցությունը և կիրականացնեն աշխատավորների իշխանության խնդիրները:

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, լինելով ճնշված ժողովուրդների բնական դաշնակիցը, բոլոր ժողովուրդների հետ ուզում է ունենալ խաղաղ և բարեկամական հարաբերություններ և տնտեսական համագործակցություն: Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը իրեն նպատակ է դնում պաշտպանել ամբողջ աշխարհի աշխատավորների շահերը: Բալթիկ, Սև և Սպիտակ ծովերից մինչև Խաղաղ օվկիանոսն ընկած հսկայական տարածություններում նա ժողովուրդների միջև իրականացնում է եղբայրություն և աշխատանքի թագավորություն, միաժամանակ ձգտում է աջակցել ամբողջ աշխարհի ժողովուրդների բարեկամական համագործակցությանը:

§6. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Քեմալական Թուրքիան

Մուսթաֆա Քեմալ (1881–1938 թթ.)

Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմում խայտառակ պարտություն կրեց: Նրա ներկայացուցիչները 1918թ. հոկտեմբերի 30-ին զինադադարի պայմանագիր ստորագրեցին Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում՝ անգլիական «Ագամեմնոն» ռազմանավի վրա: Օսմանյան կայսրությունն իրեն պարտված ճանաչեց: Թուրքիան պարտավորվում էր անհապաղ զորացրել իր բանակը, զորքերը դուրս բերել Իրանից, Անդրկովկասում գրաված տարածքներից և Կիլիկիայից, ինչպես նաև թուրքական ռազմական նավերը հանձնել Անտանտին: Անտանտն իրավունք էր ձեռք բերում գրավել Բոսֆորի և Դարդանելի ռազմաձովային ամրությունները, Բաքուն, Բաթումը: Թուրքիան համաձայնում էր, որ Անտանտը գրավի հայկական վեց վիլայեթները՝ դրանցից որևէ մեկում «անկարգություններ առաջանալու դեպքում»: Պարտավորվում էր հայ ռազմագերիներին և ձերբակալվածներին կենտրոնացնել Կ. Պոլսում և նրանց հանձնել Անտանտին: Անտանտի երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Հունաստանը, իրենց զորքերը մտցրեցին Թուրքիա: Ստամբուլում գտնվող սուլթանական կառավարությունը համագործակցում էր Անտանտի հետ, կատարում վերջինիս կամքը:

Թուրքիայում սկիզբ առավ «երկիրն օտարերկրյա նվաճողներից» ազատագրելու շարժում, որը ղեկավարեց Մուստաֆա Քեմալը: Նրա անունով այդ շարժումը կոչվեց քեմալական: Քեմալականների գլխավոր պահանջներն էին՝ նախ Անատոլիան, Արևելյան Թրակիան ու նեղուցների գոտին միավորել ու ստեղծել թուրքական ազգային պետություն, և, երկրորդ՝ արգելել օտարերկրյա վերահսկողությունն այդ տարածքներում: Քեմալը 1920թ. ապրիլին Անկարայում գումարեց Թուրքիայի Ազգային մեծ ժողով (ԹԱՄԺ), որն իր վրա վերցրեց սահմանադիր ժողովի գործառույթներ: Քեմալն ընտրվեց նախագահ

Թուրքիայի ազգային մեծ ժողովի գումարումը, 1920 թ.

և կազմեց իր առաջին կառավարությունը: Այսպիսով՝ Թուրքիայում գործում էր երկու կառավարություն, մեկը Ստամբուլում, իսկ մյուսը՝ Անկարայում:

Քեմալականները չճանաչեցին 1920թ. օգոստոսի 10-ին սուլթանական կառավարության՝ Սևրում Անտանտի հետ ստորագրած հաշտության պայմանագիրը: Սակայն նրանք նույն թվականի աշնանը պատերազմական գործողություններ սկսեցին Հայաստանի Հանրապետության դեմ և գրավեցին նրա մի շարք տարածքներ:

Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները 1923թ. ապրիլին հիմնեցին Ժողովրդական կուսակցությունը: Այնուհետև անցկացվեցին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ընտրություններ: Հաղթանակ տարավ ժողովրդական կուսակցությունը: ԹԱՄԺ-ը 1923թ. հոկտեմբերի 29-ին ընդունեց օրենք Թուրքիան հանրապետություն հռչակելու մասին: Նրա առաջին նախագահը դարձավ Մուստաֆա Քեմալը, որը հորջորջվեց Աթաթուրք՝ թուրքերի հայր:

Քեմալականներն իրենց տնտեսական քաղաքականության հիմքում դրեցին էտատիզմի սկզբունքը: Դա նշանակում էր մեծ չափերով պետական միջոցներ ներդնել արդյունաբերության, երկաթուղիների և տնտեսության այլ բնագավառներում և հովանավորել դրանց: Թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց կապիտուլյացիաների ռեժիմը և զրկեց օտարերկրյա ընկերություններին մենաշնորհային կարգավիճակից: Հիմնվեց կենտրոնական բանկ, որն ուներ դրամահատման բացառիկ իրավունք: Մուստաֆա Քեմալը այնուհետև ձեռնամուխ եղավ մի շարք

Քեմալականների մուտքը Իզմիր

բարեփոխումների կիրառմանը: 1923թ. հոկտեմբերին մայրաքաղաքը Ստամբուլից տեղափոխվեց Անկարա, իսկ հաջորդ տարի վերացվեց խալիֆայությունը: 1924թ. ընդունվեց Թուրքական Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Դրանով վերջնականապես ձևակերպվեց միապետության և խալիֆայության վերացումը:

Սահմանադրությունը Թուրքիայի բոլոր ազգություններին և ժողովուրդներին համարում էր թուրք և, փաստորեն, չէր ընդունում քրդերի, հայերի, հույների, լազերի, սլավոնների և այլ ազգային փոքրամասնությունների գոյությունը:

Թուրքական Հանրապետության հռչակումը

1925–1928 թթ. սկսվեց բարենորոգումների նոր փուլ: Ընդունվեցին քրեական և քաղաքացիական օրենսգրքերը, արգելվեցին բազմակնությունը, չադրա կրելը, մտցվեց լատինական այբուբեն՝ արաբականի փոխարեն: Սահմանադրությունից հանվեց իսլամը պետական կրոն ճանաչելու մասին հոդվածը, որով Թուրքիան մտնում էր աշխարհիկ պետությունների շարքը:

1938թ. մահացավ Քեմալ Աթաթուրքը, և նոր նախագահ ընտրվեց Իսմեթ Ինյոնյուն: Թուրքիան կարգավորեց հարաբերություններն Անգլիայի և Ֆրանսիայի հետ: 1932թ. նա դարձավ Ազգերի լիգայի, իսկ 1934թ.՝ բալկանյան Անտանտի անդամ, որի մեջ մտնում էին նաև Հարավսլավիան, Հունաստանը և Ռումինիան:

Իրանի արդիականացման միտումները

Առաջին աշխարհամարտի տարիներին Իրանը հայտնվել էր ծանր իրավիճակում: Տնտեսությունը լրիվ քայքայվել էր, տեղերում գլուխ էին բարձրացրել խաներն ու խոշոր ֆեոդալները: Ղաջարների դինաստիայի կառավարումն օրեցօր դառնում էր ձևական :

Ստեղծված պայմաններից փորձեց օգտվել Անգլիան: Անգլիական զորքերը 1918թ. գրավեցին Իրանի հյուսիսարևմտյան մասը: Վոսուղ էդ-Դոուլեի կառավարությունը 1918թ. օգոստոսին Անգլիայի հետ ստորագրեց մի պայմանագիր, որով անգլիացիներն իրենց վերահսկողությունը հաստատեցին Իրանի ֆինանսների, բանակի, արտաքին առևտրի և կենսականորեն անհրաժեշտ այլ ոլորտների վրա:

Քուչիկ խանի զինվորները

Ազատագրական պայքարի նոր ալիք բարձրացավ Իրանում անգլիացիների դեմ:

Առաջինը 1920թ. ապրիլին ապստամբեց Թավրիզը: Ապստամբները պահանջում էին չեղյալ հայտարարել 1918թ. անգլո-իրանական անիրավահավասար պայմանագիրը, Իրանը հռչակել հանրապետություն: Ազատագրական շարժում էր սկսվել նաև Իրանի հյուսիսային մեկ այլ նահանգում՝ Գիլանում: Ապստամբները կազմեցին ժամանակավոր կառավարություն՝ Քուչիկ խանի գլխավորությամբ: Վերջինս 1920թ. հունիսի 5-ին Գիլանը հռչակեց հանրապետություն:

Հաջորդ տարի ապստամբությունը տարածվեց նաև Խորասանում: Միաժամանակ Թեհրանում և երկրի այլ վայրերում ակտիվացած դեմոկրատական ուժերի պայքարը հանգեցրեց անգլիական դրածո Վոսուղ էդ-Դոուլեի կառավարության անկմանը:

Պարսկական կազակային զորքերի մի խումբ սպաներ, փոխգնդապետ Ռեզա խանի գլխավորությամբ, 1921թ. փետրվարի 21-ին կատարեցին պետական հեղաշրջում: Նոր կառավարությունը չեղյալ հայտարարեց անգլո-իրանական պայմանագիրը: Ռեզա խանը ձեռնարկեց մի շարք քայլեր իր դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Ստեղծվեց միասնական կենտրոնացված բանակ, զինաթափվեցին խոշոր ֆեոդալների և խանների զինված խմբերը: Իր վճռական գործողությունների շնորհիվ Ռեզա խանը ձեռք բերեց ուժեղ մարդու համբավ: 1925թ. հոկտեմբերին Իրանի մեջլիսը՝ պառլամենտը, Ղաջարների դինաստիան հայտարարեց տապալված և Ռեզա խանին հռչակեց Իրանի շահնշահ: Նա ստացավ Ռեզա շահ Փահլավի անվանումը: Իրանում հաստատվեց Փահլավիների դինաստիան:

Ռեզա I շահ
(1848–1944 թթ.)

Ռեզա շահն ընդունեց մի շարք օրենքներ, որոնցով ամրապնդվեցին նրա իշխանությունը և նորահաստատ դինաստիան: Դրանցից են՝ քրեական և քաղաքացիական օրենսգրքերը, հողերի բռնագրավման, գյուղացիական շարժումների դեմ ուղ-

ղված և պետական հողերի վաճառքի վերաբերյալ օրենքները: Նա հողի մեծ մասը թողեց կալվածատերերի ձեռքում և դրանով իր համար հուսալի սոցիալական հենարան ապահովեց: Շահն ինքը դարձավ Իրանի ամենախոշոր հողատերը, նրան էր պատկանում մի քանի հազար գյուղ: Ռեզա շահը 1928թ. չեղյալ համարեց կապիտուլյացիաների ռեժիմը, հիմնեց Իրանի Ազգային բանկը, որն ստացավ նաև դրամահատման իրավունք:

Պարսիկ զինվորների խումբ

Ռեզա շահի կիրառած նորամուծությունների մեջ պետք է առանձնացնել աշխարհիկ և իգական դպրոցների հիմնումը, չադրաների պարտադիր վերացման մասին որոշումը և այլն: Մտցվեց եվրոպական հագուստ, արևային տոմար, վերացվեցին ֆեոդալական տիտղոսները, և շրջանառության մեջ դրվեցին ազգանունները: Զգալի առաջընթաց արձանագրեց տնտեսությունը, մանավանդ թեթև և սննդի արդյունաբերությունը:

Տեղաշարժեր կատարվեցին նաև Իրանի արտաքին քաղաքականության բնագավառում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում Իրանը պաշտոնապես չեզոք դիրք գրավեց: Խորհրդային կառավարությունը համարեց, որ ֆաշիստական վտանգ է ստեղծվել Իրանի և իր երկրի հարավային սահմանների համար: 1941թ. օգոստոսին 1921թ. իրանա-խորհրդային պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն Խորհրդային Միությունն իր զորքերը մտցրեց Հյուսիսային Իրան: Նույն օրն Անգլիան իր զորքերը մտցրեց Հարավային Իրան:

Իրանի շահ Ռեզան հարկադրված էր հրաժարվել գահից և հեռանալ երկրից: Նրան փոխարինեց որդին՝ Մուհամմադ Ռեզա Փահլավին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Վերհիշե՛ք Մուդրոսի զինադադարի պայմանները: Ի՞նչ էր նախատեսում Սևրի հաշտության պայմանագիրը:
2. Բնութագրե՛ք քեմալական շարժումը: Թուրքիան ե՞րբ հռչակվեց հանրապետություն:

3. Ձեր կարծիքով ինչո՞ւ տեղի ունեցավ բոլշևիկ-քեմալական մերձեցումը:
4. Ո՞րն էր Մ. Քեմալի ներքին քաղաքականության էությունը: Փորձեք գնահատել Քեմալին: Ի՞նչ է էտատիզմը:
5. Ինչպիսի՞ն էր Թուրքիայի արտաքին դրությունը 1930-ական թվականներին:
6. Ձեր կարծիքով ի՞նչը հնարավորություն տվեց Անգլիային հաստատվելու Իրանի հյուսիսարևմտյան մասում: Ինչո՞ւ տապալվեց անգլիական դրածո Վոսուղ էդ-Դոուլեի կառավարությունը:
7. Ի՞նչ դեր խաղաց ազատագրական պայքարը Իրանի ներքաղաքական կյանքում: Փորձեք գնահատել Ռեզա խանի գլխավորած պետական հեղաշրջումը: Հիմնավորեք ձեր պատասխանը:
8. Որո՞նք են Ռեզա I շահի նորամուծությունները: Դրանցից ո՞րը կառանձնացնեիք դուք և ինչո՞ւ: Բերեք փաստեր ձեր պատասխանի օգտին:
9. Լրացրեք «Արևելքի ավանդական հասարակությունների արդիականացման միտումները 1920-1930-ական թթ.» աղյուսակը:

Երկրներ	Գործիչներ	Ներքին քաղաքականություն	Արտաքին քաղաքականություն	Արդյունքներ
Թուրքիա				
Իրան				

ԼՐԱՅՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Պայմանագիր Ռուսաստանի և Թուրքիայի միջև,

Մոսկվա, 16 մարտի, 1921թ.

Հոդված 3.

Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ սույն Պայմանագրի 1-ին հավելվածում նշված սահմաններում կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության:

Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված հանձնաժողովը կշտկի Նախիջևանի տերիտորիայի եռանկյունի կազմող արևելքում Արաքսի հնահունի և Արևմուտքում Դաղնա (3829) – Վելի-դաղ (4121) – Բազարգիք (6587) – Քյոմուրլու-դաղ (6930) լեռների վրայով անցնող գծի միջև պարփակված տերիտորիայի

սահմանագիծը...

Հոդված 4.

Երկու Պայմանավորվող կողմերը, հավատալով Արևելքի ժող. վորդների ազգային ու ազատագրական շարժման և նոր հասարակարգի համար Ռուսաստանի աշխատավորության մղած պայքարի միջև եղած փոխադարձ շփումը, անվերահսկելիորեն ճանաչում են այդ ժողովուրդների ազատության և անկախության իրավունքը, ինչպես նաև իրենց ցանկությունների համեմատ կառավարման ձևի ընտրության իրավունքը:

Հոդված 6.

Պայմանավորվող երկու կողմերն ընդունում են, որ ցայժմ երկու երկրների միջև կնքված բոլոր պայմանագրերը չեն համապատասխանում փոխադարձ շահերին: Ուստի նրանք համաձայնվում են այդ պայմանագրերը համարել վերացված և ուժը կորցրած...

Հոդված 12.

Մինչև 1918 թվականը Ռուսաստանի կազմի մեջ մտնող այն տերիտորիաների բոլոր բնակիչները, որպիսիք սույն Պայմանագրի հիման վրա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարությունն այսօր ընդունում է որպես Թուրքիայի սուվերենության տակ գտնվող տերիտորիաներ, ունեն իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով Թուրքիայից ազատ հեռանալու իրավունքը...

Հոդված 15.

Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց:

Հոդված 16.

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերի փոխանակումը կկայանա Կարսում, որքան հնարավոր է կարճ ժամանակամիջոցում...

§7. ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծագող արևի երկիրը (Ճապոնիա):

Սովորաբար այսպես է կոչվում Ճապոնիան Հեռավոր Արևելքում իր աշխարհագրական դիրքի պատճառով: Ճապոնիան երկար ժամանակ մեկուսացված է եղել աշխարհից: Սակայն 1868թ. «Մեյձիի հեղափոխությունը» վերջ տվեց Ճապոնիայի 200-ամյա մեկուսացմանը, և նա ներգրավվեց համաշխարհային գործընթացներում: Ճապոնիան առաջին երկրներից մեկն է, որ շատ շուտ կռահեց գիտության, տեխնիկայի և բարձրակարգ արդյունաբերության կարևորությունը և արտակարգ համառությամբ ու ջանասիրությամբ այդ ոլորտներում գրավեց ամենամեծ բարձունքները: Հենց դրա շնորհիվ Ճապոնիան 1920-ականներին կարողացավ կրկնապատկել իր արտադրանքը:

Ճապոնական զրահապատ մեքենա, 1930-ական թթ.

Ճապոնիան միապետական երկիր է, և նրա գլուխ կանգնած է կայսրը՝ միկադոն, որը ճապոնական ազգի միասնության խորհրդանիշն է, սակայն նա չունի իրական իշխանություն: Ավելի ազդեցիկ է երկպալատանի պառլամենտը, և իրական իշխանությունն իրականացնողը վարչապետն է:



Ճապոնացիների ներխուժումը Չինաստան, 1931 թ.

1929-1933թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը հարվածեց նաև Ճապոնիայի տնտեսությանը, մանավանդ եթե հաշվի առ-

նենք, որ Ճապոնիան զուրկ է բնական պաշարներից և ներմուծում է անհրաժեշտ ամբողջ հումքը: Հումքի բացակայությունը Ճապոնիայի տնտեսության խոցելի կողմերից մեկն է: Այդ բանը լավ են գիտակցում Ճապոնիայում, ինչը Ճապոնիայի ղեկավարությանը մղեց ռազմական արկածախնդրության: Հարվածի գլխավոր ուղղությունները նրա համար դարձան Չինաստանը և Խորհրդային Միությունը: Ճապոնիան 1931թ. սեպտեմբերին ներխուժեց Արևելյան Չինաստան և ստեղծեց Մանչժոու-գո պետությունը: Նա 1938-1939թթ. ռազմական ոտնձգություն կատարեց ԽՍՀՄ-ի և Մոնղոլիայի դեմ, բայց արժանի հակահարված ստանալով դուրս շպրտվեց:

Չինաստանը հավասար հնարավորությունների երկիր

Չինաստանի հարցն ամերիկյան դիվանագիտության նախաձեռնությամբ քննարկման առարկա դարձավ 1921-1922 թթ. Վաշինգտոնում գումարված խորհրդաժողովում, որտեղ ստորագրվեց պայմանագիր Չինաստանի ինքնիշխանության, տարածքային և վարչական անձեռնմխելիության հարգման վերաբերյալ: Սակայն պայմանագրի ամենակարևոր դրույթը թերևս **«հավասար հնարավորությունների»** վերաբերյալ սկզբունքի ընդունումն էր, որը Չինաստանի հետ առևտրի և արդյունաբերական գործունեության համար հավասար պայմաններ և հնարավորություններ էր ընձեռում բոլոր պետություններին: Դա ամերիկյան դիվանագիտության մեծ հաղթանակն էր:

Չինաստանի պետական-քաղաքական կյանքի բնորոշ գիծը կենտրոնական իշխանության թուլացումն էր և տեղերում զանազան ռազմական խմբավորումների ուժեղացումը: Չինաստանում ձևավորվեց երկու կարևոր քաղաքական կենտրոն: Մեկը հյուսիսում՝ Պեկինում գտնվող կառավարությունը, մյուսը հարավում՝ Գուանչ-Ժոուում գտնվող կառավարությունը: 1925-1927թթ. հեղափոխություն բռնկվեց Չինաստանում, որի կենտրոնը Գուանչ-Ժոուում հաստատված Ազգային կառավարությունն էր, որը գլխավորեց գեներալ Չան Կայշին:

Չինական ժողովրդահեղափոխական բանակի զինվորները

Չան Կայշի (1887–1975 թթ.)

Դեռ հեղափոխությունից առաջ կազմավորված ժողովրդահեղափոխական բանակը (ԺՀԲ), ազատագրեց Շանհայը, ապա Նանկինը և այլ տարածքներ:

Հեղափոխության ալիքից սարսափած՝ ազգային բուրժուազիան դադարեց պաշտպանել ազգային կառավարությանը: Գոմինդան կուսակցության աջ թևը Չան Գայշիի գլխավորությամբ 1927թ. ապրիլին հակահեղափոխական հեղաշրջում իրականացրեց Շանհայում և Նանկինում: Նա սկզբնական շրջանում որոշ քայլեր ձեռնարկեց երկրի տնտեսական զարգացումը խթանելու համար: Կառուցվեցին նոր գործարաններ, ճանապարհներ, երկաթուղիներ, դպրոցներ և այլն: Բայց դրանք էական փոփոխություն չմտցրին ժողովրդի սոցիալ-տնտեսական դրության մեջ: Հատկապես ծանր էր գյուղացիության վիճակը: 1928թ. ԱՄՆ-ը և արևմտյան մյուս տերությունները պաշտոնապես ճանաչեցին Չան Կայշիի գլխավորած Գոմինդանի կառավարությունը: 1920-ական թվականների կեսերից ընթանում էր յուրատեսակ քաղաքացիական պատերազմ: Նման իրադրությունից օգտվեցին ճապոնական զավթիչները: Ճապոնական զորքերը, ինչպես արդեն նշվել է, 1931թ. սեպտեմբերին ներխուժեցին Չինաստան, գրավեցին նրա հյուսիսարևելյան հատվածը և ստեղծեցին Մանչժոու-գո խամաճիկ պետությունը: Չինաստանում լայն շարժում սկսվեց ճապոնական ագրեսորների դեմ: Սակայն Չան Կայշին որդեգրեց ագրեսորին չդիմակայելու քաղաքականություն: 1933թ. մայիսին Տանգայում ստորագրված պայմանագրով չինական կառավարությունը ճանաչեց Հյուսիսարևելյան Չինաստանի բռնակ ցումը Ճապոնիային:

Չինացի զինվորների կողմից ճապոնական զորքերի հարձակման կասեցումը, 1932 թ.

1937թ. Ճապոնիան վերսկսեց իր ագրեսիվ գործողությունները: Եթե 1931 թվականի պատերազմական գործողությունների նպատակը Հյուսիսարևել-

յան Չինաստանի զավթումն էր, ապա նոր ագրեսիայի նպատակը ամբողջ Չինաստանի գրավումն էր: Գոմինդանական զորքերն ի վիճակի չեղան լուրջ դիմադրություն ցույց տալու: Ճապոնացիները մինչև 1939թ. գրավեցին հսկայական տարածքներ, այդ թվում՝ Չինաստանի կարևոր կենտրոններ Պեկինը, Շանհայը, Տյանցզինը և այլն:

Ճապոնական զորքերի մուտքը Շանհայ

Հնդկաստանը բրիտանական կառավարման ներքո

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հնդկաստանը շարունակեց մնալ որպես գաղութային երկիր:

Պատերազմը ծանր հարված հասցրեց երկրի տնտեսությանը, որի վիճակն ավելի վատթարացավ 1919–1921 թթ. երաշտի պատճառով: Խիստ կրճատվեց սննդամթերքի արտադրությունը, ընկավ բնակչության կենսամակարդակը, իսկ առանձին նահանգներում սով սկսվեց: Իրենց վիճակի բարելավմանն ուղղված՝ ժողովրդական զանգվածների պայքարը միաձուլվեց անգլիական գաղութարարների դեմ մղվող ազատագրական պայքարին: Իր գործունեությունն ակտիվացրեց դեռևս 1885թ. հիմնված Ազգային կոնգրես կուսակցությունը, որը երկրի ամենաազդեցիկ քաղաքական կազմակերպությունն էր: Պատերազմից հետո նրա ղեկավարը դարձավ Մահաթմա Գանդին: Ազգային կոնգրեսի գործունեության հիմքում դրվեց Գանդիի կողմից ձևակերպված ոչ բռնի դիմադրության սկզբունքը: Այն կազմում է գանդիզմի էությունը: Այդ տեսությունը մերժում էր ուժային, այդ թվում նաև զինված պայքարի մեթոդները և ընդունում պայքարի միայն խաղաղ ձևեր՝ քաղաքացիական անհնազանդություն, ցույցեր, գործադուլներ, հացադուլներ և այլն:



Մահաթմա Գանդի (1869–1948 թթ.)



Հնդկաստանի Ազգային կոնգրեսի նիստը Կարաչիում, 1931 թ.

Կոնգրեսի ներսում այն բանից հետո, երբ Բրիտանական իշխանությունների կողմից 1922թ. ձերբակալվեց Մահաթմա Գանդին, ձևավորվեց, այսպես կոչված, ձախ թևը՝ Ջավահարլալ Ներուի գլխավորությամբ: Ներուն կողմնակից էր ավելի ակտիվ գործողությունների՝ ընդդեմ անգլիական գաղութային տիրապետության: Ակտիվացան նաև իսլամ դավանող հնդիկները և նրանց առաջատար կազմակերպությունը՝ Մուսուլմանական լիգան:

1929–1933թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը մի կողմից հարվածեց Հնդկաստանի տնտեսությանը, իսկ մյուս կողմից՝ խթանեց հակաբրիտանական պայքարը: 1930թ. բանտից ազատված Մահաթմա Գանդին քաղաքացիական անհնազանդության կոչ արեց, որը լայն պաշտպանություն գտավ միլիոնավոր հնդիկների կողմից: Համահնդկական հզոր շարժումն ստիպեց անգլիական իշխանություններին գնալ որոշ զիջումների: 1935թ. Մեծ Բրիտանիայի պառլամենտն ընդունեց օրենք Հնդկաստանի կառավարման մասին: Նոր օրենքով Հնդկաստանի նահանգներում ստեղծվում էին տեղական կառավարություններ, որոնց իրավասության տակ անցան գյուղատնտեսության, կրթության, բժշկության և հանրային աշխատանքների հետ կապված հարցերը:



Ջավահարլալ Ներու (1889–1964 թթ.)

Ազգային կոնգրես կուսակցությունը 1936թ. առաջադրեց բոլոր ընդդիմադիր, հակաբրիտանական ուժերը միավորելու և միասնական ճակատ ստեղծելու քաղաքական կարևոր խնդիրը: Հակաբրիտանական պայքարի առաջատար ուժը շարունակում էր մնալ Ազգային կոնգրեսը՝ Մահաթմա Գանդիի գլխավորությամբ, որը 1937թ. կայացած նահանգային օրենսդրական ժողովների ընտրություններում հաղթեց տասնմեկ նահանգներից ութում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Ճապոնիան կարողացավ դառնալ տնտեսապես զարգացած երկիր: Ի՞նչ կարելի է ընդօրինակել Ճապոնացիներից և ինչո՞ւ:
2. Ձեր կարծիքով ճի՞շտ էր արդյոք Ճապոնիայի գործողությունները Չինաստանի և Մոնղոլիայի դեմ բնութագրել որպես ռազմական արկածախնդրություն: Հիմնավորեք ձեր տեսակետը:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ հնարավոր եղավ Չինաստանի ներքին հակադիր ուժերի միջև միասնական ճակատի ձևավորումը:
4. Փորձեք բացատրել «քաղաքացիական անհնազանդություն» հասկացությունը:
5. Ի՞նչ եք կարծում, կարելի՞ է 1935 թ. օրենքը որակել որպես Հնդկաստանի Սահմանադրություն: Հիմնավորեք ձեր տեսակետը:
6. Ե՞րբ ստեղծվեց Համաբրիտանական միասնական ճակատը Հնդկաստանում: Ի՞նչ ուժեր մտան նրա մեջ:
7. Ձեր կարծիքով ինչո՞ւ Ջ. Ներուի՝ միասնական Հնդկաստանի մասին դիրքորոշումը պաշտպանություն չգտավ և՛ հինդուսների, և՛ մուսուլմանների կողմից: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
8. Լրացրեք «Հեռավոր Արևելքի ու Հնդկաստանի ավանդական հասարակությունները» աղյուսակը:

Երկրներ (ավանդական հասարակություններ)	Բնորոշ գծեր, առանձնահատկություններ			
	Քաղաքական	Տնտեսական	Սոցիալական	Պետական կառուցվածք
Ճապոնիա				
Չինաստան				
Հնդկաստան				

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մահաթմա Գանդիի մտքերից

1. Արևելքի և Արևմուտքի միջև անհաղթահարելի պատնեշ գոյություն չունի:

2. Գոյություն չունի այն, ինչ անվանում են արևմտյան կամ եվրոպական քաղաքակրթություն, գոյություն ունի ժամանակակից քաղաքակրթություն, որը զուտ նյութական բնույթ է կրում:

3. Եվրոպայի ժողովուրդները, մինչև նրանց կդիպչեր ժամանակակից քաղաքակրթությունը, ընդհանուր շատ բան ունեին Արևելքի ժողովուրդների հետ և համենայնդեպս՝ Հնդկաստանի ժողովուրդ-

ների հետ, և անգամ ներկայիս եվրոպացիները, որոնց դեռ չի դիպել ժամանակակից քաղաքակրթությունը, անհամեմատ ավելի ընդունակ են խառնվել հնդիկների հետ, քան այդ քաղաքակրթության շառավիղները:

4. Հնդկապանը կառավարում է ոչ թե բրիտանական ժողովուրդը, այլ ժամանակակից քաղաքակրթությունն իր երկաթուղիների, հեռագրերի, հեռախոսների և ամեն տեսակ գյուտերի օգնությամբ, որոնք փառաբանվում են որպես քաղաքակրթության հաղթանակ:

6. Եթե բրիտանական իշխանությունը վաղը փոխարինվեր նույն հիմունքների վրա կառուցված հնդկականով, Հնդկապանը չէր հայտնվի ավելի լավ վիճակում, քան առաջ էր: Տարբերությունը միայն այն կլիներ, որ այն կկարողանար իր մոտ պահել փողերի մի մասը, որոնք այժմ Անգլիա են մղվում: Բայց այդ պարագայում Հնդկապանը կդառնար Եվրոպայի երկրորդ կամ հինգերորդ հրապարակումը:

12. Հնդկապանի փրկությունն այն է, որ գլխից հանի այն ամենը, ինչ սովորել է վերջին հիսուն տարիներին: Երկաթուղիները, հեռագիրը, հիվանդանոցները, փապարանները, բժիշկները, այդ ամենը պետք է անհետանան, և այսպես կոչված՝ բարձր դասերը պետք է սովորեն լիակատար ըմբռնմամբ, կրոնական համոզմունքով և ամուր մտադրվածությամբ ապրել գեղջկական հասարակ կյանքով և հասկանալ, որ դա կենարար, իսկական երջանկություն է:

§8–9. ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XX դարի 20–30–ական թվականների մշակույթի վրա որոշիչ ազդեցություն էին գործում համաշխարհային պատերազմի ծանր հետևանքները, համաշխարհային տնտեսական ճգնաժամը, մարդկանց սոցիալական դրության ծայրաստիճան վատթարացումը:

Առաջին հեռուստացույցներից մեկը (Telefunken), Գերմանիա, 1935 թ.

Մի շարք երկրներում ամբողջատիրական վարչակարգերի հաստատումը և ֆաշիզմի տարածումը նույնպես իրենց կնիքը դրեցին տվյալ ժամանակի գիտության և արվեստի զարգացման վրա: Գերմանիայում, Իտալիայում, ԽՍՀՄ–ում գիտությունն ու մշակույթն ամբողջապես դրված էին պետության վերահսկողության տակ: Իտալիայում նույնիսկ ստեղծվեց ֆաշիզմի գեղանկարչության ակադեմիա: Իշխող կուսակցության հսկողության ներքո ստեղծվում էին մշակույթի այնպիսի գործեր, որոնք պետք է մեծարեին առաջնորդներին, ցույց տալով վարչակարգի հզորությունը և հարատևությունը:

30–ական թթ. Գերմանիայի թանգարաններից հանվեցին և՛ օտարերկյա, և՛ գերմանացի նկարիչների մոտ 16 հազար կտավներ, որոնք չէին համապատասխանում նացիստների «ճաշակին»: Ոչնչացվեցին քանդակներ և հուշարձաններ, կրակի մատնվեցին ֆաշիզմի գաղափարներին «չհամապատասխանող» հարյուր հազարավոր գրքեր: Ռասայական պատկերացումներից ելնելով՝ Գերմանիայում արգելվեց ջազային երաժշտությունը: ԽՍՀՄ–ում այն արգելված էր՝ որպես բուրժուական մշակույթի դրսևորում:

Հիմնարար գիտություններ

20–րդ դարի առաջին կեսին գիտության ասպարեզում կատարվեցին բազմաթիվ հայտնագործություններ, որոնք հեղափոխական նշանակություն ունեցան մարդկության հետագա ճակատագրի համար: Գիտնականներին հաջողվեց թափանցել ատոմի կառուց-



Ալբերտ Այնշտայն (1879–1955 թթ.)

Զիգմունդ Ֆրեյդ (1856–1939 թթ.)

վածքի խորքերը: Հայտնաբերվեցին էլեկտրոնը, պրոտոնը, պոզիտրոնը, նեյտրոնը, ինչը 30-ական թվականների վերջին մարդկությանը մոտեցրեց ատոմային էներգիայի յուրացմանը և կիրառմանը:

Ալբերտ Այնշտայնի **հարաբերականության տեսությունը** վերափոխեց տարածության, ժամանակի և շարժման վերաբերյալ նախկինում եղած բոլոր պատկերացումները: Նոր զարգացում ստացան **միջառարկայական գիտությունները՝** երկրաֆիզիկան, կենսաքիմիան, էլեկտրաքիմիան և այլն: Մեծ հաջողություններ արձանագրվեցին միկրոկենսաբանության և դեղագործության բնագավառում: Դրվեցին **ժառանգականության տեսության** (գենետիկայի) հիմքերը:

Բնական գիտությունների զարգացումը պահանջում էր վերանայել մարդկային հասարակության մասին եղած ուսմունքներն ու գաղափարները: Այս ասպարեզում կարևոր ներդրում հանդիսացան Արթուր **Շոպենհաուերի** և Ֆրիդրիխ **Նիցշեի** փիլիսոփայական աշխատությունները մարդկանց վարքագծի և հոգեբանության վերաբերյալ: Ավստրիացի հոգեբան Զիգմունդ **Ֆրեյդի** ուսմունքը մարդկանց վարքագծի ենթագիտակցական շարժառիթների վերաբերյալ կատարյալ հեղափոխություն առաջացրեց հոգեբանության ոլորտում:

Եվրոպայում և ԱՄՆ-ում սկսեց զարգանալ գիտության նոր ճյուղ՝ **սոցիոլոգիան՝** գիտություն հասարակության զարգացման օրինաչափությունների և մարդկանց հասարակական վարքագծի մասին: Այս բնագավառում լայն ճանաչում ստացան Մաքս **Վեբերի** հետազոտությունները:

Գրականությունը և արվեստը

1920–1930-ական թվականների համաշխարհային գրականությունը կրում էր Շոպենհաուերի, Նիցշեի և Ֆրեյդի գաղափարների ազդեցությունը: Կարծես կանխազգալով մոտալուտ ապագայի սոցիալական ցնցումները՝ շատ գրողներ և բանաստեղծներ ընկնում էին հոռետեսության և միապաղաղության գիրկը: Իրենց ստեղծագործություններում նրանք անդրադառնում էին հասարակության մեջ

տիրող անարդարությանը, ստեղծագործող անհատի ծանր ճակատագրին: Այս տեսակին են պատկանում Ռոմեն **Ռոլանի** գրած կենսագրական աշխատությունները ականավոր նկարիչների ու երաժիշտների մասին:

Թեոդոր Դրայզեր (1871–1945 թթ.)

Դրան զուգահեռ գրականության մեջ գերիշխող էր մնում **քննադատական ռեալիզմի** ուղղությունը: Ամերիկյան գրողներ Թեոդոր **Դրայզերը,** Ջոն **Ստեյնբեկը,** Էպտոն **Սինկլերը,** ֆրանսիացի Անատոլ **Ֆրանսը** և ուրիշներ ստեղծեցին քննադատական ռեալիզմի արժեքավոր գործեր: Անգլիացի դրամատուրգ, գրող Բեռնարդ **Շոուի** ստեղծագործությունների շնորհիվ դրամատուրգիան դուրս բերվեց փակուղուց և ստացավ գեղարվեստական ու գաղափարական նոր որակ: Նրա «Պիգմալիոն» պիեսը ցուցադրվեց աշխարհի գրեթե բոլոր թատրոններում: Դրամատուրգիայի բնագավառում որպես նորարարներ հանդես եկան Գերմանիայում Գերհարդ **Հաուպտմանը,** Նորվեգիայում Հենրիխ **Իբսենը:**

20-ական թվականներին ասպարեզ իջան երիտասարդ տաղանդավոր գրողներ Էռնստ **Հեմինգուեյը,** Էրիխ Մարիա **Ռեմարկը**, Ռիչարդ **Օլդինգթոնը,** որոնց ստեղծած գեղարվեստական բարձրարժեք գործերը բողոք էին արտահայտում Առաջին աշխարհամարտի ընթացքում կատարված ահավոր մարդկային սպանդի և զրկանքների դեմ:

Այդ տարիներին գրականության մեջ ավանգարդիստական ուղղության ներկայացուցիչներ էին իռլանդացի Ջեյմս **Ջոյսը,** ավստրիացի Ֆրանց **Կաֆկան**, ֆրանսիացի Մարսել **Պրուստը** և ուրիշներ:

20-30-ական թթ. ստեղծված արվեստի ու գրականության ստեղծագործությունները գեղագիտական արժեքով և նորարարական մոտեցումներով իրենց արժանի տեղը գտան մարդկության մշակույթի գանձարանում:

Էռնստ Հեմինգուեյ (1899–1961 թթ.)

XX դարում գրականության և արվեստի մեջ իշխող նախկին ուղղություններին փոխարինելու եկան նոր հոսանքներ՝ **նեոռոմանտիզմը և սիմվոլիզմը,** որոնք մոդեռնիզմի առավել ցայտուն դրսևորումն էին:

Նեոռոմանտիզմը ուղղություն

Պաբլո Պիկասո,
«Դերասանների ընտանիքը»



Ումբերտո Բոչչոնի,
«Փողոցը մտնում է տուն»



Սալվադոր Դալի, «Քուն»

էր, որը ձգտում էր սինթեզել և ըմբռնել եվրոպական և համաշխարհային մշակույթը:

Սիմոլիզմի գլխավոր գեղարվեստական հասկացությունը սիմվոլներն էին, որոնք ներկայացնում էին իրականի և առասպելականի, անհատականի և սոցիալականի միասնությունը: Այսպես, օրինակ, հավերժ կանացիության կերպարը ներկայացվում էր որպես երկրային բարձրագույն կատարելության սիմվոլ:

XX դարի գեղանկարչության բնորոշ ուղղություններից էին **կուբիզմը, ֆուտուրիզմը, սյուրռեալիզմը և այլն:**

Կուբիզմի ուղղության հիմնադիրներն էին Պաբլո Պիկասոն և Ժորժ Բրակը: Կուբիզմի ներկայացուցիչներն աշխարհը պատկերում էին երկրաչափական կառուցվածքների ձևով՝ աղավաղելով իրական առարկաների պատկերները:

Ֆուտուրիզմի (լատ. futurum (ապագա) բառից) ավանգարդիստական ուղղությունը հիմնադրվեց Իտալիայում, որի կարկառուն ներկայացուցիչներն էին Ու. Բոչչոն և Գ. Սևերինի: Ֆուտուրիստները ձգտում էին գեղանկարչության և քանդակագործության մեջ արտահայտել ժամանակի և դրա հետ կապված շարժման գաղափարը:

Սյուրռեալիզմը (ֆրանս. surrealism՝ գերռեալիազմ) խոշոր ավանգարդիստական ուղղություն էր գեղանկարչության մեջ, որի ներկայացուցիչները՝ Ս. Դալին, Խ.Միրոն, Ի. Տանգին, առարկաներին տալիս էին իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը:

Ինչպես գեղանկարչության, գրականության, այնպես էլ երաժշտության բնագավառում 20–30-ական

թվականներին զարգացում ստացան **սիմվոլիզմի, նեոռեալիզմի և իմպրեսիոնիզմի** ուղղությունները: Երաժշտության մեջ սիմվոլիզմի ներկայացուցիչն էր Ալեքսանդր **Սկրյաբինը**: Տաղանդավոր կոմպոզիտորներ Սերգեյ **Պրոկոֆևի**, Մորիս **Ռավելի** ստեղծագործությունները խորհրդանշեցին երաժշտական արվեստում նոր դարաշրջանի ծնունդը:

1920–1930-ական թվականների երաժշտության հատկանշական գծերից էր նրա մասսայականացումը: Ռադիոյի և ձայնասկավառակների շնորհիվ օպերային և սիմֆոնիկ ձայնագրությունները, այդ թվում այնպիսի հանրահայտ օպերային երգիչների, ինչպիսիք են Էնրիկո **Կարուզոն** և Ֆյոդոր **Շալյապինը**, հասու դարձան տասնյակ հազարավոր մարդկանց: Լայն տարածում գտավ էստրադային և պարային երաժշտությունը:

Ֆյոդոր Շալյապին (1873–1938 թթ.)

ԱՄՆ-ում սկիզբ առավ և աշխարհով մեկ տարածվեց **ջազը**, որի հիմքում ընկած էր նեգրական ժողովրդական երաժշտությունը: Ստեղծվեց մյուզիքլի ժանրը, որպես ներկայացման հատուկ ձև, որը զուգակցում է պարը, երգը և ասմունքը:

Ջազը ԱՄՆ-ում

XIX դարի վերջին դրվեց **կինեմատոգրաֆիայի** սկիզբը: Դեռևս համր կինոն սկզբից ևեթ մեծ մասսայականություն վայելեց: Համր կինոյի հայտնի դերասաններ **Չարլի Չապլինը, Մաքս Լինդերը, Մերի Պիքֆորդը** և ուրիշներ համաշխարհային հռչակ ձեռք բերեցին: Ստեղծվեց կինեմատոգրաֆիայի փաստավավերագրական ժանրը:

Առանձնակի թափ ստացավ կինոարտադրությունը ԱՄՆ-ում: 1920–1930-ական թվականները պատմության մեջ մտան որպես **Հոլիվուդի «ոսկե դար»:** Հոլիվուդը Լոս Անջելեսի արվարձաններից է, որը որպես կինո-քաղաք ստեղծվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին: Իր մեծ ֆինանսական և տեխնիկական հնարավորություններով Հոլիվուդը շուտով դարձավ համաշխարհային կինո-

Չարլի Չապլին (1889–1977 թթ.)

արտադրության կենտրոնը: Տարբեր երկրներից այստեղ էին գալիս ռեժիսյորներ և դերասաններ՝ աշխատելու կինո- ստուդիաների հետ:

Հարցեր և առաջադրանքներ

1. XX դարի 20-30-ական թթ. ինչ գործոններ իրենց ազդեցությունը թողեցին գիտության, գրականության և արվեստի վրա:
2. Ներկայացրեք գիտության զարգացման ընթացքը XX դարի 20-30-ական թթ.: Ձեր կարծիքով գիտական որ հայտնագործությունները փոխեցին մարդկանց պատկերացումները և աշխարհընկալումները:
3. Որոնք են XX դարի 20-30-ական թթ. գրականության և արվեստի տիրապետող ուղղությունները: Այդ ուղղություններից որն է ձեզ համար նախընտրելի և ինչու: Այդ շրջանի հեղինակներից ում ստեղծագործություններն են ձեզ ավելի դուր գալիս: Ինչ գիտեք նրա մասին:
4. Լրացրեք «1920-1930-ական թթ. գրականությունը և արվեստը» աղյուսակը:

Բնագավառները	Ներկայացուցիչները	Ուղղությունները
Գրականություն		
Գեղանկարչություն		
Երաժշտություն		
Կինոարվեստ		

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Էռնեստ Հեմինգուեյ «Ծերունին և ծովը»

«Ծերունին և ծովը» ստեղծագործության համար 1954թ. Էռնեստ Հեմինգուեյն արժանացել է Նոբելյան մրցանակի: Ստեղծագործությունն իսկական հեղաշրջում մտցրեց համաշխարհային գրականության մեջ: Առաջին հայացքից այն ողողակի մի պատմություն է ծեր ձկնորսի մասին, բայց հեղինակի գրչի տակ մի իսկական գլուխգործոցի է վերածվում: Ստեղծագործության գլխավոր հերոսը ձկնորս Սանտյագոն է՝ խեղճ ու միայնակ մի ծերունի, ում ճակատագիրն անմիջականորեն կախված է ծովի հետ, որն էլ ապահովում է նրա համեստ գոյությունը: Բայց ծովը ոչինչ հենց

այնպես չի գալիս, գոյատևման համար պետք է երկար ու համառ աշխատանք, ինչով էլ գարեցգարի անցնում է ծերունու կյանքը:

Շատ փորձությունների միջով է անցնում Սանտյագոն, բայց նրա սիրտը միշտ բաց է մնում ծովի բնակիչների համար՝ կենդանի էակների, որոնք, ինչպես և ինքը, հսկայական աշխարհի մի մասնիկ են կազմում:

Ձկնորսության ժամանակ ծերունին հաճախ է հիշում իր պատանի ընկեր Մանոլինիոյին, ում նա սովորեցրել է ձկնորսական գործի հմտությունները, և ում հետ ծերունին բավական ընդհանրություններ ունի: Նա ուզում էր, որ Մանոլինիոն միշտ իր հետ լիներ: Տղայի առկայությունը ինչ-որ չափով լցնում էր նրա մենությունը:

Վիպակի հերոսը, որ մեծ կենսափորձ ունեցող և կյանքի դժվարությունները հաղթահարող ընդհանրացված կերպար է, ինչ-որ չափով հիշեցնում է նաև հեղինակին՝ Հեմինգուեյին: Հերոսի կամքի ուժը, ոգու արիությունը, դժվարություններից չընկճվելը ուսանելի օրինակ են բոլորիս համար:

§10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920–1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վերսալ–վաշինգտոնյան համակարգի փլուզումը

Հիտլերի հայտարարությունը Գերմանիայի՝ Ազգերի լիգայից դուրս գալու մասին

Գերմանիան երբեք չհաշտվեց Վերսալյան հաշտության պայմանագրով իրեն պարտադրված սահմանափակումների հետ և բոլոր միջոցներով ձգտում էր ազատվել դրա կապանքներից: Նա 1932թ. միակողմանիորեն դադարեցրեց ռազմատուգանքների վճարումը և որպեսզի ստանա գործողությունների ազատություն ու որևէ կերպ կաշկանդված չլինի Վերսալյան պայմանագրով, 1933թ. դուրս եկավ Ազգերի լիգայի կազմից և հրաժարվեց Վերսալյան պայմանագրից: Հիտլերը դիմեց ավելի վճռական քայլի: 1936թ. նա իր զորքերը մտցրեց Հռենոսի ապառազմականացված գոտի: Նույն կերպ էր գործում Ճապոնիան Հեռավոր Արևելքում: Ճապոնիան, հաշվի չնստելով վաշինգտոնյան պայմանագրերով մտցված սահմանափակումների հետ, զարկ տվեց իր ռազմածովային նավատորմի զարգացմանը: Միաժամանակ նա նոր քայլերի դիմեց իր ազդեցությունը և դիրքերը Չինաստանում ամրապնդելու ուղղությամբ:

Վերսալ–վաշինգտոնյան համակարգն ի վերջո փլուզվեց:

Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ձևավորեցին ռազմական դաշինք, որի նպատակը աշխարհի նոր վերաբաժանումն էր և համաշխարհային տիրապետության հասնելը:

Այդ նույն ժամանակահատվածում ձևավորվեց նաև մյուս, հակառակ խմբավորումը, որի կորիզը կազմում էին Անգլիան և Ֆրանսիան: Նրանց հետ դաշնակցում էին և սերտ ռազմաքաղաքական համագործակցության մեջ էին Եվրոպայի մի շարք երկրներ՝ Բելգիան, Հոլանդիան, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Հունաստանը:

Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան իրենց քաղաքական նպատակների կենսագործման լավագույն միջոցը համարում էին ագրե-

սիան: Գերմանիան, Իտալիայի հետ միասին, 1936-1939 թթ. իրականացրեց ռազմական ինտերվենցիա Իսպանիայի Հանրապետության դեմ: Նրանց օգնությամբ Իսպանիայում հաստատվեց գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական դիկտատուրան: 1935-1939 թթ. իտալական ֆաշիստները գրավեցին Եթովպիան և Ալբանիան: Հեռավոր Արևելքում 1937թ. Չինաստանի դեմ իր ագրեսիան վերսկսեց Ճապոնիան: 1938թ. հուլիսի վերջերին ճապոնական զորքերը ներխուժեցին Խորհրդային Միության տարածքը՝ Խասան լճի շրջանում: Խորհրդային բանակը ծանր հարվածներ հասցրեց ճապոնական զավթիչներին և օգոստոսի կեսերին նրանց դուրս շպրտեց երկրից: 1939թ. մայիսին Ճապոնիան սանձազերծեց ագրեսիվ գործողություններ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության դեմ: Խորհրդային և մոնղոլական զորքերը ջախջախիչ հակահարված տվեցին ճապոնական ռազմամոլներին:

Քաղաքացիական պատերազմի մասնակիցներ, Իսպանիա

Խաղաղեցման քաղաքականության ձախողումը. «Մյունխենյան գործարքը»

Անգլիան և Ֆրանսիան ագրեսորների նկատմամբ որդեգրել էին թողտվության, զիջումների և չմիջամտելու քաղաքականություն, որն ստացավ «խաղաղեցնելու քաղաքականություն» ծաղրական անվանումը: Նրանք ուրիշ պետությունների և ազգերի կենսական շահերի հաշվին Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի կատարած քաղաքական, ռազմական և տարածքային զիջումները փորձում էին «արդարացնել» խաղաղությունը պահպանելու մտահոգությամբ:

Այդ քաղաքականության բարձրակետը հանդիսացավ Մյունխենյան գործարքը: Չեխոսլովակիայի Սուդեթական մարզի բնակչության կեսից ավելին գերմանացիներ էին: Օգտագործելով այդ հանգամանքը, Հիտլերը պահանջեց Սուդեթական մարզը հանձ-


Մյունխենյան գործարքի կնքումը

Չեմբեռլենը Լոնդոնի օդանավակայանում Մյունխենից վերադառնալուց հետո

նել Գերմանիային: Առաջացավ նոր քաղաքական ճգնաժամ Եվրոպայում: 1938թ. սեպտեմբերի վերջերին Մյունխենում կայացավ Անգլիայի վարչապետ Չեմբեռլենի, Ֆրանսիայի վարչապետ Դալադիեի, Իտալիայի առաջնորդ Մուսոլինիի և Գերմանիայի կանցլեր Հիտլերի հանդիպումը: Սեպտեմբերի 30-ին նրանք ստորագրեցին համաձայնագիր Սուդետական մարզն ամենակարճ ժամկետում Գերմանիային հանձնելու վերաբերյալ: Նույն օրը Չեխոսլովակիայի կառավարությունը հայտարարեց, որ «ինքը ենթարկվում է Մյունխենում առանց մեզ և ընդդեմ մեզ ընդունված որոշումներին»: Սակայն չեխոսլովակյան դրաման դրանով չավարտվեց: 1939թ. Գերմանիան գրավեց նաև Չեխոսլովակիայի մնացած տարածքները, և այդ երկիրն անհետացավ Եվրոպայի քաղաքական քարտեզից:

1939թ. խորհրդա-գերմանական համաձայնագիրը

1930-ական թվականների վերջերին տեղի ունեցավ քաղաքական ուժերի նոր վերադասավորում Եվրոպայում: Գերմանիան որոշեց հաջորդ հարվածը հասցնել ոչ թե Խորհրդային Միությանը, այլ Անգլիային և Ֆրանսիային: Հիտլերյան ղեկավարությունը գտնում էր, որ դրա համար պետք է հարաբերությունները բարելավել ԽՍՀՄ-ի հետ՝ Գերմանիայի թիկունքն ամրապնդելու և երկու ճակատներում պատերազմելուց խուսափելու համար: Գերմանիան պաշտոնապես դիմեց խորհրդային կառավարությանը՝ երկու երկրների միջև չհարձակման համաձայնագիր կնքելու առաջարկությամբ: Խորհրդային ղեկավարությունը հաշվի էր առնում, որ ԽՍՀՄ-ը գտնվում է մեկուսացման մեջ: Եվ այդ մեկուսացումից դուրս գալու, ինչպես նաև գերմանական հզոր ռազմական մեքենան Խորհրդային Միության դեմ ուղղելու՝ արեմտյան տերությունների ծրագրերը

Խորհրդա-գերմանական փոխադարձ չհարձակման պայմանագրի ստորագրումը

ձախողելու նպատակով դրականորեն արձագանքեց գերմանական առաջարկությանը:

1939թ. օգոստոսին Մոսկվա ժամանեց Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ի. Ռիբենտրոպը, որը հանդիպումներ ունեցավ Ի. Ստալինի և արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Վ.Մոլոտովի հետ: 1939թ. օգոստոսի 23-ին երկու երկրների արտաքին գործերի նախարարներն ստորագրեցին չհարձակման պայմանագիր՝ տասը տարի ժամանակով:

Պայմանագիրը, ինչպես հետագայում հայտնի դարձավ, ուներ նաև գաղտնի արձանագրություն՝ Արևելյան Եվրոպան ազդեցության գոտիների բաժանելու վերաբերյալ: Ըստ այդմ, խորհրդային ազդեցության գոտու մեջ էին մտնում Արևելյան Լեհաստանը՝ Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելառուսիան, մերձբալթյան երկրները՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, և Արևելյան Եվրոպայի այլ մասեր՝ Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ 1930-ական թվականներին հնարավոր դարձավ Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
2. Որո՞նք են Երկրորդ աշխարհամարտի նախօրեին ձևավորված երկու հակադիր խմբավորումները: Ի՞նչ նպատակներ էին հետապնդում դրանք:
3. Ինչո՞ւ Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան ագրեսիվ գործողություններ ձեռնարկեցին 1930-ական թվականներին: Ինչո՞ւ ագրեսորների դեմ ուղղված Արևմուտքի պետությունների քաղաքականությունը չհանգեցրեց պատերազմի կանխմանը: Հիմնավորեք ձեր տեսակետը:
4. Ի՞նչ հետևանք ունեցավ ագրեսորներին «խաղաղեցնելու» կուրսը: Գնահատեք «Մյունխենյան գործարքը»:
5. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ կնքվեց խորհրդա-գերմանական չհարձակման պայմանագիրը: Արդյո՞ք դա անխուսափելի էր ԽՍՀՄ-ի համար: Ձեր կարծիքով ի՞նչ ազդեցություն ունեցավ այդ պայմանագիրը միջազգային իրադարձությունների հետագա ընթացքի վրա:
6. Լրացրեք «Բեռլին-Հռոմ-Տոկիո առանցքի» երկրների ագրեսիան 1930-ական թթ.» աղյուսակը:

Գերմանիա		**Իտալիա**		**Ճապոնիա**	
Տարե-թիվ	Իրադար-ձություն	Տարե-թիվ	Իրադար-ձություն	Տարե-թիվ	Իրադար-ձություն

§11–12. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

Աշխարհամարտի պատճառները, հակամարտող դաշինքները

Երկրորդ համաշխարհային պատերազմն արդյունք էր արևմտյան պետությունների միջև քաղաքական, տնտեսական խոր ու անհաշտ հակասությունների: Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան, գտնելով, որ ուժերի հարաբերակցությունը փոխվել է հօգուտ իրենց, պայքար ծավալեցին աշխարհում Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական տիրապետող դիրքերը վերացնելու և աշխարհի նոր վերաբաժանման նպատակով:

Անգլիայի և Ֆրանսիայի հիմնական նպատակն էր պահպանել իրենց՝ տիրապետող քաղաքական և տնտեսական դիրքերը, ձախողել «Բեռլին–Հռոմ–Տոկիո առանցքի»՝ համաշխարհային տիրապետության հասնելու ծրագրերը:

Պատերազմի առաջացման մեջ իրենց դերակատարումն ունեցան նաև Վերսալ–վաշինգտոնյան համակարգի փլուզումը և Գերմանիայի, Իտալիայի, ինչպես նաև Ճապոնիայի կողմից հարցերը պատերազմի միջոցով լուծելու քաղաքականության որդեգրումը: Պատերազմն սկսվում էր նրանց համար միանգամայն բարենպաստ պայմաններում: ԱՄՆ–ը վարում էր մեկուսացման քաղաքականություն և չեզոք դիրք էր գրավում: ԽՍՀՄ–ը, Գերմանիայի հետ ստորագրելով չհարձակման պայմանագիր, այդ պահին սպառնալիք չէր ներկայացնում Գերմանիայի և նրա դաշնակիցների համար: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան իրենց տնտեսական զարգացման և ռազմական ներուժի առումով արդեն զիջում էին առանցքի երկրներին՝ Գերմանիային, Իտալիային և Ճապոնիային:

Պատերազմի նախօրյակին ձևավորվեցին երկու հակադիր խմբավորումներ՝ իրենց համակիր պետություններով հանդերձ՝ «Բեռլին–Հռոմ–Տոկիո» առանցքը, որի, եթե ոչ դաշնակիցներ, համակիրներն էին Իսպանիան, Բուլղարիան, Հունգարիան, Ռումինիան, Ֆինլանդիան և Դանիան, և առանցքի հակադիր խմբավորումը, որը գլխավորում էին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, որոնց հետ էին Բելգիան, Հոլանդիան, Հարավսլավիան, Հունաստանը և Լեհաստանը:

Պատերազմի առաջին շրջափուլը և դրա արդյունքները

Ֆաշիստական Գերմանիայի առաջին զոհը եղավ Լեհաստանը: Պատրաստվելով պատերազմական գործողությունների ընդդեմ Լեհաս-

Ֆաշիստական զորքերը Լեհաստանում

տանի, Հիտլերը 1939թ. օգոստոսի 22-ին Օբերզալցբուրգում գերմանական բարձրագույն զինվորական հրամանատարության հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարեց. «Ես այժմ Արևելք եմ ուղարկում իմ «մահվան ջոկատները», որոնց հրամայված է առանց խղճահարության ու ներողամտության սպանել լեհ ցեղին պատկանող և լեհերեն խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այս ճանապարհով մենք կշահենք այն կենսական տարածքը, որ մեզ անհրաժեշտ է... Ո՞վ է այսօր դեռ խոսում հայերի ոչնչացման մասին...»: Հիտլերն ակնարկում էր երիտթուրքերի կողմից 1915թ. Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանությունը:

1939թ. սեպտեմբերի 1-ի առավոտյան գերմանական զորքերը ներխուժեցին Լեհաստան: Այդ տարեթիվը պաշտոնապես ընդունված է որպես Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբ:

1939թ. սեպտեմբերի 3-ին Անգլիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Նրան պատերազմ հայտարարեցին նաև Մեծ Բրիտանիայի դոմինիոններ Ավստրալիան, Նոր Զելանդիան, Կանադան և Հարավ-աֆրիկյան Միությունը: Թվում էր, թե վրա հասավ ագրեսորին վճռական հակահարված հասցնելու պահը: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի սպառնալիքները խոսքից այն կողմ չանցան: Սեպտեմբերի կեսերին Գերմանիան արդեն գրավել էր Լեհաստանի տարածքի համարյա կեսը: Հենց այդ պահին խաղի մեջ մտավ Խորհրդային Միությունը: 1939թ. սեպտեմբերի 17-ին խորհրդային զորքերը մտան Լեհաստան: 12 օր տևած պատերազմական գործողությունների ընթացքում նրանք գրավեցին Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելառուսիան, որոնք Լեհաստանին էին անցել 1920թ.: Խորհրդային Միությունը, ելնելով 1939թ. գերմանա-խորհրդային պայմանագրի գաղտնի համաձայնագրի պայմաններից, գրավեց նաև Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան, որոնք պատկանում էին Ռումինիային, իսկ 1940թ. օգոստոսին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտան Լատվիան, Լիտվան, Էստոնիան և Մոլդովան:

Թեև Անգլիան ու Ֆրանսիան գտնվում էին Գերմանիայի հետ պատերազմական վիճակում, սակայն որևէ ռազմական գործողություն չէին մղում նրա դեմ: Խրամատավորված զորքերը «ձանձ-

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1.09.1939–22.VI.1941 ԹԹ.)

Ուինսթոն Չերչիլ (1874–1964 թթ.)

ռանում էին» անգործությունից: Այս յուրահատուկ իրավիճակի պատճառով այդ պատերազմը կոչվեց «տարօրինակ պատերազմ»:

1940թ. ապրիլին գերմանացիները գրավեցին Դանիան և Նորվեգիան, որի հետևանքով սրվեց քաղաքական իրադրությունն Անգլիայում: Ընդդիմության ճնշման տակ Անգլիայի վարչապետ Նևիլ Չեմբեռլենը 1940թ. մայիսի 8-ին հրաժարական տվեց: Մայիսի 10-ին **Ուինսթոն Չերչիլը,** որ գերմանաֆաշիստական ագրեսորներին վճռական հարված տալու կողմնակիցներից էր, կազմեց կոալիցիոն կառավարություն:

1940թ. մայիսին Արևմտյան ռազմաճակատում կենտրոնացնելով իր գլխավոր ռազմական ուժերը (136 դիվիզիա՝ 3, 3 մլն զինվոր, 2600 տանկ, 3600 ինքնաթիռ և ռազմական այլ տեխնիկա)՝ Գերմանիան ձեռնամուխ եղավ այսպես կոչված՝ «Դեղին պլանի» կենսագործմանը: Գերմանական զորքերը Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի վրայով ներխուժեցին Ֆրանսիա և հարձակում սկսեցին Փարիզի ուղղությամբ: Ֆրանսիական բանակն ի վիճակի չեղավ որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ, և հունիսի 14-ին Փարիզն անձնատուր եղավ: Ֆրանսիայի նոր կառավարության ղեկավար մարշալ Պետենը դիմեց Գերմանիային՝ հաշտության խնդրանքով: Ֆրանսիայի անձնատուր լինելու ակտը ստորագրվեց 1940թ. հունիսի 22-ին: Ֆրանսիան բաժանվեց երկու գոտիների՝ Հյուսիսային և Հարավային: Հյուսիսային գոտին օկուպացրեց Գերմանիան, իսկ Հարավային Ֆրանսիայում ստեղծվեց մի կառավարություն, որը ենթարկվում էր «նախագահ» Պետենին: Պետենը համագործակցում էր գերմանացիների հետ, ուստի դասվեց ազգային դավաճանների շարքը:

Ֆաշիստական զորքերի մուտքը Փարիզ

Սակայն ֆրանսիական մի խումբ հայրենասերներ, գեներալ Շարլ դը Գոլի գլխավորությամբ, չընդունեցին անձնատուր լինելու ակտը: Գեներալ դը Գոլը կոչ արեց բոլոր հայրենասեր ֆրանսիացիներին՝ շարունակել պայքարը հիտլերյան զավթիչների դեմ և միավորվել «Ազատ Ֆրանսիա» շարժման մեջ: 1942թ. «Ազատ

Ֆրանսիան» վերանվանվեց «Մարտնչող Ֆրանսիայի»:

Ֆրանսիայի անձնատուր լինելուց հետո Հիտլերը կարծում էր, որ Անգլիան Գերմանիային կդիմի հաշտության խնդրանքով: Սակայն Ուինսթոն Չերչիլը ոչ միայն չէր դիմում նման խնդրանքով, այլև արագորեն ամրացնում էր իր երկրի պաշտպանունակությունը: Գերմանացիներին չհաջողվեց կոտրել անգլիացիների կամքը:

«Ազատ Ֆրանսիա» շարժման մարտիկները

Գերմանական զորքերը 1940թ. հոկտեմբերին մտան Ռումինիա, որը շուտով միացավ ֆաշիստական խմբավորմանը: Դրանից առաջ ֆաշիստական խմբավորմանն էր միացել Հունգարիան: 1941թ. մարտին նրան միացավ նաև Բուլղարիան: Գերմանական զորքերն ապրիլին մտան Հարավսլավիա և Հունաստան:

1941թ. առաջին կեսին համարյա ամբողջ ցամաքային Եվրոպան նվաճված կամ կախման մեջ էր գտնվում ֆաշիստական խմբավորումից:

1940–1941 թթ. պատերազմական գործողությունները երկու հակադիր խմբավորումների միջև ծավալվեցին նաև Աֆրիկայի հյուսիսային և արևելյան շրջաններում:

Այդպիսով պատերազմն աստիճանաբար ընդունեց համաշխարհային բնույթ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ինչպե՞ս է սկսվել Երկրորդ համաշխարհային պատերազմը: Որո՞նք են այդ պատերազմի հիմնական պատճառները: Ինչի՞ մասին է վկայում պատերազմի նախօրյակին երկու հակադիր խմբավորումների ձևավորումը: Ի՞նչ եք կարծում կարելի՞ է դրանք անվանել պատերազմի և խաղաղության ուժեր: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
2. Ձեր կարծիքով ֆաշիզմին բնորոշ ո՞ր գծերի մասին է վկայում Օբերզալցբուրգում Հիտլերի կողմից արված հայտարարությունը: Ի՞նչ նպատակով է Հիտլերը հիշում հայերի կոտորածների մասին: Փորձե՛ք գնահատել նրա հայտարարությունը: Ի՞նչ եզրակացութ-

յունների կարելի է հանգել:

3. Ինչպիսի՞ն էր ուժերի հարաբերակցությունը Արևմտյան ճակատում: Ձեր կարծիքով ինչո՞ւ ֆաշիստական Գերմանիային հաջողվեց հեշտ հաղթանակի հասնել Արևմտյան Եվրոպայի երկրների նկատմամբ: Հիմնավորեք ձեր պատասխանը:
4. Ի՞նչ տարածքներ միացվեցին ԽՍՀՄ-ին 1939-1940 թթ.: Ձեր կարծիքով ի՞նչ նպատակներ էր հետապնդում Խորհրդային Միության սահմանների ընդարձակումը: Փորձեք գնահատել նոր տարածքների ձեռքբերման ուղղված՝ ԽՍՀՄ-ի քայլերը: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5. Լրացրեք «Երկրորդ աշխարհամարտի առաջին շրջափուլը» աղյուսակը:

Տարեթվեր	Ռազմական գործողություններ	Արդյունքներ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ ՀԻՏԼԵՐՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՖՐԱՆԿԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ

1939 թվականի սեպտեմբերի 15-ին ես առաջադրանք ստացա՝ ստանձնել նվաճված արևելյան մարզերի կառավարումը, և արտակարգ հրաման՝ անխնա ավերել այդ մարզը, որպես պատերազմի վայր և որպես ռազմավարային երկիր, տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական տեսակետից այն վերածել մի մոխրակույտի...

...Եթե մենք շահեինք պատերազմը, ապա, իմ կարծիքով, լեհերին և ուկրաինացիներին ու բոլոր նրանց, ովքեր թափառում էին մեր շուրջը, կարելի էր աղացած մսի վերածել:

ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմի սկիզբը և ընթացքը

Դեռևս 1940թ. վերջերին Հիտլերը հաստատել էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու իր պլանը՝ «Բարբարոսա» ծածկանվան տակ: Նախատեսվում էր կայծակնային հարձակմամբ գրավել ԽՍՀՄ-ը և 1941թ. աշնանն ավարտել պատերազմը:

1941թ. հունիսի 22-ին, վաղ առավոտյան, Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա: Գերմանիային միացան նրա դաշնակիցներ Իտալիան, Հունգարիան, Ռումինիան, Ֆինլանդիան: Պատերազմական գործողությունները ծավալվեցին Բալթիկ ծովից մինչև Սև ծով ընկած հսկայական տարածքի վրա:

Պատերազմի հենց սկզբից ԽՍՀՄ-ը հայտնվեց շատ ծանր վիճակում: Գերմանացիները շատ արագ գրավեցին Ուկրաինան, Բելառուսիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, շրջափակեցին Լենինգրադը և մոտեցան Մոսկվայի մատույցներին: Ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց հայրենիքի պաշտպանության համար: Ուստի պատերազմը կոչվեց Հայրենական մեծ պատերազմ: Խորհրդային բանակը 1941թ. դեկտեմբերին Մոսկվայի մոտ անցավ հակահարձակման և պարտության մատնեց գերմանական զորքերին: Դա նրանց առաջին պարտությունն էր Երկրորդ աշխարհամարտի ընթացքում և «կայծակնային պատերազմի» ձախողումը: Գերմանացիները ծանր պարտություն կրեցին նաև 1942-1943թթ.: Խորհրդային բանակը 1942 թ. նոյեմբերի 19-ին հակահարձակման անցավ Ստալինգրադի մոտ, ապա Կուրսկի ճակատամարտերում շրջապատեց և ջախջախեց գերմանական զորքերին: Ստալինգրադի հաղթանակով բեկում մտցվեց Երկրորդ համաշխարհային պատերազմում: Դրանից հետո խորհրդային բանակը

1941 թ. նոյեմբերի 7-ի Մոսկվայի շքերթի մասնակիցների մեկնումը ռազմաճակատ

Ստալինգրադի ճակատամարտի հաղթական ավարտը

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ
ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ
ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ
22.06.1941–18.09.1842ԹԹ.
Գերմանիան և նրա դաշնակիցները
Ֆաշիստական Գերմանիայի՝ մինչև 1941թ. հունիսի 22-ը գրված տարածքները
Խորհրդային բանակի պաշտպանողական մարտերը
Խորհրդային բանակի պաշտպանած սահմանները
Ֆաշիստական զորքերի առաջխաղացման գիծը 1941 թ. դեկտեմբերին
Գերմանաֆաշիստական զորքերի չախչախումը Մոսկվայի մոտ
Խորհրդային զորքերի պաշտպանական գիծը 1942 թ. ապրիլին
Ֆաշիստական զորքերի հարձակումների գլխավոր ուղղությունները 1942 թ.
Խորհրդային պարտիզանների պայքարի հիմնական շրջանները
Խորհրդային նավատորմի գործողությունները
40
60
60
ՇՎԵԴԻԱ
ՖԻՆԼԱՆԴԻԱ
ՆՈՐՎԵԳԻԱ
ՍՊԻՏԱԿ
ԾՈՎ.
Արխանգելսկ
ՀԵԼՍԻՆԿԻ
ԾՈՎ
ԲԱԼԹԻԿ
ՏԱԼԼԻՆ
Տիխվին
Նովգորոդ
Պսկով
ՌԻԳԱ
Վոլոգդա
Յարոսլավլ
Յոշկար-Օլա
Իվանովո
Գորկի
Ուֆա
ՎԻԼՆՅՈՒՍ
ԳԵՐՄԱՆԻԱ
Վյազմա
ՄՈՍԿՎԱ
Տուլա
Ռյազան
Պենզա
ՄԻՆՍԿ
Բրյանսկ
Օրյոլ
Տամբով
Կույբիշև
Օրենբուրգ
ԼԵՀԱՍՏԱՆ
ՎԱՐՇԱՎԱ
22.VI 20.VII.1941
Սարատով
Չեռնոգով
Կուրսկ
Վորոնեժ
Ռովնո
Լվով
Խարկով
Չեռնովցի
Դնեպր
Իզյում
Ստալինգրադ
17.VII 1942
2.II 1943
Կրասնոդոն
Գուրև
ՌՈՒՄԻՆԻԱ
Զապորոժիե
Նիկոլաև
Դոնի Ռոստով
Աստրախան
4.VIII 16.X 1941
ԲՈՒԽԱՐԵՍՏ
Կերչ
Սևաստոպոլ
Ստավրոպոլ
30.X 1941–4.VII 1942
ՍՈՖԻԱ
ԲՈՒԼԳԱՐԻԱ
Տուապսե
Օրջոնիկիձե
ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ

նախաձեռնությունն իր ձեռքից բաց չթողեց:

Շնորհիվ այդ հաղթանակների, ձախողվեց նաև Ստալինգրադի անկման դեպքում Հայաստան և Անդրկովկաս ներխուժելու՝ Թուրքիայի ծրագրերը:

Հակահիտլերյան միությունը

1941թ. դեկտեմբերի 7-ի առավոտյան ճապոնական ռազմանավերը և ավիացիան հանկարծակի հարձակվեցին Հավայան կղզիներում գտնվող ամերիկյան Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի վրա: Հաջորդ օրը ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց Ճապոնիային: Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ ներգրավված պետությունները միավորվեցին հակահիտլերյան կոալիցիայի մեջ: Այդ կոալիցիան ձևավորվեց 1941թ. վերջերից մինչև 1942թ. կեսերն ընկած ժամանակաշրջանում: Նրա առաջատար ուժերն էին ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և Անգլիան: Ռուզվելտը և Չերչիլը 1941թ. օգոստոսի 14-ին հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որն ավելի շատ հայտնի է «Ատլանտյան խարտիա» անվանումով: Այդ հայտարարությամբ նրանք հավաստում էին իրենց վճռականությունը՝ անհրաժեշտ զենքով և զինամթերքով օգնել Խորհրդային Միությանը: Խորհրդային Միությունը 1941թ. սեպտեմբերի 24-ին միացավ Ատլանտյան խարտիային:

Կարևոր քաղաքական իրադարձություն էր 1942թ. հունվարի 1-ին Վաշինգտոնում հակահիտլերյան կոալիցիայի անդամ 26 պետությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Անգլիայի կողմից Միացյալ ազգերի հռչակագրի ստորագրումը: Նրանք ստանձնեցին ագրեսորների դեմ համագործակցելու և նրանց հետ անջատ հաշտություն չկնքելու պարտավորություններ: 1942թ. մայիսի 26-ին Խորհրդային Միության և Անգլիայի միջև Լոնդոնում համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր ստորագրվեց՝ քսան տարի ժամանակով: Իսկ Վաշինգտոնում 1942թ. հունիսի 11-ին ստորագրվեց խորհրդա-ամերիկյան համաձայնագիր: Կողմերը պարտավորություն էին ստանձնում աջակցել միմյանց պաշտպանունակության ամրապնդմանը:

Թեհրանի խորհրդաժողովը. ձախից աջ՝ Ու. Չերչիլ, Ֆ. Ռուզվելտ, Ի. Ստալին

1943թ. պատերազմի այլ թատերաբեմերում հաջողության հասան հակաֆաշիստական կոալիցիայի մյուս երկրները: Անգլո-ամերիկյան զորքերը մտան Իտալիա, սակայն նրանք չէին շտապում Ֆրանսիա դուրս գալ և բացել երկրորդ ճակատը:

1943թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը Թեհրանում հրավիրված խորհրդաժողովում քննարկման կենտրոնական հարցը դարձավ Եվրոպայում Գերմանիայի դեմ երկրորդ ճակատի բացման խնդիրը: Խորհրդաժողովում որոշվեց, որ ԱՄՆ-ը և Անգլիան երկրորդ ճակատ կբացեն Ֆրանսիա ներխուժելով, և դա կարվի 1944թ. մայիսից ոչ ուշ:

Պատերազմի հետագա ընթացքը

1944թ. հունիսի 6-ին անգլիական և ամերիկյան զորքերն ամերիկյան գեներալ Էյզենհաուերի հրամանատարությամբ հաջողությամբ անցան Լա-Մանշ նեղուցը և դուրս եկան ֆրանսիական ափ: Երկրորդ ճակատը բացվեց, և Գերմանիան պատերազմի հինգերորդ տարում հարկադրված եղավ կռվել երկու ճակատով:

Գեորգի Ժուկով (1896–1974 թթ.)

Սկսվեց Ֆրանսիայի ազատագրումը: 1944թ. օգոստոսի 19-ին Փարիզում ապստամբություն սկսվեց, որը մի քանի օր անց պսակվեց հաղթանակով: Հոկտեմբերի 23-ին ԱՄՆ-ը, Անգլիան և Խորհրդային Միությունը ճանաչեցին Ֆրանսիայի ժամանակավոր կառավարությունը՝ գեներալ դը Գոլի գլխավորությամբ:

Հովհաննես Բաղրամյան (1897–1982 թթ.)

Դաշնակիցները նոր հաջողություններ արձանագրեցին 1944թ. երկրորդ կեսին: Խորհրդային զորքերին հաջողվեց ազատագրել ԽՍՀՄ ամբողջ տարածքը և պատերազմը տեղափոխել ֆաշիստական զորքերի կողմից գրավված երկրներ: Խորհրդային զորքերի գործողությունները ղեկավարում էին տաղանդավոր զորահրամանատարներ Գ. Ժուկովը, Ա. Վասիլևսկին. Ի. Կոնևը, Կ. Ռոկոսովսկին, Հ. Բաղրամյանը և ուրիշներ:

1945թ. սկզբներին ակնառու դարձավ, որ Գերմանիայի պարտությունը մոտակա ամիսների հարց է: Ստեղծված իրադրությունն անհրաժեշտ

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԶԱԽՋԱԽՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ (1941–1945 ԹԹ.)

Դաշնակից երկրների ղեկավարները Յալթայի կոնֆերանսում

դարձրեց հակահիտլերյան կոալիցիայի առաջատար երեք պետությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավարների՝ Ստալինի, Ռուզվելտի, Չերչիլի նոր հանդիպումը: Այն կայացավ 1945թ. փետրվարի 4-11-ը, Ղրիմում՝ Յալթայում: Դաշնակից երեք երկրների ղեկավարները պայմանավորվեցին շարունակել համաձայնեցված գործողություններ, պատերազմը կդադարեցնեն միայն Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայից հետո: Որոշում ընդունվեց նաև Միավորված ազգերի կազմակերպություն ստեղծելու վերաբերյալ:

Երկրորդ աշխարհամարտի ավարտը

Շարունակելով զարգացնել ռազմական հաջողությունները՝ դաշնակիցներն արևելքից և արևմուտքից շարժվում էին դեպի Գերմանիա: Մեկը մյուսի հետևից ազատագրվեցին ֆաշիստական լծի տակ գտնվող եվրոպական պետությունները: Խորհրդային զորքերն ընդհուպ մոտեցան Բեռլինին:

1945թ. ապրիլի 16-ին սկսվեց Բեռլինի գրոհը: Ապրիլի 30-ին հայտնի դարձավ, որ Հիտլերը ինքնասպանություն է գործել: Երկու օր անց Բեռլինը հանձնվեց: Մայիսի 8-9-ի գիշերը ստորագրվեց Գերմանիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը:

Պատերազմը Եվրոպայում ավարտվեց:

ԽՍՀՄ-ի դրոշի բարձրացումը գերմանական Ռայխստագի վրա

Դաշնակիցների առջև պատերազմի արդյունքները հանրագումարի բերելու և հետպատերազմյան զարգացումների հիմնական ուղղությունները որոշելու խնդիր ծառացավ: Այս նպատակով 1945թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը Պոտսդամում (Բեռլինի մոտ) գումարվեց հակահիտլերյան կոալիցիայի երեք մեծ տերությունների ղեկավարների հանդիպումը:

Խորհրդաժողովին մասնակցում էին ԱՄՆ-ի նոր նախագահ Հարրի Տրումենը, Ի. Ստալինը: Մեծ Բրիտանիան հուլիսի 17-25-ը ներկայացնում էր վարչապետ Ու. Չերչիլը, իսկ այնուհետև՝ նոր վարչապետ Կլեմենտ Էտլին:

Երեք մեծ տերությունները հաստատեցին Գերմանիայի նկատմամբ քաղաքականության գլխավոր սկզբունքները՝ ապառազմականացում, նացիզմի վերացում և դեմոկրատացում:

Մասնակիցները համաձայնության եկան Լեհաստանի նոր սահմանների շուրջը՝ նրան հանձնելով նախկինում Գերմանիայի տիրապետության տակ գտնվող որոշ տարածքներ: Խորհրդային Միությանը հանձնվեց Քյոնիգսբերգը (այժմ՝ Կալինինգրադ): Խորհրդային Միությունը հավաստեց իր պատրաստակամությունը՝ մտնել պատերազ-


ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ (1.IX.1939-2.IX. 1945)
9
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ԿԱՆԱԴԱ
ԳՐԵՆԼԱՆԴԻԱ
ԱԼՅԱՍԿԱ
ԽՍՀՄ
Օմսկ
Նովոսիբիրսկ
ՄՈՆԳՈԼԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՉԻՆԱՍՏԱՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ԻՐԱՆ
ԻՍՊԱՆԻԱ
ՖՐԱՆՍԻԱ
ԱԼՋԻՐ
ԼԻԲԻԱ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՖՐԻԿԱ
ՍՈՒԴԱՆ
ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ
ԿՈՆԳՈ
ԱՆԳԱԼԱ
ՄԱԴԱԳԱՍԿԱՐ
ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ
ՄԵՔՍԻԿԱ
Հավանայի
Ցամանկա
Պուերտո-Ռիկա
ՎԵՆԵՍՈՒԵԼԱ
ԿՈԼՈՄԲԻԱ
ԷՔՎԱԴՈՐ
ՊԵՐՈՒ
ԲՐԱԶԻԼԻԱ
ԲՈԼԻՎԻԱ
ՊԱՐԱԳՎԱՅ
ՉԻԼԻ
ԱՐԳԵՆՏԻՆԱ
ՄԵՂՄԱ ՕՎԿԻԱՆՈՍ
ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ
ԱՐԵՎԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ
ԱՄՆ-ի ռազմական հանդիպումը ԱՄՆ-ի ԳԿ-ում
Հավանայի դրդումներ XII 1941 թ.
Ֆիլիպինները
Գուամ
Ուեյքի կղզի
Ֆրանսիայի անկումը
Ֆրանսիայի գրավումը
Նորվեգիայի գրավումը
Դանիայի գրավումը
Հոլանդիայի գրավումը
Բելգիայի գրավումը
Լուքսեմբուրգի գրավումը
Ավստրիայի գրավումը
Չեխոսլովակիայի գրավումը
Լեհաստանի գրավումը
Ֆինլանդիայի գրավումը
Ռումինիայի գրավումը
Բուլգարիայի գրավումը
Հունգարիայի գրավումը
Գերմանիայի գրավումը
Ռուսաստանի գրավումը
Ֆրանս

մի մեջ ընդդեմ Ճապոնիայի: Պոտսդամում խորհրդային պատվիրակությունը բարձրացրեց Թուրքիայի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զավթված հայկական տարածքները հետ վերադարձնելու հարցը: Սակայն դա չպաշտպանեցին Անգլիան և ԱՄՆ-ը:

Պոտսդամի խորհրդաժողովը, կլոր սեղանի շուրջ Ու. Չերչիլ, Հ. Թրումեն, Ի. Ստալին

Իտալիայի և Գերմանիայի պարտությունից հետո հերթը հասավ Ճապոնիային: 1945թ. օգոստոսի 6-ին և 9-ին ամերիկյան ռմբակոծիչները, մարդկության պատմության մեջ առաջին անգամ, ատոմային ռումբ նետեցին Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա՝ մոխրի ու ավերակների կույտի վերածելով դրանք: ԽՍՀՄ-ն օգոստոսի 9-ից մտավ պատերազմի մեջ ընդդեմ Ճապոնիայի: Կարճ ժամանակամիջոցում պարտության մատնեց մեկ միլիոնանոց Կվանտունյան բանակը: Ճապոնիան 1945թ. սեպտեմբերի 2-ին անձնատուր եղավ: Դրանով Երկրորդ աշխարհամարտն ավարտվեց:



Հիրոսիմայի ատոմային ռմբակոծությունը

Երկրորդ համաշխարհային պատերազմը շատ ծանր հարված հասցրեց մարդկությանը: Պատերազմի մեջ էին ներգրավվել 61 երկրներ՝ 1,7 մլրդ բնակչությամբ, որոնց ռազմական ուժերում ծառայում էր 110 մլն մարդ: Պատերազմական գործողություններն ընթանում էին մոտ 22 մլն քառ. կմ տարածքի վրա: Վեց տարի տևած պատերազմի ընթացքում զոհվեց ավելի քան 50 մլն և հաշմանդամ դարձավ 95 մլն մարդ: Վիթխարի էին նյութական կորուստները: Պատերազմից հետո, 1945-1946թթ. Նյուրնբերգում կայացած դատավարությունը մահվան դատապարտեց հիտլերյան հանցագործներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: ԽՍՀՄ-ի դեմ պատերազմում ինչ նպատակներ էր հետապնդում ֆաշիստական Գերմանիան: Ինչու՞ ենք ԽՍՀՄ-ի դեմ պատերազմն անվանում Հայրենական մեծ պատերազմ:
2. Փորձեք բնութագրել «Բարբարոսա» պլանը: Ձեր կարծիքով ինչու՞ էր Հիտլերը հավատում կարճ ժամանակամիջոցում (մինչև

1941 թ. աշուն) ԽՍՀՄ-ի նկատմամբ հաղթանակի հասնելու հնարավորությանը: Հիմնավորեք ձեր պատասխանը:

3. Նկարագրեք հակահիտլերյան խմբավորման ձևավորման գործընթացը: Ձեր կարծիքով ինչո՞ւ հնարավոր եղավ տարբեր հասարակական-քաղաքական կարգեր ունեցող երկրների միավորումը հակահիտլերյան խմբավորման մեջ: Փորձեք պարզել, թե ինչն էր համախմբում նրանց և ինչը՝ բաժանում: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքն այդ խմբավորումների նկատմամբ:
4. Ձեր կարծիքով ինչո՞ւ են Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերը համարվում արմատական բեկում Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքի մեջ: Դուք համաձայն եք այդ մտքի հետ: Հիմնավորեք ձեր տեսակետը:
5. Բնութագրեք ռազմական գործողությունների ընթացքը Երկրորդ աշխարհամարտի թատերաբեմերում 1941-1943 թթ.: Փորձեք գնահատել դրանք:
6. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ երկրորդ ճակատի բացումը վերածվեց Երկրորդ աշխարհամարտի լուրջ հիմնահարցի: Ո՞ր խորհրդաժողովներում է քննարկվել այդ հարցը: Ձեր կարծիքով անհրաժեշտ էր երկրորդ ճակատի բացումը պատերազմի ավարտական փուլում: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
7. Ըստ ձեզ որո՞նք են 1944-1945 թթ. առավել կարևոր իրադարձությունները: Փորձեք գնահատել Երկրորդ աշխարհամարտի նշանակությունը և արդյունքները: Ձեր կարծիքով ո՞ր երկրները առավելագույնս շահեցին այդ պատերազմում: Հիմնավորեք ձեր տեսակետը:
8. Լրացրեք «Երկրորդ աշխարհամարտը» աղյուսակը:

Տարեթվեր	Ռազմական գործողություններ	Արդյունքներ

ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

II

ԲԱԺԻՆ

§13. ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սառը պատերազմը և երկբևեռ աշխարհի ձևավորումը

Պատերազմի ավարտից հետո հակահիտլերյան կոալիցիայի մեջ մտնող դաշնակիցների ուղիները բաժանվեցին: ԽՍՀՄ-ը և նրա արևմտյան դաշնակիցները հայտնվեցին հակադիր ռազմաքաղաքական ճամբարներում՝ հետապնդելով տարբեր քաղաքական նպատակներ: Հաստատվեց ուժերի նոր փոխհարաբերակցություն: Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան կորցրեցին իրենց նախկին ռազմաքաղաքական ազդեցությունը: Խիստ տկարացավ Ֆրանսիան, զգալի չափով թուլացավ նաև Անգլիան: Արևմտյան աշխարհի անվիճելի առաջատար ուժը դարձավ ԱՄՆ-ը:

Իր դիրքերն ուժեղացրեց Խորհրդային Միությունը: 1946–1949 թթ. Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ Ալբանիայում, Բուլղարիայում, Արևելյան Գերմանիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Խորհրդային Միության ակտիվ օժանդակությամբ հաստատվեցին սոցիալիստական կարգեր: Ձևավորվեց սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Հետագայում այն համալրեցին Չինաստանը, Հյուսիսային Կորեան, Մոնղոլիան, Վիետնամը, Կուբան ու Լաոսը:

Պայքարը հետպատերազմյան տարիներին հիմնականում ընթանում էր ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի և նրանց կողմից ղեկավարվող խմբավորումների մի-

Չերչիլի ելույթը Ֆուլտոնում, 5 մարտի 1946 թ.



Հարրի Տրումեն (1884–1972 թթ.)

ջև: Նրանք միմյանց մեղադրում էին համաշխարհային տիրապետություն հաստատելու ձգտման մեջ:

ԱՄՆ-ի կառավարող շրջաններն առաջ քաշեցին «կոմունիզմի զսպման» կարգախոսը: Նրանց կարծիքով դրան կարելի էր հասնել, եթե ԽՍՀՄ-ի հանդեպ իրականացվեր «ուժի դիրքերից» քաղաքականություն: Այսպիսով՝ աշխարհի երկու ամենահզոր տերություններն անցան առճակատման, որն ստացավ «սառը պատերազմ» անվանումը, ձևավորվեց երկբևեռ աշխարհ, շրջանառության մեջ մտավ «գերտերություն» հասկացությունը՝ ի դեմս ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի:

Ընդունված է, որ «սառը պատերազմի» ահազանգը տվեց ամերիկյան Ֆուլտոն քաղաքում Անգլիայի նախկին վարչապետ Ու. Չերչիլի 1946թ. մարտի 5-ի ելույթը, որին ներկա էր ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենը (1945–1953 թթ.): Չերչիլը հայտարարեց, որ աշխարհին սպառնում է նոր՝ երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը, իսկ դրա աղբյուրը Խորհրդային Միությունը և միջազգային կոմունիզմն են: Նա առաջարկում էր ԽՍՀՄ-ի դեմ ստեղծել արևմտյան պետությունների դաշինք, նրա նկատմամբ վարել կոշտ քաղաքականություն:

«Սառը պատերազմը» պաշտոնապես չի հայտարարվում և ոչ էլ ավարտվում է զինադադարի և հաշտության պայմանագրի ստորագրմամբ:

Խորհրդային պետությունն սկսեց զարկ տալ իր ռազմական արդյունաբերությունը և ստեղծել զենքի նոր, ժամանակակից տեսակներ, այդ թվում և միջուկային, սկզբում ատոմային, իսկ հետո նաև ջրածնային: Սկսվեց սպառազինությունների կատաղի մրցավազքը, որն իր ոլորտը ներգրավեց նաև աշխարհի մյուս պետություններին:

ՆԱՏՕ-ի նիստը

Սառը պատերազմի բնորոշ գծերից էին նաև զենքի օգտագործման սպառնալիքը, ահաբեկման դիվանագիտությունը, հետախուզության և լրտեսության աննախընթաց ծավալումը, տնտեսական գործոնի օգտագործումը որպես հակառակոր-

դին հյուծելու միջոց, ինչպես նաև գաղափարախոսական, մշակութային և կրոնական գործոնները:

ՆԱՏՕ և Վարշավյան դաշինք

Սառը պատերազմի տրամաբանությունը պահանջում էր կազմակերպչորեն ձևավորել աշխարհի բաժանումը երկու հակադիր խմբավորումների: Այդ ուղղությամբ առաջինը նախաձեռնություն ցուցաբերեցին արևմտյան պետությունները՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ:

1949թ. ապրիլի 4-ին արևմտյան տասներկու պետություններ (ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Կանադան, Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը, Դանիան, Նորվեգիան, Պորտուգալիան և Իսլանդիան) Վաշինգտոնում ստորագրեցին Հյուսիսատլանտյան պայմանագիրը, որով ստեղծվեց Հյուսիսատլանտյան դաշինքը՝ ՆԱՏՕ-ն (North Atlantic Treaty Organization): 1952թ. ՆԱՏՕ-ի անդամ դարձան Թուրքիան և Հունաստանը, իսկ 1955թ.՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը:

Այդ կազմակերպության հիմնական նպատակներն էին՝ սերտ համագործակցություն անդամ պետությունների հետ, միմյանց նկատմամբ փոխադարձ օգնության ցուցաբերում՝ ներառյալ զինված ուժերի կիրառումը, յուրաքանչյուր անդամ պետության ռազմական հզորության ամրապնդում, դաշինքի մասնակից պետությունների համատեղ գործողություններ նրանց քաղաքական անկախությանը և անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում: ՆԱՏՕ-ի ղեկավար ուժը ԱՄՆ-ն է:

Խորհրդային Միությունը ՆԱՏՕ-ի ստեղծումը որակեց որպես ագրեսիվ նպատակներ հետապնդող դաշինք՝ ուղղված ԽՍՀՄ-ի դեմ: Ի հակադրություն ՆԱՏՕ-ի, 1955թ. մայիսի 14-ին Խորհրդային Միությունը, Ալբանիան, Բուլղարիան, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը, Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան և Ռումինիան Վարշավայում ստորագրեցին բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր, որով հիմք դրվեց Վարշավայի պայմանագրի երկրների

Վարշավայի պայմանագրի կազմակերպության ստեղծումը, 1955 թ.

ռազմական խմբավորմանը:

ՆԱՏՕ-ի և Վարշավայի պայմանագրի կազմակերպության ստեղծմամբ ձևավորվեց աշխարհի բաժանումը երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների: «Սառը պատերազմը» թևակոխեց նոր փուլ, որն իր ոլորտի մեջ ներգրավեց նաև Ասիան, Աֆրիկան և Լատինական Ամերիկան:

ԱՄՆ-ը, հաշվի առնելով Արևմտյան Եվրոպայի իր դաշնակից երկրների տնտեսական ծանր վիճակը, 1947թ. ներկայացրեց նրանց տնտեսական օգնություն ցույց տալու ծրագիր, որը հեղինակի անունով կոչվեց «Մարշալի պլան»: Այն դրական դեր կատարեց այդ երկրների՝ փլուզման եզրին գտնվող տնտեսության և ֆինանսական համակարգի վերականգնման գործում:

1949թ. ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ հիմնվեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը, որը միավորեց ԽՍՀՄ-ը և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները՝ նրանց տնտեսական ներուժն ու հնարավորությունները մեկտեղելու և տնտեսական զարգացումը խթանելու համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ սրվեցին հարաբերությունները ԽՍՀՄ-ի և հակահիտլերյան խմբավորման նախկին դաշնակից երկրների և, մասնավորապես, ԱՄՆ-ի միջև: Բերեք փաստեր այդ դաշինքի փլուզման վերաբերյալ:
2. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած շրջանը կոչվում «սառը պատերազմի» շրջան: Որո՞նք էին «սառը պատերազմի» պատճառները: Փորձե՛ք բնութագրել «սառը պատերազմը»: Որո՞նք են դրա բնորոշ գծերը և առանձնահատկությունները:
3. Ե՞րբ է ձևավորվել սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Ո՞ր երկրներն էին մտնում դրա մեջ:
4. Ձեր կարծիքով ինչո՞ւ Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվեցին երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումներ: Ինչի՞ մասին է վկայում դրանց հանդես գալը:
5. Լրացրեք «Երկու ռազմաքաղաքական խմբավորումների առաջացումը» աղյուսակը:

Համեմատության հարցեր	Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ)	Վարշավայի պայմանագրի կազմակերպություն
Ստեղծման տարեթվերը		
Մասնակից երկրները		
Նպատակները		

ԼՐԱՅՈՒՅԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1946 թ. մարտի 5-ին Ֆուլտոնում Չերչիլի արտասանած ճառից

«Ես անկեղծ հիացմունք ու հարգանք եմ տածում խորհրդային ժողովրդի և իմ ռազմական ընկեր մարշալ Ստալինի նկատմամբ: Խորին համակրանք է տիրում Բրիտանիայում և, անկասկած, նաև Ամերիկայում ողջ Ռուսաստանի ժողովուրդների նկատմամբ, ինչպես նաև ամուր բարեկամության հաստատման համար բոլոր հակասություններն ու խոչընդոտները հաղթահարելու վճռականություն... Մենք ողջունում ենք Ռուսաստանին իր օրինական տեղում՝ աշխարհի առաջատար պետությունների շարքում: Մենք ողջունում ենք նրա դրոշը ծովերի վրա: Նախևառաջ ողջունում ենք մշտական, աշխույժ և աճող շփումները խորհրդային ժողովրդի ու Ատլանտիկայի երկու ափերին բնակվող մեր սեփական ժողովրդի միջև:

Ես չեմ հավատում, որ Խորհրդային Միությունը պատերազմ է տենչում: Նրանց ուզածը պատերազմից ստացած ռազմավարներն են և իրենց իշխանության ու դոկտրինների անսահման տարածումը: Բայց մենք պիտի մտածենք այստեղ, այսօր՝ քանի դեռ ժամանակ կա, պատերազմի մշտական կանխարգելման հնարավորության և բոլոր երկրներում ազատության ու ժողովրդավարության համար պայմանների հնարավորինս արագ արմատավորման մասին»:

§14. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ 1945–1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները

Հետպատերազմյան շրջանում տպավորիչ տեղաշարժեր եղան համաշխարհային տնտեսության բոլոր ոլորտներում, որի արդյունքում փոխվեց կյանքի որակը, բարելավվեց կենցաղը: Կրթությունը մատչելի դարձավ հարյուր միլիոնավոր մարդկանց: Բուռն զարգացում ապրեցին գիտությունը և տեխնիկան, ինչն ապահովեց մարդկային հասարակության այսպես ասած՝ արմատական, թռիչքաձև զարգացումը: Որոշ իմաստով այդ դարաշրջանը կարելի է անվանել տիեզերագնացության դարաշրջան, երբ մարդն առաջին անգամ հայտնվեց տիեզերքում, ոտք դրեց Լուսնի վրա, կատարվեցին խոշոր հայտնագործություններ նոր նյութերի ստեղծման բնագավառում, իսկ ժողովրդավարությունը դարձավ մարդկային հասարակության զարգացման առաջադիմական միակ ուղին, որը պետական քաղաքականության մակարդակի բարձրացվեց արևմտյան բազմաթիվ երկրներում:



Ամերիկացի տիեզերագնաց Ն. Արմսթրոնգը Լուսնի վրա

Մյուս կողմից՝ խորհրդային տիպի ամբողջատիրական համակարգն ընդարձակեց իր ոլորտը՝ ներառելով արևելաեվրոպական և ասիական սոցիալիստական երկրներին: Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում կազմավորվեց, այսպես կոչված, զարգացման ոչ կապիտալիստական կամ սոցիալիստական կողմնորոշման երկրների խումբը: Երկրների մի ստվար խումբ, դժգոհ սառը պատերազմից, սպառազինությունների մրցավազքից և միջուկային պատերազմի վտանգներից, 1960-ականներին հիմք դրեց «Չմիավորված երկրների շարժմանը», որը գլխավորում էին Հնդկաստանը, Եգիպտոսը, Ինդոնեզիան և Հարավսլավիան:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ջոն Քենեդի (1917–1963թթ.)

ԱՄՆ-ը պատերազմից դուրս եկավ ռազմական և տնտեսական առումով ավելի հզորացած: Ամրապնդվեց ԱՄՆ-ի ֆինանսական հզորությունը, աշխարհը սկսեց հաշվարկներ կատարել ամերիկյան դոլարի հիման վրա: Դուայթ Էյզենհաուերի նախագահության շրջանում՝ 1952-1960թթ., ձևավորվեց ԱՄՆ-ի ռազմարդյունաբերական համալիրը: 60-ական թվականներին ԱՄՆ-ում ուժեղացավ ահաբեկչությունը, որի զոհը դարձան պրեզիդենտ Ջոն Քենեդին (1961-1963թթ.), սևամորթների ղեկավար Մարտին Լյութեր Քինգը և ուրիշներ:

Սառը պատերազմի տարիներին եղան նաև մի շարք «տաք» պատերազմներ, որոնց մասնակցում էր ԱՄՆ-ը, ինչպես 1950-1953թթ. կորեական պատերազմը, Վիետնամի պատերազմը և այլն: 1962թ. պայթեց Կարիբյան ճգնաժամը՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Կուբայի անմիջական մասնակցությամբ: Աշխարհը կանգնեց երրորդ համաշխարհային պատերազմի իրական վտանգի առջև: Ճգնաժամից դուրս գալու գործում մեծ դեր խաղաց ԽՍՀՄ վարչապետի առաջին տեղակալ Անաստաս Միկոյանի դիվանագիտական մեծ հմտությունը, որ նա դրսևորեց բանակցությունների ընթացքում:

Սակայն 1970-ական թվականների կեսերից դանդաղեցին ԱՄՆ-ի տնտեսական զարգացման տեմպերը, խիստ աճեց գործազրկությունը, կրճատվեց արտաքին առևտրի ծավալը և այլն: Երկրի տնտեսության առողջացման նպատակով պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանը (1980-1988 թթ.) մշակեց համապատասխան ծրագիր, որն ստացավ «Ռեյգանոմիկա» անվանումը: Ռեյգանի տնտեսական ծրագիրը հարուստներին դարձնում էր ավելի հարուստ, իսկ աղքատներին՝ ավելի աղքատ:

Ամերիկյան բանակը Վիետնամում

Ռեյգանի նախագահության վերջին տարիներին նկատվեց լարվածության մեղմացում, հարաբերությունների



Ռոնալդ Ռեյգան (1911–2004 թթ.)

բարելավում ԽՍՀՄ-ի հետ, սկսվեց անցում կոնֆրոնտացիայից (առճակատումից) համընդհանուր համագործակցության, որն ավելի խորացավ նրա հաջորդի՝ Ջորջ Բուշ ավագի նախագահության շրջանում (1988–1992 թթ.), որի քաղաքական գլխավոր արդյունքը եղավ սառը պատերազմի դարաշրջանի ավարտը:

ԱՄՆ-ում տնտեսության վերակառուցում իրականացվեց գիտատեխնիկական նոր հեղափոխության նվաճումների հիման վրա: Շեշտը դրվեց գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վրա:

Եվրոպական երկրներ

Մեծ Բրիտանիա: Մեծ Բրիտանիան թեև պատերազմից դուրս եկավ հաղթանակած, սակայն բավականին թուլացել էր: Համաշխարհային ասպարեզում նա առաջնությունը զիջեց ԱՄՆ-ին: Մեծացավ նրա ֆինանսաքաղաքական կախումը ամերիկյան դաշնակցից: Հետպատերազմյան տարիներին դանդաղ էր ընթանում նրա տնտեսության վերականգնումը: Անգլիական ապրանքները մրցունակ չէին: Լեյբորիստների կառավարման տարիներին 1945–1951 թթ., ազգայնացվեցին տնտեսության մի շարք ճյուղեր՝ քարածխի արդյունահանումը, պողպատաձուլությունը, երկաթուղային և ջրային տրանսպորտը, Անգլիական բանկը, էլեկտրակայանները և այլն: Դրանց տերերը մեծ փոխհատուցումներ ստացան: Մտցվեցին անվճար բուժում և ուսուցում:

Մեծ Բրիտանիան ներգրավվեց «սառը պատերազմի» մեջ: Նա 1949թ. դարձավ ՆԱՏՕ-ի անդամ: 1955թ. ԽՍՀՄ-ը չեղյալ հայտարարեց 1942թ. ստորագրված համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիրը: Վախենալով Եվրոպայում իր ազդեցության թուլացումից, Մեծ Բրիտանիան 1960–1970-ական թվականներին աստիճանաբար մտավ եվրոպական կառույցների, իսկ 1973թ.՝ Ընդհանուր շուկայի մեջ:

Իմպերիալիզմի գաղութային համակարգի փլուզման հետևանքով 1960-ական թվականների վերջերին Մեծ Բրիտանիան ձևավորեց «Ազգերի Բրիտանական համագործակցությունը»: Դրա մեջ մտավ բրիտանական նախկին դոմինիոնների և գաղութների մեծ մասը: Սակայն վերջիններս դրան միացան որպես անկախ պետություններ:

Մեծ Բրիտանիայի ներքաղաքական և տնտեսական կյանքում նշանակալի փոփոխություններ եղան, երբ Մարգարիտ Թեթչերը 1979թ. դարձավ Մեծ Բրիտանիայի վարչապետ: Նա իր հայրենակիցներից ստացավ «Երկաթյա լեդի» անվանումը: Թեթչերը մշակեց Մեծ Բրիտանիայի տնտեսական և սոցիալական զարգացման իր ծրագիրը, որի իրագործմանն ուղղված քաղաքականությունն ստացավ «թեթչերիզմ» անվանումը: Նա իրականացրեց երկրի արդյունաբերության պետական ճյուղերի սեփականաշնորհում, խրախուսեց և բարենպաստ պայմաններ ստեղծեց ազատ ձեռներեցության և շուկայական հարաբերությունների խորացման ու զարգացման համար:

Մարգարետ Թեթչեր

Թեթչերի կառավարման տարիներին Մեծ Բրիտանիան իր արտաքին քաղաքականության մեջ առաջնությունը տալիս էր ԱՄՆ-ի հետ իր հարաբերություններին: Դրանք բնութագրվում էին որպես «հատուկ հարաբերություններ»:

Ֆրանսիա: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսեցին ձևավորվել Ֆրանսիայի պետական նոր մարմինները և արդյունքում ծնունդ առավ Չորրորդ հանրապետությունը: Նա հաղթահարեց հետպատերազմյան տնտեսական դժվարությունները և ապահովեց տնտեսական որոշ վերելք: Դրանում զգալի դեր խաղացին «Մարշալի պլանով» ստացված տնտեսական օգնությունը և վարկերը, որ կազմում էին մոտ 3, 5 մլրդ դոլար:

Չնայած տնտեսության բարելավմանը, երկրի ներքաղաքական կյանքն անկայուն էր: Կոալիցիոն կառավարություններն արագորեն փոխարինում էին մեկը մյուսին: Դժգոհությունը համակել էր ֆրանսիական ամբողջ հասարակությանը: Ֆրանսիան կարիք ուներ «ուժեղ ձեռքի»: 1958թ. հունիսի 1-ին Ազգային ժողովը Շարլ դը Գոլին նշանակեց երկրի վարչապետ: Ազգային ժողովից ստանալով արտակարգ լիազորություններ, դը Գոլը ցրեց ֆրանսիական պառլամենտը: Դրանով ավարտվեց Չորրորդ հանրապետության ժամանակաշրջանը:



Շարլ դը Գոլ (1890-1970թթ.)

Հինգերորդ հանրապետությունը 1958թ. սեպտեմբերի 28-ի հանրաքվեով հաստատված Սահմա-

Երիտասարդների խռովությունը Փարիզում, 1968 թ.

նադրությամբ դարձավ նախագահական հանրապետություն, և դը Գոլը՝ նրա առաջին նախագահը: Դը Գոլը զգալի ուշադրություն դարձրեց երկրի տնտեսության, ժամանակակից ճյուղերի զարգացմանը, տեխնիկական վերազինմանը:

Դրանից հետո դը Գոլն իր ուշադրությունը սևեռեց եվրոպական խնդիրների վրա՝ ձգտելով թուլացնել Ֆրանսիայի կախվածությունը ԱՄՆ-ից և հզորացնել Ֆրանսիայի դիրքերը Եվրոպայում: 1966թ. Ֆրանսիան իր զորքերը դուրս բերեց ՆԱՏՕ-ի ռազմական կառույցներից: Նա ստեղծեց իր սեփական միջուկային զենքը:

Դը Գոլին փոխարինեց նրա մերձավոր համախոհ Ժորժ Պոմպիդուն: Նա առաջ քաշեց «նոր հասարակություն» կառուցելու գաղափարը՝ հիմնված դասակարգային համագործակցության սկզբունքի վրա:

1981թ. մայիսին Ֆրանսիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններն ավարտվեցին սոցիալիստ Միտերանի հաղթանակով: Միտերանը մեծ ուշադրություն դարձրեց Ֆրանսիայի սոցիալ-տնտեսական խնդիրներին: Նա կողմնակից էր տնտեսության մեջ պետության կարգավորիչ դերի մեծացմանը, ազգայնացրեց կարևոր արդյունաբերական ճյուղերը, մասնավոր բանկերը, ստեղծվեցին նոր աշխատատեղեր, կրճատվեց գործազրկությունը, կայունացվեց ներքաղաքական իրադրությունը երկրում:

Գերմանիա: 1949թ. ձևավորվեց երկու գերմանական պետություն՝ Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետությունը և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը, որոնց քաղաքական և տնտեսական զարգացումն ընթացավ տարբեր ուղիներով: ԳՖՀ-ն պատկանում էր արևմտյան, իսկ ԳԴՀ-ն՝ սոցիալիստական աշխարհին:

ԳՖՀ-ի կայացման գործում մեծ էր Կոնրադ Ադենաուերի և Լյուդվիգ Էրհարդի դերը: ԳՖՀ-ն կարողացավ բավական կարճ ժամանակամիջոցում վերականգնել իր ավերված տնտեսությունը: «Մարշալի պլանով» ստացած միլիոնավոր դոլարների հասնող ֆինանսական օգնության շնորհիվ ԳՖՀ-ի տնտեսությունը տեխնիկապես վերազին-

վեց, ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր: Մոտ երկու տասնամյակ անց Գերմանիան դարձավ եվրոպական պետություններից տնտեսապես ամենահզորը: Աշխարհը սկսեց խոսել «գերմանական հրաշքի» մասին:

Կոնրադ Ադենաուեր (1876–1967թթ.)

ԳՖՀ-ի բուռն զարգացումը հասավ նոր բարձունքների Հելմուտ Կոլի վարչապետության շրջանում (1982–1989 թթ.): ԳՖՀ-ն դարձավ նաև եվրոպական քաղաքական, տնտեսական և ռազմական կառույցների անդամ: ԳՖՀ-ն 1952թ. անդամակցեց ՆԱՏՕ-ին, իսկ 1973թ. դարձավ ՄԱԿ-ի անդամ:

1957 թ. ԳՖՀ-ն Հռոմում եվրոպական մի շարք երկրների հետ միասին ստորագրեց Եվրոպական տնտեսական միության ստեղծման մասին համաձայնագիրը:

Այլ կերպ ընթացավ գերմանական մյուս պետության՝ ԳԴՀ-ի զարգացման ուղին: Նա երբեք չհասավ ԳՖՀ-ի մակարդակին: 1961թ. օգոստոսին Բեռլինում կառուցվեց 42 կմ երկարությամբ, 4,6 մետր բարձրությամբ պատ՝ ամրացված էլեկտրական հոսանքալարերով: Այդ պատը անջրպետ ստեղծեց միևնույն ժողովրդի երկու հատվածների միջև: Թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գերմանացիները մշտապես փայփայել են միավորման գաղափարը:

Բեռլինի պատի կառուցումը

Ի վերջո 1990թ. հոկտեմբերին տեղի ունեցավ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միավորումը, որն իրագործվեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետության՝ ԳՖՀ-ի կազմի մեջ մտնելու ձևով: Միացյալ պետությունը շարունակեց կոչվել Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն:

Իտալիա: Պատերազմի ավարտից հետո Իտալիայում ձեռնարկվեցին անհրաժեշտ քայլեր նրա ապաֆաշիզմացման ուղղությամբ: Վերացվեց միապետությունը, և Իտալիան հռչակվեց պառլամենտական հանրապետություն: Դուչեին և միապետին, որպես պետության ղեկավար, փոխարինելու եկավ երկրի նախագահը, որն ընտրվում է խորհրդարանի կողմից յոթ տարի ժամկետով:

«ՖԻԱՏ» գործարանի շենքը

Արգելվեցին բոլոր տեսակի ֆաշիստամետ կուսակցությունները, կազմակերպությունները և միությունները: Իտալիան ընտրեց զարգացման արևմտյան ժողովրդավարական մոդելը:

Ակնառու նվաճումներ եղան նաև տնտեսության ոլորտում, և Իտալիան վերածվեց բարձր զարգացած արդյունաբերական ագրարային երկրի, որի արտադրանքն իր բարձր որակով լայն շուկաներ է նվաճել աշխարհում: Իտալիան ՆԱՏՕ-ի հիմնադիր անդամներից, Եվրամիության, Եվրախորհրդի և համաեվրոպական այլ կառույցների գործունյա անդամ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով ինչ ընդհանուր հիմնախնդիրներ առաջացան Արևմուտքի առաջատար երկրներում Երկրորդ աշխարհամարտից հետո: Փորձեք առանձնացնել հետպատերազմյան շրջանի տնտեսական և քաղաքական զարգացման միտումները և բնորոշ գծերը: Ինչպիսին է ձեր վերաբերմունքը դրանց նկատմամբ:
2. Ինչ փոփոխություններ տեղի ունեցան ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ 1945-1980 թթ.:
3. Նկարագրեք ԱՄՆ-ի տնտեսական դրությունը և զարգացման ուղղությունները:
4. Որո՞նք էին հետպատերազմյան շրջանում Մեծ Բրիտանիայի համաշխարհային առաջատար դիրքերի թուլացման պատճառները:
5. Փորձեք պարզաբանել բրիտանական գաղութային կայսրության փլուզման պատճառները: Ինչո՞վ այն փոխարինվեց:
6. Ներկայացրեք Մ. Թեթչերի գործունեությունը:
7. Ո՞րն էր դը Գոլի տնտեսական քաղաքականության էությունը:
8. Տվեք Միտերանի գործունեության բնութագիրը:
9. Ինչ ուղիով ընթացավ ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի զարգացումը:
10. Ինչ եք կարծում, ինչու՞ կառուցվեց Բեռլինի պատը: Ինչի՞ խորհրդանիշ էր այն համարվում: Ձեր կարծիքով այդ պատի կառուցումը ծառայե՞ց իր նպատակին:

11. Ո՞ր ռազմաքաղաքական խմբավորումների մեջ էին ընդգրկված գերմանական պետությունները:

12. Համեմատեք գերմանական երկու պետությունների տնտեսական և քաղաքական զարգացման փուլերը: Ձեր կարծիքով ո՞րն էր այդ փուլերի գլխավոր տարբերությունը:

13. Ինչպիսի՞ քաղաքական փոփոխություններ կատարվեցին Իտալիայում հետպատերազմյան ժամանակաշրջանում:

14. Նկարագրեք Իտալիայի հաջողությունները տնտեսական ոլորտում:

15. Լրացրեք «Արևմուտքի երկրները 1945–1980-ական թթ.» աղյուսակը:

Երկրներ	**Իրականացված միջոցառումներ**				**Արդյունքներ**
	Տնտեսական	Քաղաքական	Սոցիալական	Մշակութային	
ԱՄՆ					
Մեծ Բրիտանիա					
Ֆրանսիա					
ԳՖՀ					

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԱՄՆ-Ի ՊՐԵԶԻԴԵՆՏ ԼԻՆԴՈՆ ՋՈՆՍՈՆԻ «ԵՐԿՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՈՒՂԵՐՁԻՑ (1964 թ. հունվարի 8-ին)

Դժբախտաբար շատ ամերիկացիներ ապրում են քիչ հույս ունենալով՝ ոմանք իրենց չքավորության, ոմանք իրենց մորթի գույնի պատճառով, իսկ շատ շատերն էլ այդ երկու պատճառներով...

Աղքատությունը ազգային պրոբլեմ է, որը պահանջում է ավելի կատարյալ ազգային կազմակերպություն և աջակցություն:

... Ծրագրում, որը ես պիտի առաջարկեմ, շեշտը կդրվի... համապետական մուտքեցման՝ օգնություն ցույց տալու ամբողջ ամերիկյան ընտանիքների մեկ հինգերորդին, որոնց եկամուտները չափից դուրս քիչ են իրենց հիմնական կարիքների բավարարման համար:

...Ինչ էլ որ լինի պատճառը, մեր համապետական ջանքերը համազգային մասշտաբներով տեղերում ևս պետք է ուղղված լինեն պայքարելու աղքատության դեմ, որտեղ էլ նա գոյություն ունենա.

քաղաքային հետնախորշերում և փոքրիկ քաղաքներում,
հողի վարձակալների խրճիթներում,
գաղթող բանվորների ճամբարներում,

հնդկական ռեզերվացիաներում,
սպիտակամորթների, ինչպես և նեգրերի մեջ,
երիտասարդության, ինչպես նաև հասակավորների մեջ,
բարգավաճող քաղաքներում և աղքատ շրջաններում:

... Մենք պետք է օրենք մտցնենք երիտասարդության զբաղվածության մասին, հնարավորություն տալով անգործ, աննպատակ, անհույս երիտասարդ մարդկանց կատարելու օգտակար գործ:

Մենք պետք է ավելի շատ մթերքներ բաժանենք կարիքավորներին պարենամթերքների տալոնների բաշխման ավելի լայն ծրագրի միջոցով:

§15. ԽՍՀՄ-Ը 1945-1985 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԽՍՀՄ-ը հետպատերազմյան առաջին տարիներին

ԽՍՀՄ ժողովուրդների ծանր զրկանքների, անձնազոհության ու արյան գնով ձեռք բերվեց հաղթանակը Երկրորդ աշխարհամարտում: Մարդկային զոհերի թիվն անցել էր 30 միլիոնից: Ավերվել էին բազմաթիվ քաղաքներ, հազարավոր գյուղեր և ավաններ, գործարաններ ու ֆաբրիկաներ: Երկիրը կորցրել էր իր ազգային հարստության մոտ 30 տոկոսը:

Խորհրդային ժողովուրդը հույս ուներ, որ պատերազմից հետո բարեփոխումներ կկատարվեն երկրի հասարակական ու տնտեսական կյանքում, կբարելավվեն ժողովրդի կյանքի պայմանները:

Սակայն էական փոփոխություններ չկատարվեցին: Երկրի ղեկավարությունը շարունակում էր հետևել նախկին կուրսին: Լարված աշխատանքի շնորհիվ սեղմ ժամկետում վերականգնվեց երկրի տնտեսությունը, ավերված քաղաքների ու ավանների մեծ մասի, կյանքը մտավ խաղաղ հունի մեջ:

Տարեցտարի ամրապնդվում էր վարչահրամայական անձնակազմը: Խորհրդային ժողովուրդը պատերազմից հետո թևակոխեց դաժան փորձությունների մի նոր ժամանակաշրջան: Հետպատերազմյան բռնությունների առաջին հարվածը հասցվեց զինվորական գործիչներին, որոնց հեղինակության բարձրացումը դուր չէր գալիս Ստալինին: Ողբերգական էր ֆաշիստական զնդաններից ազատագրված ռազմագերիների վիճակը: Նրանց մեծ մասը դատապարտվեց բանտարկության կամ աքսորի: Նոր թափով ծավալվեցին հարձակումները գիտության, գրականության, արվեստի առաջադեմ ներկայացուցիչների և ընդհանրապես մտավորականության վրա: Կոսմոպոլիտիզմի դեմ պայքարելու պատրվակով հալածվեցին բոլոր նրանք, ովքեր հետաքրքրվում էին արևմտյան գրականությամբ և արվեստով:

Բռնությունների ոլորտից դուրս չմնաց գիտությունը: Ծանր էր հատկապես հասարակական գիտությունների վիճակը, որտեղ մարքս-լենինյան դոգմաներից ամենափոքր շեղումը դիտվում էր որպես հանցագործություն:

«Ձնհալի շրջանը»

1953թ. մարտի 5-ին մահացավ Ստալինը: Դրանով ավարտվեց մի ամբողջ պատմական դարաշրջան: 1953թ. սեպտեմբերին Նիկիտա Խրուշչովն ընտրվեց ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: Նա կատարեց մի շարք բարեփոխումներ: Առաջին հերթին արդարացվեցին համակենտրոնացման ճամբարներում ու բանտերում տառապող հարյուր հազարավոր մարդիկ: Երկրի կյանքում սկսվեց «ձնհալի» ժամանակաշրջանը:

Նիկիտա Խրուշչով (1894–1971 թթ.)

1956թ. գումարվեց ԽՄԿԿ XX համագումարը: Այն վերհանեց երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղ գտած թերությունները, քննադատեց կամայականությունների ու բռնությունների քաղաքականությունը և դատապարտեց անհատի՝ Ստալինի պաշտամունքը: 1950-ական թվականների տնտեսական բարեփոխումներն սկսվեցին գյուղատնտեսությունից: Որոշվեց վերացնել գյուղացիության ճորտական վիճակը, նրանց տրվեցին քաղաքացիական իրավունքներ, առաջին հերթին՝ անձնագիր ունենալու իրավունք, ավելացվեցին գյուղատնտեսության զարգացմանն ուղղված հատկացումները, ամրապնդվեց նրա նյութատեխնիկական բազան, բարելավվեցին գյուղացիության սոցիալ-կենցաղային պայմանները, վարձատրության ձևերը և այլն: Արդյունքում՝ աճեց գյուղատնտեսական արտադրանքն ու բարելավվեց բնակչության սպասարկումը: Քայլեր էին կատարվում վարչահրամայական համակարգը սանձահարելու ուղղությամբ:

Յուրի Գագարին (1934–1968 թթ.)

1957թ. հոկտեմբերին տիեզերք արձակվեց առաջին արհեստական արբանյակը: Իսկ 1961թ. ապրիլի 12-ին Յուրի Գագարինը բացեց տիեզերքի «մայրուղին»: Ներքաշվելով ատոմային մրցավազքի մեջ, Խորհրդային Միությունն իր հիմնական միջոցներն սկսեց ներդնել այդ բնագավառում, որի հետևանքով խախտվեց տնտեսության մյուս ճյուղերի զարգացման համաչափությունը: 1960-ական թվականների սկզբին երկիրը կրկին ճգնաժամային վիճակի մեջ ընկավ: Հին մտածելակերպի, հետադիմական ուժերը, որոնք քիչ չէին ղեկավարության մեջ, 1964թ. հոկ-

տեմբերին Խրուշչովին հեռացրին զբաղեցրած պաշտոններից: ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Լեոնիդ Բրեժնևը:

Լճացման տարիները

Լեոնիդ Բրեժնև (1906–1982 թթ.)

1960-ական թվականների վերջին ԽՍՀՄ-ը թևակոխեց հասարակական կյանքի լճացման փուլը, փորձ էր արվում հրաժարվել նախորդ շրջանում ձեռք բերված ժողովրդավարական նվաճումներից: Լայն աշխատանք էր տարվում Լ. Բրեժնևի պաշտամունքը ձևավորելու ուղղությամբ:

Կուսակցական-տնտեսական վերնախավը, որը հիմնականում ձևավորվել էր ստալինյան դարաշրջանում, չէր ցանկանում ձերբազատվել անցյալի ժառանգությունից: Դրությունն ավելի վատ էր գյուղատնտեսության բնագավառում: Սկսվեց գյուղացիության արտահոսքը գյուղերից: 1980-ական թվականներին գյուղի ձգնաժամային վիճակն ավելի ծանրացավ, վատթարացավ բնակչության՝ պարենամթերքով ապահովումը: Չնայած անընդհատ ավելանում էին արտասահմանից սննդամթերքի ներմուծումները՝ նորից երևան եկան նորմավորված մատակարարումները, բաշխման քարտային կարգը և հերթերը: Հասարակական-քաղաքական կյանքը հերթական անգամ ընկավ ճգնաժամի մեջ: 1964–1982 թվականները մտան պատմության մեջ որպես լճացման փուլ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ կորուստներ ունեցավ ԽՍՀՄ-ը Մեծ հայրենականում:
2. Փորձեք բնութագրել երկրի տնտեսության վիճակը պատերազմից հետո: Ձեր կարծիքով ինչը հնարավոր դարձրեց տնտեսության արագ վերականգնումը:
3. Որո՞նք են հետպատերազմյան շրջանում վերսկսված բռնությունների պատճառները: Ինչ հետևանքներ ունեցան դրանք քաղաքական, սոցիալական, մշակութային և գիտական ոլորտներում: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը բռնությունների նկատմամբ:
4. Ձեր կարծիքով ինչո՞ւ ԽՄԿԿ XX համագումարը դատապարտեց Ստալինի անձի պաշտամունքը: Ինչ եք կարծում, ո՞րն էր անձի պաշտամունքի ամենածանր հետևանքը:
5. Ինչ նվաճումներ ունեցավ ԽՍՀՄ-ը տնտեսության և գիտության

բնագավառներում:

6. Փորձեք գնահատել ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը 1950-1980-ական թվականներին: Ինչպե՞ս կարելի է բնութագրել ԽՍՀՄ-ի վարած այդ քաղաքականությունը:
7. Ինչո՞ւ ենք Բրեժնևի կառավարման տարիներն անվանում «լճացման շրջան»:
8. Ի՞նչ է բնորոշ լճացման տարիներին ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականությանը:
9. Լրացրեք «ԽՍՀՄ-ը 1945-1985 թթ.» ժամանակագրական աղյուսակը:

Տարեթվեր	Իրադարձություններ	Արդյունքներ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1956 թ. ԽՄԿԿ XX համագումարում Ն. Խրուշչովի «Անձի պաշտամունքի և դրա հետևանքների մասին» զեկույցից

«Մենք պիտի ամենայն լրջությամբ մոտենանք անձի պաշտամունքի խնդրին: Այդ հարցը մենք չենք կարող դուրս բերել կուսակցության սահմաններից, իսկ առավել ևս՝ մամուլ...

Անձի պաշտամունքը նպաստել է կուսակցական շինարարության և տնտեսական աշխատանքի մեջ արատավոր մեթոդների տարածմանը, ծնել ներկուսակցական և սովետական դեմոկրատիայի կոպիտ խախտումներ, ամեն տեսակի այլասերումներ, թերությունների աքողում, իրականության լաքապատում:

Մեզանում բազմացել են մեծ թվով ապորաքարշներ, աչքակապությամբ զբաղվողներ: Չի կարելի չտեսնել և այն, որ կուսակցական, սովետական և տնտեսական աշխատողների մեծաթիվ ձերբակալություններից հետո մեր բազմաթիվ կադրեր սկսեցին աշխատել անվստահորեն, երկյուղած, նորից վախենալ, զգուշանալ սեփական ստվերից: Սկսեցին ավելի քիչ նախաձեռնություն դրսևորել աշխատանքում»:

§16. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ԴԵՊԻ ՓԼՈՒՋՈՒՄ

Վերակառուցման քաղաքականությունը

1980-ական թվականների կեսերին պարզ դարձավ, որ ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող վարչակարգն ի վիճակի չէ լուծել երկրի առջև ծառացած խնդիրները:

Միխայիլ Գորբաչով

1985թ. ԽՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Գորբաչովը: Նա մի շարք բարեփոխումներ կատարեց, որն ստացավ «վերակառուցում» անվանումը: Այդ կուրսի նպատակն էր արագացնել խորհրդային հասարակության վերափոխումները, այդ թվում նաև՝ տնտեսական, երկիրը վերածել զարգացած առաջադիմական երկրի՝ գիտական նվաճումների օգտագործման հիման վրա, պահպանելով սոցիալիստական, միակուսակցական, վարչահրամայական համակարգը: Սակայն հռչակված բարեփոխումների ծրագիրը և հրապարակայնությունը չնպաստեցին երկիրը տնտեսական ու քաղաքական ճգնաժամից դուրս բերելու գործին: Վճռական և մտածված քայլեր չձեռնարկվեցին ժողովրդավարության հիման վրա քաղաքացիական հասարակության զարգացման համար: Աճեց կաշառակերությունը, և ձևավորվեց ստվերային տնտեսությունը: Աստիճանաբար իր հեղինակությունը կորցրեց կոմունիստական կուսակցությունը, որը դարձավ սովորական կուսակցություն առանց կառավարման լծակների: Գորբաչովն ընտրվեց ԽՍՀՄ նախագահ, բայց նա չգիտեր ինչ անել, ժողովուրդը հիասթափվել էր նրանից և իրենց դեմոկրատներ հորջորջող շատ գործիչներից: Քանի գնում ավելի էր խորանում քաղաքական և տնտեսական ճգնաժամը, առաջացան նոր, բարդ ու հակասական գործընթացներ, սրվեցին ազգամիջյան հարաբերությունները և հակասությունները ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ու հանրապետությունների միջև:

Առանձնապես սուր բնույթ ընդունեց ազգային հարցը, մասնավորապես ղարաբաղյան կոնֆլիկտը, որը ցնցեց ամբողջ երկիրը: Ազգային հակամարտություններ դրսևորվեցին նաև Վրաստանում, Մոլդովայում, Միջին Ասիայի հանրապետություններում, Հյուսիսային

Ղարաբաղյան շարժում

Կովկասում, Ղրիմում և այլուր: Վերակառուցման «ճարտարապետները» պատրաստ չէին դրան, և ազգային հակամարտությունները խարխլեցին Խորհրդային Միության գոյության հիմքերը: Ամբողջ աշխարհը ցնցեցին Ադրբեջանում՝ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլ քաղաքներում ու գյուղական վայրերում, ադրբեջանցի հրոսակների և մարդասպանների կողմից իրականացված՝ հայերի զանգվածային կոտորածները, որի կանխման ուղղությամբ խորհրդային իշխանությունները ոչ մի արդյունավետ քայլ չձեռնարկեցին:

1989–1991 թվականներին մի շարք հանրապետություններում ձևավորվեցին ազգային ճակատներ (հատկապես Մերձբալթիկայում), որոնք պայքարում էին իրենց տնտեսական ու մշակութային վերածնունդի համար: Ընդդիմադիր ուժերն ավելի հաճախակի էին կազմակերպում հանրահավաքներ, ցույցեր: Հայաստանում ընդդիմադիր հիմնական կազմակերպությունը «Ղարաբաղ» կոմիտեն էր, որի գլխավոր նպատակը արցախահայության ազատագրական պայքարին սատար կանգնելն էր:

90-ական թվականների սկզբներին դեմոկրատական ուժերը պայքարի ելան անկախություն ձեռք բերելու համար: Լատվիայի, Էստոնիայի Ազգային ճակատները և Լիտվայի «Սաուդիսը» 1990թ. իրենց հանրապետություններում կայացած ընտրություններում ստացան ձայների մեծամասնությունը: Բարդ և հակասական էր իրավիճակն Ամդրկովկասում: Չնայած երկրաշարժի ու շրջափակման հետևանքով Հայաստանում խորացող տնտեսական ճգնաժամին՝ արցախյան ազատագրական պայքարն ավելի ու ավելի էր համաժողովրդական բնույթ ստանում: 1990թ. մայիսին, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ հաջողությունների հասավ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որի վարչությունը գլխավորող Լ. Տեր-Պետրոսյանն ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ: 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում հանրաքվե անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախության մասին: Բնակչության ճնշող մեծամասնությունը քվեարկեց դրա օգտին:

Ադրբեջանի ընդդիմությունը, ոգևորված հայկական ջարդերի ու թալանի անպատժելիությամբ, 1990 թ. հունվարին փորձեց Բաքվում զավթել իշխանությունը: Բաքվում արտակարգ դրություն մտցվեց:

Այդ պայմաններում կատարված ընտրությունները պահպանեցին կոմունիստների իշխանությունը: Քիչ ավելի ուշ ընտրություններ տեղի ունեցան Վրաստանում: Այդտեղ հաղթեց ընդդիմությունը, և հանրապետության նախագահ ընտրվեց Զ. Գամսախուրդիան:

1991թ. օգոստոսին 10 հանրապետությունների կողմից ստորագրվեց միութենական նոր պայմանագիր, որով նոր հարաբերություններ պետք է հաստատվեին նրանց միջև:

ԽՍՀՄ-ի փլուզումը: ԱՊՀ-ի ստեղծումը

1990թ. արդեն պարզ էր, որ ղեկավարությունն այլևս չէր կարողանում առաջվա պես թելադրել իր կամքը: 1990թ. Մերձբալթիկայի ազգային ճակատներն առաջ քաշեցին իրենց հանրապետությունները անկախ պետություններ հռչակելու հարցը: Շուտով նույնը տեղի ունեցավ Հայաստանում, Վրաստանում, Ուկրաինայում, Բելառուսում և Ռուսաստանում: Արդեն 1991 թ. գարնանը ԽՍՀՄ-ը կանգնած էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը ԽՍՀՄ-ը փրկելու նպատակով որոշեց հանրաքվե անցկացնել: Հանրաքվեն անցկացվեց 1991 թ. մարտի 17-ին: ԽՍՀՄ 15 հանրապետություններից հանրաքվեին մասնակցեցին 9-ը (մյուսները հրաժարվեցին հանրաքվեին մասնակցել) և քվեարկեցին Խորհրդային Միության պահպանման օգտին: Հանրաքվեի արդյունքների հիման վրա Մ.Գորբաչովի նախաձեռնությամբ մշակվեց Միության ստեղծման մասին նոր բարեփոխված պայմանագիր, որը պետք է ստորագրվեր 1991 թ. օգոստոսի 20-ին: Սակայն ԽՍՀՄ պետական և կուսակցական պահպանողական վերնախավը օգոստոսի 19-ին խռովություն կազմակերպեց և իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Բայց պահպանողականների իշխանությունը շատ կարճ տևեց: 1991 թ. օգոստոսի 21-ին Մոսկվայում ժողովրդավարական ուժերը ճնշեցին խռովությունը և ձերբակալեցին նրանց կազմակերպիչներին՝ ԽՍՀՄ փոխնախագահ Յանաևին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ՝ Լուկյանովին և ուրիշների:

ԽՍՀՄ-ի փլուզման մասին համաձայնության ստորագրումը

Խռովությունն արագացրեց ԽՍՀՄ-ի փլուզումը: 1991թ.

դեկտեմբերի 8-ին ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ելցինի նախաձեռնությամբ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի միջև համաձայնագիր կնքվեց Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու մասին: Այդ պայմանագրում նշվում էր, որ ԽՍՀՄ-ը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ դադարում է գոյություն ունենալ: Բոլոր նախկին հանրապետությունները հրավիրվում էին մտնելու ԱՊՀ-ի մեջ: 1991թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում ԱՊՀ հանրապետությունների ներկայացուցիչների հանդիպում տեղի ունեցավ: Այդտեղ վերջնականապես հայտարարվեց ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին:

Ավարտվեց նրա 70-ամյա պատմությունը:

ԱՊՀ-ն պետությունների այնպիսի միություն է, որի մեջ մտնողները պահպանում են իրենց ներքին ու արտաքին ինքնուրույնությունը և ցանկացած ժամանակ կարող են դադարեցնել իրենց մասնակցությունը: Այդ համագործակցությունը միտում ունի վերածվելու համադաշնության, թեպետ հանրապետություններն զգուշանում են, որ ԱՊՀ-ն չվերածվի մի նոր միասնական կենտրոնական պետության, որտեղ կանտեսվեն իրենց շահերը:

ԱՊՀ-ն ունի երկրների նախագահների, վարչապետների, արտաքին և պաշտպանության նախարարների խորհուրդներ: Ամենամյա գագաթնաժողովները տարբեր կարգի հանձնաժողովներ են ստեղծում համատեղ աշխատանքներ տանելու համար: Սակայն դրանք քիչ են արդյունք տալիս: ԱՊՀ շրջանակներում արդյունավետ համագործակցություն է տարվում նախկին ԽՍՀՄ պետական սահմանների պահպանման հարցում: 2000թ. որոշվեց այդ նպատակով ստեղծել խաղաղարարական զորամիավորումներ: Որոշակի աշխատանքներ են տարվում ԱՊՀ շրջանակներում թմրանյութերի տարածման, կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի բնագավառներում: Փորձեր են արվում կարգավորելու մաքսային հարաբերությունները, ստեղծելու ազատ առևտրի գոտիներ և այլն: ԱՊՀ շրջանակներում ավելի արդյունավետ են գործում

ԱՊՀ-ի ստեղծման հայտարարությունը

երկկողմ պայմանագրերը, որոնք կնքվում են առանձին հանրապետությունների միջև:

Փաստորեն, ԱՊՀ գագաթնաժողովներում առաջին հերթին ուղիներ են որոնվում հետագա համագործակցությունը զարգացնելու համար:

ԱՊՀ ձևավորման առաջին օրերից Հայաստանի Հանրապետությունն անդամագրվեց նրան: Դա կարևոր նշանակություն ունի հիմնականում ոչ բարյացակամ պետությունների շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար: Առաջին հերթին այն կարևոր դեր է խաղում հանրապետության անվտանգության ապահովման գործում: ԱՊՀ երկրներից Հայաստանի համար շատ կարևոր են Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունները: Այս բնագավառում սերտ ռազմաքաղաքական հարաբերություններ են հաստատվել, որոնք բխում են երկու երկրների շահերից: Հայաստանն իր ակտիվ գործունեությամբ նպաստում է ԱՊՀ-ի գործնական կայացմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ ԽՍՀՄ ղեկավարությունը դիմեց վերակառուցման քաղաքականության: Ո՞րն էր այդ քաղաքականության էությունը:
2. Ինչպիսի՞ զարգացում ունեցավ քաղաքական կյանքը ԽՍՀՄ-ում «վերակառուցման» շրջանում:
3. Փորձեք պարզել այդ տարիներին ԽՍՀՄ-ում ազգային հարցի սրման պատճառները:
4. Ի՞նչ նպատակ էին հետապնդում «օգոստոյան խռովության» ղեկավարները: Ձեր կարծիքով ի՞նչ հետևանքներ կարող էր ունենալ խռովության հաղթանակը ԽՍՀՄ-ում: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5. Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք անխուսափելի էր ԽՍՀՄ-ի փլուզումը: Կարող ենք ասել, որ ԽՍՀՄ-ի վերացումը վերակառուցման քաղաքականության հետևանք էր: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
6. Ե՞րբ է ստեղծվել ԱՊՀ-ն: Որո՞նք էր ԱՊՀ-ի հիմնական տարբերությունը ԽՍՀՄ-ից: Ի՞նչ ուղղություններով են զարգանում ԱՊՀ երկրների միջև հարաբերությունները: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը ԱՊՀ-ի նկատմամբ:
7. Ի՞նչ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար անդամակցությունը ԱՊՀ-ին:
8. Լրացրեք «Վերակառուցումից դեպի փլուզում» աղյուսակը:

Տարեթվեր	Իրադարձություններ	Արդյունքներ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ, ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1993 թվականի հունվարի 22-ին ԱՊՀ անդամ պետությունների կողմից ընդունված ԱՊՀ կանոնադրությունից

Հիմնական նպատակներն են.

– փոխգործակցության իրականացումը քաղաքական, տնտեսական, բնապահպանական, հումանիտար, մշակութային և այլ ոլորտներում,

– անդամ պետությունների բազմակողմանի և հավասարակշռված տնտեսական ու սոցիալական զարգացումը ընդհանուր տնտեսական տարածության շրջանակներում, ինչպես նաև միջպետական համագործակցությունը և ինտեգրումը,

– մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ապահովումը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների և նորմերի, ինչպես նաև ԵԱՀԿ փաստաթղթերի համաձայն,

– անդամ պետությունների միջև համագործակցությունը միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման գործում, սպառազինությունների և ռազմական ծախսերի կրճատմանն ուղղված ազդեցիկ գործողությունների իրականացումը, միջուկային և զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքերի վերացումը, ինչպես նաև համընդհանուր և ամբողջական զինաթափման հասնելը,

– աջակցությունը անդամ պետությունների քաղաքացիների տեղաշարժմանը և ազատ շփմանը ԱՊՀ-ում,

– փոխադարձ իրավական օժանդակումը և համագործակցությունը իրավահարաբերությունների այլ ոլորտներում,

– ԱՊՀ մասնակից պետությունների միջև վեճերի և կոնֆլիկտների խաղաղ կարգավորումը:

Համագործակցությունը ԱՊՀ շրջանակներում իրականացվում է կանոնադրական մարմինների միջոցով.

– Պետությունների ղեկավարների խորհուրդ
– Կառավարությունների ղեկավարների խորհուրդ
– Արտաքին գործերի նախարարների խորհուրդ
– Տնտեսական խորհուրդ
– Պաշտպանության նախարարների խորհուրդ
– Սահմանապահ զորքերի հրամանատարների խորհուրդ
– Միջխորհրդարանական վեհաժողով
– Տնտեսական դատարան:

§17. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Սոցիալիզմի խորհրդային մոդելի հաստատումը եվրոպական երկրներում

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտական փուլում խորհրդային զորքերի մուտքը Արևելյան Եվրոպայի երկրներ չսահմանափակվեց լոկ գերմանական տիրապետությունից նրանց ազատագրելու խնդրով, այլև ունեցավ շատ կարևոր քաղաքական հետևանքներ այդ երկրների ճակատագրում: Պատերազմի ավարտից հետո խորհրդային զորքերն անմիջապես դուրս չեկան գրաված երկրներից, իրականացնելով քաղաքական խնդիրներ: Խոսքը Ալբանիայի, Բուլղարիայի, Արևելյան Գերմանիայի, Լեհաստանի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի և Ռումինիայի մասին է: Խորհրդային Միության ղեկավարությունը վերոնշյալ երկրներում իշխանությունը հանձնեց կոմունիստական կուսակցություններին: Հաջորդ քայլը եղավ այդ երկրները սոցիալիստական հռչակելը: Իրականում դա պարտադրվեց ԽՍՀՄ-ի կողմից, այդ երկրներում պայմանները դեռևս հասունացած չէին սոցիալիզմի համար, իսկ կոմունիստական կուսակցություններն էլ դեռևս թույլ էին: Այդ բարդ գործընթացը ԽՍՀՄ-ն իրականացրեց 1945-1949 թթ: Այդպես դրվեցին, ինչպես ընդունված էր այդ ժամանակ ասել, սոցիալիստական ճամբարի հիմքերը:

Խորհրդային զորքերի դիմավորումը Չինաստանում

Եվրոպայի սոցիալիստական երկրներին պարտադրվեց դառնալ 1949թ. հիմնված Տնտեսական փոխօգնության խորհրդի և 1955թ. ստեղծված Վարշավայի պայմանագրի կազմակերպության անդամ:

Սոցիալիզմը, դուրս գալով եվրոպական շրջանակներից, 1950-1960-ականներին «հաղթեց» նաև Ասիայի մի շարք երկրներում՝ Չինական Ժողովրդական Հանրապետությունում, Մոնղոլիայում, Հյուսիսային Կորեայում, Վիետնամում, Լաոսում, ապա նաև Կուբայում:

Սոցիալիստական նոր երկրներն ազատ կերպով, ըստ իրենց կամքի չընտրեցին սոցիալիզմի զարգացման տարատեսակը: Նրանք

Իոսիպ Բրոզ Տիպո (1892–1980 թթ.)

պատճենահանեցին Մոսկվայի կողմից պարտադրված խորհրդային մոդելը: ԽՍՀՄ-ը սոցիալիստական երկրներ արտահանեց ամբողջատիրական և կառավարման վարչահրամայական համակարգը, բազմակարծության ժխտումը, անօրինականությունը, ներքին և անվտանգության մարմինների կամայականությունները, ժողովրդավարության իսպառ բացակայությունը, անհատի պաշտամունքը և այլ բացասական գծեր, առանց հաշվի առնելու տեղական յուրահատկությունները: Արտաքին քաղաքականության բնագավառում այդ երկրները պարտավոր էին անխոս հետևել և կիրառել ստալինյան «իմաստուն» արտաքին քաղաքականությունը:

Սոցիալիստական համակարգի ճգնաժամը և փլուզումը:

Եվրոպական սոցիալիստական երկրներին պարտադրելով խորհրդային մոդելը, խորհրդային ղեկավարությունն անտեսեց այն հանգամանքը, որ դրանք եվրոպական երկրների էին, վարժված ժողովրդավարությանը, որտեղ հարգում էին խոսքի, մամուլի, միությունների ազատությունը և բազմակարծությունը: Դրանց բացակայությունը, որ հաստատվեց այդ երկրներում սոցիալիստական հռչակվելուց հետո, եղավ խոր և համազգային դժգոհության առաջին պատճառը: Այուս պատճառը տնտեսական ծանր վիճակն էր, որի մեջ հայտնվեցին այդ երկրները: Սկզբում նրանք հավատում էին, որ սոցիալիզմը կնպաստի իրենց երկրների զարգացմանը և առաջընթացին, նրանց կապահովի բարեկեցիկ և քաղաքակիրթ կյանք: Շուտով ակնհայտ դարձավ, որ կապիտալիզմի հետ մրցության մեջ սոցիալիզմը տանուլ է տալիս: Այդ երկրներում սկսվեց տնտեսական անկում, պարենամթերքի և ապրանքների պակաս, ինչպես ԽՍՀՄ-ում էր, գների աճ և տնտեսական դրության կտրուկ վատթարացում: Բայց այդ դժգոհությունը պոռթկումի վերածվելու համար անհրաժեշտ էին բարենպաստ պայմաններ, որոնք սոցիալիստական համակարգում առաջացան 1953թ.՝ բռնակալ Իոսիֆ Ստալինի մահվան և

Հունգարիայի ապստամբությունը

ԽՍՀՄ-ում որոշ փոփոխությունների հետևանքով: Արդեն 1953թ. օգոստոսին լայնածավալ հուզումներ տեղի ունեցան Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում: 1956թ. զինված ապստամբություն կայացավ Հունգարիայում, որի ընթացքում կառավարությունը տապալվեց, ձևավորվեց նոր կառավարություն, որը հայտարարեց Վարշավայի պայմանագրի կազմակերպությունից Հունգարիայի դուրս գալու մասին: Խորհրդային զորքերն արյան մեջ խեղդեցին հունգարական ապստամբությունը: Սուր տարաձայնություններ առաջացան մի կողմից Հարավսլավիայի, իսկ մյուս կողմից՝ ԽՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս պետությունների միջև: Հարավսլավիան հրաժարվեց հետևել սոցիալիզմի խորհրդային մոդելին և ընտրեց զարգացման սեփական ուղին, հեռանալով ձևավորված սոցիալիստական ճամբարից: Զարգացման սեփական ուղին ընտրեց Չինաստանը, որը չէր ցանկանում ենթարկվել Մոսկվայի թելադրանքին: Նրանց միջև անգամ տեղի ունեցան սահմանային զինված բախումներ: Փոփոխություններ տեղի ունեցան նաև Ալբանիայի մոտեցումներում: Հերթական սուր ճգնաժամը բռնկվեց Չեխոսլովակիայում՝ 1968թ: Վարշավայի կազմակերպության զորքերը Խորհրդային Միության գլխավորությամբ ներխուժեցին Չեխոսլովակիա և սոցիալիստական կարգերը «վերականգնեցին» այդ երկրում: Վառոդի տակառ էր իրենից ներկայացնում Լեհաստանը, պատրաստ պայթելու ամեն վայրկյան: Ուստի միանգամայն բնական էր, որ 1991թ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո փլուզվեց նաև սոցիալիզմի համաշխարհային համակարգը:

Պրահայի ապստամբությունը, 1968 թ.

Դրանից հետո նախկին սոցիալիստական երկրների զարգացումն ընթացավ տարբեր ուղիներով: Նրանք հնարավորինս հեռացան ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնությունից, վերականգնեցին իրենց ինքնիշխանությունը և



Բեռլինի պատի քանդումը

ընտրեցին անկախության և զարգացման արևմտյան ուղին: Հունգարիայում, Բուլղարիայում և Ռումինիայում կատարվեց իշխանափոխություն: Չեխոսլովակիան տրոհվեց երկու մասի՝ Չեխիա և Սլովակիա անկախ պետությունների: Հարավսլավիան նույնպես տրոհվեց և նրա փլատակների վրա կազմավորվեցին Սերբիա, Խորվաթիա, Չերնոգորիա, Մակեդոնիա, Սլովենիա և Բոսնիա ու Հերցեգովինա անկախ պետությունները, և Կոսովո վիճելի շրջանը: Լեհաստանն ընտրեց ժողովրդավարության ուղին, որն ամրապնդվեց խորհրդարանական ընտրություններում և նոր Սահմանադրությամբ:

Եվ, վերջապես, 1990թ. ավարտվեց գերմանական երկու պետությունների միավորումը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Արևելյան Եվրոպայի երկրներում խորհրդային զորքերի գտնվելը: Արդյո՞ք դա բխում էր այդ երկրների ժողովուրդների շահերից: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
2. Որո՞նք էին սոցիալազմի խորհրդային մոդելի բնորոշ գծերը: Ինչպե՞ս տարածվեց այն Արևելյան Եվրոպայի երկրներում:
3. Ինչպիսի՞ ընդվզումներ եղան սոցիալիստական կարգերի դեմ, ո՞ր երկրներում և ե՞րբ: Ձեր կարծիքով ինչո՞ւ փլուզվեց սոցիալիստական համակարգը: Փորձե՛ք գնահատել այդ համակարգը:
4. Ձեր կարծիքով որո՞նք են կապիտալիստական համակարգերի առավելությունները: Հիմնավորե՛ք սոցիալիստական համակարգի փլուզման օրինաչափությունը:
5. Լրացրե՛ք «Սոցիալիստական համակարգի երկրները» աղյուսակը:

Երկրներ	Տարեթվեր	Իրադարձություններ	Արդյունքներ (հետևանքներ)

§18. ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԸ

Գաղութային համակարգի փլուզման պատճառները և հետևանքները

Գաղութային համակարգն ստեղծվել էր XVI–XX դդ. ընթացքում՝ արևմտյան երկրների նվաճողական քաղաքականության հետևանքով: Համակարգի մեջ մտնող երկրները բաժանվում էին երեք խմբի:

Առաջին խումբը բուն գաղութներն էին, որոնք անմիջականորեն ենթակա էին մետրոպոլիային՝ գաղութատեր մայր երկրին: Դրանք կառավարվում էին մետրոպոլիայի նշանակված փոխարքայի, նահանգապետի կամ այլ աստիճանակարգ ունեցող պաշտոնյայի կողմից: Աշխարհի ամենամեծ գաղութային կայսրությունը, ինչպես նշել ենք, Մեծ Բրիտանիան էր (Հնդկաստանը, Բիրման, Քենիան, Նիգերիան, Ոսկե Ափը և այլն): Գաղութներ ունեին Ֆրանսիան (Կամբոջան, Վիետնամը, Լաոսը, Ալժիրը, Չադը, Մադագասկարը և այլն), Հոլանդիան (Ինդոնեզիան), Բելգիան (Կոնգոն), Պորտուգալիան (Անգոլան և Մոզամբիկը), Իտալիան (Էրիտրեան և Սոմալին), Ճապոնիան (Կորեան), Իսպանիան (Սահարայի մի մասը) և այլն:

Երկրորդ խումբը կազմում էին ենթահովանավորյալ պետությունները՝ պրոտեկտորատները: Ենթահովանավորյալ պետությունը պահպանում էր տվյալ պահին գոյություն ունեցող իր պետական կառույցները, սակայն ընդունում էր հովանավորող պետության «խորհուրդները» և ղեկավարվում դրանցով: Հովանավորող պետությունն իր վրա էր վերցնում ենթահովանավորյալ պետության պաշտպանության և անվտանգության «հոգսը»: Անգլիական պրոտեկտորատի կարգավիճակ ունեին Քուվեյթը, Եգիպտոսը (1914–1922թթ.), Հյուսիսային Ռոդեզիան, Ուգանդան և այլն: Ֆրանսիական պրոտեկտորատներ էին Թունիսը և Մարոկկոն:

Գաղութային կախվածության երրորդ խումբը կազմում էին ենթամանդատային տարածքները: Մանդատային կառավարման ձևը, ինչպես արդեն նշվել է, սահմանվել էր Ազգերի լիգայի կողմից: Իրաքի և Պաղեստինի կառավարման

Աշխատանք բրնձի դաշտում, Լաոս

Անկախության համար պայքարը Ալժիրում

մանդատը տրվեց Անգլիային, իսկ Սիրիայի և Լիբանանի մանդատը՝ Ֆրանսիային:

Գաղութների ժողովուրդները երկարատև ու համառ պայքար են մղել օտարերկրյա տիրապետության տապալման և ազգային անկախության նվաճման համար: Գաղութային համակարգը փլուզվեց միայն XX դարի երկրորդ կեսին: Դրան նպաստեցին գաղութային և կախյալ երկրներում ազատագրական ուժերի հասունացումը և ուժեղացումը, ֆաշիստական խմբավորման երկրների պարտությունը Երկրորդ աշխարհամարտում և նրանց՝ որպես գաղութատեր երկրների վերացումը, Ֆրանսիայի ռազմական պարտությունը և կապիտուլյացիան Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում, ամենահզոր գաղութային պետության՝ Բրիտանական կայսրության, թուլացումը պատերազմի ընթացքում, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի հակագաղութային արտաքին քաղաքականությունը: Այս երկու պետություններն էլ հանդես էին գալիս գաղութային համակարգը վերացնելու պահանջով: Այս բարենպաստ գործոնների շնորհիվ XX դարի 40-70-ական թվականներին վերջնականապես փլվեց գաղութային համաշխարհային համակարգը:

Համարյա ամբողջությամբ գաղութացված էր «սև» Աֆրիկան: XX դարի սկզբներին այնտեղ գտնվում էին մոտ 50 գաղութներ ու պրոտեկտորատներ և ընդամենը երկու անկախ պետություն՝ Եթովպիան և Լիբերիան:

Անկախացած աֆրիկյան երկրների դրոշների բարձրացումը ՄԱԿ-ի շենքի դիմաց, 1960 թ., սեպտեմբերի 30

Ազգային-ազատագրական պայքարը Կենտրոնական և Հարավային Աֆրիկայում ծավալվեց համեմատաբար ավելի ուշ՝ XX դարի 50-ական թվականների երկրորդ կեսին և մեծ թափ ստացավ 60-ական թվականներին: Աֆրիկյան երկրների համար առավել արդյունավետ եղավ 1960 թվականը, երբ միայն մեկ տարվա ընթաց-

քում քաղաքականապես անկախ դարձավ 17 երկիր: Այդ պատճառով 1960 թվականը համարվում է «Աֆրիկայի տարի»: Մնացած աֆրիկյան երկրներն ազատագրվեցին 1960–80-ական թվականներին: Դրանով վերացավ գաղութային համակարգը:

Նորանկախ ասիական երկրներից պետք է նշել Հնդկաստանը, Ինդոնեզիան, Բիրման, Վիետնամը, երկու Կորեաները, արաբական մի շարք երկրներ և այլն, իսկ աֆրիկյան պետություններից պետք է նշել Անգոլան, Գանան, Գվինեան, Բենինը, Տանզանիան, Կոնգոն, Կամերունը, Մալին, Չադը, Մադագասկարը, Զամբիան, Ուգանդան, Նիգերիան, Նիգերը, Ռուանդան, Բուրունդին, Դագոմեան, Սենեգալը, Գաբոնը, Բոտսվանան, Լեսոտոն և այլ երկրներ:

Գաղութային համակարգի կործանումն ունեցավ համաշխարհային-պատմական կարևոր նշանակություն և մեծ հետևանքներ:

Առաջին՝ Ասիայի և Աֆրիկայի նախկին գաղութները ազատագրվելով արևմտյան աշխարհակալ երկրների լծից, դարձան անկախ և ինքնիշխան պետություններ և համալրեցին անկախ պետությունների միջազգային համագործակցությունը: Եվ այսօր նրանք համաշխարհային կյանքի և իրադարձությունների ակտիվ մասնակիցներ են, ունեն իրենց սեփական ձայնը և ինքնուրույն որոշումներ ընդունելու իրավունք: Միջազգային կյանքի և իրողությունների ներկապնակն այժմ ավելի հարուստ և գունեղ է, քան էր մինչև գաղութային համակարգի փլուզումը:

Երկրորդ՝ Միավորված ազգերի կազմակերպությունը դադարեց պետությունների մի ոչ մեծ խմբի կազմակերպություն լինելուց, որը սկզբնական շրջանում անգամ չէր ընդգրկում մոլորակի ազգաբնակչության մեծամասնությունը, և դարձավ իրապես միջազգային կազմակերպություն: Դրա շնորհիվ էր, որ ՄԱԿ-ի անդամ պետությունների թիվը քառապատկվեց և հասավ մոտավորապես 200-ի, որն իրոք միավորում է բոլոր ազգերին:

Երրորդ՝ անկախության նվաճումը և նոր պետությունների հայտնվելը միջազգային ասպարեզում ազգերի ինքնորոշման իրավունքի հաղթանակն էր, որը սկզբունքորեն կարևոր նշանակություն ունի միջազգային իրավական նորմերի կիրառման և վիճելի հարցերը միջազգային իրավունքի հիմքի վրա ու նրա շրջանակներում լուծելու տեսանկյունից:

Եվ, վերջապես, չորրորդ՝ գաղութային համակարգի փլուզումը բացասական ծանր հետևանքներ ունեցավ արևմտյան նախկին գաղութատեր երկրների վրա, թուլացան նրանց միջազգային դիր-

քերը, ծագեցին նոր տնտեսական խնդիրներ, որոնք նախկինում հեշտությամբ լուծում էին՝ հենվելով իրենց գաղութների հարստության անխնա շահագործման վրա: Այժմ նրանք զուրկ են դրանից և այդ երկրները հարկադրված են հենվել առաջին հերթին սեփական ռեսուրսների վրա:

Երրորդ աշխարհի ձևավորումը

Սառը պատերազմի դարաշրջանում աշխարհը երկփեղկվեց, և ձևավորվեց միմյանց հակոտնյա երկու քաղաքական և ռազմական խմբավորումներ: Առաջինը Արևմտյան աշխարհն էր՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ, իսկ երկրորդը՝ սոցիալիստական աշխարհը՝ ԽՍՀՄ-ի գլխավորությամբ: Իրադրությունը կտրուկ փոխվեց, երբ կործանվեց գաղութային համաշխարհային համակարգը և քաղաքական ասպարեզում հայտնվեցին Ասիայի և Աֆրիկայի գաղութային տիրապետությունից ազատագրված և անկախություն նվաճած երկրները: Հենց նրանք էլ կազմեցին Երրորդ աշխարհը կամ նրա կորիզը, որին միացավ նաև Հարավային Ամերիկայի երկրների մեծ մասը: Այդ երկրների խմբավորումն այդ անունն ստացավ այն պատճառով, որ չէր ցանկանում մաս կազմել ոչ առաջին և ոչ էլ երկրորդ աշխարհին, հասկանալով, որ կախվածության մեջ կհայտնվի նրանցից: Երրորդ աշխարհի երկրները, որոնց գլխավորում էին Հնդկաստանը, Ինդոնեզիան, Եգիպտոսը և սոցիալիստական աշխարհից հեռացած Հարավսլավիան, ձգտում էին յուրատեսակ կամրջի դեր ստանձնել Առաջին և Երկրորդ աշխարհների միջև, դուռ բացել նրանց առջև երկխոսության համար, մեղմացնել և վերացնել միջազգային լարվածությունը, կանխել առճակատումը և նոր պատերազմի բռնկումը: Նրանք ցանկանում էին, որ արևմտյան և սոցիալիստական աշխարհները հարգեն Երրորդ աշխարհի իրավունքները՝ զարգանալու այն ուղիով, որը նրանք գերադասում էին:

Սակայն Երրորդ աշխարհը չուներ կուռ կառուցվածք և միասնական մեկ կազմակերպություն, որը նրա և Չմիացած երկրների շարժման ամենախոցելի կողմն էր:

Երրորդ աշխարհի երկրների ճնշող մեծամասնությունն այնուամենայնիվ կողմնորոշվում էր դեպի արևմտյան տնտեսական և քաղաքական համակարգի մոդելը: Աֆրիկյան որոշ ղեկավարներ ժխտում էին թե՛ սոցիալիստական և թե՛ կապիտալիստական ուղիները: Նրանք պաշտպանում էին զարգացման՝ աֆրիկյան յուրա-

հատուկ ուղու թեզը՝ հիմնված ազգային ավանդույթների և սովորույթների վրա: Մուսուլմանական մի շարք երկրներ նախընտրում էին զարգացման իսլամական մոդելը: Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի Երրորդ աշխարհին պատկանող մի խումբ երկրներ հայտարարում էին զարգացման ոչ կապիտալիստական ուղու ընտրման մասին, որի վերաբերյալ նրանց պատկերացումները շատ մշուշապատ էին և զուրկ հստակությունից:

«Չմիավորված երկրների» ղեկավարների հանդիպումը Հարավսլավիայում

Այնուհանդերձ, Երրորդ աշխարհի հայտնվելը նպաստեց լարվածության թուլացմանը, միջազգային հարաբերություններում երկխոսության ծավալմանը և խաղաղության ու համընդհանուր անվտանգության ամրապնդմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ է ձևավորվել գաղութային համակարգը: Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ ենք գաղութային համակարգի հանդես գալը համարել օրինաչափ երևույթ: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
2. Որո՞նք են գաղութային կախվածության տարատեսակները: Ձեր կարծիքով դրանցից ո՞րն էր նախընտրելի:
3. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ փլուզվեց գաղութային համակարգը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
4. Ո՞ր թվականն է կոչվում Աֆրիկայի տարի: Ինչո՞ւ է այդպես կոչվում: Ապացուցե՛ք, որ Աֆրիկայի գաղութային երկրների անկախացումով վերացավ համաշխարհային գաղութային համակարգը:
5. Ինչպե՞ս ձևավորվեց Երրորդ աշխարհը: Ի՞նչ նպատակներ էր հետապնդում այն: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը Երրորդ աշխարհի նկատմամբ:
6. Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էր պայմանավորված ազատագրված երկրների կողմնորոշման զարգացման ուղու ընտրությունը: Ձեր կարծիքով ո՞ր ուղին էր այն ժամանակ նախընտրելի անկա-

խացած երկրների համար: Կարո՞ղ եք պնդել, որ բոլոր անկախացած երկրներն ունեցել են ազատ ընտրության հնարավորություն: Հիմնավորեք ձեր պատասխանը:

7. Լրացրեք «Գաղութային համակարգի փլուզումը և հետևանքները» աղյուսակը:

Գաղութային կախվածության տեսակներ	**Գաղութատեր երկրներ**	**Գաղութային համակարգի մեջ մտնող երկրներ**	**Երրորդ աշխարհի երկրներ**
Բուն գաղութներ			
Ենթահովանավորյալ երկրներ (պրոտեկտորատներ)			
Ենթամանդատային տարածքներ			

§19. ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՂ ԱՐԵՎԵԼՔԸ

Արդիականացման չինական մոդելը

1946–1949 թթ. կոմունիստների և գոմինդանականների միջև պայքարը վերսկսվեց նոր ուժով: Կոմունիստները Մաո Ցզեդունի գլխավորությամբ գրավեցին Չինաստանի կարևոր կենտրոնները, իսկ 1949թ. հունվարի 31-ին մտան Պեկին: Չան Կայշին և գոմինդանականները փախան Թայվան կղզի, որտեղ նրանք հռչակեցին Չինական Դեմոկրատական Հանրապետությունը (ՉԴՀ):

Չինական Ժողովրդական Հանրապետության հռչակումը

1949թ. հոկտեմբերի 1-ին Պեկինի Տյանանմին հրապարակում հռչակվեց Չինական Ժողովրդական Հանրապետությունը: Առաջ քաշվեց «երկու Չինաստանների» տեսությունը:

ՉԺՀ-ում իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց կոմունիստական կուսակցությունը, որն իր առջև խնդիր էր դրել Չինաստանը կարճ ժամանակամիջոցում դարձնել ժամանակակից զարգացած արդյունաբերական երկիր:

Այդ նպատակով չինական ղեկավարությունը 1958թ. կեսերից անցավ «մեծ թռիչքի» քաղաքականության իրականացմանը: Բայց այդ ծրագիրը տապալվեց: Քաղցից և թերսնումից մահացավ մոտ 20 մլն մարդ: Իշխանություններն ստիպված էին հրաժարվել «մեծ թռիչքի» քաղաքականությունից:

«Մեծ թռիչքի» քաղաքականության ձախողումից հետո Մաո Ցզեդունը 1966թ. սկսեց այսպես կոչված՝ «կուլտուրական հեղափոխությունը»: Մի շարք բարձրաստիճան կուսակցական, պետական ու ռազմական գործիչների նկատմամբ կիրառվեց գյուղական վայրեր տեղափոխելու և «հասարակ ժողովրդի հսկողության տակ» աշխատեցնելու մեթոդը: Այդ գործում Մաո Ցզեդունը լայնորեն ներգրավեց երիտասարդությանը: Նրանց խմբերը, այսպես կոչված, «հունվեյրինները», դարձան, «մեծ նավավարի» հենարանը:

Մաո Ցզեդուն (1893–1976 թթ.)

Սկսվեց հալածանքը ղեկավար գործիչների, այդ

թվում՝ ՉԺՀ-ի նախագահ Լու Շաոցիի, կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Դեն Սյաոպինի և շատ ուրիշների դեմ: Երկրում առաջացավ խառնաշփոթ, որը շարունակվեց ընդհուպ մինչև Մաո Ցզեդունի մահը (1976թ. սեպտեմբերի 9): Դրանից հետո իշխանությունն անցավ Չինաստանի կոմունիստական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Դեն Սյաոպինի ձեռքը:

Դեն Սյաոպինն ու նրա համախոհները որդեգրեցին իրատեսական քաղաքականություն՝ Չինաստանը ծանր տնտեսական վիճակից և քաղաքական մեկուսացումից դուրս բերելու համար: Առաջ քաշվեց մի ծրագիր, որն ստացավ «Չորս մոդեռնիզացիա» անվանումը: Նախատեսվում էր ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումների հիման վրա արդիականացնել երկրի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը և պաշտպանունակությունը: Դա կիրառվեց հետևողականորեն և տվեց փայլուն արդյունքներ: Գյուղում վերացվեցին իրենց չարդարացրած կոմունաները: Արդյունաբերության բնագավառում զգալի ազատություն տրվեց պետական ձեռնարկություններին: Խրախուսվեցին նաև ազատ ձեռներեցությունն ու փոքր ծավալի մասնավոր սեփականությունը: Արտասահմանյան ներդրողներին հրապուրելու նպատակով Չինաստանում ստեղծվեցին ազատ տնտեսական գոտիներ:

Դեն Սյաոպին

Արագ տեմպերով զարգացան արդյունաբերության այնպիսի առաջատար և արդիական ուղղություններ, ինչպես մեքենաշինությունը, էլեկտրոնիկան, ավտոմոբիլային արդյունաբերությունը, ռազմական արդյունաբերությունը, ատոմային էներգետիկան (դեռևս 1964թ. Չինաստանն ստեղծել էր ատոմային զենք), սարքաշինությունը և այլն: Այս բոլորի շնորհիվ տեղի ունեցավ Չինաստանի տնտեսության ոչ միայն վերելք սովորական առումով, այլև արդիականացում, բարձրացավ մարդկանց կենսամակարդակը: Ի վերջո, Չինաստանը լուծեց սեփական պարենով իրեն ապահովելու դժվարագույն խնդիրը, իսկ ապա՝ նաև արտահանմանը:

Այրոմակայանի կառուցումը Չինաստանում

Վերջին տարիներին Չինաստանի ղեկավարությանը մեծապես անհանգստացնում է երկրի արևմտյան շրջաններում բնակվող մի քանի միլիոն էթնիկ թուրքերի՝ ույղուրների հարցը: Այստեղ ծավալվել է այսպես կոչված Արևելյան Թուրքեստանի անկախության շարժումը (ԱԹԱՇ): Այդ շարժման գլխավոր հրահրողը Թուրքիան է, որտեղ և տեղակայված է ԱԹԱՇ-ի շտաբ-կայանը:

Այժմ ավելի քան, երբևէ ամրապնդվել են Չինաստանի միջազգային դիրքերը, ընդլայնվել են առևտրատնտեսական հարաբերությունները արևմտյան պետությունների հետ, որոնք շահագրգռված են չինական շուկայով և ապրանքներով:

Ճապոնիայի թռիչքաձև զարգացումը

Պատմության պարադոքսներից մեկն այն է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տնտեսապես քայքայված և կործանման եզրին կանգնած Ճապոնիան կարողացավ ավելի արագ վերականգնվել, քան հաղթանակած երկրներից շատ-շատերը: Դեռ ավելին. նրա վերաբերյալ կիրառվեց «ճապոնական հրաշք» եզրը:

Դրան նպաստեցին մի շարք գործոններ: Ճապոնիան նախևառաջ ապառազմականացվեց և խիստ կրճատվեցին նրա ռազմական ծախսերը: Տնտեսված միլիարդավոր դոլարները կառավարությունն ուղղեց տնտեսության ոլորտը:

Դրա շնորհիվ Ճապոնիան կարողացավ հաղթահարել հետպատերազմյան դժվարությունները և թևակոխեց տնտեսության և հասարակության արդիականացման փուլը: Սյուս գործոնն արդիականացման ոլորտում գիտական հայտնագործությունների ներդրում էր և տնտեսության, կրթության ու գիտության վերակառուցման իրականացումը ամենաբարձր տեխնոլոգիաների հիման վրա:

Զարգացման բարձր տեմպերով Ճապոնիան մրցակցությունից դուրս էր: Նրա տնտեսության գլխավոր ճյուղը դարձավ արդիականացված արդյունաբերությունը՝ էլեկտրոնային, ավտոմեքենաների արտադրությունը, որոնք ողողել են ամբողջ աշխարհը:

Ճապոնական ավտոմեքենա, 1960-ական թթ.

Այժմ Ճապոնիան ընդհանուր ցուցանիշներով համարվում է աշխարհի երրորդ կենտրոնը,

Ճապոնական Սահմանադրության ընդունումը, 1947թ.

գիջելով ԱՄՆ-ին և Եվրամիությանը, սակայն նրանց ևս գերազանցելով առանձին ճյուղերում:

Իսկ ինչ վերաբերում է հասարակական-քաղաքական արդիականացմանը, ապա ընդունվեց նոր Սահմանադրություն, որը սահմանափակեց միկադոյի՝ կայսրի լիազորությունները, ընդլայնելով կառավարության՝ որպես միակ գործադիր մարմնի իրավասությունները: Բարձրացավ նաև երկպալատանի պառլամենտի հեղինակությունը: Ակտիվացել է հասարակական, ոչ կառավարական զանազան կազմակերպությունների գործունեությունը: Միաժամանակ ճապոնացիները՝ թե իշխանությունները և թե հասարակությունը, շատ զգայուն են իրենց ազգային ավանդությունների և սովորությունների պահպանման հարցում:

Հնդկաստանի արդիականացման գործընթացը

Պատերազմից հետո Հնդկաստանի բնակչության և քաղաքական ուժերի համար գլխավոր խնդիրը դարձավ անկախության պահանջը:

Անգլիան, որն այլևս չէր կարող պահպանել իր տիրապետությունը Հնդկաստանում, հարկադրված էր նրա տարածքի վրա ճանաչել երկու անկախ պետություն:

1947թ. օգոստոսի 15-ին հռչակվեց Հնդկաստան և Պակիստան պետությունների ստեղծումը դոմինիոնի կարգավիճակով: 1950թ. Հնդկաստանը դարձավ լրիվ անկախ պետություն: Հնդկաստանի առաջին վարչապետ դարձավ Ազգային կոնգրես կուսակցության ղեկավար Ջավահարլալ Ներուն: Նա Հնդկաստանի կառավարությունը ղեկավարեց 17 տարի:

Հնդկաստանի ղեկավարների պատրաստվելը Բրիտանիայից իշխանության ստանձնմանը, 1947 թ. օգոստոսի 15-ից 11 օր առաջ

Անկախ Հնդկաստանը գաղութային շրջանից ժառանգել էր թույլ զարգացած և հետամնաց տնտեսություն: Ներուն ձգտում էր կառուցել ժամանակակից

հասարակություն և Հնդկաստանը վերածել բարձր զարգացած արդ-յունաբերական երկրի:

Ներուն Չմիավորված երկրների շարժման հիմնադիրներից էր, որը դրականորեն ազդեց միջազգային քաղաքական մթնոլորտի վրա:

Հնդկաստանի անկախության հռչակումը, 1950 թ. հունվարի 26

Ջավահարլալ Ներուն մահացավ 1964թ.: 1966թ. վարչապետ դարձավ նրա դուստրը՝ Ինդիրա Գանդին: Նա շարունակեց իր հոր ներքին և արտաքին քաղաքականությունը: Նրա օրոք լայն թափ ստացան սոցիալ-տնտեսական բարեփոխումները:

Այս շրջանում խիստ սրվեցին կրոնաէթնիկական հարցերը: Իրենց ուրույն դավանանքն ունեցող սիկխերը պահանջում էին ստեղծել ինքնուրույն պետություն՝ Խալիստան: Ինդիրա Գանդին ճնշեց սիկխերի ապստամբությունը: 1984թ. օգոստոսին նա սպանվեց իր երկու սիկխ թիկնապահների ձեռքով: Դա ցնցեց ողջ Հնդկաստանը: 1984–1989թթ. վարչապետի պաշտոնում իր սպանված մորը փոխարինեց Ներուի թոռ Ռաջիվ Գանդին: 1991թ. նա ևս դարձավ սիկխերի վրեժխնդրության զոհը: Դրանով ավարտվեց մոտ 40 տարի տևած՝ Ներուի «դինաստիայի» կառավարման շրջանը:

1990-ական թվականներին Հնդկաստանը զգալի հաջողությունների հասավ տնտեսության զարգացման և արդիականացման, սոցիալական բարեփոխումների խորացման և դեմոկրատիայի ընդլայնման բնագավառում: Հողային բարեփոխումների շնորհիվ զարգացավ գյուղատնտեսությունը:

Ինդիրա Գանդի (1917–1984 թթ.)

Մեծ զարգացում ապրեց արդյունաբերությունը, ստեղծվեցին այնպիսի ճյուղեր, ինչպես մեքենաշինությունը, լեռնահանքային արդյունաբերությունը և մետաղաձուլությունը, էլեկտրոնիկան, քիմիական և թեթև արդյունաբերությունը, դեղագործությունը: Տնտեսության մեջ զգուշորեն ներդրվեց նաև պլանային ու ծրագրավորման սկզբունքը՝ երկրի զարգացման տեմպերը սահմանվում են ըստ հնգամյա պլանների:

Հնդկաստանն ունի սեփական ատոմային զենքը, բարձր որակավորման մասնագետների՝ ինժեներների, տեխնիկների և այլ պրոֆեսիոնալների

հզոր բանակ: Այսօր Հնդկաստանը տեղեկատվական տեխնոլոգիաների միջազգային հեղինակավոր կենտրոններից է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞վքեր հաղթեցին 1946–1949 թթ. քաղաքացիական կռիվներում: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը այդ կռիվների նկատմամբ:
2. Ի՞նչ նպատակ էր հետապնդում «մեծ թռիչքի» քաղաքականությունը: Ձեր կարծիքով ինչո՞ւ այն ձախողվեց և ի՞նչ հետևանքներ ունեցավ:
3. Ո՞րն էր Մաո Ցզեդունու հռչակած «կուլտուրական հեղափոխության» էությունը: Ձեր կարծիքով կարելի՞ է այն համարել բռնությունների քաղաքականություն: Հիմնավորեք ձեր տեսակետը: Որո՞նք են «կուլտուրական հեղափոխության» հետևանքները:
4. Ո՞ւմ անվան հետ էր կապված «Չորս մոդեռնիզացիայի» ծրագիրը: Փորձեք բնութագրել այդ ծրագիրը: Ձեր կարծիքով ինչո՞վ էր պայմանավորված «Չորս մոդեռնիզացիայի» հաջողությունը: Հիմնավորեք ձեր պատասխանը:
5. Որո՞նք են Չինաստանի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները և յուրահատկությունները: Ինչպե՞ս կարող եք բնութագրել ժամանակակից Չինաստանը:
6. Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էր պայմանավորված Ճապոնիայի «տնտեսական հրաշքը»: Փորձեք գնահատել նրա տնտեսական ձեռբերումները: Որո՞նք են Ճապոնիայի հասարակական-քաղաքական կյանքի արդիականացման բնորոշ գծերը: Ձեր կարծիքով քաղաքական կյանքի արդիականացումը որքա՞նով էր կապված տնտեսական թռիչքի հետ: Հիմնավորեք ձեր պատասպանը:
7. Ե՞րբ է Հնդկաստանը դարձել լրիվ անկախ պետություն: Փորձեք ցույց տալ Ներուի «դինաստիայի» ներկայացուցիչների դերը Հնկաստանի զարգացման և մոդեռնիզացման գործում:
8. Ի՞նչ եք կարծո՞ւմ արդյոք ընդունելի է այն ենթադրությունը, ըստ որի Հնդկաստանը XXI դարում ունի զարգացման մեծ հեռանկար: Ի՞նչ գործոններ կարող են թույլ տալ նման տեսակետ հայտնելու համար:
9. Լրացրեք «Արդիականցող Արևելքը» աղյուսակը:

Երկրներ	Գործիչներ	Ձեռնարկված միջոցառումներ	Արդյունքներ
Չինաստան			
Ճապոնիա			
Հնդկաստան			

§20. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Իրան

1945թ. Իրանական Ադրբեջանում և Իրանական Քրդստանում ինքնավարության համար շարժումները պսակվեցին հաղթանակով: Նշված երկրամասերում կազմավորվեցին ազգային կառավարություններ:

Իրանի կառավարությունը հարկադրված էր սկզբնական շրջանում հաշտվել ադրբեջանական և քրդական ինքնավարությունների գոյության հետ: Սակայն 1946թ. դեկտեմբերին կառավարական զորքերը ներխուժեցին Իրանական Ադրբեջան և վերջ տվեցին նրա ինքնավարությանը: Մինչև տարվա վերջ ջախջախվեց նաև քրդական ինքնավարական շարժումը:

1950-ական թվականներին Իրանում ուժեղացավ պայքարը նավթային արդյունաբերության ազգայնացման համար: Այդ շարժումը գլխավորեց Ազգային ճակատը, որը հիմնել էր դոկտոր Մոհամմեդ Մոսադեղը:

1951թ. մարտի 15-ին Իրանի պառլամենտը (մեջլիս) ընդունեց օրենք Իրանի նավթարդյունաբերության ազգայնացման մասին: Ապրիլի 29-ին դոկտոր Մոսադեղը կազմեց իր կառավարությունը և ձեռնամուխ եղավ այդ օրենքի կենսագործմանը: Նա ցանկանում էր նավթից ստացվող եկամուտներն օգտագործել Իրանի տնտեսության զարգացման, ժողովրդի վիճակի բարելավման և սոցիալական բարեփոխումների համար: Այդ հողի վրա խիստ սրվեցին հարաբերությունները վարչապետ Մոսադեղի և երիտասարդ շահի՝ Մոհամմեդ Ռեզա Փահլավիի միջև: Շահին հավատարիմ զորամասերը, ԱՄՆ-ի աջակցությամբ, նույն տարվա օգոստոսի 19-ին կատարեցին պետական հեղաշրջում: Մոսադեղի կառավարությունը տապալվեց, իսկ Մոսադեղը ձերբակալվեց և բանտ նետվեց:



Մոհամեդ Ռեզա շահի ելույթը «Սպիտակ» հեղափոխության սկզբունքների վերաբերյալ

Երկրի տնտեսությունը շարունակում էր մնալ անմխիթար վիճակում: Երկրում կուտակված դժգոհությունը գնալով աճում էր: Այն կանխելու նպատակով շահը և կառավարող վերնախավը որոշեցին կիրառել բարեփոխումների մի ամբողջ ծրագիր, որն ստացավ «Սպիտակ» հեղափոխություն անվանումը:

Հեղափոխական շարժումը Իրանում

Բարենորոգումների սկիզբն ազդարարվեց 1961թ: Բարեփոխումների արդյունքում հող ստացավ մոտ 4,3 մլն գյուղացի: Ավելի ակնառու էին հաջողությունները կրթության ոլորտում: 1974թ. Իրանում գործում էր մոտ 150 բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 123 հազար ուսանողով:

Իրագործվեցին նաև ջրային պաշարների ազգայնացումն ու զարգացումը: Ընդունվեցին քաղաքների և գյուղական վայրերի վերակառուցման ծրագրեր և այլն:

1970-ական թվականների վերջերին Իրանում ամենաազդեցիկ ուժը դարձավ մուսուլմանական հոգևորականությունը՝ հայտնի կրոնական գործիչ այաթոլլահ Խոմեյնիի գլխավորությամբ: 1978թ. հունվարին սկսվեցին հակաշահական ցույցերը: Պայքարը ծավալվեց ու ընդգրկեց ամբողջ երկիրը: 1979թ. հունվարի 16-ին շահն իր ընտանիքով ընդմիշտ հեռացավ Իրանից: Փետրվարի 1-ին Փարիզից հաղթականորեն Թեհրան վերադարձավ այաթոլլահ Խոմեյնին: Նա իր հայրենակիցներին կոչ արեց տապալել միապետությունը: Իրանական հեղափոխությունը հաղթանակեց: 1979թ. ապրիլի 1-ին հռչակվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ): Քաղաքական իշխանությունը երկրում անցավ բարձրագույն հոգևորականության ձեռքը: Իրանում հաստատվեց մուլլոկրատիա՝ մոլլաների իշխանություն:



Այաթոլլահ Խոմեյնիի վերադարձը Իրան

1979թ. դեկտեմբերին անցկացված հանրաքվեն հավանություն տվեց Իրանի Սահ-

մանադրությանը: Գերագույն իշխանությունը պատկանում է ֆակիհին՝ Ղուրանի և մուսուլմանական օրենսդրության՝ շարիաթի լավագույն գիտակ և մեկնաբան հոգևոր առաջնորդին: Իրանը վերածվեց թեոկրատական պետության (աստվածապետություն):

Տեսարան Իրան-իրաքյան պատերազմից

Հեղափոխությունից հետո սրվեցին հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: ԱՄՆ-ը հռչակվեց «սև շեյթան» (սատանա):

Դրամատիկ բնույթ ընդունեցին Իրան-իրաքյան հարաբերությունները: 1980թ. աշնանն Իրանը և Իրաքը ներգրավվեցին երկարատև ու արյունալի պատերազմի մեջ, որն ավարտվեց 1988թ.:

Իրանի նորընտիր նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին մեծ ջանքեր գործադրեց պատերազմից տուժած Իրանի տնտեսությունը զարգացնելու և արդիականացնելու ուղղությամբ: Այդ գիծն ավելի հետևողականորեն է անցկացնում 1997թ. Իրանի նախագահ ընտրված Մոհամմեդ Խաթամին, որի քաղաքականությունը հանդիպեց հոգևորականության սուր դիմադրությանը: Նրան 2005թ. փոխարինեց Ահմադի Նեջադը, որն այդ պաշտոնում վերընտրվեց նաև 2009թ.: Նա ներքին քաղաքականության բնագավառում կոշտ քաղաքականության կողմնակից է: Ահմադի Նեջադը, հակառակ ԱՄՆ-ի և արևմտյան երկրների ճնշմանը, զարկ տվեց ատոմային էներգիայի արտադրությանը և Իրանը Հայաստանից հետո դարձավ երկրորդ պետությունը, Մերձավոր և Միջին Արևելքում, որն ունի ատոմակայան:


Մոհամմեդ Խաթամի

Իրանը 1991թ. դեկտեմբերի 25-ին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Իսկ 1992թ. փետրվարին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նրանց միջև: Իրանա-հայկական համագործակցությանն ընդգրկում է քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային ոլորտները:

2013թ. Իրանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ և Իրանի պրեզիդենտ ընտրվեց Ռուհանին: Նրա պաշտոնի ստանձնման արարողությանը ներկա էր նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Թուրքիան

Հետպատերազմյան առաջին տարիներին Թուրքիան գտնվում էր ծանր վիճակում: Կյանքի դժվարին պայմանները, կոռուպցիան և կամայականությունները դարձել էին սոցիալական դժգոհությունների պատճառ: Այդ իրադրության պայմաններում 1950թ. մայիսին Թուրքիայում տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաղթեց դեմոկրատական կուսակցությունը: Թուրքիայի նոր նախագահ ընտրվեց ԴԿ-ի առաջնորդ Ջելալ Բայարը: Իսկ Ադնան Մենդերեսն ստանձնեց վարչապետի պաշտոնը:

Հեղաշրջումը Թուրքիայում, 1960 թ. մայիս

Չնայած որոշ նորամուծություններին՝ Մենդերեսի կառավարությունը երկիրը հասցրել էր տնտեսական և քաղաքական ճգնաժամի: Դժգոհությունը համակել էր անգամ բուրժուազիայի և կալվածատերերի որոշ շրջանների: 1960թ. մայիսի 27-ին թուրք զինվորականները գեներալ Գյուրսելի գլխավորությամբ, «երկիրը կործանումից փրկելու նպատակով», կատարեցին պետական հեղաշրջում:

1961թ. մայիսի 27-ին ընդունվեց նոր Սահմանադրություն, իսկ նոյեմբերին Գյուրսելն ընտրվեց նախագահ: 1965թ. կայացան մեջլիսի հերթական ընտրություններ: Տեղերի բացարձակ մեծամասնությունը շահեց Արդարության կուսակցությունը, որի ղեկավար Սուլեյման Դեմիրելը կազմեց նոր կառավարություն: Նոր իշխանությունները ևս ի վիճակի չեղան երկիրը դուրս բերել տնտեսական և քաղաքական ճգնաժամից:

1970-ական թվականների երկրորդ կեսին կրկին սրվեց ներքաղաքական իրադրությունը Թուրքիայում: Սպառնալի չափեր ընդունեց ահաբեկչությունը: Անհանգիստ էր վիճակը նաև քրդաբնակ վայրերում, որտեղ զինված բախումները դարձել էին սովորական երևույթ:

1980թ. սեպտեմբերի 12-ին զինվորականները կատարեցին նոր պետական հեղաշրջում և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Հեղաշրջումը ղեկավարեց թուրքական բանակի շտաբի պետ, գեներալ Քենան Էվրենը: Ստեղծվեց Ազգային անվտանգության խոր-

հուրդ (ԱԱԽ)՝ Էվրենի գլխավորությամբ:

Պետական հեղաշրջումից հետո, դիմելով ժողովրդին, Էվրենը շարադրեց իր ծրագիրը՝ երաշխավորել սոցիալական հաշտություն, իրագործել սոցիալական արդարություն, վերահաստատել քաղաքացիական կառավարում, երբ դրա հնարավորությունն ստեղծվի, և այլն: 1983թ. Թուրքիայում վերականգնվեցին քաղաքացիական իշխանությունները: Գեներալ Էվրենը յոթ տարի ժամանակով զբաղեցրեց Թուրքիայի նախագահի պաշտոնը:

Թուրք զինվորները Կիպրոսում

1989թ. «Մայր Հայրենիք» կուսակցության ղեկավար Թուրգուտ Օզալն ընտրվեց Թուրքիայի նախագահ: 1991թ. հոկտեմբերի 20-ին կայացած պառլամենտական ընտրություններում առավելության հասավ «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը: Նրա ղեկավար Սուլեյման Դեմիրելը կազմեց կոալիցիոն կառավարություն: 1993թ. մայիսին, Օզալի մահից հետո, Դեմիրելն ընտրվեց նախագահ: Վարչապետ դարձավ Թանսու Չիլլերը: Թուրքիան պաշտոնապես համարվում է աշխարհիկ պետություն: Սակայն 1990-ական թվականներին Թուրքիայում նկատվեց իսլամական ուժերի աշխուժացում և նրանց ազդեցության զգալի աճ: Դա կատարվում էր երկրում կուտակված բազմաթիվ լուրջ խնդիրների ընդհանուր ֆոնի վրա: Թուրքիայի ներքաղաքական կյանքի ամենասուր խնդիրներից մեկը դարձավ քրդական հարցը: Մոտ 20 մլն կազմող քրդերը պայքարում են իրենց ազգային իրավունքների ճանաչման համար: Այդ պայքարն ուժեղացավ 1980-90-ական թվականներին, Քրդական բանվորական կուսակցության ստեղծումից հետո, որը գլխավորում էր Աբդուլահ Օջալանը (Ապոն): Թուրքական իշխանություններն իսկական պատերազմ են մղում քրդերի դեմ: 1999թ. փետրվարին հաջողվեց ձերբակալել և մահվան դատապարտել Օջալանին՝ նրան մեղադրելով «դավաճանության» և թուրքական պետության մասնատման մեջ: Նա մինչև

Գեներալ Քենան Էվրեն

Աբդուլահ Օջալանի ձերբակալումը

Սուլեյման Դեմիրել

այժմ գտնվում է բանտում:

1991թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, սակայն հրաժարվում է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար, որպես նախապայմաններ, Թուրքիան Հայաստանից պահանջում է հրաժարվել 1915թ. ցեղասպանության ճանաչման պահանջներից և Արցախի արդարացի պայքարը պաշտպանելուց: Հայաստանը մերժում է այս բոլոր նախապայմանները:

Ներկայումս Թուրքիան ակտիվացրել է իր քաղաքականությունն Անդրկովկասում և Միջին Ասիայում: Պանթուրքիզմը կրկին բարձրացվել է պետական քաղաքականության մակարդակի: Այն իր սուր ծայրով ուղղված է Ռուսաստանի, Հայաստանի, Իրանի, ինչպես նաև արաբական երկրների դեմ և մեծ վտանգ է ներկայացնում նրանց համար:

2002թ. իշխանության գլուխ եկավ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը՝ Ռեջեպ Էրդողանի գլխավորությամբ, որն արդեն տասը տարուց ավելի է, ինչ իր ձեռքում է պահում երկրի կառավարման ղեկը:

Արաբական աշխարհի զարգացման միտումները

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կազմավորվեց 21 անկախ արաբական պետություն՝ Պարսից ծոցից մինչև Ատլանտյան օվկիանոս ընկած տարածքի վրա: Նրանք դարձան միջազգային հարաբերությունների կարևոր գործոն, և աճեցին նրա դերն ու կշիռը համաշխարհային

Լիբանանի և Սիրիայի մանդատի հանձնումը Ֆրանսիային. Սան-Ռեմոյի կոնֆերանսը, 1920 թ.

քաղաքականության մեջ:

Արաբական աշխարհը հարուստ է նավթի վիթխարի պաշարներով և նավթի արդյունահանման համաշխարհային կենտրոններից մեկն է: Նավթի պաշարներով հարուստ են Սաուդյան Արաբիան, Իրաքը, Քուվեյթը, Լիբիան, Կատարը, Բահրեյնը: Նրանք Նավթ արտահանող երկրների կազմակերպության /OPEC/ անդամ են:



Նավթի բեռնումը, Քուվեյթ

Նավթից ստացվող առասպելական ֆինանսական միջոցների զգալի մասն օգտագործում են տնտեսության արդիականացման, արդյունաբերական ժամանակակից ճյուղերի զարգացման, ժամանակակից բանկային համակարգի զարգացման, տնտեսության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, գիտական և կրթական արդիական կենտրոնների ստեղծման համար: Եվ պետք է նշել, որ նրանցից շատերն այդ բնագավառներում արձանագրել են տպավորիչ նվաճումներ:

Անկախության տարիներին արաբական երկրներում ընթանում էին բուռն քննարկումներ զարգացման ուղիների ընտրության հարցում: Այնպիսի երկրներ, ինչպես Եգիպտոսը, Իրաքը, Սիրիան, Ալժիրը, Եմենը, Լիբիան և այլն, ընտրեցին զարգացման սոցիալիստական կողմնորոշման ուղին: Զգալի թվով երկրներ նախապատվությունը տվեցին զարգացման արևմտյան, այսինքն կապիտալիստական ուղուն: Արաբական երկրների մի խումբ էլ մերժեց վերոնշյալ երկու ուղղություններն էլ և նախապատվությունը տալիս է ավանդական և իսլամական ուղուն, անգամ շրջանառության մեջ դրվեց Իսլամական սոցիալիզմ եզրը: Այդ ուղղությունը գլխավորում էր Սաուդյան Արաբիան, որի Սահմանադրությունը պաշ-

Իսրայելի անկախության հռչակումը

Պաղեստինյան երեխաները փախստականների համար նախատեսված դպրոցում

տոնապես համարվում է մուսուլմանների սրբազան գիրքը՝ Ալ Կորանը:

Բայց արաբական աշխարհում կա մի հարց, որը հավասարապես հուզում է բոլոր երկրներին և ուժերին: Դա «պաղեստինյան թնջուկն» է: ՄԱԿ-ի որոշման համաձայն՝ 1948թ. մայիսի 14-ին պաշտոնապես հռչակվեց անկախ հրեական պետությունը՝ Իսրայելը: Արաբական երկրները պատերազմական գործողություններ սկսեցին Իսրայելի դեմ: Այսպես առաջացավ Պաղեստինի հիմնախնդիրը, որը դարձավ արաբա-իսրայելական առճակատման և պատերազմների պատճառը: Պաղեստինյան հիմնախնդիրը, որը գոյություն ունի 1947 թվականից, ավելի քան 65 տարի, այդպես էլ չի լուծվել:

Ինչ վերաբերում է արաբական երկրների կողմնորոշմանը, ապա պետք է փաստել, որ վերոնշյալ երեք տարբերակներից և ոչ մեկը մինչև օրս չի իրականացվել: Ուստի զարգացման ուղիների կամ մոդելի հարցը շարունակում է մնալ օրակարգում:

2011-2012 թթ. սկիզբ առավ արաբական աշխարհի արդիականացման շարժումը, որը նաև հորջորջվեց «Արաբական գարուն», թեև այն տարվա եղանակների հետ որևէ առնչություն չուներ: Նա համակեց արաբական բոլոր երկրները՝ թե՛ Մաշրիկը և թե՛ Մաղրիբը: Նրա հիմնական նպատակն էր վերակառուցել և արդիականացնել արաբական հասարակությունը, պետական, կառավարական, վարչական, տնտեսական, մշակութային ողջ համակարգը:

«Արաբական գարուն» շարժման մասնակիցները

Արաբական աշխարհում ծավալված արդիականացման շարժմանն ակտիվորեն միջամտում են արևմտյան երկրները, մասնավորապես ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ

Բրիտանիան, ջանալով այդ շարժմանը տալ իրենց համար ընդունելի ուղղվածություն և իշխանության աթոռին նստեցնել իրենց մարդկանց: Խիստ բացասական դեր է կատարում Թուրքիան:

Արդիականացումը բարդ գործընթաց է, որը պահանջում է երկար ժամանակ և համառ պայքար: Եվ արդիականացման համար պայքարն այսօր արաբական աշխարհում շարունակվում է:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչ ավարտ ունեցան ինքնավարական շարժումներն Իրանում: Փորձեք գնահատել դրանք:
2. Իրանում ո՞վ հաղթեց վարչապետ-շահ հակամարտությունում: Ո՞ւմ կողմն է ձեր համակրանքը: Ինչ անվանումով էին հայտնի 1960-1970-ական թթ. բարեփոխումները: Ո՞րն էր այդ բարեփոխումների հիմնական բովանդակությունը: Ըստ ձեզ ինչն էր անընդունելի դրանցում և ինչու՞:
3. Ե՞րբ է տեղի ունեցել իրանական հեղափոխությունը: Ձեր կարծիքով արդյոք օրինաչափ էր այդ հեղափոխությունը: Որո՞նք են իրանական հեղափոխության արդյունքները:
4. Ձեր կարծիքով Իրան-իրաքյան պատերազմը լուծե՞ց կողմերի միջև ծագած հիմնախնդիրները: Փորձե՛ք գնահատել հետպատերազմյան շրջանում Իրանի արդիականացման ուղղությամբ իշխանությունների գործադրած ջանքերը: Ինչպե՞ս կարող եք բնութագրել հայ-իրանական հարաբերությունները:
5. Որո՞նք էին Թուրքիայի հետպատերազմյան առաջին տարիներին սոցիալական դժգոհության պատճառները: Ձեր կարծիքով Մենդերեսի գլխավորած կառավարությունն ի վիճակի՞ էր լուծելու երկրում կուտակված հիմնախնդիրները:
6. Ե՞րբ է տեղի ունեցել գեներալ Գյուրսելի զինվորական հեղաշրջումը: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
7. Ինչ դեր խաղաց գեներալ Էվրենի գլխավորած պետական հեղաշրջումը Թուրքիայի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի հետագա ընթացքի վրա: Ձեր կարծիքով ինչ ձեռբերումներ և բացթողումներ ունեցան թուրքական քաղաքացիական իշխանությունները:
8. Ինչ եք կարծում, որոնք են ժամանակակից Թուրքիայի ներքաղաքական կյանքի ամենասուր հիմնահարցերը: Ինչ միջոցներով են թուրքական իշխանությունները փորձում լուծել դրանք:
9. Ինչ ուղղվածություն ունի Թուրքիայի արտաքին քաղաքականությունը մեր օրերում: Ձեր կարծիքով ինչն է խանգարում հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Ինչպիսի՞ն է

ձեր վերաբերմունքը թուրքերի առաջ քաշած նախապայմանների վերաբերյալ: Ձեր կարծիքով այդ նախապայմանների ընդունումը ինչ հետևանքներ կարող է ունենալ ՀՀ-ի համար:

10. Ձեր կարծիքով անկախացումից հետո ինչը հնարավորություն տվեց արաբական երկրներին դառնալու միջազգային հարաբերությունների կարևոր գործոն: Ինչու՞ արաբական պետություններն ընտրեցին զարգացման տարբեր ուղիներ: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

11. Երբ է սկսվել արաբական աշխարհի արդիականացման շարժումը: Ձեր կարծիքով ճի՞շտ էր այն արդիականացման շարժում համարելը: Ինչու՞ այդ շարժումն ընդգրկեց արաբական երկրները: Փորձե՛ք պարզել՝ հիմնականում ինչն էր ընդհանուր արաբական երկրների համար:

Լրացրե՛ք «Մերձավոր և Միջին Արևելքի երկրները» աղյուսակը.

Տարեթվեր	Իրադարձություններ	Արդյունքներ (հետևանքներ)

§21. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Միավորված ազգերի կազմակերպությունը

Վաղուց արդեն իրեն սպառած Ազգերի լիգայի լուծարումից հետո 1945 թ. ստեղծվեց միջազգային նոր կառույց՝ Միավորված ազգերի կազմակերպությունը:

ՄԱԿ-ի հիմնադիր համագումարը բացվեց 1945թ. ապրիլի 25-ին, ամերիկյան Սան Ֆրանցիսկո քաղաքում: Նրա աշխատանքներին մասնակցում էին 50 պետությունների ներկայացուցիչներ: Համաժողովն ավարտվեց 1945թ. հունիսի 26-ին, երբ ընդունվեց ՄԱԿ-ի Կանոնադրությունը: Այն ուժի մեջ մտավ 1945թ. հոկտեմբերի 24-ին՝ ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի և անդամ պետությունների մեծ մասի կողմից նրա վավերացումից հետո: Հոկտեմբերի 24-ը յուրաքանչյուր տարի նշվում է որպես ՄԱԿ-ի օր:

ՄԱԿ-ի հիմնական մարմիններն են՝ Գլխավոր ասամբլեան, Անվտանգության խորհուրդը, Տնտեսական և սոցիալական խորհուրդը, Խնամակալության խորհուրդը, Միջազգային դատարանը և Քարտուղարությունը:

Գլխավոր ասամբլեայի նիստերը գումարվում են ամեն տարվա սեպտեմբեր ամսին: Այդ մարմինն օժտված է քննարկելու այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ նոր անդամների ընդունումը, պետությունների համագործակցությունը քաղաքական, տնտեսական, սոցիալական, հումանիտար, մշակութային այլ մարզերում, խաղաղության և պատերազմի հարցեր և այլն:

ՄԱԿ-ի կարևորագույն մարմինը Անվտանգության խորհուրդն է, որը, համաձայն ՄԱԿ-ի Կանոնադրության, «կրում է միջազգային խաղաղության և անվտանգաթյան պահպանման գլխավոր պատասխանատվությունը»: Այն կազմված է 5 մշտական և 10 ոչ մշտական անդամներից: Մշտական անդամներն են՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը (նախկին ԽՍՀՄ-ի փոխարեն), Չինաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: Հարցերի ընդունումը հիմնված է «հինգ մշտական անդամներ» միաձայնության սկզբունքի վրա: Եթե նրանցից մեկը դեմ է քվեարկում, օգտվելով վետոյի իր իրավունքից, ապա հարցը չի ընդունվում:

ՄԱԿ-ի զինանշանը

Քարտուղարությունը բաղկացած է Գլխավոր քարտուղարից և նրա աշխատակազմից: Գլխավոր քարտուղարը ՄԱԿ-ի գլխավոր վարչական պաշտոնյան է, որը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի երաշխավորությամբ՝ հինգ տարի ժամանակով: ՄԱԿ-ի առաջին գլխավոր քարտուղար ընտրվեց Նորվեգիայի ներկայացուցիչ Տրյուգվե Լին: ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներն են՝ անգլերենը, իսպաներենը, չինարենը, ռուսերենը, ֆրանսերենը արաբերենը:

ՄԱԿ-ի գլխավոր սկզբունքներն են՝ Ազգերի ինքնորոշման իրավունքի ընդունումը որպես միջազգային իրավունքի ամենակարևոր սկզբունքներից մեկը, միջազգային համագործակցությունը, պետությունների ներքին գործերին չմիջամտելը, միջազգային վեճերը խաղաղ միջոցներով լուծելը, միջազգային գործերում ուժի և ուժի սպառնալիքի գործադրումից ձեռնպահ մնալը: Անհրաժեշտության դեպքում նա կարող է որոշում ընդունել քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ բնույթի պատժամիջոցների, անգամ զինված ուժ կիրառելու վերաբերյալ: ՄԱԿ-ի կարևոր խնդիրներից է մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացումը բոլորի համար՝ առանց ռասայի, լեզվի, սեռի և կրոնի տարբերության: Յուրաքանչյուր պետություն, ընդունվելով ՄԱԿ-ի անդամ, պարտավոր է ընդունել նրա Կանոնադրությունը և նրանում ամրագրված այս սկզբունքները, որոնք ընկած են միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման հիմքում:

Տրյուգվե Լի

Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ ընտրվեց 1992թ.: ՄԱԿ-ի անդամների թիվն այսօր արդեն մոտենում է 200-ի:

ՄԱԿ-ի նստավայրը Նյու-Յորքում

Խաղաղության հիմնախնդիրը

Սառը պատերազմի դարաշրջանում մարդկության առջև կանգնած գլխավոր խնդիրը դարձավ կանխել սառը պատերազմի վերածումը տաք պատերազմի: Օրակարգի հարց դարձան՝ խաղաղության պահպանումը, տարբեր երկրների միջև տարաբնույթ համագործակցության հաստատումը, բանակցությունների ուղիով ընթանալը՝ օգտագործելով երկխոսությունը որպես այդ նպատակին հասնելու հուսալի գործիք: Դրությունն ավելի վտանգավոր էր դառնում այն պարզ պատճառով, որ պատերազմն անխուսափելիորեն վերածվելու էր միջուկային պատերազմի: Սառը պատերազմի դարաշրջանում միջուկային զենք ունեցող երկրների թիվը հասավ յոթի՝ ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնություն, Մեծ Բրիտանիա, Չինաստան, Ֆրանսիա, Հնդկաստան, ապա՝ Պակիստան և Իսրայել, որոնք այժմ արդեն միջուկային զենք ունեցող պետություններ են: Խաղաղության շարժումն ընդունեց համաշխարհային բնույթ և, բարեբախտաբար, որպես այլընտրանք ընդունվեց սպառազինությունների սահմանափակման, առճակատումից համագործակցության անցնելու, լարվածության մեղմացման քաղաքականությունը: Դրանում որոշիչ եղավ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի վճռականությունը՝ կարգավորել իրենց հարաբերությունները և առճակատումից անցնել համագործակցության:

Տարածաշրջանային պատերազմներ, ազգամիջյան բախումներ

Սառը պատերազմը մշտապես ուղեկցվել է տեղական՝ լոկալ, և տարածաշրջանային բազմաթիվ տաք պատերազմներով: Դրանցից առանձնանում են արաբա-իսրայելական հինգ պատերազմները (1948, 1956, 1967, 1973 և 1982 թվականներ), որոնց ընթացքում պաղեստինցիների և արաբների կողմում ԽՍՀՄ-ն էր, իսկ Իսրայելի կողմում ԱՄՆ-ը կորեական պատերազմը (1950-1953 թթ.)՝ ԱՄՆ-ի և Չինաստանի մասնակցությամբ և ԽՍՀՄ-ի օժանդակությամբ, ԱՄՆ-ի ներխուժումը Լիբանան

Ամերիկյան գեներալները կորեական պատերազմում

Հարավային Վիետնամի ազգային ազատագրական ճակատի մարտիկները

և Մեծ Բրիտանիայի ներխուժումը Հորդանան (1958 թ.), խորհրդային զորքերի ներխուժումը Հունգարիա (1956 թ.) և Չեխոսլովակիա (1968թ.): Սկզբում Ֆրանսիայի, ապա ԱՄՆ-ի ներգրավվելը Վիետնամի պատերազմում՝ 1960-1970-ականներին, Թուրքիայի ռազմական ներխուժումը Կիպրոս և նրա հյուսիսային շրջանների գրավումը 1974թ., խորհրդային զորքերի ագրեսիան Աֆղանստան 1979թ., Ռեյգանի նախագահության շրջանում 1980-ականներին ԱՄՆ-ի ներխուժումը Գրենադա, միջամտությունը Նիկարագուայի, Պանամայի և Գվատեմալայի ներքին գործերին և բազմաթիվ այլ ռազմական բախումներ, ընդհարումներ և պատերազմական գործողություններ աֆրիկյան մայր ցամաքում՝ Կոնգոյում, Անգոլայում, Տանզանիայում, Գվինեայում, Չադում և մի շարք այլ շրջաններում:

Այդ պատերազմներին և ընդհարումներին այս կամ այն կերպ, այս կամ այն չափով մասնակցում էին աշխարհի երկու գերտերությունները՝ ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը: Նրանք զենք ու զինամթերք էին մատակարարում և նյութական-ֆինանսական միջոցներ հայթայթում իրենց ազդեցության ոլորտում գտնվող և նրանց կողմից հովանավորվող պետությանը, խուսափելով, սակայն, անմիջական առճակատումից:

Աշխարհում ուժերի նոր հարաբերակցության ձևավորումից հետո նվազեց նոր՝ երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը: Բայց դրանից աշխարհը չդարձավ ապահով և առանց հիմնախնդիրների: Հրապարակ եկան նոր մարտահրավերներ, որոնց մեջ, թերևս, ամենավտանգավորը էթնոքաղաքական հակամարտությունները և ազգամիջյան բախումներն էին: Դրանք զանգվածային բնույթ կրեցին XX դ. 80-ական թվականների վերջերից և 90-ական թվականների սկզբներից, հատկապես Խորհրդային Միության և Հարավսլավիայի լուծարումից հետո: Սակայն մի շարք հակամարտություններ, ինչպես արաբա-իսրայելական, քրդական, հնդկա-պակիստանյան և այլն, ավելի հին պատմության ունեն:

Էթնոքաղաքական հակամարտություններ ծագեցին համարյա բո-

լոր մայրցամաքներում: Դրանք այսօր առկա են աշխարհի տարբեր երկրներում՝ Իրաքում, Իրանում և Թուրքիայում (քրդական), Իսպանիայում (բասկերը), Մեծ Բրիտանիայում (իռլանդացիները), Բալկաններում (Բոսնիա-Հերցեգովինա, Խորվաթիա, Կոսովո) Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում, Հնդկաստանում, Աֆղանստանում, Եթովպիայում, Նիգերիայում, Հարավային Աֆրիկայում, Մեքսիկայում և այլ երկրներում:

Մոտավոր հաշվարկներով՝ էթնոքաղաքական հակամարտությունների թիվը աշխարհի 45 երկրներում անցնում է 200-ից: Դրանց վտանգավոր գոտի է Անդրկովկասը, որտեղ առկա են դարաբաղյան, հարավ-օսական և աբխազական հակամարտությունները:

Ղարաբաղյան հակամարտությունը, որը նոր փուլ մտավ 1988թ., առաջին էթնոքաղաքական հակամարտությունն էր նախկին Խորհրդային Միության տարածքում: Լեռնային Ղարաբաղը ոտքի ելավ Ադրբեջանի տիրապետությունից ազատվելու և Հայաստանին միանալու համար: Նա հաղթող դուրս եկավ մոտ վեց տարի տևած զինված պայքարից, և այսօր դե ֆակտո անկախ է:

Էթնոքաղաքական հակամարտությունները շոշափում են շատ երկրների, այդ թվում և մեծ տերությունների ռազմավարական շահերը: Նրանք, այս կամ այն չափով ներքաշված լինելով այդ հակամարտությունների մեջ, ջանում են դրանց այնպիսի լուծումներ գտնել, որոնք առավել կհամապատասխանեն իրենց շահերին: Այստեղ գլխավոր դերակատարներն են՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և այլ երկրներ: Էթնոքաղաքական հակամարտությունները կարող են վերածվել ցեղասպանության, ինչպես դա տեղի ունեցավ Ռուանդայում, Բուրունդիում և Դարֆուրում (Սուդան), կամ էթնիկական մաքրման՝ իրենց հողերից բնիկների արտաքսման: Այս վերջին երևույթը համարյա բոլոր էթնոքաղաքական հակամարտությունների մշտական ուղեկիցն է: Այդ հակամարտությունները հնարավոր է և պետք է լուծվեն քաղաքական մեթոդներով: Դրա համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ: Ներկայումս փորձ է արվում այդ հակամարտությունները լուծել տարածքային ամբողջականության և սահման-

ՄԱԿ-ի զինվորները Դարֆուրում

ների անխախտելիության սկզբունքի հիման վրա: Գոյություն ունի նաև ազգերի ինքնորոշման իրավունք, որը փորձ է արվում անտեսել, ինչպես Ադրբեջանը Ղարաբաղի դեպքում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ի՞նչ նպատակով ստեղծվեց ՄԱԿ-ը: Ձեր կարծիքով որո՞նք էին նրա տարբերությունները Ազգերի լիգայից: Դրանցից որը, ըստ ձեզ, կարելի է համարել թիվ մեկ սկզբունքը և ինչո՞ւ: Ի՞նչ եք կարծում կա՞ն սկզբունքներ, որոնք հնացել են և կարիք ունեն նորացման: Ի՞նչ նոր սկզբունքներ կարող եք առաջարկել և ինչո՞ւ: Հիմնավորեք ձեր պատասխանը:
2. Սառը պատերազմի դարաշրջանում ո՞րն էր համարվում մարդկության առջև կանգնած գլխավոր հիմնախնդիրը: Փորձեք գնահատել այդ խնդրի լուծման համար համաշխարհային հանրության գործադրած ջանքերը:
3. Փորձեք բացատրել «տարածաշրջանային պատերազմներ» և «ազգամիջյան բախումներ» հասկացությունները: Բերեք դրանց կոնկրետ օրինակներ: Ի՞նչ գործոններ նպաստեցին XX դարի վերջերին դրանց բռնկմանը և ծավալմանը: Ձեր կարծիքով ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ դրանք: Որո՞նք են այդ հակամարտությունների կարգավորման սկզբունքները: Դրանցից ո՞րն եք դուք առաջնային համարում: Հիմնավորեք ձեր տեսակետը:
4. Լրացրեք «Խաղաղության պահպանում, տարածաշրջանային պատերազմներ և ազգամիջյան բախումներ» աղյուսակը:

Հիմնահարցեր	Բնութագրում	Կոնկրետ դրսևորումներ	Արդյունքներ, հետևանքներ
Խաղաղության պահպանում			
Տարածաշրջանային պատերազմներ			
Ազգամիջյան բախումներ			

ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

III

ԲԱԺԻՆ

§22. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Արևմուտքի երկրների տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները

Նշված ժամանակահատվածի ամենակարևոր առանձնահատկությունն արևմտյան, և ոչ միայն արևմտյան, երկրների զարգացումն էր սառը պատերազմի և սպառազինությունների լայնածավալ մրցակցության ավարտի, ավելի ճիշտ՝ բացակայության պայմաններում: Ամբողջ աշխարհը, այդ թվում և արևմտյան երկրները, ազատ շունչ քաշեցին: Ռազմական ոլորտի համար նախատեսվող ֆինանսական հոսքերը և նյութական հնարավորություններն ուղղվեցին սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացմանը՝ մեծ թափ հաղորդելով նրա առաջընթացին: Այս կարևոր առանձնահատկությունն այն է, որ սկսվեց արևմտյան երկրների պատմության հետինդուստրիալ (հետարդյունաբերական) փուլը, որը նոր հնարավորություններ ստեղծեց այդ երկրների համալիր զարգացման համար, ներառելով ինչպես քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և մշակութային-կրթական ոլորտները: Կարևոր առանձնահատկություն պետք է դիտել այն հանգամանքը, որ հետարդյունաբերական դարաշրջանում առաջին պլան մղվեց տեղեկատվությունը: Դա բացարձակ նորություն է: Բացառիկ երևույթ են համացանցի (ինտերնետի) ստեղծումը և ներդրումը, համակարգիչների զանգվածային օգտագործումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Առաջին բջջային հեռախոսները

Լայնորեն կիրառվում են համացանցի այնպիսի բաղադրիչներ, ինչպես էլեկտրոնային փոստը, ֆաքսը, բջջային հեռախոսները: Արդի համաշխարհային շուկան

Համացանցից օգտվող մարդկանց խումբ

նույնպես խարսխվել է էլեկտրոնիկայի և համացանցի վրա: Այդ բոլորի արդյունքում ձևավորվել է սոցիալական նոր խավ՝ որի միջուկը կազմում են ծրագրավորողները, պարտադիր կերպով բարձրագույն կրթություն և գիտական աստիճաններ ունեցող պրոֆեսիոնալները և այլ մասնագետներ: Արդեն նվազել է գյուղացիության մասնաբաժինը տնտեսության մեջ, թուլանում են նաև դասական առումով բանվոր դասակարգի դիրքերը:

Դարաշրջանի ոգուն համապատասխան շատ արագ տեմպերով ընթանում է արևմտյան երկրների տնտեսական և քաղաքական ինտեգրացումը: Ջուգահեռաբար խորանում են ժողովրդավարության, մարդու իրավունքների հարգման և ընդլայնման գործընթացները: Նշված ժամանակահատվածում ձևավորվեց միակենտրոն աշխարհ՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ:

Եվրոպական միությունը

Արևմտյան երկրների ինտեգրացումն իր գործնական արտացոլումը գտավ Եվրոպական միության (ԵՄ) ստեղծման մեջ: ԵՄ-ի կազմավորումն ընթացել է փուլ առ փուլ: Նրա հիմքերը դրվեցին դեռևս 1952թ., երբ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Բելգիան, Նիդերլանդները և Լյուքսեմբուրգը հիմնեցին Եվրոպական ածխի և պողպատի միավորումը: 1957թ. նրանք ստորագրեցին համաձայնագիր Եվրոպական տնտեսական միություն ստեղծելու մասին, որն ավելի հայտնի դարձավ Ընդհանուր շուկա անունով: Այնուհետև ինտեգրացման գործընթացն անցավ մի շարք միջանկյալ փուլերով և վերջապես,

Եվրոպական միության ստեղծումը

1992թ. եվրոպական 12 երկրներ ստորագրեցին մի շարք համաձայնագրեր, և ստեղծվեց Եվրոպական միությունը: Սահմանվեց նրա հիմնական խնդիրները, որոնք հանգում էին հետևյալին՝ ստեղծել միասնական տնտեսական, իրավական և մշակութային տարածք, անդամ-երկրների քաղաքացիները, նրանց կապիտալը և բանվորական ուժը ստացան ազատ տեղաշարժվելու իրավունք ԵՄ-ի անդամ երկրների տարածքում, ստեղծվեց ԵՄ-ի միասնական դրամ՝ եվրոն և այլն: ԵՄ-ն ազատորեն չի բացում իր դռները բոլոր ցանկացողների առջև: Նա ունի խիստ նախապայմաններ: Նորանդամ պետությունը պետք է ունենա տնտեսական զարգացման, ազատականության և ժողովրդավարության բարձր մակարդակ, նրա բյուջեն պետք է լինի հավասարակշռված, երկիրը չպետք է գտնվի պատերազմի և բախումների մեջ և այլն: Այնուհանդերձ նրա շարքերը համալրվում են, և նրա անդամների թիվը 2012թ. հասավ 27-ի:

Եվրոպական միության նստավայրը, Բրյուսել

Հայաստանի Հանրապետությունը դեռևս ԵՄ-ի անդամ չէ, սակայն կողմնակից է նրան անդամակցելուն: Նա համագործակցում է ԵՄ-ի և նրա զանազան կառույցների հետ: 2008թ. ընդգրկվել է Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ, իսկ 2009թ. Արևելյան գործընկերության մաս կազմեց:

Արևմուտքի զարգացած երկրները

ԱՄՆ: Ինչպես նշվել է, Ջ. Բուշ ավագը մեծ ուշադրություն չէր հատկացնում ներքին և տնտեսական հարցերին: Նրա այդ վրիպումից փայլուն օգտվեց Բիլ Քլինթոնը և հաղթականորեն մտավ Սպիտակ տուն: Նրա օրոք մշակվեց իրատեսական տնտեսական ծրագիր, որը հետևողականորեն սկսեց իրականացվել: Տնտեսական իրավիճակը բարելավվեց, ապա սկսվեց տնտեսական աննախընթաց վերելք: Ստեղծվեցին մոտ 5 միլիոն նոր աշխատատեղեր, բարձրացան աշխատավարձերը և սոցիալական նպաստները, վերացավ բյուջեի պակասորդը:

Բիլ Քլինթոն

Բարաք Օբամա

2000թ. նոյեմբերին նախագահ ընտրվեց հանրապետական Ջորջ Բուշ կրտսերը: Նրա նախագահության տարիները՝ 2000-2008 թվականները, եղան ԱՄՆ-ի պատմության ամենածանր և խառնաշփոթ շրջաններից մեկը: 2001թ. սեպտեմբերի 11-ին իսլամական ահաբեկիչները «ալ-Կաիդայի» ղեկավար Ուսամա բեն Լադենի հրահանգով կործանեցին Նյու Յորքում տեղակայված համաշխարհային առևտրի կենտրոնի երկու երկնաքերերը՝ պատճառելով մարդկային մեծ զոհեր և ավերածություններ: Բուշ կրտսերին արտաքին հարաբերություններում հատուկ էր ագրեսիվ քաղաքական կուրսը: Ամերիկյան զորքերը 2003թ. ներխուժեցին Իրաք, այն պատճառաբանությամբ, որ իբր Իրաքը գաղտնի պատրաստում է միջուկային և զանգվածային ոչնչացման քիմիական զենք: Չնայած այդ մեղադրանքը չհաստատվեց, այդուհանդերձ Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը և նրա զինակիցները ձերբակալվեցին և կախաղան հանվեցին:

2008թ. ընտրություններում հանրապետականները պարտություն կրեցին, և ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ երկրի նախագահ ընտրվեց սևամորթը՝ դեմոկրատ Բարաք Օբաման: Նրա ակտիվ ջանքերով ամերիկյան զորքերը դուրս բերվեցին Իրաքից, սահմանվեց կոնկրետ ժամանակացույց նաև Աֆղանստանից ամերիկյան զորքերը դուրս բերելու վերաբերյալ: Նա փորձում է կիրառել մի շարք բարեփոխումներ նաև ներքին քաղաքականության և տնտեսության բնագավառում:

Նյու Յորքի երկնաքերերի ռմբակոծումը ահաբեկիչների կողմից, 2001թ. սեպտեմբերի 11

ԱՄՆ-ը 1991թ. դեկտեմբերի 27-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը, իսկ 1992թ. հունվարի 7-ին երկու երկրների միջև հաստատվեցին դիվա-

նագիտական հարաբերություններ, որոնք ունեն բարեկամական բնույթ:

Մեծ Բրիտանիա: 1997թ. կայացած պառլամենտական ընտրություններում հաղթեցին լեյբորիստները, և նոր կառավարությունը գլխավորեց նրանց առաջնորդ Թոնի Բլերը: Նա համարձակորեն ընդառաջ գնաց շոտլանդացիների և ուելսցիների ինքնավարման պահանջներին: 1997թ. Շոտլանդիայում տեղի ունեցավ հանրաքվե հօգուտ սեփական պառլամենտ ստեղծելուն: Շոտլանդական պառլամենտն օրենսդրական իրավունք ստացավ տեղական հարցերում: Նույնպիսի իրավունքներով օժտվեց նաև Ուելսում ստեղծված տեղական պառլամենտը:

Թոնի Բլեր

Սակայն Մեծ Բրիտանիայի համար ամենադժվար հարցը Հյուսիսային Իռլանդիայի՝ Օլսթերի հարցն է, որտեղ 1960-ական թվականներից արյունալի բախումներ են տեղի ունենում մեծամասնություն կազմող բողոքականների ու փոքրամասնություն կազմող կաթոլիկների միջև: Կաթոլիկները ձգտում են միանալ Իռլանդիային, մինչդեռ բողոքականները ցանկանում են մնալ Մեծ Բրիտանիայի կազմում: Բլերին հաջողվեց հասնել պատերազմող կողմերի միջև զինադադարի հաստատմանը և հարցի լուծումը տեղափոխել քաղաքական բանակցությունների դաշտ:

2007թ. Բլերին փոխարինեց նրա կուսակից Բրաունը, որն աչքի չընկավ պետությունը ղեկավարելու բարձր հատկանիշներով, և դրանից հետո կայացած հաջորդ ընտրություններում հաղթեցին պահպանողականները:

Մեծ Բրիտանիան 1991թ. դեկտեմբերի 12-ին ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հաստատվեցին դիվանագիտական և բարեկամական հարաբերություններ:

Կաթոլիկների և բողոքականների բախումը Հյուսիսային Իռլանդիայում

Ֆրանսիա: 1995 թ. նախագահ ընտրվեց Փարիզի քաղաքագլուխ Ժակ Շիրակը: Նա կողմնակից էր ազատ ձեռներեցությանը, խնայողության խիստ ռեժիմի հաս-

տատմանը և դեմ էր սոցիալական ապահովության համար հատկացումների ավելացմանը: Հետևողականորեն կիրառելով իրեն նախընտրելի այդ սկզբունքները, Շիրակին հաջողվեց հասնել զգալի հաջողությունների տնտեսության զարգացման, արդիականացման և ֆրանսիական ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Ժակ Շիրակը, ինչպես և իր նախորդները, կողմնակից էր եվրոպական ինտեգրացմանը և ԵՄ-ի հետագա ամրապնդմանը:

Ժակ Շիրակ (1995–2007 թթ.)

2007թ. Ֆրանսիայի նոր նախագահ ընտրվեց Նիկոլա Սարկոզին: Նա ձգտում էր կայունացնել երկրի ներքաղաքական իրավիճակը, կարգավորել օտարերկրացիների ներգաղթը, ֆրանսիական օրենքներին ենթարկել ներգաղթյալներին, մասնավորապես մուսուլմաններին: Նրա նախագահության շրջանում ավելի ամրապնդվեց ֆրանս-գերմանական համագործակցությունը ԵՄ-ի շրջանակներում: Կողմ լինելով ԵՄ-ի ընդարձակմանը, Սարկոզին, սակայն, դեմ էր Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին, գտնելով, որ նա դեռևս չի հասունացել և չի բավարարում ԵՄ-ի անդամ դառնալու պահանջները: Ֆրանսիան վարում էր ակտիվ քաղաքականություն աշխարհի տարբեր կողմերում առաջացող կոնֆլիկտները լուծելու հարցում:

2012թ. կայացած ընտրություններում Նիկոլա Սարկոզին պարտություն կրեց, և հաղթանակեց սոցիալիստ Հոլանդը: Սոցիալիստները մեծամասնություն կազմեցին նաև նորընտիր պառլամենտում:

Հայոց ցեղասպանությանը նվիրված քննարկում Ֆրանսիայի Ազգային ժողովում

Ֆրանսիան 1992թ. հունվարի 3-ին ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը, փետրվարի 24-ին հաստատել դիվանագիտական հարաբերություններ, իսկ 1998-ին ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Գերմանիա: Միավորումից հետո Գերմանի-

այի առջև ծառացան նոր խնդիրներ: Դրա պատճառն այն էր, որ ԳԴՀ-ն իր զարգացման մակարդակով զգալիորեն հետ էր մնում ԳՖՀ-ից: Անհրաժեշտ էր նրա տնտեսությունը վերակառուցել շուկայական տնտեսության սկզբունքներին համապատասխան և հաղթահարել տեխնիկական հետամնացությունը:

Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզիի և Գերմանիայի վարչապետ Ա. Մերքելի հանդիպումը

Այդ գործընթացներն ավելի արագացված տեմպերով ընթացան, երբ 2005թ. կանցլերի պաշտոնը զբաղեցրեց Անգելա Մերքելը: Նրա գլխավորությամբ Գերմանիան կարողացավ լուծել այդ խնդիրները, կատարեց վիթխարի քայլեր տնտեսության զարգացման և արդիականացման ուղղությամբ՝ դառնալով աշխարհի ամենազարգացած և տնտեսապես հզոր պետություններից մեկը:

Իտալիա: Իտալիան արդի աշխարհի զարգացած պետություններից մեկն է և որոշակի կշիռ ունի, մանավանդ եվրոպական գործերում: Նա ԵՄ-ի հիմնադիր պետություններից է և այսօր մեծ դեր է խաղում նրա պահպանման ու ամրապնդման գործում: Վերջին տասնամյակում Իտալիան մեծ ջանքեր է գործադրում իր տնտեսությունն արդիականացնելու, արդյունաբերության մրցունակ ճյուղեր ստեղծելու և զարգացնելու ուղղությամբ: Նրա կարևոր ձեռքբերումներից է որակյալ, մրցունակ ապրանքների արտադրությունը: Նշանակալի են նաև Իտալիայի նվաճումները ժողովրդավարության զարգացման, մարդու իրավունքների հարգման, կրթական համաշխարհային նոր՝ Բոլոնիայի միջազգայնորեն ընդունված համակարգի ստեղծման բնագավառներում և այլն: Սակայն Իտալիան աչքի է ընկնում քաղաքական անկայունությամբ: Նա այն երկրներից է, որտեղ հաճախ են փոփոխվում կառավարությունները: Այդ բնագավառում առաջնությունը վարչապետ Սիլվիո Բերլուսկոնիին է, որը միայն վերջերս հրաժեշտ տվեց քաղաքականության ոլորտին: Նրա փոխարեն 2011 վարչապետի պաշտո-

Սիլվիո Բերլուսկոնի

նը ստանձնեց Մոնտին, որը պատկանում է լիբերալ թևին: Նրա առջև կանգնած են լուրջ տնտեսական և ֆինանսական խնդիրներ, կապված Իտալիայի տնտեսությունն առողջացնելու՝ ԵՄ-ի պահանջների հետ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են Արևմուտքի երկրների տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները արդի փուլում: Փորձեք բնութագրել հետարդյունաբերական հասարակությունը: Ձեր կարծիքով ի՞նչ ուղղությամբ են զարգանալու արդի գործընթացները: Հիմնավորեք ձեր տեսակետը:
2. Փորձեք պարզել Արևմտյան երկրների ինտեգրացման գործընթացը: Եվրոպական միության (ԵՄ) կազմավորման հիմքում ընկած գործոններից որո՞նք եք դուք ավելի կարևորում և ինչո՞ւ: Ձեր կարծիքով արդյո՞ք օրինաչափ էր ԵՄ-ի ստեղծումը: Ի՞նչ է ԵՄ-ն ձեզ համար: Փորձեք պարզել՝ ի՞նչ կարող է տալ մեզ Հայաստանի ԵՄ-ին անդամակցությունը:
3. Ձեր կարծիքով որո՞նք էին հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի ներքին և արտաքին քաղաքականության բնորոշ գծերը և առանձնահատկությունները: Բ. Քլինթոնից մինչև Բ. Օբամա ԱՄՆ-ի նախագահներից ո՞ւմ կառանձնացնեք դուք և ինչո՞ւ: Փորձեք բնութագրել նրան: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է այսօր ԱՄՆ-ի դերն աշխարհում: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
4. Ո՞ւմ գլխավորությամբ լեյբորիստները հրաժարվեցին իրենց ավանդական սոցիալիստական գաղափարներից: Հատկապես ո՞ր հարցում լեյբորիստական կառավարությունը հանդես բերեց վճռականություն: Ինչպե՞ս լուծվեց այն: Փորձեք գնահատել Թ. Բլերի գործունեությունը: Ինչպե՞ս կարող եք բնութագրել հայ-բրիտանական հարաբերությունները:
5. Ե՞րբ է Ժակ Շիրակը ընտրվել Ֆրանսիայի նախագահ: Որո՞նք էին նրա արտաքին և ներքին քաղաքականության գերակա ուղղությունները: Փորձեք գնահատել նրա գործունեությունը: Ի տարբերություն Ժ. Շիրակի՝ ո՞ր հարցերն էին կազմում Ն.Սարկոզիի գործունեության առանցքը: Փորձեք պարզել 2012 թ. նախագահական ընտրություններում Սարկոզիի պարտության որևէ պատճառը: Ձեզ գոհացնում են հայ-ֆրանսիական ներկա հարաբերությունները: Հիմնավորեք ձեր պատասխանը:
6. Միավորումից հետո որո՞նք էին Գերմանիայի առջև ծառացած նոր խնդիրները: Ձեր կարծիքով կարելի՞ է այսօր լուծված համարել Գերմանիայի միավորման հետ կապված հիմնահարցերը: Վերջին շրջանում Գերմանիայի պետական գործիչներից ո՞ւմ

գործունեությունն է ձեզ դուր գալիս և ինչո՞ւ: Փորձեք գնահատել այդ գործչին:

7. Փորձեք բնութագրել Իտալիայի վերջին տասնամյակների նվաճումները: Ո՞ր բնագավառներում են ակնառու Իտալիայի ձեռքբերումները: Ձեր կարծիքով ո՞րն է Իտալիայի քաղաքական կյանքի բնորոշ գիծը: Ինչպե՞ս կարող եք գնահատել Ս. Բերլուսկոնիի գործունեությունը:
8. Լրացրեք «Արևմուտքի երկրներն արդի փուլում» աղյուսակը:

Երկրներ	Պետության ղեկավարներ	Տարեթվեր	Իրադարձություններ կամ միջոցառումներ	Արդյունքներ (հետևանքներ)
ԱՄՆ				
Մեծ Բրիտանիա				
Ֆրանսիա				
Գերմանիա				
Իտալիա				

§23. ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՐԿՐՆԵՐԸ 1991 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Հետխորհրդային երկրների քաղաքական և տնտեսական զարգացման առանձնահատկությունները

ԱՊՀ-ի զինանշանը

Այդ ժամանակաշրջանն ընդգրկում է նախկին խորհրդային հանրապետությունների անկախ պետությունների վերակազմավորման և զարգացման գործընթացը: Հայտնի է, որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծվեցին 15 անկախ պետություններ (Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Բելառուսը, երեք մերձբալթյան պետությունները՝ Լատվիան, Լիտվան, Էստոնիան, երեք անդրկովկասյան պետությունները՝ Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, և հինգ միջինասիական պետությունները՝ Ղազախստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը), որոնցից 1991թ. կազմավորված Անկախ պետությունների համագործակցությանն (ԱՊՀ) անդամակցեցին միայն 11 պետություն, բացառությամբ մերձբալթյան երեք պետությունների և Վրաստանի:

ԱՊՀ անդամ բոլոր երկրների առջև կանգնեցին բազում պետական, քաղաքական և տնտեսական խնդիրներ, որոնց մի մասն ընդհանուր էր նրանց բոլորի համար, իսկ մի մասն էլ յուրահատուկ էր այս կամ այն պետությանը: Ընդհանուր խնդիրների մեջ առաջին հերթին պետք է նշել ամբողջատիրական վարչահրամայական համակարգի վերացումը: Այդ գործընթացը ընդհանուր առմամբ հաջող ընթացավ ԱՊՀ անդամ երկրների մեծ մասում: Կոմունիստական կուսակցությունները հեռացվեցին իշխանությունից, անցկացվեցին ընտրություններ, Գերագույն խորհուրդների փոխարեն ձևավորվեցին Ազգային ժողովներ, ընդունվեցին նոր ազգային սահմանադրություններ, ամենուր հաստատ-

ԱՊՀ-ի երկրների կառավարությունների ղեկավարների հանդիպումը

վեց նախագահական կամ կիսա-նախագահական կառավարման համակարգ:

Մյուս կարևոր հիմնախնդիրը տնտեսության զարգացման մոդելի ընտրության հարցն էր: ԱՊՀ բոլոր երկրները, մի մասը արագ, մի մասն էլ ավելի դանդաղ, հրաժարվեցին ոչ միայն սոցիալիստական կառավարման, այլև սոցիալիստական տնտեսական համակարգից: Նոր տնտեսական համակարգի հիմքում դրվեցին մասնավոր սեփականության հաստատման, ազատական շուկայական հարաբերություններին անցնելու, մասնավոր ձեռներեցության խրախուսման սկզբունքները: Սեփականացվեցին գործարանները, ֆաբրիկաները, ներքին և արտաքին առևտրի ոլորտը, լուծարվեցին կոլտնտեսությունները, մասնավոր սեփականության սկզբունքը ներթափանցեց կրթության, մանավանդ բարձրագույն կրթության ոլորտը: Այդ բոլորն իրականացվում էին բարբարոսական մեթոդներով, որն ավելի շուտ թալանի և կողոպուտի բնույթ էր կրում: Պատահական չէր, որ նման տնտեսական քաղաքականությունը տնտեսագիտության մեջ ստացավ «վայրի սեփականաշնորհում» անվանումը: Այդ պայմաններում գլուխ բարձրացրին անհագուրդ ագահությունը, կաշառակերությունը, հովանավորչությունը, քաղաքական հակառակորդներին ֆիզիկապես վերացնելու մեթոդը: Անհեռատես քաղաքականության, տնտեսական զարգացման օրինաչափությունները ոտնահարելու հետևանքով շեշտակի անկում ապրեց ԱՊՀ երկրների տնտեսությունը՝ կողքին ունենալով իր մշտական ուղեկիցներին՝ աշխատատեղերի կրճատում, գործազրկության աճ, գների անկասելի բարձրացում, խորհրդանշական աշխատավարձ և այլն: Դա իր հերթին բերեց արտագաղթ, գլխավորապես դեպի Ռուսաստան, ինչպես նաև ԱՄՆ, Ֆրանսիա, Իսպանիա, Բելգիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա և

Նարնջագույն հեղափոխությունը Ուկրաինայում

Վարդերի հեղափոխությունը Վրաստանում

այլ երկրներ: ԱՊՀ մի շարք երկրներում, Ռուսաստանում, Հայաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում և այլուր սկսվեց դեմոգրաֆիկ՝ ժողովրդական անկում: Վերոնշյալ բացասական երևույթները ԱՊՀ բոլոր երկրներում հանգեցրին սոցիալական բևեռացման՝ մի կողմում աղքատացում և թշվառություն, իսկ հակառակ կողմում՝ ճոխ ու հարուստ կյանք՝ վիլլաներ, այդ թվում արտասահմանյան երկրներում, թանկարժեք մեքենաներ, ռեստորանային շքեղ կյանք, ինչը դարձավ այսպես կոչված՝ նորաթուխ օլիգարխիայի, դուրսպրծուկների կենսաձևը: Մեկը մյուսին փոխարինող կառավարությունները, չնայած ամպագոռգոռ խոստումներին, լուրջ քայլեր չէին ձեռնարկում դրությունը բարելավելու ուղղությամբ: Դա պարարտ հող հանդիսացավ 2000-ական թվականների սկզբներին Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում Արևմուտքի կողմից հրահրվող և պաշտպանվող գունավոր «վարդերի» և «նարնջի» հեղափոխությունների համար, որոնք սակայն ոչինչ չփոխեցին:

ԱՊՀ-ն 1991 թվականից մինչև մեր օրերը

1991 թվականից մինչև մեր օրերը մեծ ջանքեր են գործադրվում ԱՊՀ-ն հաստատուն կառույցի վերածելու ուղղությամբ:

Բոլորին տեսանելի էր, որ ԱՊՀ-ն կուռ և համակարգված կառույց չէր, և անհրաժեշտ էին որոշ քայլեր այն ամրապնդելու համար: Սակայն մյուս կողմից ԱՊՀ անդամ երկրները, թերևս բացառությամբ Ռուսաստանի Դաշնության, մտավախություն ունեին, որ այն կարող է վերածվել նախկին ԽՍՀՄ-ի նման մի ինչ-որ կառույցի, որը նրանց համար ընդունելի չէր: Մտավախություններն ավելի ամրապնդվեցին, երբ նախագահ Բորիս Ելցինի թույլ վարչակարգը (1991-1999 թթ), փոխարինվեց նախագահ Վլադիմիր Պուտինի (2000-20008 թթ.) ամուր ձեռքի վարչակազմով, որն իր շարունակությունն ունեցավ ի դեմս Անատոլի Մեդվեդևի (2009-2012 թթ.) վարչակարգի:

ԱՊՀ-ն դեռևս 1993 թ. օժտվել էր համապատասխան Կանոնադրությամբ, ըստ որի, որպես գլխավոր գործադիր մարմին հաստատվեց Գործադիր կոմիտեն: Նրա նախագահը Գործադիր կոմիտեն ղեկավարում է ռոտացիոն սկզբունքով, ըստ այբբենական կարգի, և փոխարինվում է յուրաքանչյուր տա-

ԱՊՀ-ի և նրա անդամ երկրների դրոշները

րի: Դա մշտապես գործող մարմին է, որի անդամներն են այն բոլոր երկրների նախագահները, որոնք ստորագրել են ԱՊՀ-ի կանոնադրությունը: Նշենք, որ այդ կարևոր փաստաթուղթը չէին ստորագրել Ուկրաինան, Թուրքմենիան և Մոլդովան: Փաստորեն մշտական հանձնաժողովների կարգավիճակով են գործում նաև ԱՊՀ երկրների վարչապետների, պաշտպանության նախարարների, արտաքին գործերի նախարարների և Ազգային անվտանգության խորհուրդների քարտուղարների համաժողովները: Շատ կարևոր մարմին է համարվում Հավաքական անվտանգության պայմանագրային կազմակերպությունը (ՀԱՊԿ), որը սակայն չի ընդգրկում ԱՊՀ-ի բոլոր անդամ երկրներին: Նրա անդամներն են վեց պետություն՝ Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղըզստանը, Ռուսաստանը և Տաջիկստանը: Նրա կազմից վերջերս դուրս եկավ Ուզբեկստանը: ՀԱՊԿ-ի գլխավոր խնդիրն է ապահովել անդամ երկրների ազգային անվտանգությունը: Եթե ՀԱՊԿ-ի անդամ որևէ երկիր ենթարկվի հարձակման, ապա նրա անդամ մյուս երկրները դա կդիտեն որպես հարձակում իրենց վրա և բոլոր միջոցներով կօգնեն ագրեսիայի զոհին:

ԱՊՀ-ի կառույցներում շատ են լինում քննարկումներ տնտեսական միասնական դաշտ ստեղծելու և տնտեսական ինտեգրացիայի վերաբերյալ, ընդունվում համապատասխան փոստաթղթեր, բայց սայլը տեղից չի շարժվում: Թերևս հիշատակման արժանի է Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղըզստանի միջև կնքված համաձայնագիրը միասնական տնտեսական գոտի ստեղծելու վերաբերյալ, որը բաց է ԱՊՀ-ի անդամ բոլոր երկրների առջև: Բայց մինչև օրս նրանցից և ոչ մեկը չի հայտարարել այդ պայմանագրին միանալու մտադրության մասին: Ժամանակին մեծ աղմուկ բարձրացավ Ռուսաստանի և Բելառուսի միավորման և միության ստեղծման հարցում, այն հույսով, որ նրան կմիանան ԱՊՀ մյուս երկրները: Հատկապես մեծ ճնշում էր գործադրվում Հայաստանի վրա թե՛ ներսից և թե՛ դրսից: Սակայն Հայաստանը, ինչպես նաև մյուս երկրները նպատակահարմար չգտան միանալ Ռուս-բելառուսական միությանը:

ՀԱՊԿ-ի անդամ երկրների զինվորների շքերթը

Հարկ է նշել, որ կան որոշակի տարաձայնություններ և հակասություններ ԱՊՀ

Տեսարան ռուս-վրացական պատերազմից

անդամ երկրների միջև, որոնցից ամենահինը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրն է, որն ազդում է հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա: Ադրբեջանն ավելի քան քսան տարի է տնտեսական շրջափակման է ենթարկել Հայաստանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Սուր բնույթ են կրում ռուս-վրացական հակասությունները Աբխազիայի և Հարավային Օսիայի շուրջ, որոնք 2008թ. օգոստոսին վերածվեցին պատերազմի: Վրաստանը պարտություն կրեց, իսկ Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը: Ավելացնենք, որ տարաձայնություններ գոյություն ունեն նաև Ռուսաստանի և Մոլդովայի միջև Մերձդնեպրիայի հարցի շուրջ: Հարթ չեն նաև ընթանում Ռուսաստանի հարաբերությունները Ուկրաինայի և Բելառուսի հետ: Վերջապես անվտանգ գոտի չի կարելի համարել Կենտրոնական Ասիան, որտեղ մշտապես իրենց զգացնել են տալիս հակասությունները տաջիկների, ուզբեկների և ղրղզների միջև:

Հայաստանը և ԱՊՀ երկրները

Հիշեցնենք, որ Հայաստանը շատ ակտիվ քաղաքականություն է վարում ԱՊՀ-ի շրջանակներում, գործարար և բարեկամական հարաբերություններ հաստատելով Ռուսաստանի, Բելառուսի, Ուկրաինայի, Վրաստանի և մյուս երկրների հետ: Ինչպես նշվել է, ԱՊՀ անդամ երկրներից Ադրբեջանը միակ պետությունն է, որի հետ Հայաստանը չունի դիվանագիտական հա-

ՀԱՊԿ անդամ պետությունների խորհրդարանների պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովների նախագահների համակարգող խորհրդակցության նիստը Երևանում

բաբերություններ, և որը, ինչպես և նրա ավագ եղբայր Թուրքիան, տնտեսական շրջափակման են ենթարկել նրան՝ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կապակցությամբ:

Չնայած հայ-ռուսական բարեկամական հարաբերություններին, Հայաստանը, այնուամենայնիվ, հրաժարվեց միանալ Ռուս-բելառուսական միությանը և դառնալ այդ միության երրորդ անդամը, քանի որ դա չի բխում Հայաստանի ազգային շահերից:

Հայաստանը և Ռուսաստանը ԱՊՀ անդամ միակ պետություններն են, որ դեռևս 1997թ. օգոստոսին ստորագրել են «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագիր», որը մինչև օրս ծառայում է Հայաստանի ազգային անվտանգության շահերին: Այդ պահից ի վեր հայ-ռուսական հարաբերությունները երկու կողմերն էլ որակում են որպես ռազմավարական հարաբերություններ: Հայաստանը Ռուսաստանին տրամադրել է ռազմակայան Գյումրիում, որտեղ հայ և ռուս սահմանապահները համատեղ պաշտպանում են Հայաստանի պետական սահմանները, այդ թվում և նրա թուրքական հատվածը: 2011թ., Ռուսաստանի Դաշնության նախագահ Ա. Մեդվեդևի Հայաստան պետական այցի շրջանակներում կողմերը եկան համաձայնության երկարաձգել ռազմակայանի գործողության ժամկետը հիսուն տարով:

Շատ ակտիվ է Հայաստանի գործունեությունը ՀԱՊԿ-ում՝ ԱՊՀ-ի ամենակարևոր մարմիններց մեկում, Հայաստանը հիանալի է դրսևորել իրեն այդ կառույցի նախագահի պաշտոնում, մեծապես նպաստում է նրա՝ որպես միջազգային կառույցի կայացմանը: ՀԱՊԿ-ն պարբերաբար, զորավարժություններ է անցկացնում Հայաստանի տարածքում, ռազմական ժամանակակից զենքի տեսակների օգտագործմամբ, որը կարևոր է Հայաստանի զինված ուժերի կատարելագործման և մարտունակության բարձրացման տեսանկյունից:

Ռուսաստանի նախագահ Վ. Մեդվեդևի այցը Հայաստան

Ռուս-հայկական փոխադարձ օգնության պայմանագիրը և Գյումրիում տեղակայված ռուսական ռազմակայանը ծառայում են ոչ միայն Հայաստանի և Ռուսաստանի շահերին, այլև

ԱՊՀ-ի հարավային սահմանների անվտանգությանը և անձեռնմխելիությանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են հետխորհրդային երկրների քաղաքական և տնտեսական զարգացման ընդհանուր գծերը և առանձնահատկությունները: Ձեր կարծիքով ո՞րն է հետխորհրդային երկրների կողմից տնտեսության զարգացման նույն մոդելի ընտրության հիմնական պատճառը: Փորձեք գնահատել հետխորհրդային երկրներում կատարված փոփոխությունները: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ նպատակներ էին հետապնդում դրսի միջամտությունները այդ երկրներում ընթացող գործընթացներին: Հիմնավորեք ձեր կարծիքը:
2. Ե՞րբ է ստեղծվել Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ) և ի՞նչ խնդիրներ պետք է լուծեր: Ձեր կարծիքով ինչո՞ւ նախկին Խորհրդային հանրապետություններից մի քանիսը չանդամակցեցին ԱՊՀ-ին: Փորձե՛ք պարզել ԱՊՀ-ի հիմնական տարբերությունները ԽՍՀՄ-ից: Որո՞նք են ԱՊՀ-ի գլխավոր կառույցները: Ի՞նչ եք կարծում, զարգացման ի՞նչ միտումներ է հանդես բերում ԱՊՀ-ն: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը ԱՊՀ-ի նկատմամբ: Ինչո՞ւ այն չի վերածվում կայուն միջազգային կառույցի: Ձեր կարծիքով ԱՊՀ-ի ներսում ծագած բոլոր խնդիրները հնարավո՞ր է լուծել այդ կառույցի շրջանակներում: Բերե՛ք փաստեր ձեր տեսակետի օգտին:
3. Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք Հայաստանի անդամակցությունը ԱՊՀ-ին բխում էր մեր ժողովրդի շահերից: Որքանո՞վ կարող է ԱՊՀ-ն նպաստել ՀՀ-ի առջև ծառացած ազգային խնդիրների լուծմանը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
4. Լրացրե՛ք «Հետխորհրդային երկրներն արդի փուլում» աղյուսակը:

Տարեթվեր	Իրադարձություններ	Արդյունքներ (հետևանքներ)

§24. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏՍԱՌԸՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Նոր աշխարհակարգի խնդիրը

Աշխարհի միակ գերտերությունը, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, մնաց ԱՄՆ-ը: Այդ պատճառով ընդունված է ասել, որ աշխարհը 1990-ական թվականներին դարձավ միակենտրոն կամ միաբևեռ: ԱՄՆ-ը բացեիբաց հայտարարում է ժամանակակից աշխարհի ռազմաքաղաքական և ֆինանսատնտեսական առաջնորդի իր դերը պահպանելու մասին և ոչ մի մտադրություն չունի նրանից հրաժարվելու կամ որևէ երկրի հետ կիսելու:

Ստեղծված միաբևեռ աշխարհում ԱՄՆ-ը ավելի ու ավելի է դառնում թելադրող կենտրոն: Նա աշխարհի հիմնական և կարևոր գոտիները՝ Արևմտյան Եվրոպան, Անդրկովկասը, Միջին Ասիան, Մերձավոր Արևելքը, արևմտյան ողջ կիսագունդը և այլ շրջաններ, հայտարարել է իր համար կենսական նշանակություն ունեցող տարածքներ, որտեղ չի հանդուրժում այլ պետությունների շահերի գերակայությունը: Նա ձգտում է համաշխարհային զարգացմանն այնպիսի ընթացք տալ, որն առավելագույնս համապատասխանի իր ազգային-պետական շահերին: Ուժերի նոր հավասարակշռությունը և միջազգային նոր իրադրությունը լուրջ անհանգստություն են առաջացնում աշխարհի տարբեր երկրներում: Շատ ժողովուրդներ և երկրներ մտահոգված են, որ ԱՄՆ-ը և նրա ղեկավարության ներքո գտնվող ՆԱՏՕ-ն կարող են իրենց վրա վերցնել միջազգային ժանդարմի ֆունկցիաներ, միջամտել իրենց ներքին գործերին ու զանազան հակամարտությունների լուծմանը:

Արդեն հնչում են վճռական ձայներ բազմակենտրոն աշխարհակարգի վերականգնման անհրաժեշտության մասին:

Ուժերի նոր հարաբերակցությունը և փոփոխություններ միջազգային հարաբերություններում

Խորհրդային Միության փլուզումից և սառը պատերազմի ավարտից հետո ձևավորվեցին նոր միջազգային հարաբերություններ, և

ԱՄՆ-ը մնաց աշխարհի միակ գերտերությունը: Բիլ Քլինթոնը երկրի արտաքին քաղաքականությունը վերակառուցեց՝ ելնելով այդ իրողությունից: Նա լայնորեն կիրառում էր բազմազգ ռազմական ուժերը՝ քաղաքական կնճռոտ հարցերն ի նպաստ ԱՄՆ-ի լուծելու համար: Այդ քաղաքականությունը կիրառեց Սոմալիում, Հայիթիում, Պարսից ծոցում և Բալկաններում:

Միջազգային հարաբերություններում տեղի ունեցան վերադասավորումներ հօգուտ ԱՄՆ-ի և նրա արևմտյան դաշնակիցների: Վարշավյան պայմանագրի կազմակերպության ինքնալուծարումից հետո չափազանց մեծացավ ՆԱՏՕ-ի դերը: ԱՄՆ-ի նախաձեռնությամբ և ճնշման ներքո ՆԱՏՕ-ն 1999թ. մարտին իր զորքերը, որի միջուկը կազմում են ամերիկյան, անգլիական և ֆրանսիական ուժերը, մտցրեց Հարավսլավիայի Կոսովոյի մարզ՝ ալբանացիներին սերբերից պաշտպանելու պատրվակով: Փաստորեն Հարավսլավիայի դեմ իսկական պատերազմական գործողություններ ծավալվեցին: Նատոյական զորքերը տեղաբաշխվեցին նաև Աֆղանստանում, որտեղից խորհրդային զորքերն արդեն հեռացել էին: Նրանք ռազմական գործողություններ ծավալեցին այդ երկրում: Տեղի ունեցավ ևս մեկ կարևոր իրադարձություն: ԱՄՆ-ը և ԵՄ-ի անդամ երկրները լուրջ քայլեր ձեռնարկեցին ՆԱՏՕ-ն դեպի արևելք ընդարձակելու ուղղությամբ և հասան տպավորիչ հաջողությունների: Վարշավայի պայմանագրի նախկին անդամներ Լեհաստանը, Հունգարիան և Չեխիան, հակառակ Ռուսաստանի դիմադրության, 1998թ. ընդունվեցին ՆԱՏՕ-ի անդամ: Հետագայում նրան անդամակցեցին նաև արևելաեվրոպական մի շարք այլ երկրներ՝ Ռումինիան, Բուլղարիան, Սլովակիան, նախկին խորհրդային հանրապետություններ Լատվիան, Լիտվան և Էստոնիան և այլն: Այսօր ՆԱՏՕ-ում ընդգրկված է 28 պետություն: ՆԱՏՕ-ին անդամակցելու մասին բացահայտորեն երազում են Վրաստանը, Ուկրաինան և մի շարք այլ երկրներ, չի բացառվում նաև Ադրբեջանը: Դա անհանգստացնում է

Քլինթոնի հանդիպումը Կոսովո ուղարկվող ՆԱՏՕ-ի զինվորների հետ

Ռուսաստանին, քանի որ նա ՆԱՏՕ-ի ընդարձակումը դեպի արևելք դիտում է որպես ԱՄՆ-ի դիրքերի հետագա ամրապնդում և սպառնալիք իր ազգային անվտանգությանը: Բայց Ռուսաստանը, որը բավականին թուլացել էր Բ. Ելցինի նախագահության շրջանում, գործնականում ոչ մի հնարավորություն չունի կանխելու ՆԱՏՕ-ի՝ դեպի արևելք ընդարձակվելու միտումները:

ՆԱՏՕ-ի զորքերն Աֆղանստանում

Իրաքի ռմբակոծումն ԱՄՆ-ի կողմից

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նրա ղեկավարությունը բազմիցս պաշտոնապես հայտարարել է, որ իր քաղաքական օրակարգում չկա ՆԱՏՕ-ին անդամակցելու հարց: Սակայն դա չի խանգարում, որ մի շարք բնագավառներում գործնական հարաբերություններ են հաստատվել ՆԱՏՕ-ի և Հայաստանի Հանրապետության միջև: Առանձնապես պետք է նշել Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև 2005թ. ստորագրված Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: Հայաստանի տարածքում անցկացվել են ՆԱՏՕ-ի զորքերի և հայկական զորքերի համատեղ զորավարժություններ, զինավարժություններ:

Օրեցօր իր միջազգային դիրքերն է ամրապնդում ԵՄ-ն, որի անդամ երկրները մասնակցում են միջազգային հարաբերություններում արևմտյան երկրների դիրքերն ամրապնդելու բոլոր կարևոր գործողություններին:

Ինչ վերաբերում է կենտրոնի հարցին, ապա այն՝ միակենտրոն, երկկենտրոն կամ բազմակենտրոն, մեկ անգամ ընդմիշտ տրված երևույթ չէ: Կենտրոնի յուրահատկություններից մեկը նրա շարժական լինելու հանգամանքն է, այսինքն նա մշտապես փոփոխվում է թե՛ թվաքանակի և թե՛ կոնկրետ պետության առումով: Սառը պատերազմին հաջորդեց միակենտրոն կամ միաբևեռ աշխարհը: Այժմ մարդկությունը գտնվում է համաշխարհային կամ միջազգային կենտրո-



Հենրի Քիսինջեր

նի հերթական տեղաշարժի նախօրյակին: ԱՄՆ-ի գերակայությամբ ձևավորված միակենտրոն աշխարհն արդեն սպառել է իրեն:

Կենտրոնի մյուս յուրահատկությունն այն է, որ միջազգային հարաբերությունների կենտրոնը ոչ ընտրվում է միջազգային հանրության կողմից, ոչ էլ նշանակվում որևէ մարմնի, թեկուզ և ամենահեղինակավոր միջազգային կազմակերպության կողմից: Փոփոխությունը քաղաքական, ռազմավարական, տնտեսական նոր իրողությունների արդյունք է: Մարդկային հասարակությունն այժմ թևակոխել է զարգացման նոր փուլ, երբ տեղի է ունենում միջազգային հարաբերությունների կենտրոնի հերթական տեղաշարժը:

Իսկ ու՞ր է տեղաշարժվում միջազգային հարաբերությունների կենտրոնը: Համաշխարհային գործընթացները ցույց են տալիս, որ միջազգային հարաբերությունների կենտրոնը Արևմուտքից տեղափոխվում է Արևելք: Արևելքը համարվում է համաշխարհային կենտրոնի միակ արժանի թեկնածու, իսկ ավելի կոնկրետ՝ նրա Հարավ-արևելյան ասիական գոտին: Այստեղ են գտնվում այնպիսի հսկաներ, ինչպես Չինաստանը, Հնդկաստանը, Ճապոնիան և նրանց հարակից երկրները: Այստեղ են կենտրոնացված մեր մոլորակի մարդկության հիմնական մասը, բնական ռեսուրսների վիթխարի պաշարները, արդյունաբերության, առևտրի, ֆինանսների անսպառելի ներուժը, համաշխարհային շուկաները: Դա բարձր տեխնոլոգիաների զարգացման համաշխարհային կենտրոններից մեկն է: Այս գոտում են գտնվում աշխարհի միջուկային զենք ունեցող յոթ երկրներց երեքը՝ Չինաստանը, Հնդկաստանը և Պակիստանը: Չինաստանն այսօր համարվում է համաշխարհային տնտեսության լոկոմոտիվը: Նշված փաստարկներն արդեն չեն վիճարկում գիտնականները և պետական գործիչները: Կենտրոնի՝ Արևելք տեղափոխվելու տեսակետն ընդունել են նաև ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման և պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, ինչպես նաև այնպիսի ականավոր պետական գործիչներ և քաղաքագետներ, ինչպես Հենրի Քիսինջերը, Զբիգնև Բժեժինսկին, Սեմյուել Հանթինգտոնը և աշխարհի այլ ականավոր դեմքեր:

Երկկենտրոն կամ բազմակենտրոն աշխարհակարգի դեպքում պայմաններ կստեղծվեն փոխադարձաբար հավասարակշռված քաղաքականության և մարդկության առջև կանգնած տարաբնույթ հիմնախնդիրների այլընտրանքային լուծումների համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչի՞ հետևանք էր Աշխարհի միաբևեռ (միակենտրոն) դառնալը: Փորձեք պարզել, թե ԱՄՆ-ը դարձե՞լ է միակ գերտերությունն աշխարհում: Ձեր կարծիքով ԱՄՆ-ը կարո՞ղ է ապահովել նոր աշխարհակարգի կայունությունը: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին: Համաձայն եք այն տեսակետի հետ, որ ԱՄՆ-ը կատարում է համաշխարհային ժանդարմի դերը: Հիմնավորեք ձեր պատասխանը:
2. Որպես գերտերություն ինչպե՞ս էր ԱՄՆ-ը փորձում լուծել միջազգային կնճռոտ հարցերը: Ինչ եք կարծում, ինչ դեր է հատկացվում ՆԱՏՕ-ին նոր աշխարհակարգի հաստատման գործում: Փորձեք ձեր պատասխանը հիմնավորել փաստերով: Ինչ հարաբերություններ են հաստատվել Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև: Ինչպիսի՞ն է ձեր կարծիքն այդ հարաբերությունների վերաբերյալ:
3. Ինչ եք կարծում, հնարավո՞ր է նոր փոփոխություններ հետսառըպատերազմյանն շրջանում ձևավորված աշխարհակարգում: Հնարավո՞ր է արդյոք միաբևեռ աշխարհի կրկին վերածվելը երկբևեռ կամ բոլորովին նոր՝ բազմաբևեռ աշխարհի: Ձեր կարծիքով ինչ գործընթացներ կարող են առաջ բերել այդպիսի փոփոխություններ: Փորձեք պարզել՝ դեպի ո՞ւր կարող է տեղաշարժվել միջազգային հարաբերությունների կենտրոնը: Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքը աշխարհը բազմաբևեռ տեսնելու հարցում:
4. Լրացրեք «Նոր աշխարհակարգ» համեմատական աղյուսակը:

Աշխարհակարգ	Նմանություններ	Տարբերություններ
Միաբևեռ		
Երկբևեռ		

5. Լրացրեք «ՆԱՏՕ-ն արդի փուլում» աղյուսակը:

Տարեթվեր	Իրադարձություններ	Արդյունքներ (հետևանքներ)

§25. ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Համաշխարհայնացում-գլոբալիզացիա

Համաշխարհային այս երևույթը՝ գլոբալիզացիան, այս կամ այն չափով մշտապես գոյություն է ունեցել պատմական տարբեր շրջաններում:

Գլոբալիզացիան ժամանակակից աշխարհում կյանքի հիմնական կողմերի, նրա բոլոր բաղադրատարրերի միօրինակ, միատիպ չափանիշների հաստատումը, կենսագործումը և միասնական դաշտի ստեղծումն է: Գլոբալացումը համաշխարհային ինտեգրացման մի նոր տեսակ և բարձր աստիճան է, որը ներառում է առանց բացառության բոլոր ազգերը և երկրները, բոլոր մայրցամաքները, աշխարհագրական գոտիները և տարածաշրջանները: Ժամանակակից աշխարհում երկրների միջև կապերը դարձել են բազմաբնույթ, դրանք այնքան են ուժեղացել ու միահյուսվել, որ առանձին վերցրած ոչ մի երկիր ու աշխարհամաս ի վիճակի չէ լուծելու իր առաջընթացի խնդիրները: Երկրների միջև քանդվում են տնտեսական պատնեշները, վերանում են համաշխարհային առևտրի ազատ զարգացման խոչընդոտները, տարիֆային և մաքսային արգելքները: Միջազգային չափանիշների հիման վրա ձևավորվել է համաշխարհային բանկային համակարգը, որը գործում է նոր կազմավորված համաշխարհային ֆինանսական դաշտում: Այդ ոլորտն ունի իր կենտրոնները, ինչպես Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը, որոնք տիրապետող դիրք ունեն ֆինանսական աշխարհում և իրենք են կանոնակարգում բոլոր կարևոր ֆինանսական գործառույթները՝ վարկերը, փոխատվությունները, տնտեսության ֆինանսավորումն ըստ ճյուղերի և կարևորության: Նոր պայմաններում աննախընթաց չափերի են հասել մարդկանց, միջազգային կապիտալի, բնական ռեսուրսների և գաղափարների շարժը և հոսքը մի երկրից մյուսը: Տեղի են ունե-

Համաշխարհային բանկի շենքը Վաշինգտոնում

նում տարբեր երկրների և իրավական դաշտերի միօրինականացում և միօրինակ իրավական նորմերի հաստատում: Գլոբալիզացիայի դարաշրջանում տնտեսական հարաբերությունների միակ ընդունելի ձևը բոլոր երկրների համար ազատ շուկայական հարաբերություններն են:

Գլոբալ հիմնահարցերի քննարկումը մեծ ոլորտների պետությունների ղեկավարների կողմից

XXI դ. սկզբից տնտեսական հարաբերությունների այդ ձևը հանդիսանում է տիրապետող ամբողջ աշխարհում, որի մեջ ներգրավվեցին նաև նախկին ԽՍՀՄ-ի և սոցիալիստական համակարգի բոլոր երկրները: Գլոբալիզացիան անհնար կլիներ, համենայն դեպս նա այդպիսի արագ տեմպերով չէր կարող զարգանալ, առանց համացանցի՝ ինտերնետի, որի շնորհիվ արդի համաշխարհային հասարակությունը վերափոխվել է տեղեկատվական հասարակության: Համաշխարհայնացումն ուղղակիորեն կապված է տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման, համակարգիչների և համացանցի ներդրման հետ: Ճիշտ է այն տեսադրույթը, որ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիան ինքն է ուղղակի առաջնորդում դեպի գլոբալ հասարակություն:

Համաշխարհայնացման ամենաէական տարրերից են հասարակության ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության կառուցման, մարդու իրավունքների պահպանման և համանման այլ պահանջները: Դա նշանակում է հասարակական-քաղաքական կյանքի ու նորմերի նույնպես միօրինականացում և և նույնատիպություն: Ամբողջատիրական բռնատիրական համակարգը հակացույց է համաշխարհայնացմանը:

Անտիգլոբալիստների հանրահավաք Նիցցայում

Շուկայական հարաբերությունների բնույթին համապատասխան՝ նույնատիպ փոփո-

Աֆրիկյան միության երկրների ներկայացուցիչների 19-րդ կոնֆերանսի բացումը

խություններ են տեղի ունենում տարբեր երկրների պետական և հասարակական կառուցվածքներում: Հասարակությունները դառնում են ավելի բաց ու դեմոկրատական, միատիպ: Առաջնային կարևորություն են ձեռք բերում մարդու իրավունքների պահպանման և հարգման հարցերը:

Եվ, վերջապես, համաշխարհայնացումը ենթադրում է առանձին երկրների ինքնիշխանության որոշակի սամանափակում՝ հօգուտ վերազգային կառույցների:

Համաշխարհայնացումը բոլոր երկրների համար չի կարող ունենալ միանշանակ հետևանքներ: Նրա ջատագովները բացահայտորեն հայտարարում են, որ շահողները կամ հաղթողները լինելու են արևմտյան հասարակությունները՝ ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպայի երկրները, իսկ կորցնողները՝ արևելյան հասարակությունները՝ Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի զարգացող ու թույլ զարգացած երկրները: Համաշխարհայնացման ներկա ուղղվածությունը խիստ անհանգստացնում է թույլ զարգացած երկրներին, որի դեմ նրանք բողոքում են: Նրանք գտնում են, որ գլոբալիզացիան պետք է նեղացնի ձեղքվածքը ժողովուրդների, շահողների և կորցնողների միջև, պետք է դառնա մերձեցման գործոն և ոչ թե ապաինտեգրացման տարր: Արևելյան երկրները մտահոգ են, որ համաշխարհայնացումն էրոզիայի կենթարկի իրենց դարավոր ինքնատիպ արժեքները, մշակույթը, և իրենք անխուսափելիորեն կենթարկվեն վեստերնիզացիայի (արևմտականացման): Ահա թե ինչու աշխարհում ձևավորվել է բավականին հզոր հակագլոբալիստական շարժում:

Գլոբալիզացիան, անշուշտ, վերաբերում է նաև Հայաստանին, նրա դարավոր մշակութային ինքնատիպ արժեքներին: Բայց Հայաստանը կարող է ձեռք բերել նաև նվաճումներ, եթե նրա ղեկավարությունը ճիշտ կողմնորոշվի համաշխարհայնացման գործընթացում:

Հումանիտար հիմնախնդիրներ

Ցեղասպանություն: XX դարում մարդկությունն ականատես եղավ մի նոր վայրագ երևույթի, որն այնուհետև պատմության մեջ մտավ որպես ցեղասպանություն: Դա էթնիկական խմբերի, ազգերի

և ազգությունների ու ժողովուրդների զանգվածային ոչնչացումը և բնաջնջումն է գլխավորապես ըստ էթնիկական, ինչպես նաև կրոնական, ռասայական պատկանելության, որը որպես կանոն կիրառվում է ամբողջատիրական, բռնատիրական, հետադիմական և ֆաշիստական վարչակարգ ունեցող պետություններում: Էթնիկական մաքրման միջոցով փորձ է արվում ազատվել «անցանկալի» էթնիկական տարրերից և տվյալ ամբողջատիրական պետությունը վերածել նրանում տիրապետող ազգի էթնիկապես «մաքուր» պետության: Այդ հրեշավոր ծրագիրն առաջին անգամ կիրառվեց Օսմանյան կայսրությունում, որտեղ 1915–1923թթ. երիտթուրքական ոճրագործներն իրագործեցին XX դարի առաջին ցեղասպանությունը՝ Հայոց ցեղասպանությունը: Ոչնչացվեց 1,5 միլիոն հայություն, մոտ մեկ միլիոն հայություն բռնի տեղահանվեց և աքսորվեց, որի զգալի մասը կուլ գնաց արաբական անապատների ավազուտներին, սովին, համաճարակներին և այլն: Դրա արդյունքում Արևմտյան Հայաստանը հայաթափ եղավ:

Երկրորդ ցեղասպանությունն իրագործվեց նացիստական Գերմանիայում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հրեաների նկատմամբ, որը հայտնի է հոլոքոստ (ողջակիզում) անվամբ: Հայերի և հրեաների ցեղասպանությունը հիմք է ծառայել լեհական իրավաբան Ռաֆայել Լեմկինի համար՝ ստեղծելու «գենոցիդ» եզրը, որն այսօր դարձել է միջազգայնորեն պաշտոնապես ճանաչված եզր:

Ցեղասպանության նոր ալիք բարձրացավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ հայտնի ցեղասպանագետներ Հելեն Ֆայնի և Բաբարա Հարֆի հաշվարկումներով տեղի են ունեցել մոտ 50 ցեղասպանություն, ցեղասպանության փորձեր և արյունալի ջարդեր՝ Ասիայի, Աֆրիկայի Եվրոպայի և Հարավային Ամերիկայի մի շարք երկրներում (Կամբոջայում, Սուդանում, Արևելյան Թիմորում, Ռուանդայում և այլն):

Հաշվի առնելով, որ ցեղասպանությունը ոճրագործություն է ոչ միայն կոնկրետ տվյալ ազգի կամ ժողովրդի, այլև համայն մարդկության դեմ, Միավորված ազգերի կազմակերպությունը 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունեց հատուկ «Ցեղասպանության ոճրագործությունը կանխելու և պատժելու վերաբերյալ Կոնվենցիան»:

Արդի ցեղասպանագիտությունը խստորեն դատապարտում է ցեղասպանությունը ժխտելու բոլոր փորձերը և գտնում, որ ժխտումը հանցանք է և ցեղասպանության շարունակություն: Իսկ Թուրքիան համարվում է «Ցեղասպանության ժխտման ինդուստրիայի հիմնադիր»:

Ահաբեկչություն: Գլոբալ խնդիրների շարքում, որոնք շոշափում են համայն մարդկության շահերը, իր վտանգավորությամբ աչքի է ընկնում միջազգային ահաբեկչությունը: Այն տարածված է աշխարհի բոլոր մասերում, Եվրոպայում՝ Իռլանդիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն, Ասիայում, հատկապես Թուրքիայում, ինչն ուղղված է հայերի, հույների և այլ քրիստոնյաների, քրդերի դեմ, Իրանում, արաբական մի շարք երկրներում, Հարավային Ամերիկայում և այլուր: Հանցավոր ինտերնացիոնալ բանդիտական խմբավորումների կազմավորումը, մարդկանց պատանդ վերցնելը, ինքնաթիռների առևանգումը, շենքերի և ավտոմեքենաների պայթեցումները, պատվիրված սպանությունները, որի զոհը Թուրքիայում դարձավ «Ակոս» թերթի խմբագիր և ականավոր հասարակական գործիչ Հրանտ Դինքը և այլն, լուրջ սպառնալիք են ազգային և միջազգային անվտանգությանը: Պայքարը ահաբեկչության դեմ պահանջում է այն ծնող պատճառների վերացում և գլոբալ ջանքերի համադրում, համատեղ կանխիչ և պատժիչ գործողություններ:

Ուսամա Բեն Լադեն

Համընդհանուր հիմնախնդիրներ

Թմրամոլություն: Գլոբալ մարտահրավերների շարքում ամենավտանգավորներից է թմրամոլության անկասելի տարածումը: Յուրաքանչյուր տարի թմրամոլների բանակն են համալրում միլիոնավոր դեռահասներ, պատանիներ և աղջիկներ, որոնք դատապարտված են մահվան: Նրանք նաև համալրում են հանցագործ աշխարհը: Նրանց դժբախտության վրա առասպելական շահույթներ են դիզում թմրադեղեր արտադրող նարկոբարոնները, ընդհատակյա զանազան ուժեր, կազմակերպություններ և սինդիկատներ: Դա իսկական չարիք է մարդկության համար, որի դեմ հնարավոր է պայքարել աշխարհի բոլոր երկրների, կազմակերպությունների, ծառայությունների և բժշկության ամենաակտիվ ջանքերով:

Թմրամոլության դեմ պայքարի շարժման մասնակիցներ

Այսօր մարդկությունը կանգնած է նաև մի շարք այլ գլոբալ խնդիրների առջև, որոնք նույնպես շոշափում են համայն մարդկության շահերը: Դրանք բնության և շրջակա միջավայրի պահպանման, ջրի և ջրավազանների մաքրության ապահովման, անտառների և վայրի գազանների ոչնչացման դեմ պայքարի, առողջ սննդամթերքի ապահովման, էներգակիրների և էներգիայի նոր աղբյուրների հայտնաբերման, մարմնավաճառության դեմ պայքարի և այլ հարցերն են: Մարդկության ապագան և գոյատևումը մեծապես կախված են նաև այս գլոբալ խնդիրների լուծումից, որը պահանջում է համընդհանուր ջանքեր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է համաշխարհայնացումը (գլոբալացում), որո՞նք են նրա բնորոշ տարրերը և առանձնահատկությունները: Փորձեք պարզել համաշխարհայնացման դրական և բացասական կողմերը: Ի՞նչ եք կարծում, համաշխարհայնացումն օրինաչափությո՞ւն էր, թե՞ գերտերությունների պարտադրանք: Հիմնավորեք ձեր տեսակետը: Ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանը համաշխարհայնացման գործընթացում: Ձեր կարծիքով Հայաստանը շահելո՞ւ է, թե՞ կորցնելու այդ գործընթացում: Հնարավոր է արդյո՞ք Հայաստանի մեկուսացումը համաշխարհայնացման գործընթացներից: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին:
2. Որո՞նք են համաշխարհային հիմնախնդիրների առանձնահատկությունները: Առանձնացրեք մեկ-երկու հիմնահարց, որոնք ձեր կարծիքով համարվում են ամենավտանգավորը մարդկության համար: Բացատրեք ցեղասպանություն, ահաբեկչություն, թմրամոլություն հասկացությունները: Փորձեք պարզել XX դարի մեծագույն ցեղասպանությունների հետևանքները: Ձեր կարծիքով մեր օրերում հնարավո՞ր է կանխել ցեղասպանությունները: Հիմնավորեք ձեր տեսակետը: Ինչպե՞ս եք պատկերացնում ձեր ներդրումը համաշխարհային հիմնախնդիրների լուծմանը նպաստելու գործում:
3. Լրացրեք «Արդի աշխարհի հիմնախնդիրները» աղյուսակը:

Հիմնախնդիրներ	Բովանդակություն	Հետևանքներ
Հումանիտար		
Համընդհանուր		

§26–27. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Առաջին կենցաղային համակարգիչներից մեկը «Apple», ԱՄՆ, 1970-ական թվականներ

Մշակույթի զարգացման նոր միտումները

XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին սկսվեց գիտական այն բոլոր կարևորագույն տեսադրույթների կիրառումը, որոնք ստեղծվել էին նախորդ շրջանում՝ XX դարի առաջին կեսին, որոնց իրականացման համար տեխնիկայի զարգացումը տալիս է լայն հնարավորություններ: Այդ երկու շրջաններն ամուր թելերով կապված են միմյանց հետ և դրանք անհնար է անջատել անանցանելի պատնեշներով: XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին, երբ արդյունաբերական դարաշրջանին փոխարինեց հետարդյունաբերական հասարակությունը, մշակույթը և գիտությունը թևակոխեցին զարգացման նոր փուլ: Դրանք դարձան հետարդյունաբերական հասարակության պահանջները բավարարող գիտություն և մշակույթ:

Այդ միտումները կանխորոշող մյուս գործոնը համաշխարհայնացման գործընթացն է: XXI դարում տեղի է ունենում նաև գիտության և մշակույթի գլոբալիզացիա: Դա պայմանավորված է հեռուստակապի միջոցների և համացանցի ստեղծմամբ ու զարգացմամբ, պետությունների միջև անհաղթահարելի թվացող պատնեշների խորտակմամբ, շփումների դյուրացմամբ և ակտիվացմամբ: Դրա շնորհիվ աշխարհի որևէ կետում առաջացած գաղափարները, արվեստի նորույթները, ձևերն ու ոճերն արագորեն հասանելի են դառնում աշխարհի բոլոր մասերի ժողովուրդներին, գիտնականներին և մշակույթի գործիչներին: Մեծացել են տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների փոխազդեցության հնարավորությունները և սահմանները: Աճել են բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքները մշակույթի համաշխարհային գանձարանում ներդրվելու և նրա անբաժանելի մասը դառնալու միտումները:

Գլոբալ մշակույթի ձևավորման և զարգացման այս միտումները, ամենայն հավանականությամբ, տիրապետող կլինեն XXI դարում:

Հիմնարար գիտությունները

Հիմնարար գիտությունների բնագավառում իրենց առաջատար դիրքերն են պահպանում միջուկային ֆիզիկան, տարրական մասնիկների ուսումնասիրությունը, քիմիան, մաթեմատիկան և այլ դասական ուղղություններ, որոնք համալրվեցին նոր գիտնականներով և մասնագետներով, որը գլխավորում էին Օպենհայմերը և Ֆերմին: Նրանց ջանքերով ԱՄՆ-ում ստեղծվեց ատոմային ռումբ, իսկ Կուրչատովի գլխավորությամբ, Աբ. Ալիխանովի և այլոց ջանքերով ստեղծվեց խորհրդային միջուկային զենքը: Ա. Սախարովը դարձավ ջրածնային ռումբի հայրը, նման կոչման արժանացավ Թելլերը ԱՄՆ-ում: Գիտնականների ջանքերով լուծվեց ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու հիմնախնդիրը: Տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Ճապոնիայում և այլուր կառուցվեցին ատոմային կայաններ, այդ թվում և Հայաստանում: Սկիզբ առան գիտական նոր ուղղություններ՝ մոլեկուլյար միկրոկենսաբանությունը, կիբեռնետիկան, բացահայտվեց ժառանգականության կոդը՝ գենը, արագացված տեմպերով զարգացան տիեզերագիտությունը և տիեզերագնացությունը, որի ակունքների մոտ կանգնած էին Ս. Կորոլյովը (ԽՍՀՄ) և Վ. Բրաունը (Գերմանիա-ԱՄՆ): Ռուս Յ. Գագարինը եղավ տիեզերք դուրս եկած առաջին մարդը, իսկ ամերիկացի Ն. Արմստրոնգն առաջինը ոտք դրեց Լուսնի վրա: Գիտական հետազոտությունները շարունակվում էին Բյուրականի աստղադիտարանում՝ աստրոֆիզիկայի հայր Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ, մասնավորպես տիեզերքի ծագման մասին նրա հայտնագործությունները, և Բյուրականի աստղագիտական կենտրոնը դարձավ համաշխարհային կենտրոններից մեկը: Իր ուրույն տեղն է զբա-

«Союз-ФГ» հրթիռի արձակումը



Վիկտոր Համբարձումյան, (1908-1996 թթ.)

ղեցնում էկոլոգիան, որի նշանակությունն ավելի ու ավելի է կարևորվում: Եվ, վերջապես, ձևավորվեց և մեծ զարգացում ապրեց տեղեկատվությունը, և ստեղծվեց տեղեկատվական տեխնոլոգիան, որի համար արդի դարաշրջանը համարվում է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) դարաշրջան: Տեղեկատվության հիմքում դրվեցին ամերիկյան հայտնի մաթեմատիկոս Ն. Վիների տեսական հայտնագործությունները:

Արդի հասարակությունն այլևս անհնար է պատկերացնել առանց համացանցի, որը տիրապետող դեր է ստանձնել ոչ միայն տեղեկատվության, այլև տնտեսության մեջ, ռազմական գործում, արդյունաբերության բոլոր ճյուղերում, առևտրի, բանկային-ֆինանսական, գյուղատնտեսության և այլ մարզերում: Մարդու այսօրվա կենցաղի անբաժան մասն են կազմում հեռուստացույցը, բջջային հեռախոսը (որի ստեղծման գործում ակնառու է Նոբելյան մրցանակակիր Ալֆերովի դերը), հեռատիպը:

Հումանիտար գիտությունները

Չնայած հիմնարար գիտությունների բուռն զարգացմանը, հասարակական և հումանիտար գիտությունները նույնպես նկատելի հաջողություններ են արձանագրել՝ հրաժարվելով որոշ հին պատկերացումներից և իրենց դարն ապրած հիմնադրույթներից՝ մի կողմից, և համալրվելով ու հարստանալով նոր ուղղություններով և արդիական տեսադրույթներով՝ մյուս կողմից:

Հումանիտար գիտությունների ոլորտում իրենց տիրապետող դիրքերը պահպանեցին պատմագիտությունը, գրականագիտությունը, լեզվաբանությունը և փիլսոփայությունը: Պատմագիտությունը հարստացավ նոր ուղղություններով, որոնցից հարկ է նշել երեքը: Առաջինը՝ սեպագիր քաղաքակրթությունների խորքային ուսումնասիրությունը, որի հիմքերը դրվեցին դեռևս XIX դարի առաջին կեսին, երբ գտնվեց սեպագիրներն ու գաղափարագրերը (հիերոգլիֆները) վերծանելու բանալին: Այդ հիմքի վրա ձևավորվեցին, ինչպես արդեն նշվել է, շումերագիտությունը, ասուրագիտությունը, ուրարտագիտությունը, խեթագիտությունը, եգիպտագիտությունը և այլ ենթաուղղությունները: ԽՍՀՄ-ի գոյության ընթացքում դրա միջազգայնորեն

ճանաչված կենտրոնները դարձան Սանկտ Պետերբուրգը և Երևանը՝ ի դեմս Հայաստանի ԳԱ արևելագիտության ինստիտուտի: Երկրորդը՝ ցեղասպանագիտության ձևավորումն է, որը կազմավորվեց Հայոց և հրեական ցեղասպանությունների հիմքի վրա և ընդունվեց որպես արդի համաշխարհային կարևոր գիտական ուղղություններից մեկը: Երրորդ՝ կոնֆլիկտոլոգիայի՝ բախումնաբանության վերածումը ինքնուրույն գիտահետազոտական ուղղության, որի համար խթան հանդիսացան XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին լայն թափ ստացած էթնոքաղաքական շարժումները:

Պեղումները Էրեբունի ամրոցում

Գիտությունների շարքում գնալով մեծ նշանակություն են ստանում սոցիոլոգիան, տնտեսագիտության մի շարք ենթաճյուղեր, որոնք ի հայտ եկան մաթեմատիկական մեթոդները տնտեսագիտության բնագավառում ներդնելու արդյունքում: Հարկ է նշել նաև հոգեբանության կարևորությունը, որն առանձնահատուկ դեր է կատարում ստրեսների մեր դարաշրջանում: Նշանակալիորեն թուլացել են փիլիսոփայության դիրքերը գիտությունների համակարգում:

Գրականությունը

Նշված ժամանակաշրջանում բուռն զարգացում ապրեց գրականությունը, որն իր ոլորտում ներառեց ոչ միայն ավանդաբար մեծ և զարգացած գրականություն ունեցող երկրները, այլև Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի երկրները: Իր տաղանդով փայլեց ամերիկյան քառյակը՝ Ֆոլկները, Հեմինգուեյը, Սարոյանը և Ստեյնբեկը: Ձևավորվեց մոդեռն գրական ուղղությունը, որի առաջատարներն էին ֆրանսիացի հեղինակներ Սարտրը և Քամյուն, ասպարեզ իջավ ավանգարդիստ Է. Իոնեսկուն: 1960–1980-ականներին գրողների առաջին շարքերում հայտնվեցին լատինամերիկացիներ Խուլիո Կորտասարը և Գաբրիել Գարսիա Մարկեսը: Ընթերցողների ուշադրության կենտրոնում էին

Ժան Պոլ Սարտր
(1908–1980 թթ.)

հայտնվել գերմանական գորդ Հ. Բյոլը, ֆրանսուհի Ֆ. Սագանը, Բազենը, Դուրեմանը և ուրիշներ: Թեև, քաղաքական պայմաններից ելնելով, ծանր վիճակում էր հայտնվել խորհրդային և հետխորհրդային գրականությունը, այնուհանդերձ, արժեքավոր գործեր ստեղծեցին Ա.Սոլժենիցինը, Ա. Տվարդովսկին, Կ. Սիմոնովը, Հրանտ Մաթևոսյանը, Ա. Բիտովը և շատ ուրիշներ: «Ձնալի» շրջանում իրենց տաղանդով փայլեցին Ե. Եվտուշենկոն, Յու. Վոզնեսենսկին, Պ. Սևակը, Ռ. Ռոժդեստվենսկին, Հ. Սահյանը և ուրիշներ: Իսկ այն գրողների նկատմամբ, ովքեր ընդդիմադիր դիրքորոշում ունեին վարչակարգի հանդեպ, իշխանությունները, նրանց համարելով դիսիդենտ՝ այլախոհ, կամ արտաքսում էին երկրից, ինչպես Սոլժենիցինին, Բրոդսկուն, կամ աքսորում և կամ էլ ուղարկում հոգեբուժարաններ: Այդ հակամարդկային քաղաքականությանը վերջ տրվեց վերակառուցմանը հաջորդած շրջանում:

Գեղանկարչությունը



Պաբլո Պիկասսո
(1881–1973 թթ.)

Ինչպես միշտ, կերպարվեստի այս բնագավառը հարուստ էր զանազան «իզմերի» առատությամբ: Այս բնագավառում առաջատար դերը պատկանում էր Նյու Յորքի և եվրոպական դպրոցներին: Համաշխարհային վարպետների՝ Պիկասոյի, Մատիսի, Լեժեի, Շագալի, Դալիի կողքին հայտնվեցին նորերը, ինչպես Փոլոքը, ամերիկյան վերացական գեղանկարչության հիմնադիր Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյանը) և շատ ուրիշներ: Ասպարեզում հայտնվեց պոպ-արտը, որի հետևորդները գտնում էին, որ ամեն իր կարող է լինել արվեստի առարկա: Նրանցից հայտնի էին Ռուշենբերգը, Ջոնսը և Օլդենբուրգը: Ավանգարդային ուղղություններ էին հիպերռեալիզմը, կոնցեպ-

Նկարիչն ու իր մայրը
Արշիլ Գորկի

տուալիզմը, որն արվեստը դիտում է որպես հաղորդակցություն:

Այդ տարիներին փայլատակեց Մ. Սարյանի դպրոցը՝ ի դեմս Մինասի և այլոց:

Երաժշտությունը

Լուի Արմստրոնգ (1900–1971 թթ.)

Սա այն բնագավառն է, ուր երաժշտական արդի ուղղությունները ոչ միայն չկարողացան դուրս մղել դասական երաժշտությունը՝ օպերան, սիմֆոնիան, սոնատը, կանտատը և այլն, այլև դույզն ինչ նսեմացնել նրանց կարևորությունը: Դասական երաժշտության բնագավառում տիրապետում էին այնպիսի հսկաներ, ինչպես Դ. Շոստակովիչը և Ա. Խաչատրյանը: Նոր փուլ սկսվեց ջազի ծաղկման և համաշխարհային տարածման բնագավառում, որի փայլուն ներկայացուցիչներն են Դյուկ Էլինգտոնը, Լուի Արմստրոնգը, Էլլա Ֆիտցջերալդը, Բենի Գուտմանը, Արտեմի Այվազյանը, Էդի Ռոզները, Գ. Գարանյանը, մեր օրերում ռոքը, շնորհիվ Փրեսլիի բարձր կատարողականության, որոշ չափով նաև ռեփը և այլ ուղղություններ:

Թատրոնը և կինոն

Չնայած բազմաթիվ կանխագուշակումների, թե թատրոնը մահանում է, այդուհանդերձ, արվեստի այդ՝ թերևս ամենահին ժանրը պահպանում է իր գոյությունը, արվեստի պահանջված տեսակ է և շարունակաբար զարգանում է: Մոսկվայում, Լոնդոնում, Փարիզում և Նյու Յորքում կան բարձր մակարդակի վրա գտնվող թատրոններ, որոնք անընդհատ փնտրում են կատարելագործման նոր ուղիներ: Այդպիսի թատրոններից է Մոսկվայի՝ երբեք չխամրող հայազգի Եվգենի Վախթանգովի անունը կրող թատրոնը:

Վախթանգովի թատրոնը Մոսկվայում

Արվեստի համեմատաբար նոր ժանր է կինոարվեստը, որը շատ կարճ շրջանում նվաճեց միլիոնա-

Դրվագ Սպիլբերգի «Լինկոլն» ֆիլմից

Սոֆի Լորեն (Իտալիա)

վոր մարդկանց սերն ու համակրանքը: Ժանրային առումով այն տարատեսակ է՝ գեղարվեստական, փաստագրական, մուլտիպլիկացիոն, երաժշտական և այլն: Նրա լսարանը սահմաններ չի ճանաչում և այդ առումով ամենաժողովրդական արվեստն է: Քննարկվող ժամանակաշրջանում միջազգային մեծ ճանաչում ստացան ամերիկյան մի շարք կինոռեժիսորներ՝ Ս. Կրամերը, Ս. Սպիլբերգը, Ֆ. Կոպպոլան, Ռ. Սամուլյանը և ուրիշներ: Մեծ հռչակ ձեռք բերեցին Ռ. Ռոսելինիի, Դե Սիկայի, Լ. Վիսկոնտիի, Մ. Անտոնիոնիի, Բ. Բերտոլուչիի (իտալական կինոդպրոց), Կուրոսավայի (Ճապոնիա) և Ի. Բերգմանի (Շվեդիա) գեղարվեստական ֆիլմերը: Կինոարվեստի երկնակամարում փայլատակեցին այնպիսի աստղեր, ինչպիսիք էին՝ Գրետա Գարբոն, Մերիլին Մոնրոն, Մառլոն Բրանդոն, Շերը (Շերիլին Սարգսյան, ԱՄՆ), Անա Սանյանին, Սոֆի Լորենը, Մարչելլո Մաստրոյանին (Իտալիա), Ժան Գաբենը, Բրիջիտ Բարդոն (Ֆրանսիա), Վիվիան Լին, Չարլզ Լոուտոնը (Անգլիա) և այլք: Անզուգական վարպետների և բեմադրիչների առաջին շարքերում էին Ֆեդերիկո Ֆելինին, Սերգեյ Փարաջանովը, Անդրեյ Տարկովսկին, Ա. Փելեշյանը և ուրիշներ:

Ճարտարապետություն

Տեղի ունեցավ ճարտարապետական մտքի վերակողմնորոշում: Ձևավորվեց հետմոդեռնիստական ճարտարապետների մի բույլ, որը հիմք դրեց ճարտարապետական նոր ձևերի և համարձակ լուծումների, օգտագործելով շինարարական նոր նյութեր և կոնստրուկցիաներ: Շինարարության ոլորտում ներդրվում են շինարարական արդի մեքենաներ և հանգույցներ: Խոշոր քաղաքներում սովորական է դարձել զանգվածային թաղամասերի կառուցումը՝ համապատասխան վարչական, մշակութային կենտրոններով, հանգստի գոտիներով, երեխաների համար նախատեսվող խաղահրապարակներով և

կանաչապատումով: Կառուցապատման համալիր մեթոդը ներառում է ճանապահարշինարարությունը, վերելակային համակարգը, ձայնամեկուսացման արդի մեթոդները և այլն: Ճարտարապետական ուրույն կենտրոններ են գետնուղիները և դրանց կայարանները՝ իրենց ներքին ճաշակավոր, գեղարվեստական հարդարանքներով: Լայն տարածում ստացավ երկնաքերերի կառուցումը: Արդի ճարտարապետությունը հենվում է Լ. Կորբյուզեի, Վան դեր Ռոենի, Գրոպլիուսի, Ֆ.Ռայթի ու Կ. Հալաբյանի տեսադրույթների և բազմամյա փորձառության վրա:

Եկեղեցի Սեն Պերիում, ճարտարապետ Լ. Կորբյուզե

Փոփոխություններ մարդկանց ապրելակերպում

Կարելի է ասել. որ արմատապես փոխվել է մարդկանց ապրելաձևը, գոնե այն մասով, որը վերաբերում է պահանջների բավարարմանը: Մարդկանց, այդ թվում և հայ մարդուն, անկախ նրա ազգային-հայրենասիրական զգացմունքներից, այլևս չեն հրապուրում «մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև» (Ե.Չարենց): Նրանք բոլորը ձգտում են ապրել քաղաքակիրթ պայմաններում և վայելել բարեկեցիկ կյանք: Դրանում մեծ է համապատասխան ապրելատեղի, բնակարան ունենալու խնդիրը: Մարդն այժմ ուզում է ունենալ իր սեփական բնակարանը՝ բոլոր հարմարություններով, կահկարասիով և կահույքով: Իհարկե, անպայման ավտոմեքենա, առանց որի աշխարհի շատ երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում, անհնար է տեղաշարժվել: Ժամանակակից մարդն ուզում է ապրել հոգևոր-մշակութային լիարժեք կյանքով, օգտվելով կյանքի ընձեռած բոլոր հարմարություններից:

Մարդկանց ապրելակերպում մեծ փոփոխություններ առաջ բերեց հեռուստատեսությունը, որի շնորհիվ յուրաքանչյուր մարդու տուն են մտնում թատրոնը, կինոն, համերգը, սպորտը և այլն: Նա այլևս աշխարհից կտրված մարդը չէ, նա այժմ վիթխարի ծավալներով ինֆորմացիա է ստանում աշխարհի բոլոր իրադարձությունների վերաբերյալ, ծանոթանում այլ ժողովուրդների սովորույթներին, նիստուկացին, ապրելակերպին, սննդի տեսակներին, հագուստին և դրանցից վերցնում է այն

ամենը, ինչը համարում է իրեն օգտակար:

Հիրավի, համաշխարհային մասշտաբով նոր հնարավորություններ են բացվում բոլորի առջև գլոբալիզացիայի մեր դարաշրջանում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են մշակույթի զարգացման նոր միտումները XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին: Փորձեք պարզել այդ միտումները կանխորոշող գործոնները:
2. Հիմնարար գիտությունների ո՞ր բնագավառները պահպանեցին իրենց դիրքերը: Գիտական ի՞նչ նոր ուղղություններ առաջացան: Ո՞ւմ հայտնագործությունները դրվեցին տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հիմքում: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ուղղությամբ է գնալու ՏՏ-ի հետագա զարգացումը: Բերեք փաստեր ձեր տեսակետի օգտին: Գիտնականներից ո՞ւմ եք դուք ավելի շատ գնահատում: Ի՞նչ գիտեք նրա մասին:
3. Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին: Փորձեք բնութագրել այն երեք ուղղությունները, որոնցով հարստացավ պատմագիտությունը: Ինչո՞վ էր պայմանավորված մի շարք հումանիտար գիտությունների դերի բարձրացումը: Հասարակական գիտությունների համակարգում ո՞ր գիտության դիրքերն է թուլացել մեր օրերում: Ձեր կարծիքով ինչի՞ հետ է դա կապված: Հումանիտար գիտություններից ո՞րն է ձեզ դուր գալիս և ինչո՞ւ: Կուզենայի՞ք զբաղվել գիտությամբ:
4. Որո՞նք են գրականության և արվեստի զարգացման բնորոշ գծերը և առանձնահատկությունները XX դարի երկրորդ կեսին և XXI դարի սկզբին: Ի՞նչ նոր ուղղություններ ձևավորվեցին նշված բնագավառներում: Փորձեք բնութագրել գրականության և արվեստի զարգացման ընթացքը արդի փուլում: Ո՞վ էր ձեր ամենասիրված գրողը, նկարիչը, երաժիշտը, դերասանը, ճարտարապետը: Ի՞նչ գիտեք նրանց մասին: Փորձեք գնահատել (արժեվորել) գրականության կամ արվեստի ձեր սիրած ստեղծագործությունը:
5. Ինչո՞վ էին պայմանավորված մարդկանց ապրելակերպում կատարված փոփոխությունները: Փորձեք գնահատել դրանք: Ձեր կարծիքով որո՞նք են մեր օրերի մարդու ապրելակերպի անբաժան մասը կազմող ոլորտները: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է ապահովել բարձր ապրելակերպ՝ մեկուսացված արտաքին աշ-

խարհից: Հիմնավորեք ձեր պատասխանը:

6. Լրացրեք «Գրականությունը և արվեստը արդի փուլում» աղյուսակը:

Բնագավառներ	**Ուղղություններ**	**Ներկայացուցիչներ**	**Ստեղծագործություններ**
Գրականություն			
Գեղանկարչություն			
Երաժշտություն			
Թատրոն, կինոարվեստ			
Ճարտարապետություն			

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Աբստրակցիոնիզմ (լատ. վերացական) – Անառարկայական ձևապաշտական արվեստի ուղղություն, որն առաջացել է XX դարի սկզբներին: Այս ուղղության արվեստագետները ձևն անջատում են բովանդակությունից (մաքուր արվեստ) և այն հռչակում առաջնային:

Ագրեսիա (լատ. հարձակում) – Ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից՝ մեկ (կամ մի քանի) պետության (ների) կողմից ուժի գործադրումը մեկ այլ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ:

Ագրեսոր – Ագրեսիա կատարող հարձակվող կողմ՝ պետություն:

Ազգային հարց – Քաղաքական, տնտեսական, իրավական, մշակութային, պատմական, գաղափարական և այլ հիմնահարցերի ամբողջություն, որն առաջանում է պետության ներսում հաղորդակցման ընթացքում տարբեր ազգերի, ժողովուրդների և էթնիկական խմբերի միջև:

Ազգայնացում – Տնտեսության ճյուղերի, մասնավոր ձեռնարկությունների, հողի և այլնի պետականացում հարկադրաբար, լիովին կամ մասնակի փոխհատուցմամբ:

Ազատ տնտեսական գոտի – Պետության կողմից իր սահմաններում առանձնացված տարածք, որտեղ օտարերկյա գործարարներին և ներդրողներին թույլատրվում է ազատ տնտեսական գործունեություն ծավալել: Այդ նպատակով պետության կողմից ստեղծվում են օրենսդրական, վարկային և այլ նպաստավոր պայմաններ:

Ազգերի բրիտանական համագործակցություն – Երկրորդ աշխարհամարտից հետո Բրիտանական գաղութային կայսրության քայքայման հետևանքով նախկինում նրա կազմի մեջ մտնող երկրներից ու տարածքներից (դոմինիոններից ու գաղութներից) Անգլիայի կողմից ձևավորված միջպետական միավորում:

Ահաբեկչություն (լատ. տեռոր, նշ. վախ, սարսափ) – Բռնության քաղաքականություն, որը կիրառվում է որպես արմատական շարժումների և կազմակերպությունների՝ քաղաքական, ազգային, կրոնական և այլնի դեմ, որպես պետական քաղաքականություն:

Ամբողջատիրություն (լատ. տոտալիտարիզմ, նշ. լրիվ, ամբողջ, բոլոր) – Ուժեղ և բռնապետական իշխանության տարատեսակ, որի ժամանակ իրականացվում է համընդհանուր վերահսկողություն հասարակության կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ:

Այաթոլլա (արաբ. – Այաթալլահ պարսկ. հնչ.՝ այաթոլլա, Աստծու նշանակ: Այաթ նշանակում է նաև ոտանավորի տող, տուն): Շիական օրենսդիրների բարձրագույն տիտղոս, որի կրողներն իրավունք ունեն ինքնուրույն դատողություններ անել և որոշումներ ընդունել կրոնական և իրավական հարցերի վերաբերյալ:

Այլախոհ (լատ. դիսիդենտ, նշ.չհամաձայնվող): Մարդ (գործիչ), որը համաձայն չէ և պայքարում է իր երկրի պաշտոնական գաղափարախոսության և քաղաքական համակարգի դեմ:

Այլընտրանք (ֆրանս., լատ. նշ. երկուսից մեկը) – Այս կամ այն հարցի լուծման ժամանակ միմյանց փոխբացառող երկու կամ ավելի հնարավորություններից մեկի ընտրության անհրաժեշտություն:

Անեքսիա (լատ. նշ. կցում, միացում) – Մեկ պետության կամ ժողովրդի տարածքի (կամ նրա մի մասի) զավթում և բռնի միացում մեկ ուրիշ պետության , մեկ պետության տարածքի մյուսի հաշվին ընդլայնելու եղանակը:

Անձի պաշտամունք – 1.Պատմական ակնավոր գործչի հեղինակության առջև կուրորեն խոնարհվելը, նրան ծառայությունների խիստ չափազանցեցումը, անհատի ֆետիշացումը, պատմական գործընթացի վրա որոշակի ազդեցություն նրան վերագրելը:

Անվերապահ կապիտուլացիա – Միջազգային իրավունքում սովորաբար կնքվում է հակառակորդի ռազմական ուժերի լիակատար ջախջախման ժամանակ, երբ պարտված պետությունը ճանաչում է այդպիսի ջախջախումը և հանձնում է ամբողջ զինված ուժերը:Հաղթող կողմը կարող է պարտված պետության գերագույն իշխանությունը ժամանակավորապես վերցնել իր ձեռքը և հաստատել օկուպացիոն ռեժիմ (Օրինակ՝ Գերմանիայի և Ճապոնիայի պարտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմում):

Ապառազմականացված գոտի – Տարածք, որտեղ արգելված է պահել հին ամրությունները և կառուցել նորերը, պահել զորքեր, անցկացնել զինավարժություններ: Ապառազմականացված գոտու ռեժիմը սահմանվում է միջազգային պայմանագրով:

Ապարտեիդ (աֆր. բուր. նշ. առանձին ապրել, գոյություն ունենալ) – Ռասիզմի յուրատեսակ դրսևորում Աֆրիկա մայրցամաքում, որի քաղաքական նպատակն էր պահպանել եվրոպական ռասայի «մաքրությունը», կանխել սպիտակամորթ և սևամորթ ռասաների համատեղ կյանքը և միաձուլումը: Ի կատարումն այդ պահանջի սևամորթների համար սահմանվեցին առանձին ապրելավայր-արգելոցներ, որոնք շատ հաճախ պատված են լինում փշալարերով:

Առճակատում (լատ. կոնֆրոնտացիա, նշ. համատեղ և ճակատ) – Սոցիալական համակարգերի, գաղափարաքաղաքական սկզբունքների և համոզմունքների հակադրություն, հակամարտություն:

Աստվածապետություն (հուն. Թեոկրատական, նշ. աստված և իշխանություն)- Կառավարման ձև, որի ժամանակ պետական և հոգևոր իշխանությունը կենտրոնացված է հոգևորականության և նրա առաջնորդի ձեռքում: Աստվածապետության օրինակ է Իրանի Իսլամական հանրապետությունը:

Ավանգարդիզմ (ֆրանս. նշ. առջևից գնացող) – XX դարի սկզբին առաջացած գեղարվեստական շարժման ընդհանուր պայմանական անվանումը, որի մեջ միավորված են արվեստի նոր ուղղությունները ու հոսանքներ (ֆովիզմ, սյուրռեալիզմ, կուբիզմ, ֆուտուրիզմ և այլն): Ավանգարդիզմին բնորոշ են գեղարվեստական պրակտիկայի արմատական նորացման ձգտումը, կապերի խզումը ռեալիստական կերպարի հնացած սկզբունքներից ու ավանդույթներից: Երկրորդ աշխարհամարտից հետո առաջ է գալիս նեոավանգարդիզմը («Աբսուրդի դպրոց», «Նոր վեպ», «Կոնկրետ պոեզիա»), որը սկսում է ձեռք բերել էլիտար բնույթ և խորանում ձևական փորձարարության մեջ:

Անշլյուս (գերմ. նշ.միացում, ներգրավվում, միավորում) – Ավստրիան Գերմանիային միացնելու բռնի քաղաքականություն, որ վարում էին գերմանական իշխանությունները: Ավստրիան Գերմանիային միացվեց 1938թ. և նրա կազմում մնաց մինչև 1945թ. ապրիլը:

Ավտորիտարիզմ (ֆրանս. լատ. նշ. իշխանություն, ազդեցություն) – Հակաժողովրդավարական քաղաքական ռեժիմ, որի ժամանակ իշխանությունը կենտրոնանում է մեկ մարդու կամ մարդկանց խմբի ձեռքին: Ավտորիտար ռեժիմի ժամանակ լրիվ կամ մասնակի բացակայում է քաղաքացիների քաղաքական ազատությունները, իրականացվում

է քաղաքական բռնարարքներ և սովորաբար զուգակցվում է անձնական դիկտատուրայի տարրերի հետ:

Արևելյան Թուրքեստանի անկախության շարժում – Չինաստանի արևմտյան շրջաններում բնակվող էթնիկ թուրքերի՝ույղուրների շարժումն անկախության համար, որը հրահրվում էր Թուրքիայի կողմից:

Աֆրիկայի տարի – Այսպես է անվանվում 1960թ., երբ Աֆրկայի տասնյոթ գաղութներ նվաճեցին քաղաքական անկախություն:

Բեռլին-Հռոմ-Տոկիո առանցք – 1936-1939թթ. ընթացքում ձևավորված ագրեսիվ եռյակ ռազմական դաշինք (խմբավորում), որի մեջ մտնում են Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան: Նրա նպատակն էր աշխարհի նոր վերաբաժանումը և համաշխարհային տիրապետության հասնելը:

Բնապահպանական շարժում – Մարդկանց սոցիալական կազմակերպության տեսակ, որը պայքարում է հանուն բնապահպանական վտանգի նվազեցման, շրջակա միջավայրի առողջացման, մարդու, հասարակության և բնության ներդաշնակեցմանը: Բնապահպանական շարժումը ավանդաբար հանդես է գալիս որպես «կանաչների», բնապահպանների և այլնի տարբեր ոչ ֆորմալ, ոչ կառավարական կազմակերպությունների քաղաքացիական նախաձեռնություն:

Բռնապետություն (լատ. դիկտատուրա, նշ. անսահմանափակ իշխանություն) – Մի մարդու կամ մարդկանց խմբի անսահմանափակ , ոչնչով չսահմանափակված իշխանություն, որը պետական ապարատի միջոցով տարածվում է հասարակության կյանքի բոլոր ոլորտների վրա և իրականացվում է հասարակության նկատմամբ կոշտ հսկողությամբ, քաղաքական բռնություններով:

Գաղափարախոսություն – Գաղափարների և հայացքների համակարգ (ամբողջություն), որն արտացոլում է հասարակության տարբեր խմբերի վերաբերմունքն իրականության հանդեպ, արտահայտում է նրանց արմատական շահերը, մտայնությունը և պահանջները:

Գերիշխանություն (հուն.հեգեմոնիա, նշ. առաջնորդություն, ղեկավարություն) – Որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության առաջատար, ղեկավար դերը մյուսների նկատմամբ:

Գիտատեխնիկական հեղափոխություն– Թռիչք գիտության, տեխնիկայի և արտադրողական ուժերի զարգացման մեջ, անցում արտադրողական ուժերի որակական նոր վիճակի՝ գիտական գիտելիքների համակարգում արմատական տեղաշարժերի հիման վրա:

Գլոբալացում (ֆր. նշ. համընդհանուր, համաշխայնացում) – Արդի աշխարհի հիմնական կողմերի միօրինակ չափանիշների հաստատում և միասնականացում՝ պայմանավորված համաշխարհային հիմնախնդիրների (ժողովրդագրական, բնապահպանական, ահաբեկչություն և այլն) լուծման անհրաժեշտությամբ:

Գոմինդան (չին. նշ. Ազգային կուսակցություն) – Ազգային-դեմոկրատական կուսակցություն Չինաստանում, որը հիմնադրվել է 1912թ. Սուն Յաթսենի կողմից և պայքարում էր երկիրը խորհրդարանական հանրապետություն վերածելու համար:

Գործադուլ – Իրենց շահերի համար բանվոր-ծառայողների պայքարի հիմնական ձևերից մեկը, աշխատանքի կազմակերպված զանգվածային դադարեցում: Գործադուլները լինում են տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլն, հաճախ դրանք ուղեկցվում են ցույցերով, ոստիկանության, կառավարության ուժերի դեմ բախումներով:

Գրոհային ջոկատներ– Գերմանիայի նացիոնալ–սոցիալիստական բանվորական կուսակցության կիսառազմականացված միավորումներ, որոնք հանդիսանում էին ֆաշիզմի քաղաքական հակառակորդների նկատմամբ ահաբեկչության և ֆիզիկական հաշվեհարդարի գործիք:

Դեկրետ (լատ. նշ. որոշում, կարգադրություն) – 1. Պետական իշխանության կամ պետական կառավարման բարձրագույն մարմնի կողմից հրապարակվող ակտերի անվանումներից մեկը: 2. Խորհրդային իշխանության առաջին տարիներին այդպես էին կոչվում պետական կյանքի առավել կարևոր հարցերի վերաբերյալ օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների կողմից ընդունված օրենքները:

Դեմագոգիա (հուն.)– Ժողովրդական զանգվածներին ամեն տեսակ գայթակղիչ, բայց սուտ խոստումներով և քծնանքով խաբելու եղանակ:

Դիկտատուրա (լատ. նշ. անսահմանափակ իշխանություն) – Իշխանության իրականացման եղանակ, ռեժիմ և մեթոդ: Դիկտատուրան հատուկ է պետության բոլոր ձևերին: Ինչպես միապետության, այնպես էլ հանրապետության օրոք, այն արտահայտում է իշխանության իրականացման էությունը, որը հիմնվում է տնտեսապես վճռորոշ դեր ունեցող դասակարգի քաղաքական ուժի վրա: Դիկտատորական քաղաքական ռեժիմի դեպքում իշխանությունը կենտրոնանում է մի մարդու ձեռքում: Այդ դեպքում դիկտատուրան անսահմանափակ է, նրա նկատմամբ հսկողությունը բացառված:

Դիմադրության շարժում – Երկրորդ աշխարհամարտի տարիներին հայրենասիրական, ազատագրական, հակաֆաշիստական շարժում գերմանական, իտալական, ճապոնական և այլ զավթիչների դեմ նրանց կողմից օկուպացված տարածքներում: Այդ շարժմանը մասնակցում է բնակչության բոլոր խավերը (բանվորներ, գյուղացիներ, մտավորականներ, հոգևորականներ և այլն) և ամենատարբեր հայացքների ու համոզմունքներ ունեցող մարդիկ:

Դոգմատիզմ, **դոգմատիկ մոտեցում** (հուն.) – Դոգմաների վրա հիմնված հայացքների համակարգ, քարացած բանաձևերով և դրույթներով մտածելը՝ առանց հաշվի առնելու կոնկրետ պայմանների փոփոխությունը: Դոգմատիզմի հիմքում ընկած է հեղինակությունների նկատմամբ կույր հավատը, հնացած դրույթների բացարձակացումը:

Դոկտրինա (լատ.նշ. ուսմունք, սկզբունք) – 1. Ուսմունք, գիտական կամ փիլիսոփայական տեսություն, հայացքների համակարգ: 2. Քաղաքական համակարգ, քաղաքական ղեկավար ծրագիր, հիմնական սկզբունքների, հայացքների ամբողջություն:

Դոմինիոն (անգլ.նշ. տիրույթ) – Նախկին բրիտանական կայսրության ինքնակառավարվող մաս հանդիսանող տարածք կամ երկիր, որը մինչև դոմինիոնի իրավունքներ ստանալը, համարվել է Մեծ Բրիտանիայի գաղութ (օրինակ՝ Կանադան, Ավստրալիական միությունը և այլն): Դոմինիոն պետության ղեկավարը համարվում էր Անգլիայի թագավորը, իսկ անմիջական կառավարումն իրականացնում է թագավորի նշանակած գեներալ–նահանգապետը: Անկախություն ձեռք բերելուց հետո նախկին դոմինիոնները մտան «Ազգերի Բրիտանական համագործակցության» մեջ: Դոմինիոն տերմինը փաստորեն այսօր դուրս է եկել գործածությունից:

Ենթամանդատային տարածք – Գաղութային համակարգի մեջ մտնող այն երկրները և տարածքները, որոնց համար Ազգերի լիգայի կողմից սահմանվել է մանդատային կառավարման ձև:

Երրորդ աշխարհ – Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի տնտեսական և քաղաքական անկախ զարգացման ուղին թևակոխած երկրների պայմանական անվանումը տնտեսագիտական և քաղաքական գրականության մեջ: Այդ անվանումը շրջանառության մեջ մտավ 1960-ական թթ.: Այս տերմինով աշխարհը բաժանվեց երեք ճամբարների՝ սոցիալիստական, կապիտալիստական և երրորդ աշխարհի: Երրորդ աշխարհի երկրների անհավասարաչափ զարգացումը հարկադրեց այդ երկրները խմբավորել ըստ զարգացման մակարդակների առանձնահատկությունների, որից հետո այդ տերմինը կորցրեց իր նշանակությունը:

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ)– տեղեկատվության հաղորդման համակարգ, որն ապահովում է տեղեկատվության փոխանցումը, տպագրական, էլեկտրոնային, տեխնիկական, պատկերային և այլ միջոցներով:

Էթնոքաղաքական հակամարտություններ – Զանգվածային, ազգային, անջատողական շարժումներ և բախումներ, որոնք առկա են գրեթե բոլոր մայրցամաքների բարդ էթնիական կազմ ունեցող երկրներում (Աշխարհի 45 երկրներում ավելի քան 200 հակամարտություն): Այդ հակամարտությունները կարող են վերածվել ցեղասպանության կամ էթնիկ զտման՝ այսինքն իրենց հողերից բնիկների արտաքսման:

Էտատիզմ (ֆրանս. նշ. պետություն) – 1. Քաղաքական մտքի ուղղություն, որը պետությունը դիտում է որպես հասարակության զարգացման բարձրագույն արդյունք: 2. Երկրի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում և գործունեության մյուս ոլորտներում պետության դերի ուժեղացում և ակտիվ մասնակցություն:

Էքսպանսիա (Լատ. նշ. ընդարձակում, տարածում) – Քաղաքականություն, որի նպատակն է ընդլայնել իր ազդեցությունը ուրիշ երկրներում: Էքսպանսիան իրականացվում է տնտեսական, դիվանագիտական և ռազմական մեթոդներով: Այն հետապնդում է ուրիշ ժողովուրդների ստրկացման, նոր տարածքներ, ապրանքների վաճառահանման և կապիտալների ներդրման շուկաներ, հումքի աղբյուրներ նվաճելու նպատակ:

Էքսպրեսիոնիզմ (լատ. նշ. արտահայտչականություն) – XX դարի առաջին կեսի գեղարվեստական ուղղություններից: Առաջացել է Գերմանիայում և բնութագրվում է անբնական երևույթների նկատմամբ զգացմունքային հագեցվածությամբ, որը դրսևորվում է գույնի ու ձայնի միջոցով, արտահայտում է անհատի դժգոհությունն ու բողոքը իրականության ու պատերազմի մղձավանջի դեմ (Է. Կիրխներ և Է Նոլդիեն):

Ընդդիմություն (լատ. օպոզիցիա, նշ. հակադրություն) – Ուրիշների հայացքներին ու քաղաքականությանն իր հայացքների և քաղաքականության հակադրում, հակագործողություն՝ մարդկանց խումբ, որոնք դուրս են գալիս իշխանությունների քաղաքական կուրսի կամ որոշման դեմ, չեն պաշտպանում նրանց քաղաքականությունը:

Ինդրուստրիացում (լատ. նշ. գործունեություն), **արդյունաբերացում** – Տնտեսապես հագեցված արդյունաբերական ճյուղերի ստեղծում, նոր գործարանների, ֆաբրիկանների, երկաթուղիների կառուցում, որպիսիք չունի երկիրը, հասնել նրան, որ տնտեսության մեջ իշխող դառնա արդյունաբերությունը:

Ինտերվենցիա (լատ. նշ. ներխուժում)– Մեկ կամ մի քանի պետությունների բացահայտ (կամ գաղտնի, քողարկված) միջամտությունը մեկ ուրիշ պետության ներքին գործերին: Ինտերվենցիան կարող է իրականացվել ռազմական, տնտեսական և դիվանագիտական միջոցներով:

Իշխանության բաժանում – սկզբունք, որի համաձայն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները պետք է անկախ լինեն միմյանցից:

Լոկալ (լատ. նշ. տեղային, տվյալ վայրին հատուկ) **պատերազմներ** – «Սառը պատերազմին» ուղեկցող տարածաշրջանային պատերազմներ, որոնք ընդգրկում են սահմանափակ տարածքներ և առանձին երկրներ (օրինակ՝ Իսրայելի ագրեսիան Մերձավոր Արևելք): Լոկալ պատերազմները կարող են կայծ դառնալ համաշխարհային պատերազմի բռնկման համար:

Խունվեյբիններ (կամ կարմիր պահնորդականներ) – Սովորող երիտասարդության ռազմականացված կազմակերպություն Չինաստանում, որոնց առաջնակարգ տեղ էր հատկացվել «կուլտուրական հեղափոխությանե անցկացման, կուսակցական, պետական և հասարակական մարմիններին հալածանքների ենթարկման գործում:

Խունտա (իսպ. նշ. ժողով, միավորում) – Իսպանախոս երկրներում դավադիրների (զինորականներ) խումբ, որն իշխանության է հասնում պետական հեղաշրջման ճանապարհով և կառավարում է բռնապետական մեթոդներով: Իշխանության գործադիր մարմին մի շարք լատինամերիկյան երկրներում:

Ծայրահեղականություն (լատ. էքստրեմիզմ, նշ. ծայրահեղ, արտակարգ)- Նվիրվածություն այն հայացքներին և գործողություններին, որոնք մերժում են ընդունված նորմերն ու կանոնները: Քաղաքականության մեջ ծայրահեղականությունը դրսևորվում է արմատական սոցիալական, ազգային և կրոնական շարժումներում:

Կայծակնային պատերազմ (գերմ բլից-կայծակ, կրիգ-պատերազմ) – Ագրեսիվ պատերազմավարության տեսություն, որը մշակվել են գերմանական ռազմամոլները: Այդ տեսության համաձայն՝ պատերազմում հաղթանակի կարելի է հասնել ամենակարճ ժամկետում մինչև հակառակորդը կհասցնի մոբիլիզացնել իր զինված ուժերը:

Կապիտուլացիա (լատ. նշ. դիմադրության դադարեցում) – Հաղթող կողմի պայմաններով դիմադրության դադարեցում ռազմական գործողությունների թատերաբեմում, անձնակազմի, սպառազինության, ամրացած ռազմական կետերի, անձնակազմի հանձնում հակառակորդին: Կապիտուլացիայի ժամանակ տնտեսական և քաղաքական պարտավորությունները դրվում են պարտված կողմի վրա:

Կոալիցիա (լատ. նշ. միավորում, համաձայնություն, դաշինք) – պետությունների, քաղաքական կուսակցությունների և այլ կազմակերպությունների միավորում, համաձայնություն, որը կնքվում է քաղաքական, տնտեսական և ռազմական ընդհանուր նպատակներին հասնելու համար:

Կոալիցիոն կառավարություն – Միացյալ կառավարություն, որը կազմվում է տարբեր քաղաքական ուժերի և կուսակցությունների ներկայացուցիչներից՝ նրանց փոխհամաձայնության արդյունքում:

Կոլեկտիվացում – 1920-1930-ական թթ. ԽՍՀՄ-ում իրականացված գյուղատնտեսության բռնի վերափոխման քաղաքականություն՝ կուլակաթափության և տնտեսության կոլեկտիվ ձևերի տարածման հիման վրա, որն ուղեկցվում էր գյուղացիական սեփականության նշանակալից մասի հանրայնացմամբ:

Կոլտնտեսություն – Մանր գյուցիական տնտեսությունների միավորմամբ ստեղծված կոոպերատիվ կազմակերպություն, որը հիմնված է արտադրության հանրային միջոցների և կոլեկտիվ աշխատանքի վրա ու ապահովում է գյուղատնտեսական արտադրության կառավարումը հենց կոլտնտեսականների կողմից:

Կոմունիստական ինտերնացիոնալ (կոմինտերն)- Բանվոր դասակարգի միջազգային հեղափոխական կազմակերպություն, որը միավորում էր տարբեր երկրների կոմունիստական (բանվորական) կուսակցություններին: Այն ստեղծվել է 1919թ.

մարտին Վ. Լենինի նախաձեռնությամբ Մոսկվայում գումարված Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի 21 երկրների կոմկուսների ներկայացուցիչների խորհրդաժողովում: Կոմինտերնի գլխավոր նպատակն էր պայքարը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար:Կոմինտերն գործեց մինչև 1943թ. և մի շարք պատճառներով լուծարվեց:

Կոնստրուկտիվիզմ (լատ. նշ. կազմում, կառուցում) – Ուղղություն արվեստում 1920-ական թթ., որում առաջ քաշվեց մարդուն շրջապատող միջավայրի նախագծման խնդիրները՝ ձգտելով իմաստավորել նորագույն տեխնիկայի ձևաստեղծման հնարավորությունները, նրա բնական նպատակահարմար կառուցվածքները (ճարտարապետական նախագծեր, կահույք, ամանեղեն, հագուստի մոդել, նկարներ գործվածքի համար, «հաստոցներ» բեմում դերասանի աշխատանքի համար): Կոնստրուկտիվիզմի զարգացման հետևանքով արվեստում առաջացավ դիզայնը, որի առաջին լաբորատորիան բացվել է Գերմանիայում:

Կոնցեպտուալիզմ – Նոր ավանգարդիստական ուղղություն, որը տեսողական տեղեկատվությունը և արվեստը դիտում է որպես հաղորդակցություն:

Կոնցեսիա (լատ. նշ. թույլտվություն, զիջում) – Պայմանագիր, որով պետությանը պատկանող բնական հարստությունները, ձեռնարկությունները և տնտեսական այլ օբյեկտներ արտադրական գործունեության իրավունքով շահագործման են հանձնվում օտարերկրյա ֆիրմաներին և ընկերություններին: Կոնցեսիա ստացողները դառնում են պետական օբյեկտների ոչ թե սեփականատեր, այլ վարձակալ:

Կոռուպցիա (լատ. նշ. կաշառակերություն) – Պաշտոնական անձի կողմից իր պաշտոնի հետ կապված իրավունքների ուղղակի օգտագործում անձնական հարստացման համար, պաշտոնատար անձանց, քաղաքական գործիչների կաշառակերություն, ծախվածություն:

Կոոպերացիա (լատ. համագործակցություն) – 1. Աշխատանքի կազմակերպման ձև, որի ժամանակ մարդիկ կամ տնտեսությունները միավորվում են միևնույն կամ տարբեր գործընթացներ համատեղ կատարելու համար: Կոոպերատիվ միավորումների ձևերից են արտադրական, վարկային, բնակարանային, սպառողական կոոպերատիվները:

Կուբիզմ (ֆրանս. նշ. խորանարդ) – Առաջնային ուղղություն XX դարի առաջին քառորդին կերպարվեստում: Կուբիստները աշխարհը պատկերացնում են պարզ երկրաչափական կառուցվածքների ձևով՝ աղավաղելով իրական առարկաների պատկերները:

Կուլակաթափություն – Կոմունիստական կուսակցության քաղաքականություն գյուղում, երկրի գյուղական բնակչության ունևոր և միջին խավերի վերացման նպատակով նրանց հողի, արտադրության միջոցների, ունեցվածքի բռնագրավում, ամբողջ ընտանիքով արտաքսում գյուղից և անբարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող հատուկ շրջաններում նրանց բնակեցում:

Կուլտուրական հեղափոխություն – 1. 1920-1930-ական թթ. արմատական փոփոխություն Խորհրդային երկրի հոգևոր զարգացման մեջ, սոցիալիստական վերափոխման լենինյան պլանի բաղկացուցիչ մաս:Կուլտուրական հեղափոխությունը ներառում էր կրթության սոցիալիստական համակարգի ստեղծումը, խորհրդային մտավորականության ձևավորումը, մարքսիստական գաղափարածոնության հաստատումը, կենցաղի վերակառուցումը: 2. 1960-ական թթ կեսերից Չինաստանում Մաո

ցզեդունու կողմից իրականացվող կոշտ հեղափոխական քաղաքականություն, որի նպատակը երկրում առաջացած դժգոհության և սոցիալ-քաղաքական ճգնաժամի հաղթահարումն էր ու կոմունիստական կուսակցության ղեկավարության մեջ ձևավորված ընդդիմության վերացումը:

Հակակոմինտեռնյան պակտ – 1936թ. նոյեմբերի 25-ին Բեռլինում Գերմանիայի և Ճապոնիայի միջև կնքված պայմանագիր, որի նպատակն էր համատեղ պայքարը կոմունիստական ինտերնացիոնալի և միջազգային կոմունիստական շարժման դեմ:Այս պայմանագրի գաղտնի հոդվածները նախատեսում էին Խորհրդային Միության դեմ համատեղ պայքարի միջոցառումներ: Մեկ տարի հետո պակտին միացավ Իտալիան, իսկ հետագայում այլ պետություններ:

Հակակոմունիզմ – Ֆաշիզմի գաղափարախոսության և քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը, որն ուղղված էր կոմունիստական շարժման, ԽՍՀՄ-ի և սոցիալիստական կարգերի դեմ:

Համադաշնություն (լատ. կոնֆեդերացիա, նշ. պայմանագրով միավորել, կապել) – Պետական կառուցվածքի ձև, որոշակի նպատակների (ռազմական, արտաքին քաղաքական և այլն) հասնելու համար ստեղծված ինքնիշխան պետությունների միություն: Համադաշնությունն օժտված չէ ինքնիշխանությամբ և նրա ստեղծումը չի հանգեցնում նոր պետության առաջացման: Համադաշնությունը չունի միասնական սահման, միասնական քաղաքականություն և ընդհանուր սահմանադրություն: Նրա կազմավորման իրավաբանական հիմքը համադաշնային պայմանագիրն է:

Համաշխարհային սոցիալիստական համակարգ – ԽՍՀՄ-ի և դաշնակից երկրների սոցիալ-տնտեսական համակարգ, որով աշխարհը բաժանվեց երկու բևեռի՝ սոցիալիստականի և կապիտալիստականի:

Համընդհանուր (համաշխարհային) հիմնախնդիրներ – Ժամանակակից աշխարհում երկրների և ժողովուրդների առջև ծայացած և նրանց շահերը շոշափող հիմնախնդիրներ, որոնք սպառնում են մարդկության գոյությանը և դրանք հնարավոր չէ լուծել առանց աշխարհի ժողովուրդների միավորման և համատեղ ջանքների: Այդ հիմնախնդիրներից են միջազգային ահաբեկչությունը, ցեղասպանությունը, թմրամոլությունը, ժողովրդագրությունը, շրջակա միջավայրի պահպանությունը, բնական ռեսուրսների ճիշտ օգտագործումը, բնական աղետները, վտանգավոր հիվանդությունները և այլն:

Հայտեք (բարձր տեխնոլոգիա) – 1970-1980-ական թթ. ճարտարապետական մտքի վերակողմնորոշման արդյունքում առաջացած ուղղություն, որը շինարարության ժամանակ օգտագործում է տեխնիկական միջոցներ և տարբեր տեսակի կառուցվածքներ:

Հավաքական անվտանգության պայմանագրային կազմակերպություն (ՀԱՊԿ) – ԱՊՀ-ի կառույց, որը կազմումը ընդգրկված պետությունների գլխավոր խնդիրն է ապահովել անդամ երկրների ազգային անվտանգությունը: Եթե ՀԱՊԿ-ի որևէ պետություն ենթարկվի հարձակման, ապա նրա անդամ մյուս երկրները դա կդիտեն հարձակում իրենց վրա և բոլոր միջոցներով կօգնեն ագրեսիայի զոհին:

Հատուկ աքսորաբնակներ – Խորհրդային քաղաքացիների հատուկ կատեգորիա, որոնք հարկադրական կարգով, կառավարության որոշմամբ վերաբնակեցվել են իրենց մշտական բնակության վայրերից առանձին վայրեր մշտապես կամ որոշակի ժամկետով և գտնվել են ոստիկանական մարմինների հսկողության տակ:

Հետմոդեռնիզմ – Ուղղություն 1970-1980-ական թթ. արվեստում, մասնավորապես ճարտարապետության մեջ: Այն հիմնված է ճարտարապետական մտքի վերակողմնորոշման վրա (խոշոր ներկայացուցիչներն են Կորբյուզիեն, Ֆ Ռայթը և ուրիշներ):

Հիպերռեալիզմ (հուն. նշ. գեր -վերռեալիզմ) – 1960-ական թթ. առաջացած նոր ավանգարդիստական ուղղություն, որը ծագելով պոպ-արթից ձգտում է հասնել պատկերի լուսանկարչական ճշմարտացիության: Այս ուղղության նշանավոր ներկայացուցիչներն են Չ. Քլոզը, Ֆ. Ներտչը և ուրշները

«Զնհալ» – ԽՍՀՄ-ի պատմության մեջ այսպես է անվանվում Ստալինի մահից մինչև 1964թ. ընկած ժամանակահատվածը, երբ Ն. Խրուշչովի գլխավորությամբ երկրում կատարվեցին մի շարք բարեփոխումներ՝ հաղթահարվեց անհատի պաշտամունքը, թուլացավ կոմկուսի գաղափարական թելադրանքը, հաստատվեց հարաբերական ազատություն, աշխուժացան հասարակական կամակերպությունների աշխատանքները և այլն:

Մանդատային (լատ. նշ. լիազորություն, հանձնարարություն) **համակարգ**– Ազգերի լիգայի կողմից միջազգային պրակտիկայում մտցված կառավարման համակարգ, որը կիրառվեց Օսմանյան կայսրության և Գերմանիայի նախկին գաղութների և ենթակա երկրների նկատմամբ: Մանդատը, որպես կառավարման ձև, տրվում էր արևմտյան որևէ զարգացած պետության (Անգլիա, Ֆրնասիա և այլն) նախկին գաղութային երկրները կառավարելու համար՝ մինչև նրանք կհասունանային այդ գործի համար:

Մարդու իրավունքներ – Քաղաքացիական իրավունքների և քաղաքական ազատությունների ամբողջություն, ինչպես նաև մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Այս հասկացության բովանդակությունը XX դարի վերջին որոշվում է մարդու համընդհանուր հռչակագրով և ՄԱԿ-ի կողմից ընդունված մյուս փաստաթղթերով:

«Մարշալի պլան» – ԱՄՆ-ի պետքարտուղար Դ. Մարշալի կազմած պլանը, որի համաձայն ԱՄՆ-ը պետք է ֆինանսական օգնություն ցույց տար Եվրոպայի պատերազմից տուժած նրա տնտեսությունը վերականգնելու համար: 1948-1951թթ. Եվրոպայի երկրները, ըստ Մարշալի պլանի, ստացան ավելի քան 12 մլրդ դոլար: Մարշալի պլանը նպատակ ուներ վարկերի և փոխառությունների միջոցով այն ստացող երկրներին կախման մեջ դնել ամերիկյան կապիտալից և ստիպել նրանց հետևելու ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությանը:

Մարտական խաչեր – Ֆաշիստական կազմակերպություններ Ֆրանսիայում, որոնք բացահայտ անվստահություն էին դրսևորում պառլամենտարիզմի նկատմամբ: Նրանք պաշտպանում էին պառլամենտական կարգերը բռնի ուժով վերացնելու և ամբողջատիրական վարչակարգ հաստատելու տեսակետը.

Մենաշնորհ (հուն. մոնոպոլիա, նշ. մենակ վաճառել) – 1. Ինչ որ գործունեության մի մարդու պատկանող բացառիկ իրավունք, արդյունաբերության մեջ ձեռնարկությունների կամ ընկերությունների միավորում, որոնք մեկ կամ մի քանի ճյուղերի շրջանակում իրենց ձեռքում են կենտրոնացնում արտադրության ու վաճառքի հսկողությունը:

Միաբևեռ (միակենտրոն) **աշխարհ** – ԽՍՀՄ-ի փլուզմամբ ուժերի այնպիսի հարաբերակցության առաջացում, որը հնարավորություն ստեղծեց աշխարհում հաստատելու մեկ գերտերության՝ ԱՄՆ-ի առաջնությունը:

Մոդեռնիզացիա (ֆր. նշ. արդի, ժամանակակից) – Սոցիալական փոփոխությունների և բարեփոխությունների գործընթաց հասարակության մեջ, որը համապատաս-

խանում է ժամանակակից պահանջներին: Ավելի թույլ զարգացած հասարակության փոփոխության գործընթաց, որի ժամանակ այն ձեռք է բերում ավելի զարգացած հասարակությանը բնորոշ հատկանիշներ:

Մոդեռնիզմ (լատ, նշ. նոր, ժամանակակից) – Ընդհանուր նշանակության հոսանք և ուղղություն XX դարի արվեստում, որը հրաժարվելով ռեալիստական ավանդույթներից՝ զբաղվում է նոր գեղարվեստական ձևերի և արտահայտչական միջոցների որոնումներով:

Մուլլոկրատիա (մոլլաների իշխանություն) – Բարձրագույն հոգևորականության ձեռքն անցած քաղաքական իշխանություն Իրանում:

Նացիոնալիզմ (լատ. նացիա, նշ. ազգ, ժողովուրդ) – Հայացքների համակարգ, հիմնված ազգային բացառիկության, մի ազգի նկատմամբ մյուսի գերազանցության գաղափարների վրա, որը մարմնավորվում է գաղափարախոսության և քաղաքական պրակտիկայի մեջ: Նացիոնալիզմը դրսևորվում է տարբեր ձևերով և տարբեր մակարդակներով՝ պետականից մինչև կենցաղ:

ՆԷՊ (ռուս. հապավում Նովայա էկոնոմիչեսկայա պոլիտիկա – Նոր տնտեսական քաղաքականություն)–1921–1929թթ. Խորհրդային երկրում իրականացված քաղաքականություն և տնտեսական միջոցառումների համակարգ, որը նյութական խթաններ էր ստեղծում ազատ շուկայական հարաբերությունների և գների ազատականացման հիման վրա քաղաքացիական պատերազմի տարիներին քայքայված տնտեսության վերականգնման և զարգացման համար:

Շովինիզմ (ֆր. ազգայնամոլություն)– Ազգայնամոլության, ծայրահեղ նացիոնալիզմի ռեակցիոն քաղաքականություն, որին բնորոշ է ազգային բացառիկությունը, մի ազգի շահերը մյուս ազգի շահերին հակադրելը, ազգային ատելություն ու թշնամության բորբոքելը: Շովինիզմի ու նացիոնալիստական ծայրահեղության զանազան դրսևորումներից են մեծապետական շովինիզմը, սոցիալ-շովինիզմը, սիոնիզմը և այլն:

Շուկայական տնտեսություն – Սոցիալ-տնտեսական համակարգ, որի հիմքում ընկած են մասնավոր սեփականությունը և ապրանքադրամական հարաբերությունները:

Չեզոք գոտի– Տարածքի այն հատվածը, որը բաժանում է երկու պետության կամ նրանց զինված ուժերին: Այնտեղ կողմերից ոչ մեկն իրավունք չունի զորքեր պահել և որը չի կարող ռազմական գործողությունների թատերաբեմ դառնալ: Այդպիսի գոտին սահմանվում է, օրինակ, զինադադարի ժամանակ:

Չեզոքություն (նեյտրալիզմ գերմ., լատ. նշ. ոչ մեկին, ոչ մյուսին չպատկանող) – Միջազգային իրավունքում երկու կողմերի միջև մղվող պատերազմին չմասնակցելը և նրանց միատեսակ խաղաղ հարաբերություններ պահպանելու պետության քաղաքական և իրավական դրություն:

«Չմիջամտություն» – Ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական սկզբունք և ՄԱԿ-ի կանոնադրական պահանջ, որով ոչ մի պետություն կամ պետությունների խումբ իրավունք չունի ուղղակի կամ անուղղակի խառնվելու ուրիշ պետությունների ներքին գործերին: Նման գործողությունը դիտվում է որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտում:

«Չորսի մոդեռնիզացիա» – Չինաստանում Դեն Սյաոպինի և նրա համախոհների կողմից որդեգրած իրատեսական քաղաքականություն, որն ուղղված էր ժամանակակից գիտության և տեխնիկայի նվաճումների հիման վրա երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության և պաշտպանության արդիականացմանը:

Պարենհարկ – Գյուղացիական տնտեսություններից պարենմասնատրման փոխարեն 1921-1923թթ. գանձվող բնամթերային հարկ Խորհրդային Ռուսաստանում և մյուս խորհրդային հանրապետություններում: Ըստ պարենհարկի մասին օրենքի՝ սահմանված հարկը վճարելուց հետո գյուղացին ազատորեն տնօրինում էր մնացած բերքը:

Պարենմասնատրում – Գյուղատնտեսական արտադրության արդյունքների մթերման համակարգ, որը Խորհրդային Ռուսաստանը կիրառեց քաղաքացիական պատերազմի տարիներին: Ըստ պարենմասնատրման համակարգի՝ գյուղացիները պարտավոր էին տնտեսական կարիքների և անձնական սպառման համար սահմանված չափաբաժնից ավելի արտադրված հացը և այլ մթերքներն ու ապրանքները ցածր և կայուն գներով հանձնելու պետությանը:

Պոպ-արթ – 1960-ական թթ. նոր ուղղություն արվեստում, որը ստեղծվեց որպես հակակշիռ ամերիկյան էքսպրեսիոնիզմին: Սրա կողմնակիցների կարծիքով՝ ամեն իր կարող է արվեստի առարկա լինել: Այդ առարկայական արվեստն ուղղված էր զանգվածներին (նշանավոր ներկայացուցիչներն են Ջ. Ջոնսը, Յ. Օլդենբուրգը և ուրիշներ):

Պրոլետարիատի դիկտատուրա – Բանվոր դասակարգի իշխանություն, որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության ընթացքում և հետապնդում է սոցիալիզմի կառուցման նպատակ: Պրոլետարիատի դիկտատուրայի առաջին ձևը եղել է Փարիզի կոմունան: Խորհրդային Ռուսաստանում խորհուրդները միավորելով բոլոր աշխատավորներին՝ բանվոր դասակարգի գլխավորությամբ դարձան պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև Առաջին աշխարհամարտից հետո:

Պրոտեկտորատ (լատ. նշ. պաշտպանություն, պահպանում)– 1. Միջազգային իրավունքում պետության կախվածության ձև, որը հաստատվում է անիրավահավասար պայմանագրով: Պայմանագրի համաձայն մի պետություն իր վրա է վերցնում ներկայացնել մյուս պետությանը միջազգային հարաբերություններում և որոշել նրա արտաքին քաղաքականությունը: 2. Գաղութային համակարգի մեջ մտնող ենթահովմանավորյալ պետություն, որն ունի իր պետական կառույցները, սակայն ընդունում է հովմանավորող պետության «խորհուրդները» և ղեկավարվում դրանց համաձայն:

Ռադիկալիզմ (լատ. նշ. արմատականություն) – Արմատական և վճռական գործողությունների և միջոցառումների կիրառում որևէ հարցի լուծման ժամանակ:

Ռազմական կոմունիզմ – 1918-1920թթ. Խորհրդային Ռուսաստանում իրականացված քաղաքականություն և տնտեսական միջոցառումների համակարգ, որի նպատակն էր արտադրության և բաշխման բնագավառներում կոմունիստական սկզբունքների հաստատումը, քաղաքի և գյուղի միջև ապրանքափոխանակության և շուկայական հարաբերությունների բացառումը:

Ռասա – Պատմականորեն առաջացած մարդկանց խոշոր խմբեր, որոնք միավորվել են ծագման և ժառանգական առանձնահատկությունների (մարմնի կառուցվածք, մաշկի գույն, գլխի ձև) ընդհանրությամբ:

Ռասիզմ– Հակահումանիստական գաղափարախոսություն, որի հիմքում ընկած է ազգերը «բարձրերի» ու «ցածրերի», «լիարժեքի» և «ոչ լիարժեքի» բաժանելու դրույթը: Ըստ այդ դրույթի՝ «բարձր» ռասաներին պատկանող ազգերը պետք է իշխեն «ցածր» ռասայի ժողովուրդների վրա: XX դարի 20-30-ական թթ. ռասիզմը Եվրոպայում նոր երանգ ստացավ՝ դառնալով ֆաշիզմի և նացիզմի կարևորագույն սկզբունքներից մեկը:

Ռազմամոլություն (լատ. միլիտարիզացիա, նշ. ռազմական) – Սպառազինությունների մրցավազքի, պետության ռազմական հզորության ավելացման, տնտեսության ռազմականացման և պատերազմի նախապատրաստման ռեակցիոն քաղաքականություն:

Ռազմատուգանք (լատ. կոնտրիբուցիա, նշ. հավաքել) – Դրամ կամ ինչ որ այլ նյութական արժեքներ, որոնք գանձվում էին պատերազմից հետո պարտված պետությունից հօգուտ հաղթող պետության: Ժամանակակից միջազգային իրավունքն արգելում է ռազմատուգանքը: Ճանաչում է ագրեսիայի ենթարկված և կորուստներ կրած պետության ռեպարացիաներ ստանալու իրավունքը:

Ռեպարացիա (լատ. նշ. վերականգնում, փոխհատուցում) – վճարումներ, որը կատարում է պարտություն կրած կողմը հաղթող պետությանը այն վնասների և կորուստների փոխհատուցման համար, որը նրան հասցվել է ռազմական գործողությունների հետևանքով: Ռեպարացիաները վճարվում են պարտություն կրած պետության հետ կնքված հաշտության պայմանագրի պայմաններով:

Ռևանշիզմ (ֆրանս. նշ. հատուցում, պարտք) – Ռեակցիոն գաղափարախոսություն և քաղաքականություն՝ ուղղված նոր պատերազմի նախապատրաստմանը՝ նպատակ ունենալով փոխհատուցել կրած պարտությունների համար և հետ վերադարձնել տարածքները, տնտեսական և քաղաքական դիրքերը:

Սիմվոլիզմ (հուն. և ֆր. նշ. պայմանական նշան)– XIX դարի 80-ական թթ. առաջացած ուղղություն արվեստի և գրականության մեջ, որի ներկայացուցիչները շեշտը դնում էին մարդու ներաշխարհի պատկերման վրա, բայց ոչ թե ռոմանտիկների նման զգացումների, այլ բանաստեղծական խոսքի, երաժշտացման և մեղեդիացման միջոցով:

Սյուրռեալիզմ (ֆրանս. նշ. գեր ռեալիզմ, վերռեալիզմ)– XX դարի 20-30-ական թթ. առաջացած խոշոր ավանգարդիստական ուղղություն, որի հիմքում ընկած էր արվեստի անբնական լինելու գաղափարը, այսինքն՝ բանականությանը չենթարկվելը: Նրանք իրենց կտավներում պատկերում էին ինչ որ երևակայական մարմինների և առարկաների անկանոն, անկարգ զուգակցություններ՝ փորձելով ստեղծել իրականության պատրանք:Սյուրռեալիստն ստեղծում է իր աշխարհը, վերիրականությունը, որը չի ենթարկվում սովորական աշխարհի օրենքներին, նրա մեջ մտնող ժամանակին և տարածությանը:Սյուրռեալիզմի նշանավոր ներկայացուցիչը Սալվադոր Դալին է:

Սոցիալիստական ռեալիզմ – Գերիշխող ուղղություն խորհրդային գրականության մեջ և արվեստում, որը գրողներից և արվեստագետներից պահանջում էր գունազարդված արտացոլել խորհրդային իրականությունը և փառաբանել այն:

Սոցիոլոգիա (լատ. նշ. հասարակական)– Գիտություն հասարակության բազմակողմանի զարգացման և մարդկանց հասարակական վարքի մասին:

Սպիտակ հեղափոխություն – Պարսիկ շահի և կառավարող վերնախավի կողմից 1960-1970-ական թթ. իրականացված բարեփոխումների անվանումը Իրանում:

Սև շեյթան (սատանա)– Իսլամական հեղափոխությունից հետո Իրանի կողմից ԱՄՆ-ին տրված անվանումը՝ որպես իրանաամերիկյան հարաբերությունների խիստ սրման արտահայտություն:

Վերակառուցում – ԽՍՀՄ-ի պատմության վերջին շրջանում իրականացված քաղաքականություն, որի նպատակն էր ժամանակակից պահանջներին համապատասխան վերափոխել սոցիալիստական համակարգը: Սակայն Մ. Գորբաչովի նախաձեռնած վերակառուցման քաղաքականությունը ձախողվեց և ԽՍՀՄ-ը փլուզվեց:

Տնտեսական մեծ ճգնաժամ – Այսպես է կոչվում կապիտալիստական երկրներում 1929թ. սկսված ամենամեծ ճգնաժամը, որը ոչ թե մասնակի, այլ համընդհանուր ճգնաժամ էր և ընդգրկում էր ոչ թե տնտեսության մի ճյուղ, այլ տնտեսությունն ամբողջությամբ և ծանր հարված հասցրեց հատկապես կապիտալիզմի միջնաբերդ ԱՄՆ-ին:

Քաղաքացիական հասարակություն – հասարակության զարգացման որոշակի աստիճան՝ ներառյալ նրանում ստեղծված ազատ անհատների ինքնադրսևորման ոլորտները և կամավոր կերպով ձևավորված ոչ պետական կազմակերպությունները (ասոցացիաները), որոնք իրենց գործունեության մեջ պետության ուղղակի միջամտությունից պաշտպանված են օրենքով:

Քաղաքացիական պատերազմ – Երկրի ներսում քաղաքական ուժերի, սոցիալական խմբերի միջև պայքարի զինված ձև, որը մղվում է պետական իշխանության գրավման համար: Քաղաքացիական պատերազմի տարածված ձևերից են ապստամբությունները, գյուղացիական և պարտիզանական պատերազմները, հեղափոխությունները:

Քաղբյուրո – ԽՄԿԿ Կենտկոմի մշտական գործող ղեկավար մարմին, որը առաջացել է 1919թ.՝ Կենտկոմի պլենար նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում առաջացած հարցերի օպերատիվ քննարկման համար: Գործնականում այն միանգամից վերածվեց պետության բարձրագույն իշխանական ինստանցիայի:

Օպորտունիզմ (լատ. նշ. հարմար, շահավետ)- Բանվորական շարժման մեջ և բանվորական կուսակցությունների ներսում տեսություն և պրակտիկա, որը հակասում է բանվոր դասակարգի շահերին և մղում նրան դեպի բուժուազիայի հետ դասակարգային համագործակցության ուղին, քարոզում հարմարվողականություն, համաձայնողականություն և անսկզբունքայնություն:

Ֆակիհ (ուլեմ) – Ղուրանի և մուսուլմանական օրենսդրության՝ շարիաթի լավագույն գիտակ և մեկնաբան, գիտնական և հոգևոր առաջնորդ:

Ֆաշիզմ (իտ. Ֆացիա, նշ. փունջ) – Առաջին աշխարհամարտից հետո Իտալիայում և Գերմանիայում առաջացած գաղափարական և քաղաքական հոսանք, որի հիմքում ընկած է մարտնչող նացիոնալիզմը, ամբողջատիրական իշխանությունը, հակակոմունիզմը: Ֆաշիզմի մարտավարության մեջ զուգակցվում են սոցիալիստական դեմագոգիայի, բռնության և ահաբեկչության մեթոդները:

Ֆյուրեր – Այսպես էին անվանում առաջնորդին, որին ֆաշիզմը օժտել էր գերբնական հատկանիշներով: Նա հասարակությունից վեր կանգնած հանճար էր, պայծառատես և կանխագուշակ փրկիչ և առաքյալ՝ մեսիա: Ֆաշիզմը փորձել է այսպես ներկայացնել Հիտլերին Գերմանիայում, Մուսոլինիին՝ Իտալիայում:

Ֆուտուրիզմ (լատ. նշ. ապագա) – XX դարում ձևավորված ավանգարդիստական ուղղություն, որը հիմնադրվել է Իտալիայում (ներկայացուցիչներ Ու. Բոչչոնի, Սևերին), որին ներկայացուցիչները ձգտում էին ստեղծել «ապագայի արվեստ», արտահայտել ժամանակը և դրա հետ կապված շարժման գաղափարը (Օրինակ՝ վազող ձին պատկերվում էր ոչ թե չորս այլ տասներկու ոտքով՝ շարժման տարբեր փուլերի համատեղման հետևանքով): Նրանք մերժում էին մարդկության ստեղծած մշակութային և գեղարվեստական արժեքները, մարդու զգացմունքների և հոգեբանության պատկերումը:Ըստ նրանց՝ արվեստի ոգեշնչման աղբյուրը պետք է լինեն ժամանակակից քաղաքը՝ իր սրընթաց տեմպով, հզոր տեխնիկան, մեքենաները:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1917թ. ապրիլ	ԱՄՆ-ի միանալը Անտանտին
1917թ. հոկտեմբերի 25 (նոյեմբերի 7)	Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը
1918թ.	Անգլիական զորքերի կողմից Իրանի հյուսիս-արևմտյան մասի գրավումը
1918-1921թթ.	Ռուսաստանում «Ռազմական կոմունիսմի» քաղաքականության կիրառումը
1918թ. հունվարի 8	ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից «Տասնչորս կետերի» հռչակումը
1918թ. օգոստոս	Անգլո-իրանական պայմանագրի ստորագրումը
1918թ. հոկտեմբերի 30	Օսմանյան Թուրքիայի կողմից Մուդրոսի զինադադարի ստորագրումը
1918թ. նոյեմբերի 11	Կոմպյենում զինադադարի ստորագրումը և Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը
1919թ.	Բենիտո Մուսոլինիի կողմից ֆաշիստական շարժման ձևավորումը Իտալիայում: - Գերմանիայում Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության հիմնադրումը
1919թ. հունվար	Լլոյդ Ջորջի գլխավորությամբ կոալիցիոն կառավարության կազմումը Մեծ Բրիտանիայում
1919թ. հունվարի 18 1920թ. հունվարի 21	Փարիզում հաշտության խորհրդաժողովի կայացումը
1919թ. հունվարի 30	Օսմանյան կայսրության կազմում գտնվող երկրները վերջնականապես անջատելու և ենթամանդատային տարածքներ հայտատարելու մասին որոշման ընդունումը «Ազգերի լիգայի» կողմից
1919թ. ապրիլ	Ֆրանսիական պառլամենտի կողմից 8-ժամյա աշխատանքային օրվա սահմանումը
1919թ. հունիսի 28	Փարիզի Վերսալյան պալատում Անտանտի և Գերմանիայի միջև հաշտության պայմանագրի կնքում: - Փարիզի խորհրդաժողովի կողմից Ազգերի լիգայի կանոնադրության հաստատումը
1919թ. սեպտեմբեր	Սեն-ժերմեն ան Լեում Անտանտի և Ավստրիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրումը
1919թ. նոյեմբեր	Նեյ Սյուր-Սենում Անտանտի և Բուլղարիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրումը
1920թ. մարտ	Վերսալյան պայմանագրի և Ազգերի լիգայի կանոնադրությունը վավերացնելուց ԱՄՆ-ի Սենատի

	հրաժարվելը
1920թ. ապրիլ	Քեմալի կողմից Անկարայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) գումարումը
1920թ. հունիսի 1	ԱՄՆ-ի Սենատի կողմից Հայաստանի մանդատի մերժումը
1920թ. հունիսի 5	Իրանի Գիլան նահանգի հռչակումը հանրապետություն
1920թ. հունիս	Վերսալում Անտանտի և Հունգարիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրումը
1920թ. օգոստոսի 10	Սևրում Անտանտի և սուլթանական Թուրքիայի միջև հաշտության պայմանագրի ստորագրումը
1921թ.	Անգլո-իռլանդական պայմանագրի ստորագրում և Իռլանդիային դոմինիոնի կարգավիճակ տալը: – Ա. Հիտլերի դառնալը Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության առաջնորդ: – Ռուսաստանում անցումը նոր տնտեսական քաղաքականությանը (նէպ)
1921–1922թթ.	Վաշինգտոնում խորհրդաժողովի կայացումը
1921թ. փետրվարի 21	Ռեզա խանի գլխավորությամբ պետական հեղաշրջման իրականացումը Իրանում
1921թ. դեկտեմբեր	Վաշինգտոնյան խորհրդաժողովում խաղաղօվկիանոսյան տիրույթների և տարածքների պաշտպանության մասին չորսի պայմանագրի ստորագրումը
1922թ.	Ֆրանսիայի կողմից Փոքր Անտանտի ձևավորումը: – Մուսոլինիի գլխավորությամբ իտալական ֆաշիստների «երթը դեպի Հռոմ»: – Մահաթմա Գանդիի ձերբակալումը բրիտանական իշխանությունների կողմից
1922թ. դեկտեմբերի 30	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության՝ ԽՍՀՄ-ի ստեղծումը
1923թ.	Ֆրանս-բելգիական զորքերի կողմից Ռուրի մարզի օկուպացումը: – Հիտլերի կողմից Մյունխենում պետական հեղաշրջման անհաջող փորձը և նրա ձերբակալումը
1923թ. ապրիլ	Քեմալի և նրա համախոհների կողմից ժողովրդական կուսակցության ստեղծումը:
1923թ. հոկտեմբերի 29	Թուրքիան հանրապետություն հռչակելու մասին օրենքի ընդունումը
1924թ.	Ռ. Մակդոնալդի գլխավորությամբ առաջին լեյբո-

	լիստական կառավարության կազմումը Մեծ Բրիտանիայում: – Պառլամենտական ընտրություններում ձախ ուժերի հաղթանակը Ֆրանսիայում: Ֆրանս-բելգիական զորքերի դուրս բերումը Ռուրի մարզից: – Ֆրանսիայի և Խորհրդային Միության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: – Թուրքական հանրապետության առաջին Սահմանադրության ընդունումը: – ԽՍՀՄ-ի առաջին Սահմանադրության ընդունումը
1924թ. օգոստոս	Լոնդոնի խորհրդաժողովում ամերիկյան կառավարության կողմից Դաուեսի պլանի ներկայացումը
1925-1928թթ.	Բարենորոգումների նոր փուլը Թուրքիայում
1925թ.	ԽՍՀՄ-ի ինդուստրացման ծրագրի ընդունումը
1925-1927 թթ.հուլիս	Հեղափոխությունը Չինաստանում և Չան Կայշիի գլխավորությամբ Ազգային կառավարության հաստատումը:
1925թ. հոկտեմբեր	Լոկարնոյում Գերմանիայի արևմտյան սահմանների ստատուս-քվոյի վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը: – Մեջլիսի կողմից Ռեզա խանի հռչակվելը Իրանի շահնշահ
1926թ.	Գերմանիայի ընդունվելը Ազգերի լիգայի անդամ
1927թ. ապրիլ	Չան Կայշիի գլխավորությամբ հակահեղափոխական հեղաշրջման իրականացումը Շանհայում և Նանկինում
1928թ.	Հուվերի ընտրվելը ԱՄՆ-ի նախագահ: – ԱՄՆ-ի և արևմտյան մյուս տերությունների կողմից Չան Կայշիի գլխավորած Գոմինդանի կառավարության պաշտոնապես ճանաչումը – Իրանի Ռեզա խանի կողմից կապիտուլյացիաների ռեժիմի չեղյալ հայտարարվելը
1929թ.	ԽՍՀՄ-ում գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության սկսումը
1929-1933թթ.	Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը
1920-ական թթ. վերջեր	ԽՍՀՄ-ում ամբողջատիրական, վարչահրամայական համակարգի հաստատումը
1930-ական թթ.	ԽՍՀՄ-ում միլիոնավոր մարդկանց աքսորումը և

	մահվան դատապարտումը:ԽՍՀՄ-ում ստալինյան դիկտատուրայի հաստատումը
1931թ. սեպտեմբեր	Ճապոնական զորքերի ներխուժումը Արևելյան Չինաստան
1932թ.	ԱՄՆ-ում գործազուրկների թվի հասնելը 13 միլիոնի: -Թուրքիայի դառնալը Ազգերի լիգայի անդամ: -Գերմանիայի կոմից ռազմատուգանքների վճարման միակողմանի դադարեցումը
1932-1933թթ.	ԽՍՀՄ-ում սովի բռնկումը
1932թ. նոյեմբեր	Ֆրանկլին Ռուզվելտի ընտրվելը ԱՄՆ-ի նախագահ
1933թ. հունվար	Ադոլֆ Հիտլերի նշանակվելը Գերմանիայի վարչապետ
1933թ. մարտ	Ճապոնիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից
1933թ. մայիս	Տանգայի պայմանագրի կնքումը, որով պաշտոնապես ճանաչվեց Հյուսիս-արևելյան Չինաստանի բռնակցումը Ճապոնիային
1933թ.	ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը
1933թ. հունիս	Արդյունաբերության վերականգման մասին օրենքի ընդունումը ԱՄՆ-ում
1933թ. սեպտեմբեր	Գերմանիայի դուրս գալը Ազգերի լիգայից և հրաժարվելը Վերսալյան պայմանագրից
1934թ.	Թուրքիայի դանալը բալկանյան Անտանտի անդամ
1934թ. հուլիս	Ֆրանսիայում ժողովրդական ճակատի ձևավորումը
1934թ. սեպտեմբեր	Խորհրդային Միության անդամակցելն Ազգերի լիգային
1935թ.	ԱՄՆ-ում սոցիալական ապահովության և պետության սոցիալական պատասխանատվության մասին օրենքի ընդունումը: - Ֆրանսիայի և ԽՍՀՄ-ի միջև փոխադարձ օգնության պայմանագրի կնքումը: - Մեծ Բրիտանիայի պալամենտի կողմից Հնդկաստանի կառավարման մասին օրենքի ընդունումը:
1935-1936թթ.	Ֆաշիստական Իտալիայի կողմից Եթովպիայի գրավումը
1935թ. օգոստոս	ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից չեզոքության մասին օրենքի ընդունումը
1936թ. գարուն	Լեոն Բլյումի գլխավարությամբ ժողովրդական

	ճակատի առաջին կառավարության կազմումը
1936թ.	Ֆրանսիայում ֆաշիստական կազմակերպությունները ցրելու մասին դեկրետի ընդունումը: – Գերմանիայի և Իտալիայի միջև ռազմական համագործակցության վերաբերյալ պայմանագրի ստորագրումը: – Գերմանական զորքերի մուտքը Հռենոսի ապառազմականացված գոտի:
1936–1939թթ.	Գերմանա-իտալական զորքերի ինտերվենցիան Իսպանիայի հանրապետության դեմ
1937թ.	Իռլանդիայի հռչակվելն անկախ պետությունը: – «Բեռլին-Հռոմ-Տոկիո առանցքի» ստեղծումը: – Ճապոնիայի կողմից Չինաստանի դեմ ագրեսիայի վերսկսումը
1938թ.	Գերմանիայի կողմից Ավստրիայի անշլյուսը՝ «միավորումը»
1938թ. հուլիս	Ճապոնական զորքերի ներխուժումը ԽՍՀՄ-ի Խասան լճի շրջան
1938թ. սեպտեմբերի 30	Սուդեթական մարզը Գերմանիային հանձնելու մասին համաձայնագրի ստորագրումը Մյունխենում («Մյունխենյան գործարք»)
1939թ.	Գերմանիայի կողմից Չեխոսլովակիայի մնացած տարածքների գրավումը:
1939թ.	Իսպանիայում գեներալ Ֆրանկոյի ֆաշիստական վարչակարգի հաստատումը: – Իտալիայի կողմից Ալբանիայի գրավումը
1939թ. մայիս	Ճապոնիայի ագրեսիան Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության դեմ
1939թ.օգոստոսի 22	Հիտլերի ելույթը Օբերզալցբուրգում
1939թ. օգոստոսի 23	Մոսկվայում գերմանա-խորհրդային չհարձակման պայմանագրի ստորագրումը
1939թ. սեպտեմբերի 1	Գերմանական զորքերի ներխուժումը Լեհաստան և Երկրորդ աշխարհամարտի սկիզբը
1939թ. սեպտեմբերի 3	Անգլիայի և Ֆրանսիայի պատերազմ հայտարարելը Գերմանիային
1939թ. սեպտեմբերի 17	Խորհրդային զորքերի ներխուժումը Լեհաստան
1939թ. նոյեմբերի 30	Խորհրդային Միության ագրեսիայի սկսումը Ֆինլանդիայի դեմ
1939թ. դեկտեմբեր	Խորհրդային Միության վտարումը Ազգերի լիգայից

1940թ. ապրիլի 9-10	Գերմանացիների կողմից Դանիայի և Նորվեգիայի գրավումը
1940թ. մայիսի 8	Անգլիայի վարչապետ Նևիլ Չեմբեռլինի հրաժարականը
1940թ. մայիս	Ուինսթոն Չերչիլի կողմից կոալիցիոն կառավարության կազմումը: - Գերմանական զորքերի ներխուժումը Ֆրանսիա
1940թ. հունիսի 14	Փարիզի անձնատուր լինելը գերմանացիներին
1940թ. հունիսի 22	Ֆրանսիայի անձնատուր լինելու ակտի ստորագրումը
1940թ. օգոստոս	Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի և Մոլդովայի մտնելը ԽՍՀՄ-ի կազմի մեջ
1940թ հոկտեմբեր	Գերմանական զորքերի ներխուժումը Ռումինիա
1940թ. նոյեմբեր	Հունգարիայի և Ռումինիայի միանալը ֆաշիստական խմբավորմանը
1940թ. վերջեր	ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու «Բարբարոսա» կոչվող պլանի հաստատումը Հիտլերի կողմից
1941թ. մարտ	Բուլղարիայի միանալը ֆաշիստական բլոկին
1941թ. ապրիլ	Գերմանական զորքերի ներխուժումը Հարավսլավիա և Հունաստան
1941թ. հունիսի 22	Գերմանիայի հարձակում ԽՍՀՄ-ի վրա և Հայրենական մեծ պատերազմի սկիզբը
1941թ. օգոստոս	Խորհրդային Միության զորքերի մտնելը Հյուսիսային Իրան
1941թ. օգոստոսի 14	Ռուզվելտի և Չերչիլի հանդես գալը համատեղ հայտարարությամբ, որը հանտնի է «Ատլանտյան խարտիա» անվամբ
1941թ. սեպտեմբերի 24	Խորհրդայի Միության միանալը Ատլանտյան խարտիային
1941թ. դեկտեմբեր	Մոսկվայի մոտ գերմանական զորքերի պարտությունը
1941թ. դեկտեմբերի 7	Ճապոնական ռազմանավերի և ավիացիայի հարձակվելը ամերիկյան Պիրլ Հարբոր ռազմածովային հենակայանի վրա
1941թ. դեկտեմբերի 11	ԱՄՆ-ի պատերազմ հայտաարելը Գերմանիային և Ճապոնիային
1941թ. վերջ-1942թ. կես	Հակահիտլերյան կոալիցիայի ձևավորումը
1942թ. հունվարի 1	Վաշինգտոնում Միացյալ ազգերի հռչակագրի ստորագրումը հակահիտլերյան կոալիցիայի ան-

	դամ 26 պետությունների կողմից
1942թ. մայիսի 26	Լոնդոնում ԽՍՀՄ-ի և Անգլիայի միջև համագործակցության և փոխադարձ օգնության պայմանագրի ստորագրումը
1942թ. հունիսի 11	Վաշինգտոնում խորհրդա-ամերիկյան համաձայնագրի ստորագրումը
1942թ.	«Ազատ Ֆրանսիայի» վերանվանվելը «Մարտնչող Ֆրանսիայի»
1942-1943թթ.	Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերում խորհրդային զորքերի հաղթանակը գերմանացիների նկատմամբ: – Արմատական բեկում Երկրորդ աշխարհամարտում
1943թ նոյեմբերի 28-դեկտեմբերի 1	Թեհրան խորհրդաժողովը
1944թ. հունիսի 6	Անգլո-ամերիկյան զորքերի անցնելը Լա Մանշ նեղուցը և Երկրոդ ճակատի բացումը Եվրոպայում
1944թ. օգոստոսի 19	Փարիզում ֆաշիստական օկուպանտների դեմ ապստամբության սկսումը
1944թ. հոկտեմբերի 23	Գեներալ դը Գոլի գլխավորած ժամանակավոր կառավարության ճանաչումը ԱՄՆ-ի, Անգլիայի և ԽՍՀՄ-ի կողմից
1945թ. փետրվարի 4-11	Յալթայի խորհրդաժողովը
1946թ. ապրիլ	Ազգերի լիգայի պաշտոնապես լուծարելու մասին որոշման ընդունումը
1945թ. ապրիլի 16	Բեռլինի գրոհի սկիզբը
1945թ. ապրիլի 25	ՄԱԿ-ի հիմնադիր համագումարի բացումը
1945թ. ապրիլի 30	Հիտլերի ինքնասպանության հայտնի դառնալը
1945թ. մայիսի 8-ից 9-ի գիշեր	Գերմանիայի անվերապահ կապիտուլացիայի ակտի ստորագրումը և Հայրենական մեծ պատերազմի ավարտը
1945թ. հունիսի 26	ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումը
1945թ. հուլիսի 17-օգոստոսի 2	Պոտսդամի խորհրդաժողովը
1945թ. օգոստոսի 6, 9	Ամերիկացիների կողմից ատոմային ռումբերի նետումը ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա
1945թ. օգոստոսի 8	ԽՍՀՄ կառավարության կողմից ճապոնիային պատերազմ հայտարարելը
1945թ. սեպտեմբերի 2	Ճապոնիայի անձնատուր լինելը և Երկրոդ աշխար-

	համարտի ավարտը
1945 թ.	Ինքնավարության շարժումները Իրանական Ադրբեջանում և Իրանական Քրդստանում
1945–1946թթ.	Նյուրնբերգյան դատավարությունը
1945թ. հոկտեմբերի 24	ՄԱԿ-ի Կանոնադրության վավերացվելը և ուժի մեջ մտնելը: ՄԱԿ-ի պաշտոնական գործունեության սկիզբը
1945–1951թթ.	Մեծ Բրիտանիայում մի շարք տնտեսական ճյուղերի ազգայնացումը
1946–1949թթ.	Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում սոցիալիստական կարգերի հաստատումը
1946թ. մարտի 5	Չերչիլի ելույթը Ֆուլտոն քաղաքում: «Սառը պատերազմի» ահազանգը
1947թ. օգոստոսի 15	Դոմինիոնի կարգավիճակով Հնդկաստան և Պակիստան պետությունների ստեղծման հռչակումը
1947թ.	Արևմտյան Եվրոպայի իր դաշնակիցներին օգնելու «Մարշալի պլանի» ընդունումը ԱՄՆ-ի կողմից
1948թ. մայիսի 14	Անկախ հրեական պետության՝ Իսրայելի ստեղծման պատոնապես հռչակումը
1948թ. դեկտեմբերի 5	Ցեղասպանությունները կանխելու, դատապարտելու և որպես մարդկության դեմ ուղղված հանցանք ճանաչելու բանաձևի ընդունումը
1949թ. ապրիլի 4	Հյուսիսատլանտյան դաշինքի՝ ՆԱՏՕ-ի ստեղծումը
1949թ. հոկտեմբերի 1	Չինական Ժողովրդական հանրապետության հռչակումը
1949թ.	ԽՍՀՄ-ի գլխավորությամբ Տնտեսական փոխօգնության խորհրդի ստեղծումը: – Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դառնալը ՆԱՏՕ-ի հիմնադիր անդամներ: – Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության և Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ստեղծումը
1950–1953թթ.	Կորեական պատերազմը
1950–1960-ական թթ.	Չինաստանում, Մոնղոլիայում, Հյուսիսային Կորեայում, Վիետնամում, Լաոսում և Կուբայում սոցիալիստական կարգերի հաստատումը
1952թ.	Թուրքիայի անդամակցելը ՆԱՏՕ-ին: – Եվրոպական ածխի և պողպատի միավորման հիմնադրումը:

	– Մոսադեղի կառավարության կողմից դիվանագիտական հարաբերությունների խզումը Անգլիայի հետ
1952–1960թթ.	ԱՄՆ-ի ռազմաարդյունաբերական համալիրի ձևավորումը
1953թ. մարտի 5	Ստալինի մահը
1953–1964թթ.	«Ձնհալի» շրջանը ԽՍՀՄ-ում
1953թ. օգոստոս	Լայնածավալ հուզումները ԳԴՀ-ում: – Իրանում պետական հեղաշրջման իրականացումը և Մոսադեղի ձերբակալումը
1953թ. սեպտեմբեր	Ն. Խրուշչովի ընտրվելը ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար
1955թ. մայիսի 14	Վարշավայի պայմանագրի ստորագրումը, որով հիմք դրվեց սոցիալիստական երկրների ռազմական խմբավորմանը
1956թ.	Ձինված ապստամբության բռնկումը Հունգարիայում: – ԽՄԿԿ XX համագումարի կայացումը և Ստալինի անձի պաշտամունքի դատապարտումը
1957թ.	Եվրոպական տնտեսական միության ստեղծման մասին համաձայնագրի ստորագրումը
1957թ. հոկտեմբեր	ԽՍՀՄ-ում առաջին արհեստական արբանյակի արձակումը տիեզերք
1958թ. հունիսի 1	Շարլ դը Գոլի նշանակվելը Ֆրանսիայի վարչապետ: Չորրորդ հանրապետության ավարտը Ֆրանսիայում
1958թ. սեպտեմբերի 28	Ֆրանսիայի Հինգերրորդ հանրապետության Սահմանադրության հաստատումը
1960թ. մայիսի 27	Գեներալ Գյուրսելի գլխավորությամբ Թուրքիայում պետական հեղաշրջման իրականացումը և նոր Սահմանադրության ընդունումը
1960թ.	Աֆրիկյան 17 երկրների անկախացումը՝ «Աֆրիկայի տարի»
1961թ. ապրիլի 12	Յուրի Գագարինի՝ աշխարհում առաջին թռիչքը տիեզերք և տիեզերական «մայրուղու» բացումը
1961թ. օգոստոս	Բեռլինյան պատի կառուցումը
1962թ.	Կարիբյան ճգնաժամի բռնկումը
1960-ական թթ. վերջեր	Բրիտանական գաղութային կայսրության դադարելը գոյություն ունենալուց
1964թ. հոկտեմբեր	Նիկիտա Խրուշչովի հեռացվել զբաղեցրած պաշ-

	տոնսներից: Լեոնիդ Բրեժնևի ընտրվելը ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար
1964թ.	Չինաստանում ատոմային զենքի ստեղծումը
1966թ.	Ֆրանսիայի զորքերի դուրսբերումը ՆԱՏՕ-ի ռազմական կառույցներից: – «Կուլտուրական հեղափոխության» սկիզբը Չինաստանում: – Ինդիրա Գանդիի դառնալը Հնդկաստանի վարչապետ
1968թ.	Վարշավայի պայմանագրի կազմակերպության զորքերի ներխուժումը Չեխոսլովակիա
1970–1990-ական թթ	ԱՄՆում տնտեսության վերակառուցման իրականացումը
1973թ.	Մեծ Բրիտանիայի ընդգրկվել Ընդհանուր շուկայի մեջ: – ԳՖՀ-ի դառնալը ՄԱԿ-ի անդամ
1974թ	Հյուսիսային Կիպրոսի բռնակցումը Թուրքիային և «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» կազմավորումը
1978թ. հունվար	Իրանում հակաշահական պայքարի սկիզբը
1979թ. ապրիլի 1	Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հռչակումը
1979թ. դեկտեմբեր	Իրանի Սահմանադրության ընդունումը
1979թ.	Մարգարետ Թեթչերի դառնալը Մեծ Բրիտանիայի վարչապետ
1980–1988թթ.	Իրան-իրաքյան պատերազմը
1981թ.	Ֆ. Միտերանի ընտրվելը Ֆրանսիայի նախագահ
1984թ. օգոստոսի 31	Ինդիրա Գանդիի սպանությունը
1985թ.	Միխաիլ Գորբաչովի ընտրվելը ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար
1989թ. հունիսի 3	Այաթոլլահ Խոմեյնիի մահը
1989–1991թթ.	ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում ազգային ճակատների ձևավորումը
1990թ.	Մերձբալթյան ազգային ճակատների կողմից իրենց հանրապետությունները անկախ պետություն հռչակելու հարցի առաջ քաշումը
1990թ. մայիս	ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) հաղթանակը
1990թ. հոկտեմբեր	ԳՖՀ-ի և ԳԴՀ-ի միավորումը

1991թ. մարտի 17	ԽՍՀՄ-ը պահպանելու նպատակով հանրաքվեի անցկացումը
1991թ. օգոստոսի 19-21	Պահպանողական ուժերի խռովությունը Մոսկվայում
1991թ. սեպտեմբերի 21	Հայաստանում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախության մասին հանրաքվեի անցկացումը
1991թ. դեկտեմբերի 8	Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու մասին համաձայնագրի կնքումը
1991թ. դեկտեմբերի 12	ՀՀ-ի անկախության ճանաչումը Մեծ Բրիտանիայի կողմից
1991թ. դեկտեմբերի 16	Հայաստանի Հանրապետության անկախության պաշտոնական ճանաչումը Թուրքիայի կողմից
1991թ. դեկտեմբերի 21	ԽՍՀՄ-ի փլուզման հայտարարումը
1991թ. դեկտեմբերի 25	Հայաստանի Հանրապետության անկախության պաշտոնական ճանաչումը Իրանի կողմից
1991թ. դեկտեմբերի 27	ՀՀ-ի անկախության ճանաչումը ԱՄՆ-ի կողմից
1992թ. հունվարի 7	ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը
1992թ. փետրվարի 24	ՀՀ-ի և Ֆրանսիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը
1992թ.	Եվրոպական միության (ԵՄ) ստեղծումը:
1994թ.	ՆԱՏՕ-ի «գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին ՀՀ-ի միանալը
1995թ.	Ժակ Շիրակի ընտրվելը Ֆրանսիայի նախագահ
1997թ. օգոստոս	ՀՀ-ի և Ռուսաստանի միջև «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության» պայմանագրի» ստորագրումը
1998թ.	Հայոց ցեղասպանության ճանաչումը Ֆրանսիայի կողմից: - Լեհաստանի, Հունգարիայի և Չեխիայի ընդունվելը ՆԱՏՕ-ի անդամ
1999թ. փետրվար	Աբդուլլահ Օջալանի ձերբակալումը
2001թ. սետեմբերի 11	Նյու Յորքում տեղակայված համաշխարհային առևտրի կենտրոնի երկու երկնաքերի կործանումը մահմեդական ահաբեկիչների կողմից
2002.	Ջորջ Բուշի ընտրվելը ԱՄՆ նախագահ
2003թ.	ԱՄՆ-ի զորքերի ներխուժումը Իրաք
2005թ.	Ահմադի Նեջադի ընտրվելը Իրանի նախագահ: - Անժելա Մերգելի դառնալը Գերմանիայի կանցլեր

2007թ.	Նիկոլա Սարկոզիի ընտրվելը Ֆրանսիայի նախագահ
2008թ.	ՀՀ-ի ընդգրկվելը ԵՄ-ի Եվրոպական Հարևանության քաղաքականության մեջ: - Բարաք Օբամայի ընտրվելը ԱՄՆ նախագահ
2008թ. օգոստոս	Ռուս-վրացական պատերազմը
2009թ.	ՀՀ-ի՝ ԵՄ-ի Արևելյան Գործընկերության մաս կազմելը
2011-2012թթ.	Արաբական աշխարհի արդիականացման շարժման սկիզբը